Հայաստանի

Հանրապետության

Կենտրոնական

Բանկ



2004 Տարեկան

1-ին եռամսյակ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մակրոտնտեսական իրավիճակը 5

Փոխհարաբերությունները ՀՀ պետբյուջեի հետ 11

Արտաքին հատված 15

Դրամավարկային քաղաքականություն 18

Ֆինանսական շուկա 27

ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությունը 32

Վճարահաշվարկային հարաբերություններ 37

Մակրոտնտեսական ցուցանիշները 2004 թ. հունվար - մարտին 42

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ 51

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ բանկերում իրականացված հարցումների արդյունքները (2004 թ., հունվար) 53

Կ. Պողոսյան, Գ. Աղաջանյան, Ա. Հարությունյան
Բնականոն սղաճի հաշվարկման և վերլուծության առանձնահատկությունները ՀՀ-ում 65

Ա. Թևոսյան, Ա. Նախշիկյան
Գնագոյացումը սննդի արդյունաբերության ճյուղերում 85

Մ. Խաչատրյան, Ա. Մամիկոնյան
Հարկային համակարգի ազդեցությունը ստվերային տնտեսության վրա 101

Լ. Հարությունյան, Կ. Կարապետյան
ՀՀ արտաքին պարտքը 2003 թվականին 119

Մակրոտնտեսական իրավիճակը


2004 թվականի առաջին եռամսյակի ընթացքում արձանագրված մակրոտնտեսական զարգացումները որոշակիորեն տարբեր էին նախորդ երկու տարիներին դրսևորված միտումներից. հատկանշական են համախառն պահանջարկի կառուցվածքային փոփոխությունները:

Մասնավորապես՝ 2004 թ. առաջին եռամսյակի 7.5% տնտեսական աճի պարագայում մասնավոր սպառումը զգալի՝ 6.3%-ով ավելացել է, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում, 11.8% տնտեսական աճի պայմաններում, մասնավոր սպառման աճը ընդամենը 8.7% էր: Մասնավոր ներդրումների աճը կազմել է 3.2%, մինչդեռ 2003թ. առաջին եռամսյակում մասնավոր ներդրումների աճը գերազանցել էր ՀՆԱ աճի տեմպը և կազմել 17.7%:

Նշվածը հիմնականում բացատրվում է վերջին երկու տարիներին տնտեսությունում դրսևորված ճյուղային զարգացումներով: 2002 - 2003 թվականներին արձանագրվել է շինարարության ծավալների բարձր աճ. շինարարական աշխատանքների ծավալները կրկնապատկվել են, որի արդյունքում շինարարության կշիռը ՀՆԱ-ում 2001 թվականի 9.6%-ի փոխարեն 2003 թվականին կազմել է 15.5%: Իսկ քանի որ աշխատավարձի կշիռը շինարարության ավելացված արժեքում մեծ է, ուստի ճյուղի բարձր տնտեսական աճի հաշվին տնտեսությունում եկամուտները հարաբերականորեն հավասարաչափ են բաշխվել:

Հիմնվելով այն ենթադրության վրա, որ մեր տնտեսությունում աշխատավարձը մեծամասամբ ուղղվում է սպառմանը, իսկ ներքին ներդրումները հիմնականում կատարվում են շահույթից՝ կարելի է եզրահանգել, որ վերջին երկու տարիներին շինարարության ծավալների աննախադեպ աճը նպաստել է մասնավոր սպառման աճի տեմպերի հարաբերական արագացմանը և հակառակը՝ ներքին խնայողությունների նվազման հաշվին ներդրումների աճի տեմպերի հարաբերական դանդաղեցմանը:

Համաձայն Դրամավարկային քաղաքականության ծրագրի՝ առաջին եռամսյակում կանխատեսվել էր նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ իրական ՀՆԱ աճի 10% ցուցանիշ: Փաստացի արդյունքներով նախորդ ժամանակահատվածի համեմատ արձանագրված իրական ՀՆԱ աճը զիջել է կանխատեսված մակարդակը 2.5 տոկոսային կետով և կազմել 7.5%:



ՀԱՄԱԽԱՌՆ ՊԱՀԱՆՋԱՐԿ[1]

Ինչպես նշվեց, 2004 թվականի առաջին եռամսյակում համախառն պահանջարկի բաղադրատարրերում փոփոխություններ են նկատվել՝ հիմնականում պայմանավորված նախորդ երկու տարիներին տնտեսության ճյուղային, հատկապես շինարարության ճյուղի, զարգացումներով:

[1] *Համախառն պահանջարկի բաժնում ներկայացված թվերը ՀՀ ԿԲ գնահատումներն են:*

Համախառն պահանջարկի բաղադրատարրերից ներքին պահանջարկը 2004 թվականի առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, ավելացել է 7.8%-ով (աճը համընկել է ծրագրային մակարդակին)՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցված 11.5%-ի փոխարեն: Ընդ որում, եթե սպառումը գերազանցել է ծրագրային մակարդակը, ապա ներդրումները սպասվածից զգալի ցածր են եղել:

2004 թ. առաջին եռամսյակում համախառն սպառման իրական աճը, նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ, կազմել է 7.7%՝ ծրագրային ցուցանիշից 1.2 տոկոսային կետով բարձր: 7.5% տնտեսական աճին զուգահեռ արձանագրվել է մասնավոր սպառման 6.4% աճ՝ պայմանավորված նախորդ երկու տարիներին տնտեսական աճի մեջ եկամուտների համեմատաբար հավասարաչափ բաշխում ապահովող ճյուղի՝ շինարարության բարձր մասնակցությամբ և նախորդ մի քանի տարիների տնտեսական աճի բարձր տեմպերով:

Համախառն ներդրումները հաշվետու ժամանակահատվածում, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ, ավելացել են ընդամենը 8.9 %-ով (8.6 տոկոսային կետով ցածր ծրագրային մակարդակից)՝ նախորդ տարվա 21.3% աճի փոխարեն: Զգալի դանդաղել են մասնավոր ներդրումների աճի տեմպերը: Նախորդ տարվա առաջին եռամսյակի 17.7% աճի փոխարեն 2004 թ. առաջին եռամսյակի աճը կազմել է ընդամենը 3.2%՝ մոտ կիսով չափ պակաս ծրագրային մակարդակից: Մասնավոր ներդրումների աճի տեմպերի դանդաղումը հիմնականում պայմանավորվել է նախորդ տարում գրանցված աճի բարձր տեմպերով:

Համախառն ներդրումների աճի ցուցանիշի՝ ծրագրայինից շեղումը բացատրվում է նաև պետական ներդրումների ծրագրային և փաստացի մակարդակների զգալի շեղմամբ: Եռամսյակային տվյալներով՝ պետական ներդրումների աճը կազմել է 18.7%, մինչդեռ ծրագրվել էր 37.1%[2]:

Հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների աճը (իրական արտահայտությամբ) 2003 –2004 թթ. առաջին եռամսյակներում

Ցուցանիշներ	2003/2002թ. 1-ին եռամսյակի նկատմամբ, փաստացի (%)	2004/2003թ. 1-ին եռամսյակի նկատմամբ, փաստացի (%)	2004/2003թ. 1-ին եռամսյակի նկատմամբ, ծրագրային (%)
Իրական ՀՆԱ	11.8	7.5	10.0
Ներքին պահանջարկ	11.5	7.8	7.8
Սպառում	10.4	7.7	6.5
Պետական	23.6	7.6	6.0
Մասնավոր	8.7	6.4	6.6
Կապիտալ ներդրումներ	21.3	8.9	17.5
Պետական	28.0	18.7	37.1
Մասնավոր	17.7	3.2	6.0
Ներմուծում	20.3	1.7	1.0
Արտահանում	12.8	3.1	14.1

Արտաքին հատվածի զարգացումները չեզոք ազդեցություն են ունեցել ամբողջական պահանջարկի վրա: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ զուտ արտահանումը գրեթե փոփոխության չի ենթարկվել, մինչդեռ ծրագրվել էր 12.9% աճ: Զուտ արտահանման շեղումը ծրագրային մակարդակից հիմնականում պայմանավորվել է արտահանման գների բարձր աճով, որը հանգեցրել է արտահանման իրական ծավալների՝ կանխատեսվածից քիչ աճի:

ՀԱՄԱԽԱՌՆ ԱՌԱՋԱՐԿ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ. Արդյունաբերության ոլորտում 2004թ. առաջին եռամսյակում համախառն թողարկումն ավելացել է 2.8%-ով՝ նախորդ տարվա 10.6%-ի փոխարեն: Աճ արձանագրվել է արդյունաբերության երկու ենթաճյուղերում՝ մշակող արդյունաբերությունում՝ 3.9%, հանքագործական արդյունաբերությունում՝ 3.2%, իսկ էլեկտրաէներգիայի, գազի և ջրամատակարարման ոլորտներում արձանագրվել է 1.2% անկում:

[2] Ծրագրային և փաստացի ցուցանիշների նման շեղման պատճառն այն է, որ ծրագրային թիվը հաշվարկվել էր ըստ ՕԻԳ-երի բաշխման նախնական ժամանակացույցի, որը հետագայում ճշգրտվել է:

Արդյունաբերության հիմնական ճյուղերի ցուցանիշները 2003 – 2004 թթ. հունվար-մարտին (%)

Արդյունաբերության ճյուղ	Տեսակարար կշիռ*		Իրական աճ (+) / նվազում (-) **	
	2003	2004	2003	2004
Էլեկտրաէներգիա, գազ և ջրամատակարարում	30.0	24.3	13.2	-1.2
Հանքագործական արդյունաբերություն	10.0	15.0	20.9	3.2
Մշակող արդյունաբերություն, որից՝	60.0	60.7	8.7	3.9
սննդի արդյունաբերություն	32.9	32.0	2.8	9.1
մետալուրգիա	8.9	11.4	8.1	-0.6
ոսկերչական արտադրատեսակների արտադրություն	6.6	3.3	7.3	-16.6
քիմիական արդյունաբերություն	0.8	3.2	4.7	5.8 անգամ
մեքենաների և սարքավորումների արտադրություն	1.0	0.7	57.6	-6.5
այլ ճյուղեր	9.8	10.1	30.1	-2.6
Ամբողջ արդյունաբերություն	100	100	10.6	2.8

** Ընթացիկ տարում տեսակարար կշիռը ողջ արդյունաբերության մեջ (արտադրանքի ծավալները հաշվարկված են ընթացիկ գներով):*
*** Տվյալ ճյուղի համախառն արտադրանքի իրական աճ / նվազում (աճը հաշվարկված է համադրելի գներով):*

2004 թվականի առաջին եռամսյակում արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում շարունակել է մեծանալ մշակող արդյունաբերության մասնաբաժինը՝ կազմելով ամբողջ արդյունաբերության արտադրանքի 60.7%-ը: Հանքագործական արդյունաբերության մասնաբաժինը ավելացել է 5 տոկոսային կետով և կազմել ամբողջ արդյունաբերության 15%-ը: Էլեկտրաէներգիայի, գազի և ջրամատակարարման տասակարար կշիռը նվազել է 5.7 տոկոսային կետով. կազմել է ամբողջի 24.3%-ը:

Նախորդ տարիների համեմատ նկատելի փոփոխություններ են արձանագրվել մշակող արդյունաբերության կառուցվածքում:

Մասնավորապես՝ նախորդ երկու տարիներին ոսկերչական արտադրատեսակների արտադրության բարձր աճից հետո հաշվետու տարվա առաջին եռամսյակում գրանցվել է 16.6% անկում, որի պատճառով վերջինիս կշիռը ամբողջ արդյունաբերության մեջ, նախորդ տարվա համեմատ, կիսով չափ նվազել է:

Աննախադեպ բարձր՝ 480% աճ է արձանագրվել քիմիական արդյունաբերության ոլորտում՝ հիմնականում պայմանավորված լաքաներկանյութերի և քիմիկա-դեղագործական արտադրությունների աճով: Ընթացիկ տարում քիմիական արդյունաբերության կշիռը ամբողջ արդյունաբերությունում 0.8%-ից վերաճել է 3.2%-ի:

Նախորդ տարվա զարգացման միտումներից շեղվել են նաև մետալուրգիայի և մեքենասարքավորումների արտադրության ճյուղերը. նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ թողարկումը նվազել է համապատասխանաբար 0.6% և 6.5%-ով (2003 թ.՝ 11.4% և 0.7% աճի փոխարեն):


ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ. Գյուղատնտեսության համախառն արտադրանքի իրական աճը 2004 թ. առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, կազմել է 6.2%՝ նախորդ տարվա նույն ցուցանիշի 6.7 % աճի փոխարեն: Եռամսյակային աճը հիմնականում տեղի է ունեցել անասնապահության ճյուղի թողարկման ծավալների աճի հաշվին: 2004 թ. առաջին եռամսյակում մսի իրացումը գերազանցել է 2003թ. ցուցանիշը 9.7%-ով, կաթի և ձվի արտադրությունը՝ համապատասխանաբար 3.3% և 14.1%-ով:

Եթե նախորդ տարի բնակլիմայական անբարենպաստ պայմանները խոչընդոտեցին գարնանացանի աշխատանքները, և մարտի վերջի դրությամբ ընդամենը 1317 հեկտար ցանք կատարվեց, ապա այս տարի այդ աշխատանքների ծավալը կազմեց 6442 հեկտար:

Փաստորեն կարելի է ակնկալել, որ տարվա ընթացքում ճյուղի թողարկման ծավալների սեզոնայնությունը խիստ արտահայտված չի լինի, ուստի և թողարկման ծավալների և գների վրա նշանակալի ճնշումներ չեն լինի:

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ. Ըստ եռամսյակի արդյունքների՝ շինարարության իրական ծավալները նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 10.7%-ով, մինչդեռ նախորդ տարի գրանցվել էր նույն ցուցանիշի 33.2% աճ: Եթե շինարարական աշխատանքները 2003 թ. հունվար-փետրվարին դիտարկենք առանց Լինսի հիմնադրամի միջոցների հաշվին կատարված աշխատանքների ծավալների, ապա հաշվետու ժամանակաշրջանի շինարարության ծավալների աճը կկազմեր 75%:

Կապիտալ շինարարության ֆինանսավորման աղբյուրների կառուցվածքում Լինսի միջոցների բացակայության պատճառով գրեթե զրոյացվել են մարդասիրական օգնության միջոցները: Աննախադեպ բարձր՝ 150% աճ է գրանցվել բնակչության միջոցներով ֆինանսավորվող շինարարական աշխատանքներում: Արդյունքում՝ բնակչության միջոցների հաշվին կատարված շինարարական աշխատանքները կազմել են ընդհանուր ֆինանսավորման 57.7%-ը: Բավականին մեծ չափով՝ 38.8%-ով աճել է կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարությունը և կազմել ամբողջ շինարարական աշխատանքների 21.7%-ը:



ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀՀ սպառողական շուկայում 2004 թվականի առաջին եռամսյակի մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների աճը կազմել է 11.6%, որից՝ մանրածախ ապրանքաշրջանառության ծավալներն ավելացել են 9.5%-ով, իսկ բնակչությանը մատուցված ծառայություններինը՝ 20.5%-ով:

Եռամսյակի ընթացքում բնակչության սպառողական պահանջարկը 95.6%-ով բավարարվել է խանութներում, սպառողական ապրանքների շուկաներում և կրպակներում իրականացվող առևտրի միջոցով:

Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ծառայությունների սակագները 1.8%-ով աճել են՝ հիմնականում պայմանավորված տրանսպորտի, կապի և հանրային սննդի ոլորտների ցուցանիշի՝ համապատասխանաբար 6.2%, 4.1% և 2.6% աճով:

ԳՆԵՐ ԵՎ ՍԱԿԱԳՆԵՐ

2004 թվականի Դրամավարկային քաղաքականության ծրագրով առաջին եռամսյակի համար, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ, սահմանվել էին միջին և ժամանակահատվածի վերջի դրությամբ գնաճի, համապատասխանաբար՝ 8.2% և 2.7% ծրագրային մակարդակներ:

Փաստացի արդյունքներով՝ ժամանակահատվածի վերջի դրությամբ գնաճը կազմել է 2.2%՝ նախորդ տարվա 2.1%-ի փոխարեն, իսկ միջին գնաճը՝ 7.5%՝ նախորդ տարվա 3.4%-ի փոխարեն: Ընդ որում, հունվարին և մարտին գրանցվել է համապատասխանաբար՝ 2.5% և 0.3% գնաճ, իսկ փետրվարին՝ 0.6% գնանկում:

2004 թ. (2003թ. դեկտ. = 100)	ՍԳԻ	Պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ)	Ոչ պարենային ապրանքներ	Վճարովի ծառայություններ
Հունվար	102.5	104.0	100.2	100.0
Փետրվար	101.9	103.1	100.2	100.0
Մարտ	102.2	103.4	100.2	100.5


2003 թ. դեկտեմբերի համեմատությամբ պարենային ապրանքների գների ամենաբարձր աճը եղել է հունվարին՝ 4 % (2.7 տոկոսային կետով ցածր նախորդ տարվա ցուցանիշից): Փետրվարին և մարտին գրանցված 3.1% և 3.4% գնաճի ցուցանիշները 1.1 և 0.1 տոկոսային կետերով զիջել են նախորդ տարվա

համապատասխան ցուցանիշները: Զգալի բարձրացել են մսամթերքի (5.1[3]%), կաթնամթերքի (4.1%), մրգի (4.5%), բանջարեղենի (13.3%) ապրանքախմբերի գները:


Ոչ պարենային ապրանքների շուկայում գները չեն տատանվել: Եռամսյակի սկզբին գրանցված 0.2% գնաճը հիմնականում պայմանավորվել է բենզինի և ոսկերչական ապրանքների թանկացումներով:

Ծառայությունների ոլորտում եռամսյակի վերջին, նախորդ տարվա դեկտեմբերի համեմատ, գրանցվել է գների 0.5% աճ, որի վրա ազդեցություն են ունեցել հանրային սննդի, բնակարանային-կոմունալ և կապի ծառայությունների սակագների բարձրացումները:

Ըստ բնականոն սղաճի հաշվարկների՝ տարվա առաջին եռամսյակի վերջի դրությամբ գրանցված 2.2% գնաճի 1.08%-ը պայմանավորվել է գյուղատնտեսական ապրանքների սեզոնային գների աճով, 1.05%-ը՝ բնականոն գնաճով, իսկ 0.08%-ը՝ պետության կողմից կարգավորվող գների աճով:



Տնտեսության ճյուղերում նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ ամենաբարձր՝ 27.7% գնաճը արձանագրվել է արդյունաբերության ոլորտում: Արդյունաբերական արտադրանքի գների նման բարձր ցուցանիշը պայմանավորված է գունավոր մետալուրգիայի, քիմիական, ոսկերչական, ինչպես նաև սննդի արդյունաբերության ճյուղերի գների՝ համապատասխանաբար 78.2%, 19%, 10.9%, 31.1% աճով:



Նախորդ տարվա համապատասխան եռամսյակի համեմատ արձանագրված բեռնափոխադրումների սակագների 3.5% նվազումը հիմնականում պայմանավորվել է օդային, երկաթուղային և խողովակաշարային տրանսպորտի սակագների՝ համապատասխանաբար 6.9%, 3.5%, 3.4% նվազումներով:

[3] *2004թ. մարտը 2003թ. դեկտեմբերի նկատմամբ:*

Գյուղատնտեսական արտադրանքի իրացման գները 1.9%-ով նվազել են նախորդ տարվա համապատասխան ցուցանիշի 5.3% աճի փոխարեն: Գնանկումը հիմնականում պայմանավորվել է բուսաբուծական մթերքների իրացման գների 20.6% նվազմամբ: Անասնապահական մթերքների իրացման գները բարձրացել են 9.8%-ով (հիմնականում պայմանավորված մսի իրացման գների բարձրացմամբ):

Եռամսյակի ընթացքում, նախորդ տարվա համապատասխան ժամանակահատվածի համեմատ, կապիտալ շինարարության գների ինդեքսը կազմել է 102.1%՝ նախորդ տարվա 100.6%-ի փոխարեն:

ՀՀ մարզերում իրականացված դիտարկումների համաձայն՝ 2004 թվականի առաջին եռամսյակի միջին գնաճի ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է Դիլիջանում՝ 10.2%, իսկ ամենացածրը՝ Հրազդանում՝ 4.6 %: Երևանում միջին գնաճը կազմել է 7.6%:

ԱՇԽԱՏՈՒԺԻ ՇՈՒԿԱ

2004 թ. առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, 0.6 տոկոսային կետով նվազել է գործազրկության մակարդակը և կազմել է 9.8% կամ 118.4 հազար մարդ: Մեկ թափուր տեղի համար ծանրաբեռնվածությունը կազմել է 224[4] չզբաղված մարդ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ միջին հաշվով ավելանալով 18.2%-ով: Սա նշանակում է, որ աշխատուժի առաջարկը զգալի չափով գերազանցում է պահանջարկը: Աշխատուժի առաջարկի և պահանջարկի հարաբերությունը բնութագրող ցուցանիշի նման բարձր մակարդակը թույլ է տալիս եզրակացնելու, որ առաջիկայում դժվար է ակնկալել գործազրկության էական կրճատում:

Որոշակի տեղաշարժեր են արձանագրվել նաև աշխատուժի պահանջարկի կառուցվածքում: 2004 թվականի փետրվարին, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, ընդհանուր պահանջարկում 13.1 տոկոսային կետով նվազել է բանվորական մասնագիտությունների նկատմամբ պահանջարկը և կազմել է 84.3%: Փոխարենը աճել է ծառայողների նկատմամբ պահանջարկի կշիռը՝ կազմելով 28.8%:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ արձանագրվել է ինչպես անվանական, այնպես էլ իրական աշխատավարձերի աճ: Ամսական անվանական աշխատավարձերն ավելացել են 27.2%-ով՝ կազմելով՝ 37013 դրամ, իսկ իրական աշխատավարձերը՝ 22.1%-ով: Իրական աշխատավարձերի նման ավելացման և սղաճի ցածր աճի պայմաններում կարելի է ենթադրել, որ տնտեսությունում բարձրացել է արտադրողականությունը[5]:

Բյուջետային կազմակերպություններում զբաղվածների միջին ամսական անվանական աշխատավարձը կազմել է 26103[6] դրամ (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել է 50.7%-ով), իսկ ոչ բյուջետային աշխատողների աշխատավարձը՝ 46716 դրամ (ավելացել է 18.1%-ով): Հունվար-մարտին[6] աշխատավարձի աճի ամենաբարձր մակարդակը արձանագրվել է կառավարման ոլորտում և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ կազմել է 59.7%: Աշխատավարձերի ամենացածր մակարդակը 2004 թվականի հունվար-մարտի դրությամբ եղել է անտառտնտեսությունում՝ 15707 դրամ, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 6.1%-ով: Իսկ ամենաբարձր մակարդակը մնում է վարկավորման և ապահովագրության ոլորտում՝ 105697 դրամ (մոտ 2.8 անգամ բարձր, քան տնտեսության միջին աշխատավարձը):

[4] Ըստ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «ՀՀ զբաղվածության ծառայություն» գործակալության տվյալների:


[5] ՀՆԱ սեզոնայնության պատճառով արտադրողականության հաշվարկներ չեն ներկայացվում:

[6] Ըստ ՀՀ ԱՎԾ նախնական գնահատումների:

2004 թվականի առաջին եռամսյակում իրականացված ՀՀ հարկաբյուջետային քաղաքականության արդյունքում պետական բյուջեի հարկային եկամուտների փաստացի մուտքերը գերազանցել են ծրագրված համամասնությունները, տարվա համար ծրագրված ցուցանիշի եռամսյակային բաշխվածությունն ավելի հարթ է ընթացել, ինչպես նաև նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ դրսևորվել է հարկային եկամուտների աճի ավելի բարձր մակարդակ:

Ըստ ՀՀ 2004 թվականի պետական բյուջեի եռամսյակային ծրագրի՝ առաջին եռամսյակում ՀՀ պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները պետք է կազմեին տարեկան ծրագրի 20.1%-ը, հարկային եկամուտները (ներառյալ պետական տուրքը)՝ 20.3%-ը, ծախսերը՝ 21.4%-ը, այն պարագայում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել էին նշված ցուցանիշների հետևյալ մակարդակները՝ 18.6%, 20.4%, 18.3%:

Եթե եռամսյակի ընթացքում արձանագրվել էր եկամուտների ծրագրված մակարդակի գերազանցում և նախորդ տարվա համեմատ զգալի աճ, ապա ծախսերը (կանխիկ մեթոդով հաշվարկված) թերակատարվել են՝ և նախորդ տարվա համեմատ արձանագրվել է ավելի փոքր աճ: Նշված պայմաններում, հարկաբյուջետային քաղաքականությունն ամբողջական պահանջարկի վրա եռամսյակի արդյունքում ունեցել է 1.8 զսպողական ազդեցություն:




Առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ պետբյուջեի եկամուտներն ու դրամաշնորհները նախորդ տարվա համեմատ աճել են 5.2%-ով, հարկերը՝ 18.2 %-ով, ոչ հարկային եկամուտները 21.7%-ով, իսկ կապիտալ եկամուտները նվազել են 81.6%-ով:

Եռամսյակի ընթացքում ՀՀ պետական բյուջեի «Եկամուտներ և դրամաշնորհներ» հոդվածի գծով մուտքերը կազմել են տարեկան ծրագրվածի 20.3%[1]-ը, հարկերը՝ 20.9%-ը (ներառյալ պետական տուրքի գումարները): Թեպետ նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ անուղղակի հարկերն ավելացել են, հարկային եկամուտների մեջ 4.1 տոկոսային կետով նվազել է դրանց կշիռը՝ կազմելով հարկային եկամուտների 67.1%-ը: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ ուղղակի հարկերն աճել են 29.6%-ով, որն ուղեկցվել է հարկային եկամուտներում ուղղակի հարկերի տեսակարար կշռի 1.5 տոկոսային կետ աճով: Այդուհանդերձ, ՀՀ կառավարության կողմից սոցիալական խնդիրների առաջնահերթ լուծման ռազմավարական ծրագրի արդյունավետ իրականացման տեսանկյունից, ուղղակի հարկերի տեսակարար կշիռը հարկային եկամուտներում դեռևս ցածր մակարդակ է կազմում, ինչն էլ խոչընդոտում է հարկային եկամուտների ավելի բարձր աճի տեմպի ապահովումը:

Հատկանշական է, որ ի տարբերություն նախորդ տարիների առաջին եռամսյակների ընթացքում շահութահարկի նվազումներին, 2004 առաջին եռամսյակում վերջինս աճել է, որը 39%-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի շահութահարկի մուտքերը:


[1] *Օգտագործվել են ՀՀ ՖԷՆ նախնական տվյալները, որոնք ենթակա են ճշգրտման:*

Պետբյուջեի փաստացի ծախսերը[2] կազմել են տարեկան ծրագրվածի 20.4%-ը, ընդ որում՝ ընթացիկ ծախսերը՝ ծրագրվածի 21.6%-ը, իսկ կապիտալ ծախսերը՝ 16.3 %-ը: Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ծախսերն աճել են 20.7%-ով[3]. ընթացիկ ծախսերը՝ 26.4%-ով, իսկ զուտ վարկավորումը՝ 30.4%-ով: Կապիտալ ծախսերը նվազել են 3.5%-ով (հիմնականում պայմանավորված Լինսի հիմնադրամի դրամաշնորհների բացակայությամբ):



Ընթացիկ ծախսերի մեջ պետական սպառումը և տրանսֆերտները նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատությամբ աճել են համապատասխանաբար 24%-ով և 35.2%-ով՝ պայմանավորված սոցիալական ուղղվածության ծախսերի ավելացմանը նպաստող՝ Կառավարության ռազմավարությամբ:


Պետբյուջեի հարկային եկամուտների աճին, ինչպես նաև ծրագրված մակարդակների ապահովմանը զուգընթաց, եռամսյակի ընթացքում զգալի մեղմվել է դրանց հավաքագրման գործընթացի անհամաչափությունը: Հունվար, փետրվար և մարտ ամիսների վերջին օրը հավաքագրված հարկերի միջին ցուցանիշը կազմել է ամսվա հարկերի 12.5 %-ը՝ նախորդ տարվա համապատասխանաբար 34.7%-ի և 2002 թվականի 40%-ի փոխարեն: Հատկանշական է, որ հարկերի հավաքագրման բարելավումների հետ մեկտեղ զգալի միջոցներ են կուտակվել ՀՀ գանձապետարանի միասնական հաշվում, որոնց միջին մեծությունը եռամսյակի ընթացքում կազմել է շուրջ 38.8 մլրդ դրամ: Վերջինս շուրջ 6 անգամ գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածում առկա նշված միջոցների միջին մակարդակը: Ընդ որում, եռամսյակի ընթացքում խնդիրներ են առաջացել նաև այդ միջոցների կառավարման գործընթացում՝ կապված դրանց ծրագրված համամասնությունների հաճախակի ճշգրտման և դրանց ապահով-




[2] Հաշվետվության մեջ ներկայացված չէ փաստացի ցուցանիշների համեմատականը եռամսյակային ծրագրի նկատմամբ, քանի որ պետբյուջեի եռամսյակային ծրագրերի միջև առկա է անհամապատասխանություն. առաջին եռամսյակի ծրագիրը չի համապատասխանում պետբյուջեի 2004թ. առաջին երեք ամիսների ծրագրերի արդյունքում ստացվող ցուցանիշներին, ինչպես նաև նշված ծրագրերը չեն համապատասխանում ԱՄՀ համատեղ ծրագրով նախատեսված առաջին եռամսյակի ծրագրված ցուցանիշներին:

[3] Նշված ցուցանիշը ծախսերի հաշվարկային մեթոդով ստացված մեծությունն է, որը կանխիկ ծախսերից ավելի է 4-րդ ծանոթագրությունում ներկայացված վիճակագրական շեղման՝ 6.9 մլրդ դրամի չափով: Ընդ որում, կանխիկ ծախսերի աճը նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ կազմել է 11.7%:

ման հետ: Բյուջեի միջոցների նշված կուտակումների և միասնական հաշվից ծախսումների անորոշության պարագայում փողի բազայի ծրագրված ցուցանիշի ապահովման վրա ազդել է ևս մեկ գործոն՝ մեր կողմից գնահատված բյուջեի կանխիկ հոսքերի՝ ծրագրված ցուցանիշից շեղումը: Վերջինս պայմանավորվել է տարեսկզբից բյուջեի կանխիկ հոսքերի կրճատման դրական տեղաշարժերով, որը, ըստ ամենայնի, այդ բնագավառում նախորդ տարվանից իրականացվող միջոցառումների արդյունք էր: Կարծում ենք, այդ միտումը կշարունակվի նաև տարվա մնացած եռամսյակներում: Այս պայմաններում ՀՀ կենտրոնական բանկը փողի առաջարկը կառավարել է տատանումների թույլատրելի միջակայքի ստորին սահմաններում, քանի որ վերը նշվածը նպաստել է շրջանառությունում գտնվող կանխիկ դրամի տեսակարար կշռի նվազմանը փողի զանգվածում և փողի բազմարկչի աճին:



Պետբյուջեի պակասուրդը առաջին եռամսյակում կազմել է 8.9[4] մլրդ դրամ՝ տարեկան ծրագրվածի 20.9%-ը: Պակասուրդի ֆինանսավորումը կազմել է 2.1 մլրդ դրամ, որը, ըստ ներքին և արտաքին աղբյուրների, ունեցել է հետևյալ կառուցվածքը՝ արտաքին ֆինանսավորման զուտ մուտքը՝ 6.4 մլրդ դրամ, իսկ ներքին աղբյուրների խնայողությունները՝ 4.3 մլրդ դրամ: Վերջինս բացատրվում է եռամսյակի ընթացքում Գանձապետարանի միասնական հաշվում Կառավարության միջոցների կուտակումներով: Նշենք, որ ըստ առաջին եռամսյակի ծրագրի՝ նախատեսվել էր միասնական հաշվից 8.8 մլրդ դրամի օգտագործում. փոխարենը փաստացի կուտակվել է 3.6 մլրդ դրամ: Դեռ ավելին, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության՝ եռամսյակի համար ներկայացված ամսական ծրագրերում միասնական հաշվի հոսքերը չեն համապատասխանել ըստ համամասնությունների նախատեսված հոսքերին: Ուստի, պետբյուջեի ծրագրերի անհամապատասխանությունը էական անորոշություններ է առաջացրել դրամավարկային ծրագրավորման և դրա հետևանքով՝ բանկային համակարգի իրացվելիության կառավարման գործընթացում:




[4] *Պակասուրդի մեծության և պակասուրդի ֆինանսավորման աղբյուրների ցուցանիշների տարբերությունը բացատրվում է առաջին եռամսյակի ընթացքում առաջացած վիճակագրական շեղմամբ (6.9 մլրդ դրամ), որը պայմանավորված է Գանձապետարանի կողմից ծախսային հոդվածների գծով բացված ֆինանսավորման և փաստացի իրականացված ծախսերի միջև առաջացած շեղումով:*

Պետական արժեթղթերի զուտ ֆինանսավորումը կազմել է -0.4 մլրդ դրամ՝ ծրագրված -0.6 մլրդ դրամի փոխարեն: Արժեթղթերի ժամկետայնության երկարացմանը զուգահեռ արձանագրվել է նաև տոկոսադրույքների նվազում. կարճաժամկետ արժեթղթերի տոկոսադրույքը մարտի վերջին կազմել է 5.9%, իսկ երկարաժամկետ արժեթղթերինը՝ 9.8 %՝ նախորդ տարվա դեկտեմբերի վերջի համապատասխանաբար 9.7%-ի և 14.3%-ի փոխարեն: Պակասուրդի ֆինանսավորման արտաքին միջոցներից ստացվող զուտ մուտքերը կազմել են եռամսյակի համար ծրագրով նախատեսվածի 147%-ը՝ պայմանավորված ՕԻԳ-երի միջոցների ավելի ստացմամբ:

2004 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրով առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, կանխատեսվում էր ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատում: Մասնավորապես՝ ակնկալվում էր արտահանման 18.4 տոկոս աճ և ներմուծման 6.7 տոկոս աճ, որոնց արդյունքում ապրանքների հաշվեկշռի պակասուրդը պետք է կրճատվեր 10.1 տոկոսով: Ընթացիկ հաշվի մյուս հոդվածների լավացման պայմաններում կանխատեսվել էր, որ ընթացիկ հաշվի պակասուրդի կրճատումը կազմելու էր 38.4 տոկոս, իսկ ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը՝ 10.6 տոկոս՝ նախորդ տարվա 20.5 տոկոսի փոխարեն:

Ըստ ԿԲ գնահատումների[1], արտահանումը (կրեդիտ) եռամսյակի ընթացքում ավելացել է 14.2 տոկոսով և կազմել 154.3 մլն ԱՄՆ դոլար: Արտահանման աճը պայմանավորվել է «Ոչ թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր», «Հանքահումքային մթերքներ» և «Մանածագործական իրեր» ապրանքախմբերի արտահանման ծավալների աճով՝ 10.8 մլն ԱՄՆ դոլար, 9.2 մլն ԱՄՆ դոլար և 5.5 մլն ԱՄՆ դոլար համապատասխանաբար: Սակայն գրանցվել է «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների նվազում 12.3 մլն ԱՄՆ դոլարով, որը զսպել է արտահանման ծավալների մեծ աճը: Ավելացել են «Պլաստմասսա և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները (մոտ 8 անգամ կամ 2.5 մլն ԱՄՆ դոլարով), ինչը կապված է «Նաիրիտ» գործարանի վերագործարկման հետ:

Ներմուծումը (դեբետ) եռամսյակի ընթացքում ավելացել է 9.2 տոկոսով և կազմել 250.2 մլն ԱՄՆ դոլար: Ներմուծման աճը հետևանք է «Բուսական ծագման արտադրանք» և «Վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» հոդվածների ցուցանիշների աճի՝ 10.5 մլն ԱՄՆ դոլար և 6.2 մլն ԱՄՆ դոլար համապատասխանաբար: Միևնույն ժամանակ, 5.1 մլն ԱՄՆ դոլարով նվազել են «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի ներմուծման ծավալները: Ներմուծման աճի պատճառը հիմնականում բարձր ներքին պահանջարկն է՝ ինչպես սպառողական ապրանքների, այնպես էլ կապիտալ և հումքային ապրանքների նկատմամբ:



Արտաքին առևտրում տեղի են ունեցել կառուցվածքային որոշակի փոփոխություններ: «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի առևտրի ծավալների նվազումը հանգեցրել է վերջինիս կշռի էական նվազման: Արտահանման մեջ այդ հոդվածի կշիռը նվազել է 15.1 տոկոսային կետով և կազմել 41.1 տոկոս, իսկ ներմուծման մեջ՝ 4.2

[1] *2004 թվականի առաջին եռամսյակի վճարային հաշվեկշռի ցուցանիշները ՀՀ ԿԲ գնահատումներն են:*

տոկոսային կետով և կազմել 23.6 տոկոս: Նման դեպքում անհրաժեշտ է նաև դիտարկել արտաքին առևտուրն առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի: Արտահանումը, առանց այդ հոդվածի, ավելացել է 53.7 տոկոսով, իսկ ներմուծումը՝ 16.0 տոկոսով, ինչի հետևանքով առևտրային հաշվեկշիռը[2], առանց այդ ապրանքախմբի, բարելավվել է մոտ 1.7 մլն ԱՄՆ դոլարով: Իսկ «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» հոդվածի ցուցանիշը, ներառյալ առևտրային հաշվեկշռի պակասուրդը, ավելացել է 5.5 մլն դոլարով:

Ընթացիկ հաշվի մյուս հոդվածների՝ ծրագրային ցուցանիշներից շեղումները զգալի չեն եղել: Արդյունքում՝ ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 47.3 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 65.8 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն: Ընթացիկ հաշիվ/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 12.4 տոկոս՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 20.5 տոկոսի փոխարեն, որը հիմնականում պայմանավորվել է ընթացիկ տրանսֆերտների աճով:


Առևտրային բանկերի ԶԱԱ-ը եռամսյակի ընթացքում ավելացել են 5.9 մլն ԱՄՆ դոլարով՝ ակտիվների 17.4 մլն ԱՄՆ դոլար և պարտավորությունների՝ 11.5 մլն ԱՄՆ դոլար աճի արդյունքում: ԶԱԱ աճը հիմնականում պայմանավորվել է առևտրային բանկերի կողմից արտարժույթի գնմամբ ինչպես Կենտրոնական բանկից, այնպես էլ տնտեսությունից:

Արտաքին աշխարհի նկատմամբ ՀՀ առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների վարկային պարտավորությունները[3] 2004 թվականի առաջին եռամսյակի վերջին կազմել են 14.7 մլն դոլար՝ նախորդ տարվա վերջի 14.3 մլն դոլարի փոխարեն: Առաջին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերը արտաքին աշխարհից ներգրավել են 1.7 մլն դոլար վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 1.4 մլն դոլար հիմնական գումարի մարումներ և 0.1 մլն դոլար տոկոսագումարի վճարումներ:

2004 թվականի առաջին եռամսյակում, նախորդ տարվա համեմատ, գրեթե պահպանվել է արտաքին աշխարհից ներգրավված վարկերի կազմը ըստ վարկատու երկրների, փոփոխվել են միայն այդ երկրների տեսակարար կշիռները ամբողջի մեջ: Մասնավորապես, ՀՀ առևտրային բանկերի հիմնական վարկատու երկրներն են եղել՝ Շվեյցարիան, որի տեսակարար կշիռը ամբողջի մեջ կազմել է 34.0% (նախորդ տարվա 34.9%-ի փոխարեն), Հունաստանը՝ 25.2% (նախորդ տարվա 25.8%-ի փոխարեն), Մեծ Բրիտանիան՝ 14.3% (նախորդ տարվա 5.6 %-ի փոխարեն), Ֆրանսիան՝ 8.3% (նախորդ տարվա 7.0%-ի փոխարեն) և Ռուսաստանը՝ 5.4% (նախորդ տարվա 2.4%-ի փոխարեն):

Ներգրավված վարկերը բանկերը հիմնականում տեղաբաշխել են ըստ տնտեսության հետևյալ հատվածների՝ 5 մլն դոլարը՝ էներգետիկայի, 4.2 մլն դոլարը՝ ֆինանսական, 1.6 մլն դոլարը՝ արդյունաբերության, 1.8 մլն դոլարը՝ առևտրի, 0.8 մլն դոլարը՝ գյուղատնտեսության հատվածներում:

ՀՀ առևտրային բանկերի արտաքին պարտքի դինամիկան 1999-2004 թվականներին*




** 2003 թվականից ներառված են նաև վարկային կազմակերպությունների տվյալները:*

Ներգրավված վարկերի միջին կշռված տոկոսադրույքը նախորդ տարվա համեմատ աճել է և կազմել 4.3% (2003թ.՝ 4.1%), որոնց մոտ 38.1%-ը լողացող (LIBOR) տոկոսադրույքով են: Վարկերի միջին

[2] Առևտրային հաշվեկշիռը հաշվարկված է արտահանման FOB գներով և ներմուծման CIF գներով:
[3] Ներառված չեն միջազգային ֆինանսական կազմակերպությունների և այլ վարկատուների կողմից տարբեր ծրագրերի շրջանակներում ՀՀ կառավարության միջոցով ստացված վարկերը:


ժամկետայնությունը մոտ 5.3 տարի է: Կարճաժամկետ վարկերը կազմում են ներգրավված միջոցների ընդամենը 2.9%-ը:

2004 թվականի առաջին եռամսյակը բնութագրվել է կապիտալի զգալի ներհոսքով, որը արտահայտվել է ռեզիդենտների արտարժութային ավանդների աճով (2004 թվականի առաջին եռամսյակում կազմել է 13.1 մլն ԱՄՆ դոլար): Ընդ որում, ավանդների նման աճը ոչ թե հանգեցրել է կապիտալի արտահոսքի՝ բանկերի ՁԱԱ ավելացման միջոցով, այլ ռեզիդենտներին արտարժույթով վարկավորման ծավալների աճի 13.1 մլն ԱՄՆ դոլարով: Վերջինս նշանակում է արտարժույթի առաջարկի բավականին մեծ աճ 2004 թվականի առաջին եռամսյակում: Արդյունքում՝ եռամսյակի ընթացքում ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը արժեքավորվել է (մասնավորապես պայմանավորված նաև նախորդ տարվա վերջի դրությամբ արձանագրված փոխարժեքի արժեքավորմամբ): Արժեքավորումը նախորդ տարվա նույն եռամսյակի համեմատ կազմել է 3.6 տոկոս (565.2, նախորդ տարի՝ 586.6 ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար): Ժամանակաշրջանի վերջի դրությամբ նույնպես փոխարժեքը դրսևորել է արժեքավորման միտում՝ կազմելով 561.6 դրամ/ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա վերջի 566.0 ՀՀ դրամ/ԱՄՆ դոլարի փոխարեն:



Կենտրոնական բանկի ՁԱԱ-ը[4] եռամսյակի ընթացքում նվազել են 14.7 մլն ԱՄՆ դոլարով՝ կազմելով 257.1 մլն ԱՄՆ դոլար: Պահուստների փոփոխությունը հիմնականում պայմանավորվել է 8.9 մլն ԱՄՆ դոլարի չափով արտաքին պետական պարտքի սպասարկմամբ (զուտ) և Կենտրոնական բանկի կողմից միջբանկային շուկայում իրականացված 6.7 մլն ԱՄՆ դոլար վաճառքով:

ՀՀ դրամի իրական արդյունավետ փոխարժեքը 2004 թվականի առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, արժեզրկվել է 1.9 տոկոսով՝ ծրագրով կանխատեսված 3.4 տոկոսի փոխարեն: Հայաստանի սղաճի ազդեցությունը կազմել է 7.8 տոկոսային կետ, փոխարժեքինը՝ 3.8 տոկոսային կետ (երկուսն էլ արժեքավորման ուղղությամբ): Գործընկեր երկրների սղաճի ազդեցությունը կազմել է 5.9 տոկոսային կետ, փոխարժեքինը՝ 6.8 տոկոսային կետ (երկուսն էլ արժեզրկման ուղղությամբ):



[4] *Հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով, առանց սեփականաշնորհման միջոցների:*

Դրամավարկային քաղաքականության առաջին եռամսյակի ծրագիրը և հիմնական խնդիրները

2004 թվականին ևս նպատակ ունենալով ժամանակաշրջանի վերջի դրությամբ ապահովել մինչև 3% սղաճ՝ ԿԲ-ն ծրագրել էր փողի զանգվածի 12.2%, դրամային զանգվածի 12.3% և փողի բազայի 4.9% աճ (միջին տարեկան աճը՝ համապատասխանաբար 17.6% և 9.1%): Ընդ որում, սղաճի ցածր ցուցանիշ էր ծրագրվել նաև այն դեպքում, երբ նախորդ տարի դիտվել էին բարձր սղաճային դրսևորումներ: Դա հիմնավորվում էր նրանով, որ 2003 թվականի բարձր սղաճը միանգամյա արտաքին շոկի (հացամթերքի թանկացում) հետևանք էր: Միևնույն ժամանակ, 2004 թվականի համար տնտեսական աճի ծրագրված 7% ցուցանիշին, ըստ ԿԲ-ում կիրառվող սղաճի կանխատեսման տարբեր մեթոդների, առավել համահունչ է մինչև 3% ցուցանիշը:

Ի տարբերություն վերջին տարիների, երբ փողի առաջարկի աճն ապահովվել է բացառապես ԿԲ-ում պետբյուջեի ֆինանսական միջոցների ներհոսքի փոխարկման ու տնտեսություն ներարկման ինքնավար գործոնի հաշվին, այս տարի կապիտալ ներհոսքի ակնկալիքները մեծ չեն, և հատկապես երկրորդ կիսամյակից փողի բազայի ընդլայնումը պետք է իրականացվի բանկերի ֆինանսավորման միջոցով:

Պահպանվել են նաև նախորդ տարիներին ձևավորված եռամսյակային համամասնությունների օրինաչափությունները, ինչը ենթադրում է գործարար ակտիվության, հետևաբար և փողի պահանջարկի անկման սեզոնայնությամբ պայմանավորված՝ փողի առաջարկի կրճատում առաջին եռամսյակում: Համաձայն առաջին եռամսյակի դրամավարկային ծրագրի ուղղությունների՝ փողի առաջարկի կրճատումն արտահայտվելու էր ժամանակաշրջանի վերջի դրությամբ փողի զանգվածի 2.1%, դրամային զանգվածի՝ 4.4% և փողի բազայի՝ 10% նվազմամբ: Նման դրամավարկային քաղաքականության իրագործման արդյունքում ակնկալվում էր եռամսյակային սղաճի 2.7% մակարդակ, որը հիմնականում պայմանավորվելու էր նախորդ տարվա վերջին փողի առաջարկի մեծածավալ աճի՝ գների վրա ունեցած լագային ազդեցությամբ և, մասամբ էլ՝ պետության կողմից կարգավորվող որոշ սակագների բարձրացմամբ: Ընդ որում, դա հատկապես դրսևորվելու էր հունվարին՝ ապահովելով 2.5 % սղաճ:

Ընդունված կարգի համաձայն՝ հունվարին կազմակերպվել է բանկերի հետ հանդիպում, որի ժամանակ ԿԲ-ն 2004թ. դրամավարկային քաղաքականության ուղղությունների վերաբերյալ հայտարարություն է արել: Այդ համատեքստում շեշտադրվել է առավելապես առաջին եռամսյակի ընթացքում իրականացվելիք գործողությունների վերոնշյալ տրամաբանությունը:

Դրամավարկային քաղաքականության զարգացումները

ՓՈՂԻ ՊԱՀԱՆՋԱՐԿ

Տարեսկիզբը բնութագրվել է ծրագրված մակրոմիջավայրից որոշակի շեղումներով, ինչն անդրադարձել է նաև դրամավարկային հատվածի ցուցանիշների միտումների վրա: Մասնավորապես, առաջին եռամսյակում ձևավորվել է տնտեսական աճի՝ ծրագրվածից ցածր ցուցանիշ, որի պարագայում դրսևորվել են շրջանառությունում կանխիկի նվազման առավել բարձր տեմպեր: Դրան նպաստել է նաև բյուջետային ծախսերի կառուցվածքի փոփոխությունը, այն է՝ ընդհանուրի մեջ կանխիկ ծախսերի տեսակարար կշռի կրճատումը: Բացի այդ, փողի պահանջարկն առաջին եռամսյակում զսպվել է Կառավարության իրականացրած հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությամբ, ինչն արտահայտվել է հարկերի հավաքագրման ծրագրի գերակատարման և ծախսերի ծրագրի թերակատարման պայմաններում տնտեսությունից իրացվելիության ներքաշմամբ:

Վերոնշյալ գործոններով պայմանավորված՝ փողի և դրամային զանգվածների աճի տեմպերն առաջին եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, զիջել են ծրագրված ցուցանիշները: Առավել մեծ է եղել դրամային զանգվածի շեղումը. ժամանակաշրջանի վերջի դրությամբ 12.5% աճ (ծրագրային՝ 19.8%):

Ծրագրային և փաստացի դրամավարկային ցուցանիշների համեմատական աղյուսակ (ըստ 2004 թ. ֆինանսական ծրագրի)

Ցուցանիշներ	I եռամսյակ		I եռ. նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ	
	Ծրագիր	Փաստացի	Ծրագիր	Փաստ.
Փողի զանգված (M2X, ժամ. վերջ)	-2.1	-3.1	25.0	23.7
Փողի զանգված (M2X, ժամ. միջին)	3.4	2.7	18.5	17.6
Փողի շրջապտույտի արագություն (միջին)	-26.2	-20.7	-6.8	-2.3
Դրամային զանգված (M2, ժամ. վերջ)	-4.4	-10.2	19.8	12.5
Դրամային զանգված (M2, ժամ. միջին)	2.0	-3.3	13.7	7.7
Դրամի շրջապտույտի արագություն (միջին)	-26.2	-17.5	-3.0	6.4
Փողի բազա (ժամ. վերջ)	-10.0	-12.8	14.4	10.8
Փողի բազա (ժամ. միջին)	4.9	-0.7	9.7	3.9
Փողի բազմարկիչ (ժամ. միջին)	-1.4	3.4	7.4	12.8
Դրամային բազմարկիչ (ժամ. միջին)	-2.7	-2.7	3.6	3.6


Փողի զանգվածի փաստացի մակարդակը գրեթե համընկել է ծրագրված ցուցանիշին, և արդյունքում ապահովվել են նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ աճի ծրագրված տեմպերը՝ 23.7% ժամանակաշրջանի վերջի դրությամբ (շեղումը՝ 1.3 տոկոսային կետ): Ի տարբերություն դրամային զանգվածի, կանխիկի պահանջարկի անկումը հիմնական մասով չեզոքացվել է արտարժութային ավանդների՝ նախատեսվածից ավելի արագ աճի տեմպերով:

Ինչ վերաբերում է փողի զանգվածի և դրա կառուցվածքային տարրերի եռամսյակային միտումներին, ապա դրանք, ինչպես և նախատեսվել էր, գործարար ակտիվության և փողի պահանջարկի անկման պարագայում, արտահայտվել են այդ ցուցանիշների նվազողական վարքագծերով: Այսպես, առաջին եռամսյակում փողի զանգվածը նվազել է 7.3 մլրդ դրամով կամ 3.1%-ով՝ ծրագրված 2.1%-ի, իսկ դրամային զանգվածը՝ 13.6 մլրդ դրամով կամ 10.2%-ով՝ ծրագրված 4.4%-ի փոխարեն:

Ինչպես արդեն նշվել է, փողի պահանջարկի անկումը դրսևորվել է շրջանառությունում գտնվող կանխիկի մեծ ծավալի կրճատմամբ՝ 13.5%: Ընդ որում, տարեսկզբին փողի գործառնական պահանջարկի սեզոնային անկման դրսևորումներն ուղեկցվել են նաև կանխիկի վրա առաջարկի գործոնների զսպողական ազդեցությամբ: Վերջինս էլ իր հերթին պայմանավորվել է եռամսյակի ընթացքում բյուջետային ծախսերի թերակատարմամբ և կատարված ծախսերի ընդհանուր ծավալում կանխիկ ծախսերի տեսակարար կշռի կրճատմամբ՝ կապված տարեսկզբից պետական հատվածում աշխատավարձերի վճարման քարտային համակարգին անցնելու հետ:

Տնտեսական աճի եռամսյակային ցածր տեմպերը մասամբ անդրադարձել են նաև դրամային ավանդների նախատեսված միտումների վրա, քանի որ ծրագրված զրոյական աճի պարագայում արձանագրվել է դրանց նվազում՝ 2.8%-ով կամ 1.1 մլրդ դրամով: Նվազումը տեղի է ունեցել բացառապես ցպահանջ ավանդների 4.4 մլրդ դրամով նվազման հաշվին, այն դեպքում, երբ ժամկետային ավանդներն աճել են 3.3 մլրդ դրամով:


Դրամով և արտարժույթով ավանդները՝ ըստ ժամկետայնության



Արտարժութային ավանդներն ավելացել են 6.3 մլրդ դրամով կամ 6.3%-ով՝ ակնկալվող 1%-ի փոխարեն: Ի տարբերություն դրամային ավանդների, արտարժութային միջոցներն առևտրային բանկերում ավելացել են հավասարաչափ և՛ ցպահանջ, և՛ ժամկետային ավանդների ներգրավման հաշվին՝ համապատասխանաբար 3.5 մլրդ և 2.8 մլրդ դրամով:


Եռամսյակի ընթացքում համեմատաբար կայուն է եղել առևտրային բանկերում ոչ ռեզիդենտների ավանդների վարքագիծը: Դրանք ավելացել են ընդամենը 483 մլն դրամով, այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում նվազել էին 5.2 մլրդ դրամով: Շարժերը, որպես կանոն, հիմնականում բաժին են ընկել արտարժութային ավանդներին:

Փողի զանգվածի կառուցվածքային փոփոխություններում, որպես կանոն, գերակշռել են հունվարին տեղի ունեցած շարժերը. մասնավորապես՝ փողի զանգվածը կրճատվել է 5.5%-ով, դրամային զանգվածը՝ 10%-ով, շրջանառությունում կանխիկը՝ 14%-ով: Փետրվար-մարտին միտումները հիմնականում կայունացել են, և, տնտեսական որոշակի աշխուժացման պայմաններում, դիտվել է նաև փողի պահանջարկի աճ: Դա արտահայտվել է փողի զանգվածի շուրջ 2.6% և շրջանառությունում կանխիկի 1% աճով:



Փողի զանգվածի վերոնշյալ կառուցվածքային փոփոխություններով պայմանավորված՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ 5.7 տոկոսային կետով նվազել է կանխիկի տեսակարար կշիռը փողի զանգվածում և կազմել 35.2%, փոխարենը՝ 5.2 տոկոսային կետով աճել է արտարժութային ավանդների տեսակարար կշիռը՝ հասնելով 47%-ի: Դրամային ավանդների տեսակարար կշիռը, դրանց համեմատաբար կայուն վարքագծի պարագայում, պահպանվել է միջին հաշվով 17.6%-ի սահմաններում:

Ներկայումս ֆինանսական միջնորդության աստիճանը Հայաստանում բավականին ցածր է, և քանի որ ակնկալվում է ֆինանսական համակարգի զարգացում և միջնորդության աճ, վերջին տարիներին ծրագրվել է փողի և դրամի շրջապտույտի արագությունների շարունակական նվազման սցենար:




Փաստացի արդյունքներով՝ արձանագրվել է փողի և դրամի շրջապտույտի արագությունների նվազում, սակայն նախատեսվածից դանդաղ տեմպերով: Փողի շրջապտույտի արագության միջին եռամսյակային նվազումը կազմել է 20.7%՝ ծրագրված 26.2-ի փոխարեն, իսկ դրամի շրջապտույտի արագությունը՝ 17.5%՝ 26.2-ի փոխարեն: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ ցուցանիշների միտումները չեն փոխվել. փողի շրջապտույտի արագությունը նվազել է 2.3%-ով՝ 6.8%-ի փոխարեն, իսկ դրամի շրջապտույտի արագությունը աճել է 6.4%-ով (ծրագրված էր 3% նվազում):

Նվազման ցածր տեմպերը հիմնականում պայմանավորվել են փողի ցածր պահանջարկով, որը առավելապես արտահայտվել է շրջանառությունում գտնվող կանխիկի կրճատման բարձր տեմպերով:

ՓՈՂԻ ԱՌԱՋԱՐԿ

Առաջին եռամսյակում փողի առաջարկի՝ 5.3 մլրդ դրամով կրճատումը պայմանավորվել է բանկային համակարգի ՁԱԱ-ի և 1.9 մլրդ դրամով՝ ՁՆԱ-ի նվազմամբ: Ընդ որում, ըստ ամսական բաշխվածության, ՁՆԱ-ն կտրուկ նվազել են հունվարին՝ 13.1 մլրդ դրամ, և գրեթե նույնքան աճել փետրվար-մարտին, իսկ ՁԱԱ նվազումն ամբողջությամբ բաժին է ընկել եռամսյակի վերջին երկու ամիսներին:

Բանկային համակարգի ՁԱԱ նվազումն ամբողջությամբ պայմանավորվել է ԿԲ արտարժութային պահուստների կառուցվածքային շարժերով՝ շուրջ 8.3 մլրդ դրամի նվազում (մանրամասն մեկնաբանությունները՝ «Փողի բազա» ենթաբաժնում): Այս տարի ևս պահպանվել են առևտրային բանկերի ՁԱԱ-ի շարունակական աճի միտումները, սակայն համեմատաբար դանդաղ տեմպերով՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 34.9%-ի փոխարեն՝ 7.4% աճ: Դա հիմնականում տեղի է ունեցել բանկերի կողմից ներգրավված արտարժութային ավանդների հաշվին, ինչն ուղեկցվել է նաև տնտեսության վարկավորման (հատկապես արտարժույթով) աճով: Աճին նպաստել են նաև արժութային շուկայում բանկերի իրականացրած առքի գործառնությունները:



Բանկային համակարգի ՁՆԱ կառուցվածքում նվազել են համակարգի հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունները և զուտ այլ ակտիվները՝ համապատասխանաբար 3.3 մլրդ և 5.1 մլրդ դրամով: Ընդ որում, եթե առաջինը պայմանավորվել է ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների 3.7 մլրդ դրամի նվազմամբ, ապա երկրորդ ցուցանիշի փոփոխություններում մեծ կշիռ են կազմել բանկերի զուտ այլ ակտիվների շարժերը: Վերջիններս հանգեցրել են այդ ցուցանիշի 6.2 մլրդ դրամի նվազման, որը պայմանավորող հիմնական գործոնները եղել են բանկերի կողմից եռամսյակի ընթացքում ստացված շահույթը, դեբիտորական ու կրեդիտորական հաշիվների շարժերի և միջբանկային պահանջների ու պարտավորությունների հաշվապահական շեղումը: Ընդ որում, վերջին երկուսը կայուն միտում ունեցող շարժեր չեն և հաջորդ ժամանակահատվածում կարող են փոխվել հակառակ ուղղությամբ:


Առևտրային բանկերի հանդեպ տնտեսության պարտավորությունների ցուցանիշն առաջին եռամսյակում աճել է 6.6 մլրդ դրամով կամ 6.4%-ով, որը տարեսկզբի գործարար պասիվության և փողի ցածր պահանջարկի պայմաններում բավականին բարձր ցուցանիշ է: Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում արձանագրվել է 6.3 մլրդ դրամի կամ 6.8%-ի նվազում, չնայած երկու դեպքում էլ բանկային համակարգը տնօրինել է իրացվելիության ավելցուկի բարձր մակարդակ. 2003թ. առաջին եռամսյակում՝ 3.8 մլրդ, իսկ 2004-ին՝ 4.5 մլրդ դրամ: Տնտեսության վարկավորման

աճի նման բարձր տեմպերը հիմնականում կարելի է բացատրել տրամադրված վարկերի ընդհանուր ծավալում սպառողական վարկերի մեծ տեսակարար կշռով: Դա է վկայում նաև այն, որ եռամսյակի ընթացքում վարկավորման գերակշիռ մասը (88.8%) ուղղվել է տնային տնտեսություններին: Միևնույն ժամանակ, վարկավորման աճին մեծապես նպաստել է մեծածավալ արտարժութային միջոցների ներգրավումը բանկային համակարգ, որն առավելապես պայմանավորվել է կապիտալ ներհոսքով: Վերջինիս ազդեցությունն արտահայտվել է նաև արտարժույթի շուկայում՝ փոխարժեքի արժեքավորմամբ. նախորդ տարվա վերջի համեմատ 0.8%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ՝ 4.7%-ով:

Բանկերի կողմից ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերն աճել են մոտ 900 մլն դրամով, որի կառուցվածքում 2 անգամ ավելի մեծ ծավալ են կազմել արտարժույթով տրամադրված վարկերը:

ՓՈՂԻ ԵՎ ԴՐԱՄԱՅԻՆ ԲԱԶՄԱՐԿԻՉՆԵՐ

Փողի բազմարկչի միջին եռամսյակային մեծությունը կազմել է 2.12, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 12.8%-ով՝ ծրագրված 7.4%-ի փոխարեն: Փողի բազմարկչի աճը պայմանավորվել է արտարժութային ավանդների աճի բարձր տեմպերով, ինչի արդյունքում դիտվել է նաև նախորդ եռամսյակի համեմատ փողի բազմարկչի աճ (3.4%-ով), այն դեպքում, երբ ծրագրված էր 1.4% նվազում:



Պահպանվել է դրամային բազմարկչի ծրագրված մակարդակը՝ միջին եռամսյակային ցուցանիշը կազմել է 1.15, որն ապահովել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նախատեսված 3.6% աճը և նախորդ եռամսյակի համեմատ 2.7% նվազումը:


ՓՈՂԻ ԲԱԶԱ


Ինչպես նշվել է, հաշվի առնելով տարեսկզբին սովորաբար դրսևորվող գործարար ակտիվության անկումը՝ ԿԲ-ն նախատեսում էր առաջին եռամսյակում փողի բազայի 10% կամ 11.8 մլրդ դրամի ինքնավար կրճատում: Ընդ որում, նախորդ տարիների միտումներից ելնելով՝ կրճատման շուրջ 82%-ը պետք է բաժին ընկներ հունվարին:

Եռամսյակի փաստացի արդյունքներով՝ փողի բազայի նվազման տեմպերը փոքր-ինչ գերազանցել են սպասումները: Եռամսյակի ընթացքում այն կրճատվել է 12.8%-ով և մարտի վերջի դրությամբ կազմել 103.4 մլրդ դրամ, որը 1.2 մլրդ դրամով ցածր է տատանման միջակայքի ներքին սահմանից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ փոփոխվել են նաև փողի բազայի աճի տեմպերը. ծրագրված 14.4% աճի փոխարեն՝ 10.8%:


Փողի բազայի ծրագրային ցուցանիշներից շեղումների հիմնական պատճառը փողի պահանջարկի առավել մեծ նվազումն էր՝ պայմանավորված ցածր տնտեսական աճով: Որպես կանոն, փողի բազայի վարքագծի վրա էական ազդեցություն է ունեցել նաև Կառավարության իրականացրած հարկաբյուջետային քաղաքականությունը, որն այս տարի դրսևորվել է ԿԲ-ից դուրս գտնվող կանխիկի վարքագծի վրա մեծ ազդեցությամբ (մեկնաբանությունները նույնն են, ինչ որ՝ բանկային համակարգից դուրս գտնվող կանխիկինը): Այսպես, ԿԲ-ից դուրս կանխիկը նվազել է 12.5 մլրդ դրամով կամ 12.9%-ով, այն դեպքում, երբ ըստ ԿԲ գնահատումների՝ պետք է նվազեր 8%-ով:

Ընդ որում, ըստ ամսական վարքագծի, ԿԲ-ից դուրս կանխիկը, ինչպես և նախորդ տարիներին, հիմնականում նվազել է հունվարին, այնուհետև պահպանել է կայուն մակարդակ:







Փոխարենը՝ բանկային իրացվելիությունը կուտակվել է ԿԲ-ում բանկերի թղթակցային հաշիվներում՝ որոշ դեպքերում հանգեցնելով ավելցուկային պաշարների բավականին բարձր մակարդակի: Մասնավորապես, փետրվարի սկզբին թղթակցային հաշիվների մնացորդը հասել է 23.0 մլրդ, իսկ իրացվելիության ավելցուկը՝ 7 մլրդ դրամի, իսկ մարտի կեսերին՝ համապատասխանաբար 20.4 մլրդ և 6.6 մլրդ դրամի:



Այս պայմաններում ԿԲ-ն կիրառել է լրացուցիչ ներքաշող գործիքներ, մասամբ՝ իրացվելիության ներքաշման արժութային սվոպ: Արդյունքում՝ իրացվելիության ավելցուկի միջին ամսական մակարդակը հունվարի 5.4 մլրդ դրամից մարտին իջել է 3.6 մլրդ դրամի, իսկ թղթակցային հաշիվների մնացորդը դեկտեմբերի վերջի 21.7 մլրդ դրամից մարտի վերջին հասել է 19.1 մլրդ դրամի:



Փողի առաջարկի սեզոնային կրճատման գործընթացում փողի բազայի 15.2 մլրդ դրամի նվազումն այս տարվա սկզբին բաշխվել է ՀՀ ԿԲ ՁԱԱ և ՁՆԱ փոփոխությունների միջև 8.3 մլրդ և 6.9 մլրդ դրամ համամասնությամբ: ՁԱԱ նվազումը պայմանավորվել է ավելի քան 2.2 մլրդ դրամին համարժեք ծավալով արտաքին պարտքի սպասարկմամբ (ներառված չէ ԱՄՀ վարկի մարումը), արտարժութային շուկայում ԿԲ կողմից 3.8 մլրդ դրամին համարժեք արտարժույթի վաճառքով և 2.3 մլրդ դրամի այլ փոխարկումներով: Այդուհանդերձ, ԿԲ ՁԱԱ մակարդակը եռամսյակի վերջում գերազանցել է ծրագրված ցուցանիշը շուրջ 2.6 մլրդ դրամով և կազմել 145.5 մլրդ դրամ:



ՀՀ ԿԲ ՁՆԱ-ն, ընդհակառակը, ցածր էր ծրագրված մակարդակից 5.9 մլրդ դրամով. կազմել է –42.1 մլրդ դրամ: Վերջինիս նվազումը պայմանավորվել է ԿԲ հանդեպ Կառավարության զուտ պարտավորությունների (3.7 մլրդ դրամ) և բանկերի պարտավորությունների (4.3 մլրդ դրամ) ցուցանիշների փոփոխություններով: ԿԲ զուտ այլ ակտիվներն այդ ընթացքում ավելացել են 1.1 մլրդ դրամով՝ հիմնականում եռամսյակի վերջին օրը ԿԲ իրականացրած իրացվելիության ներքաշման սվոպ գործառնության ազդեցությամբ:

Կառավարության պարտավորությունները նվազել են իրականացված հարկաբյուջետային քաղաքականության ազդեցությամբ, ինչն հիմնականում արտահայտվել է Գանձապետարանի միասնական հաշվի մնացորդի 2.7 մլրդ դրամով ավելացմամբ և ԿԲ արժեթղթերի պորտֆելից վերջին 1.0 մլրդ դրամի մարմամբ:

Բանկերի հետ փոխհարաբերությունների արդյունքում ձևավորվել է բանկերի զուտ պարտավորությունների ակնկալվող ցուցանիշից (6.4 մլրդ դրամ) ցածր մակարդակ՝ 4.3 մլրդ դրամ: Դա, ինչպես արդեն

նշվել է, պայմանավորված էր փողի բազայի կառուցվածքային համամասնությունների փոփոխությամբ, այն է՝ ԿԲ-ից դուրս կանխիկի նվազման՝ սպասվածից բարձր տեմպերի և դրա հետևանքով ձևավորված ավելցուկային պաշարների բավականին բարձր մակարդակի արձանագրում:

Ստեղծված իրավիճակից է բխել եռամսյակի ընթացքում ԿԲ կիրառած գործիքակազմը (ամբողջությամբ՝ ներքաշող գործիքներ): Դրամային գործիքների կիրառման սահմանափակ հնարավորությունների պարագայում մեծ տեսակարար կշիռ է կազմել արտարժույթի վաճառքը՝ 3.8 մլրդ դրամ, որը զուգորդվել է ԿԲ կողմից 2.7 մլրդ դրամ համախառն ծավալով իրացվելիության ներքաշման արժութային սվոպի կնքմամբ (եռամսյակի ընթացքում իրացվելիության զուտ ներքաշումը՝ 646 մլն դրամ): Ընդ որում, վաճառքն էականորեն զիջել է ծրագրված ծավալը (10.3 մլրդ դրամ), քանի որ իրացվելիության ավելցուկի ներքաշման խնդիրը հիմնականում լուծվել է զսպողական հարկաբյուջետային քաղաքականության միջոցով: Այդուհանդերձ, ԿԲ-ն չի փորձել առավելագույն չափով ներքաշել ավելցուկային իրացվելիությունը, քանի որ, ինչպես արդեն նշվել է, եռամսյակի ընթացքում դիտվել է տնտեսության վարկավորման համեմատաբար ակտիվ գործընթաց:


Եռամսյակի ընթացքում բանկերի հետ կնքվել է նաև 2.1 մլրդ դրամ համախառն ծավալով հակադարձ ռեպո համաձայնագիր, որի մնացորդը մարտին զրոյացվել է: Անհամեմատ բարձր է եղել բանկերի կողմից ԿԲ-ում ավելցուկ իրացվելիության ավանդադրման մշտական հնարավորության գործիքից օգտվելու նախաձեռնությունը՝ 35.5 մլրդ դրամ համախառն ծավալով, որի միջոցով այդ ժամանակահատվածում զուտ ներքաշվել է 3.6 մլրդ դրամի իրացվելիություն:

Համեմատության համար նշենք, որ նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ԿԲ կողմից ներգրավված ավանդների համախառն ծավալն ավելի քան 3 անգամ ցածր էր այս տարվա ցուցանիշից՝ 11.6 մլրդ դրամ: Փոխարենը՝ արտարժույթի շուկայում ԿԲ-ն վաճառել է շուրջ 4 անգամ ավելի արտարժույթ (14.7 մլրդ դրամ):

Ամփոփելով նշենք, որ ԿԲ իրականացրած դրամավարկային քաղաքականության արդյունքում պահպանվել են առաջին եռամսյակի համար ծրագրված մակրոտնտեսական համամասնությունները, մասնավորապես՝ փողի առաջարկը ԿԲ-ն կառավարել է արձանագրված ցածր տնտեսական աճին համահունչ: Այդ պարագայում եռամսյակի սղաճը ժամանակահատվածի վերջի դրությամբ կազմել է 2.2%՝ զիջելով ծրագրված ցուցանիշն ընդամենը 0.5 տոկոսային կետով: Էական շեղումներ չեն սպասվում նաև երկրորդ եռամսյակի ծրագրված ուղղություններում, և եթե պահպանվեն տնտեսական աճի՝ ծրագրայինից ցածր տեմպերը, ԿԲ-ն կճշգրտի փողի բազայի կառավարման սցենարը՝ այն իրականացնելով տատանման միջակայքի ներքին սահմանին մոտ: Արդյունքում՝ ԿԲ-ին կհաջողվի ապահովել երկրորդ եռամսյակի համար ծրագրված 2.4%, հետևաբար և տարեկան մինչև 3% սղաճի ցուցանիշները:

ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐ


Ֆինանսական շուկայում ևս միտումները ձևավորվել են իրացվելիության ավելցուկի բարձր մակարդակի ազդեցությամբ, որի պարագայում շարունակվել է տոկոսադրույքների նվազումը: Դա հատկապես արտահայտվել է ՊՊ առաջնային և երկրորդային շուկաներում. տեղաբաշխված 9-12-ամսյա արժեթղթերի եկամտաբերությունը առաջնային շուկայում տարեսկզբի 9.7-ից մարտին հասել է 5.9%-ի, իսկ երկրորդային շուկայում՝ 10.9-ից 7.6%-ի:




Ելնելով շուկայական տոկոսադրույքների նշված միտումներից՝ ՀՀ ԿԲ-ն, շուկայական և իր գործառնությունների միջև ձևավորված տարբերությունը վերացնելու նպատակով, եռամսյակի ընթացքում 1 տոկոսային կետով իջեցրել է ռեպո համաձայնագրերի տոկոսադրույքը՝ սահմանելով 6% և 0.5 տոկոսային կետով՝ ավանդներինը՝ սահմանելով 3%:

Ֆինանսական շուկայի վարկային և ավանդային հատվածներում տոկոսադրույքների՝ 0.5 տոկոսային կետով համապատասխանաբար նվազման և աճի արդյունքում վարկերի և ավանդների տոկոսադրույքների տարբերությունը (սպրեդը) նվազել է՝ նախորդ տարվա դեկտեմբերի 15.8% միջին ցուցանիշից մարտին հասնելով 14.8%-ի: Ընդ որում, նախորդ տարիներին արտարժութային և դրամային սպրեդների փոփոխությունների համաչափությունն այս եռամսյակում խախտվել է, և դրամային սպրեդի նվազման առաջանցիկ տեմպերի արդյունքում դրանց մակարդակները փետրվար-մարտին գրեթե համընկել են՝ կազմելով 15%:

Չնայած փողի բազան կառավարվել է առավելապես միջակայքի ներքին սահմանին մոտ՝ ելնելով փողի պահանջարկի նվազման սեզոնային դրսևորումներից, այնուամենայնիվ ԿԲ իրականացրած դրամավարկային քաղաքականությունը չի կարելի բնութագրել զսպողական, քանի որ եռամսյակի ընթացքում կրկին դիտվել է դրամավարկային պայմանների ինդեքսի[1] նվազում: Դա առավելապես պայմանավորվել է իրական տոկոսադրույքների նվազմամբ, որի տեմպերը գերազանցել են արդյունավետ փոխարժեքի արժեքավորման տեմպերը:




Դրամավարկային կանոնների[2] հաշվարկները ևս վկայում են, որ փողի բազան կառավարվել է կանոնով հաշվարկված ցուցանիշից բավականին ցածր մակարդակում, հետևաբար ԿԲ-ն վարել է կրճատողական դրամավարկային քաղաքականություն: Սակայն, եթե հաշվի առնենք, որ կանոնի հաշվարկն արտահայտում է միայն նախորդ միտումների տրամաբանական շարունակությունը, ապա առաջին եռամսյակում փողի պահանջարկի (հատկապես կանխիկի հանդեպ) նվազման առավել խիստ սեզոնայնության դրսևորումը հանգեցրել է փողի բազայի փաստացի ցուցանիշի՝ կանոնով հաշվարկված ցուցանիշի աճողական վարքագծի համեմատ առավել ցածր վարքագծի դրսևորմանը:




[1] *Դրամավարկային պայմանների ինդեքսի հայեցակարգը հրապարակված է 2001թ. 2-րդ եռամսյակի «ԿԲ բաներում»:*
[2] *Դրամավարկային կանոնների հաշվարկման մեթոդաբանությունը հրապարակված է ՀՀ 2002 թվականի դրամավարկային քաղաքականության ծրագրում, առանձին հավելվածով:*

2004 թվականի առաջին եռամսյակում ընդհանուր առմամբ շարունակվել է նախորդ տարվա ընթացքում ֆինանսական շուկայում դրսևորված՝ տոկոսադրույքների անկման միտումը: ԱՄՆ դոլարով ներգրավված միջոցների տոկոսադրույքները նախորդ եռամսյակի վերջի համեմատ մնացել են անփոփոխ, իսկ ՀՀ դրամով ներգրավված միջոցների տոկոսադրույքները հունվարին աճել են, սակայն եռամսյակի ընթացքում ցուցաբերել են նվազման միտում: Այսպիսով, եռամսյակի ընթացքում տոկոսադրույքները տատանվել են. դրամային ավանդներինը՝ 7%-ի, իսկ ԱՄՆ դոլարով ավանդներինը՝ 6.2%-ի շրջակայքում: Արդյունքում՝ ԱՄՆ դոլարով և ՀՀ դրամով ավանդների տոկոսադրույքների տարբերությունը կազմել է 0.8 տոկոսային կետ՝ նախորդ եռամսյակի 0.5-ի փոխարեն:




Ավելի քան 1 տոկոսային կետով նվազել են ՀՀ առևտրային բանկերի տրամադրած դրամային վարկերի և ԱՄՆ դոլարով վարկերի տոկոսադրույքները՝ համապատասխանաբար կազմելով 22% և 21%:




2004թ. առաջին եռամսյակում տոկոսադրույքների միջին մակարդակի նվազման միտում է արձանագրվել նաև պետական պարտատոմսերի շուկայում:

ՊՊ առաջնային շուկան առաջին եռամսյակի ընթացքում բնութագրվել է պարտատոմսերի նկատմամբ ընդհանուր պահանջարկի աճով՝ կազմելով թողարկման ծավալի 272.5%-ը: Բանկային համակարգում բավականին բարձր ավելցուկային իրացվելիության առկայությամբ պարտատոմսերի նկատմամբ պահանջարկի աճը հանգեցրել է ՊՊ եկամտաբերության անկման: Այս պայմաններում շարունակվել է տոկոսադրույքների նվազման միտումը, որի արդյունքում ՊԿՊ միջին տոկոսադրույքը նախորդ եռամսյակի 9.99%-ի համեմատությամբ նվազել է մոտ 3.63 տոկոսային կետով՝ կազմելով 6.36%, իսկ ՄՄԺՊ-երինը՝ 4.59 տոկոսային կետով՝ կազմելով 9.71%, Հունվարին ՊԿՊ միջին տարեկան եկամտաբերությունը կազմել է 7.53%, փետրվարին՝ 6.37%, մարտին 5.95%, իսկ ՄՄԺՊ-երինը՝ փետրվարին և մարտին՝ համապատասխանաբար 9.65% և 9.78%:



2004թ. առաջին եռամսյակի ընթացքում տեղի է ունեցել պետական կարճաժամկետ պարտատոմսերի 6 թողարկում՝ 3.2 մլրդ դրամ ընդհանուր ծավալով՝ 274 - 364 օր շրջանառության ժամկետով և պետական միջին ժամկետայնության մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի 2 թողարկում՝ 4.7 մլրդ դրամ ընդհանուր ծավալով: Նշված ժամանակահատվածում ՀՀ ՖԷՆ-ի կողմից իրականացվել է միջնաժամկետ մասնակի մարումներով պարտատոմսերի հետգնում՝ 262.160 մլն դրամ ծավալով՝ 7.35% միջին եկամտաբերությամբ:




Արդյունքում, մարտի 31-ի դրությամբ շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ընդհանուր ծավալը նախորդ ժամանակահատվածի (31.12.2003թ.) համեմատ նվազել է 770 մլն դրամով՝ կազմել է 45220 մլն դրամ:

Առաջին եռամսյակում ռեզիդենտ ոչ բանկ ներդրողների կողմից պետական արժեթղթերում կատարվող ներդրումների մակարդակի էական փոփոխություններ չեն եղել: Վերջիններիս պարտատոմսերի տե-

սակարար կշիռն աճել է 0.46 տոկոսային կետով՝ եռամսյակի վերջին կազմելով 23.43% կամ 10595 մլն դրամ: 0.28 տոկոսային կետով նվազել է ոչ ռեզիդենտների ՊՊ տեսակարար կշիռը:


Արդյունքում՝ մարտի վերջին ռեզիդենտներին պատկանող պարտատոմսերի ընդհանուր ծավալը կազմել է շրջանառության մեջ գտնվող պետական պարտատոմսերի ամբողջ ծավալի մոտ 95.47%-ը՝ 43172 մլն դրամ, իսկ ոչ ռեզիդենտներինը՝ 4.53%-ը կամ 2048 մլն դրամ:



Երկրորդային շուկայի գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը նախորդ եռամսյակի համեմատությամբ նվազել է 3.24 տոկոսային կետով՝ կազմելով 7.61%: Միևնույն ժամանակ, ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունների ծավալները նախորդ եռամսյակի համեմատությամբ կրճատվել են 3.5 մլրդ դրամով՝ կազմելով 8.6 մլրդ դրամ: Երկրորդային շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 665 մլն դրամ:

Առաջին եռամսյակի ընթացքում միջբանկային ռեպո շուկայում իրականացված գործարքների նվազում է արձանագրվել: Նախորդ եռամսյակի համեմատ միջբանկային ռեպո գործառնությունների ծավալները նվազել են 9.3 մլրդ դրամով՝ կազմելով 16.7 մլրդ դրամ: Գործարքների միջին ժամկետայնությունը կազմել է 8 օր: Միջբանկային ռեպո շուկայի միջին շաբաթական շրջանառությունը կազմել է մոտ 1.3 մլրդ դրամ: Գործառնությունների միջին տարեկան եկամտաբերությունը նախորդ եռամսյակի համեմատ նվազել է 2.38 տոկոսային կետով և կազմել 5.09 %:


Վերոնշյալ բոլոր հատվածներում նկատված տոկոսադրույքների նվազումը արտացոլվել է նաև սփոթ եկամտաբերության կորի ամբողջ երկայնքով՝ ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ հատվածներում, թողնելով կորի թեքվածությունն անփոփոխ: Երկրորդային շուկայում կարճաժամկետ պետական պարտատոմսերով իրականացված գործառնությունների տոկոսադրույքները եռամսյակի վերջին օրվա դրությամբ համախմբվել են 4.5%-ի, իսկ երկարաժամկետներինը՝ 8.5%-ի շուրջ:




ՀՀ կենտրոնական բանկը դրամավարկային քաղաքականության գործիքների տոկոսադրույքները սահմանել է ֆինանսական շուկայում առկա իրավիճակին համահունչ: 2004 թ. առաջին եռամսյակում դրամավարկային գործիքների տոկոսադրույքները ԿԲ խորհուրդը փոփոխել է մարտին. ռեպո համաձայնագրերինը 7%-ից իջեցվել է 6%-ի, իսկ ավանդներինը՝ 3.5%-ից 3%-ի: Լոմբարդային վարկերի տոկոսադրույքը ամբողջ ժամանակահատվածի ընթացքում մնացել է անփոփոխ՝ 20%:

2004 թ. առաջին եռամսյակում ֆինանսական շուկայում նկատված տոկոսադրույքների անկումը հիմնականում պայմանավորված էր բանկերի բարձր իրացվելիությամբ, որի մասին վկայում էր նաև Կենտրոնական բանկի ավանդների նկատմամբ ձևավորված մեծ պահանջարկը: ՀՀ կենտրոնական բանկ առաջին եռամսյակում ներկայացվել է 35320 մլն դրամի ավանդի պահանջարկ, ընդ որում՝ հունվարին ներդրվել է 11650 մլն դրամի ավանդ՝ սահմանված 3.5% եկամտաբերությամբ, փետրվարին՝ 8840 մլն դրամի ավանդ՝ դարձյալ 3.5%-ով: Իսկ մարտին միջին կշռված տարեկան 3.05%-ով ներդրվել է 14830 մլն դրամի ավանդ:

Այս եռամսյակում, արդեն վերոնշյալ հանգամանքներով պայմանավորված, պահանջարկ չկար լոմբարդային վարկերի նկատմամբ:




Բարձր մակարդակի ավելցուկային իրացվելիությամբ պայմանավորված՝ 2004 թվականի առաջին եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկը ակտիվացրել է գործառնությունները ներքին արտարժութային շուկայում, փոխարենը, պայմանավորված դրամական գործիքների սակավությամբ, ներքին դրամային շուկայում ցուցաբերել է ցածր ակտիվություն: Արդյունքում՝ ՀՀ ԿԲ սահմանած տարեկան 7%-ով մեկ հակադարձ ռեպո գործառնություն իրականացվել է հունվարին և վերակնքվել փետրվարին: Դրանց ընդհանուր ծավալը կազմել է մոտ 2 մլրդ 56 մլն դրամ, իսկ միջբանկային արժութային շուկայում դրամավարկային գործիքներից կիրառվել է արժութային սվոփը և արտարժույթի վաճառքը: ՀՀ ԿԲ-ն առաջին եռամսյակում, ավելցուկային իրացվելիության ներքաշման խնդիրներից ելնելով, իրականացրել է 4.75 մլն ԱՄՆ դոլարի արժութային սվոփ՝ 5.66 միջին կշռված տոկոսադրույքով և վաճառել 6.7 մլն ԱՄՆ դոլար՝ 564.73 դրամ միջին կշռված փոխարժեքով:



ՀՀ կենտրոնական բանկի սահմանած ՀՀ դրամի հաշվարկային փոխարժեքը ԱՄՆ դոլարի նկատմամբ 2004թ. առաջին եռամսյակում դրսևորել է արժեքավորման միտում՝ հիմնականում պայմանավորված արտահանման ծավալների և կապիտալ ներհոսքի աճով: Եռամսյակի վերջում, նախորդ տարվա վերջի համեմատ, գրանցվել է 0.79% արժեքավորում՝ 566.00 դրամից 561.55 դրամ (վարիացիա՝ 6.55, միջին շեղում՝ 2.56 դրամ, նվազագույնը՝ 561.43 դրամ, առավելագույնը՝ 570.00 դրամ):

Արժութային շուկայում եռամսյակի ընթացքում ԱՄՆ դոլարի առք ու վաճառքի համախառն ծավալը կազմել է մոտ 416.78 մլն ԱՄՆ դոլար (221.05 մլն առք և 195.73 մլն վաճառք), իսկ միջբանկային գործառնությունների համախառն ծավալը՝ 44.76 մլն ԱՄՆ դոլար (23.88 մլն ԱՄՆ դոլար՝ առք, 20.87 մլն ԱՄՆ դոլար՝ վաճառք): Առքի ծավալները ըստ ամիսների կազմել են՝ 60.35 մլն, 75.19 մլն և 85.51 մլն ԱՄՆ դոլար, վաճառքինը՝ 52.33 մլն, 69.23 մլն և 74.17 մլն ԱՄՆ դոլար: Միջին ամսական փոխարժեքները համապատասխանաբար կազմել են 568.23 դրամ, 564.42 դրամ և 562.93 դրամ: Նախորդ տարի նույն ժամանակահատվածում համախառն ծավալը կազմել է 343.92 մլն ԱՄՆ դոլար, փոխարժեքը՝ 587.64 դրամ:



ՀՀ բանկերի և վարկային կազմակերպությունների գործունեությունը

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐ

2004թ. առաջին եռամսյակում ՀՀ բանկային համակարգում արձանագրվել են բոլոր հիմնական ցուցանիշների աճի զգալի միտումներ: Մարտի 31-ի դրությամբ ՀՀ տարածքում գործել են 20 առևտրային բանկեր՝ 224 մասնաճյուղերով: Առաջին եռամսյակի ընթացքում բանկային համակարգի մասնաճյուղերի քանակը ութով նվազել է:

31.03.04թ. դրությամբ 20 բանկերից մեկը գործել է հատուկ վերահսկողության դաշտում:

Բանկային համակարգի առաջին եռամսյակի գործունեությունը ներկայացվել է 31.03.2004թ. դրությամբ ընդհանուր վերահսկողության դաշտում գործող 19 առևտրային բանկերի տվյալների հիման վրա:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼ

2004 թ. առաջին եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր կապիտալը ավելացել է 5.2.%-ով և 31.03.04թ. դրությամբ կազմել է 52.7 մլրդ դրամ:

Ընդհանուր կապիտալի 2.6 մլրդ դրամ աճը հիմնականում պայմանավորված է եռամսյակի ընթացքում բանկային համակարգի կողմից 2.0 մլրդ դրամ զուտ շահույթի ապահովմամբ: Ընդհանուր կապիտալի աճին նպաստել են նաև մեկ բանկում կանոնադրական հիմնադրամի 281 մլն դրամով համալրումը և մեկ բանկում շենքերի և շինությունների վերագնահատման պահուստի 735 մլն դրամով աճը:

Բանկային համակարգի նորմատիվային ընդհանուր և հիմնական կապիտալների առաջանցիկ աճը (համապատասխանաբար 8.2% և 6.8%), ռիսկով կշռված ակտիվների 4.0% աճի պարագայում, հանգեցրել է նախորդ եռամսյակի համեմատ կապիտալի համարժեքության ցուցանիշների բարձրացման: Ընդհանուր կապիտալի համարժեքության ցուցանիշն ավելացել է 1.4 տոկոսային կետով, իսկ հիմնական կապիտալի համարժեքության ցուցանիշը՝ 0.9 տոկոսային կետով և համապատասխանաբար կազմել 35.5% և 33.5%:

Բանկային համակարգի ընդհանուր կապիտալի և ընդհանուր ակտիվների հարաբերակցության ցուցանիշը (լևերեջ գործակիցը) եռամսյակի ընթացքում նվազելով 0.8 տոկոսային կետով՝ 31.03.2004 թ. դրությամբ կազմել է 16.9%՝ պայմանավորված կապիտալի աճի համեմատ ակտիվների առաջանցիկ աճի տեմպերով:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Եռամսյակի ընթացքում բանկային համակարգի ընդհանուր պարտավորություններն ավելացել են 11.6%-ով (26.9 մլրդ դրամով) և 31.03.2004թ. դրությամբ կազմել 259.0 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունների աճ է արձանագրվել 16 բանկերում, իսկ նվազում՝ 3 բանկերում:

Հաշվետու ժամանակաշրջանում բանկերի լորո թղթակցային հաշիվները աճել են 32.7%-ով, բանկերի նկատմամբ այլ պարտավորությունները՝ 108.0%-ով, այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ պարտավորությունները նվազել են 19.6%-ով, ֆիզիկական և իրավաբանական անձանց ընդհանուր պարտավորությունները ավելացել են 3.4%-ով: Բանկային համակարգի ցպահանջ պարտավորություններն ավելացել են ընդամենը 1.0%-ով (1.1 մլրդ դրամով), ընդ որում՝ հունվարին ցպահանջ պարտավորությունները նվազել են (վերջին տարիներին հունվար ամսին գրեթե միշտ արձանագրվել է ցպահանջ պարտավորությունների նվազում), իսկ փետրվարին և մարտին աճել են: Ցպահանջ պարտավորությունների համեմատ ժամկետային ավանդները ավելացել են առաջանցիկ տեմպերով: Վերջիններիս ծավալներն ավելացել են 7.1%-ով (5.2 մլրդ դրամով): 31.03.2004 թ. դրությամբ ցպահանջ պարտավորությունները կազմել են 111.6 մլրդ դրամ, իսկ ժամկետային ավանդները՝ 77.6 մլրդ դրամ: Հատկանշական է, որ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավված ցպահանջ և ժամկետային միջոցների ընդհանուր ծավալի միայն 22.0%-ն է ՀՀ դրամով: Ֆիզիկական անձանց ցպահանջ և ժամկետային պարտավորություններում դրամային միջոցների տեսակարար կշիռը կազմել է ընդամենը 9.3%, որը զիջում է իրա-

վաբանական անձանց ցպահանջ և ժամկետային պարտավորություններում դրամային պարտավորությունների 36.7% տեսակարար կշռին:

Պարտավորությունների աճը հիմնականում արտարժութային պարտավորությունների աճի հետևանք է (92.8%-ը), ինչի պատճառով նախորդ եռամսյակի համեմատ ընդհանուր պարտավորությունների կազմում դրամով պարտավորությունների տեսակարար կշիռը նվազել է 2.1 տոկոսային կետով և 31.03.2004 թ. դրությամբ կազմել 24.9%:

Բանկային համակարգի ներգրաված միջոցների կառուցվածքը



1. Ֆիզիկական անձանց ցպահանջ ավանդներ, 2. Իրավաբանական անձանց ցպահանջ ավանդներ, 3. Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդներ, 4. Իրավաբանական անձանց ժամկետային ավանդներ, 5. Պարտավորություններ այլ ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ 6. Բանկերի թղթակցային հաշիվներ և այլ պարտավորություններ, 7. Վճարվելիք տոկոսներ, 8. Պարտավորություններ կառավարության նկատմամբ

Ընդհանրացնելով կարելի է արձանագրել, որ թե՛ ֆիզիկական անձանցից, թե՛ իրավաբանական անձանցից ներգրավված միջոցները եռամսյակի ընթացքում գրեթե հավասարաչափ են աճել՝ համապատասխանաբար 3.3%-ով և 3.6%-ով: Այնուամենայնիվ դարձյալ շարունակվել են ավանդների՝ վերջին տարիներին ձևավորված աճի միտումները:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՏԻՎՆԵՐ

2004 թ. առաջին եռամսյակում բանկային համակարգի ակտիվներն աճել են 10.5%-ով (29.5 մլրդ դրամով) և 31.03.04թ. դրությամբ կազմել 311.7 մլրդ դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում ակտիվներն ավելացել են 16 բանկերում և նվազել 3 բանկերում:

Զգալի աճել են ներդրումների ծավալները օտարերկրյա արժեթղթերում (17.7 մլրդ դրամով), պետական արժեթղթերում (2.5 մլրդ դրամով), այլ պահանջները Կենտրոնական բանկի նկատմամբ (4.4 մլրդ դրամով) և նվազել՝ Կենտրոնական բանկում թղթակցային հաշիվները (2.9 մլրդ դրամով):

Տնտեսությանը տրված վարկերը եռամսյակի ընթացքում ավելացել են 8.7%-ով կամ 8.3 մլրդ դրամով: Աճը հիմնականում ապահովվել է ի հաշիվ ֆիզիկական անձանց տրամադրված վարկերի ծավալների ավելացման հաշվին:


Ֆիզիկական անձանց վարկերն ավելացել են 20.8%-ով (6.2 մլրդ դրամով), իրավաբանական անձանց վարկերը՝ 4.0%-ով (2.5 մլն դրամով), իսկ բանկի հետ կապված անձանց և աշխատակիցներին տրամադրված վարկերը նվազել են 9.8%-ով (365 մլն դրամով):

Ընդհանուր վարկային ներդրումները (որտեղ ներառված են տնտեսությանը տրամադրված վարկերը, միջբանկային ավանդները ու վարկերը, ռեպո համաձայնագրերը, լիզինգը, ֆակտորինգը) ավելացել են 8.5%-ով՝ 31.03.2004թ. դրությամբ կազմելով 140.0 մլրդ դրամ: Ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումները աճել են 12.0%-ով (3.3 մլրդ դրամով), ռեզիդենտներին տրամադրված վարկային ներդրումները՝ 7.5%-ով (7.7 մլրդ դրամով):

Նվազել են միայն արդյունաբերության ճյուղին տրամադրված վարկերի ծավալները (2.8%-ով կամ 827 մլն դրամով) և ֆինանսական հատվածի վարկավորման ծավալները (6.6%-ով կամ 544 մլն դրամով): Վարկավորման ծավալները զգալի մեծացել են սպառողական (4.7 մլրդ դրամով) և առևտրի (2.0 մլրդ դրամով) վարկերում, որոնք համապատասխանաբար կազմել են 20.1% և 9.4%:


Արդյունաբերության ճյուղի վարկավորման նվազումը հիմնականում պայմանավորվել է էներգետիկայի և հանքագործական արդյունաբերություններում վարկերի նվազմամբ: Արդյունաբերական ճյուղերում վարկավորման նկատելի աճ է արձանագրվել մետալուրգիայի և մեքենաշինական, շինանյութերի և թանկարժեք իրերի արդյունաբերություններում:

Բանկային համակարգի ակտիվների կառուցվածքը



1. Կանխիկ դրամական միջոցներ
2. Թղթակցային հաշիվներ բանկերում
3. Պետական արժեթղթեր
4. Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմակ. նկատմամբ
5. Թղթ. հաշ. ԿԲ-ում և այլ պահանջներ ԿԲ նկ.
6. Վարկեր իրավաբանական անձանց
7. Վարկեր ֆիզիկական անձանց
8. Վարկեր բանկերի հետ կապված անձանց
9. Հաշվարկված ստացվելիք տոկոսներ
10. Հիմնական միջոցներ
11. Այլ արժեթղթեր
12. Լիզինգ, ֆակտորինգ (առանց միջբանկայինի)
13. Պահուստաֆոնդ
14. Այլ ակտիվներ

Բանկային համակարգի վարկային ներդրումները՝ ըստ տնտեսության ճյուղերի



1. Արդյունաբերություն, 2.Գյուղատնտեսություն, 3. Շինարարություն, 4. Տրանսպորտ և կապ, 5. Առևտուր, 6. Հանրային սնունդ և սպասարկման այլ ոլորտներ, 7. Ֆինանսական հատված, 8. Սպառողական վարկեր, 8. Այլ ճյուղեր

Բանկային համակարգի վարկային ռիսկի տեսանկյունից եռամսյակի ընթացքում արձանագրվել է դասակարգված ակտիվների տեսակարար կշռի 0.3 տոկոսային կետով նվազում՝ եռամսյակի վերջի դրությամբ կազմելով ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի 3%-ը: 31.03.2004թ. դրությամբ վարկային պորտֆելն ունի հետևյալ կառուցվածքը. «ստանդարտ» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 97.0%, «հսկվող» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 1.6%, «ոչ ստանդարտ» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.9%, «կասկածելի» վարկերը և դեբիտորական պարտքերը՝ 0.5%: Դուրս գրված ակտիվների ծավալը կազմել է վարկերի և դեբիտորական պարտքերի 0.5%-ը, ընդ որում՝ եռամսյակի ընթացքում նույն ծավալն է կազմել նաև դուրս գրված ակտիվների վերադարձը:

Առաջին եռամսյակի վերջին բանկային համակարգի ակտիվների կազմում դրամային ակտիվների տեսակարար կշիռը կազմել է 36.4% (նախորդ եռամսյակում՝ 39.0%):

Բանկային համակարգի $Ն2^1$ ընդհանուր իրացվելիության գործակիցը նվազել է 1.6, իսկ $Ն2^2$ ընթացիկ իրացվելիության գործակիցը՝ 1.1 տոկոսային կետով և 31.03.2004թ. դրությամբ կազմել համապատասխանաբար 46.5% և 100.3%: Չնայած բանկային համակարգի իրացվելիության ընդհանուր և ընթացիկ տնտեսական նորմատիվները նվազել են, այնուամենայնիվ դրանք պահանջվող $Ն2^1$ նորմատիվի 20% և $Ն2^2$ նորմատիվի 80% սահմանաչափերից շարունակում են զգալի բարձր մնալ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ԾԱԽՍԵՐ

2004 թ. երեք ամիսների ընթացքում բանկային համակարգը ստացել է 12.5 մլրդ դրամի համախառն եկամուտ՝ իրականացնելով 10.0 մլրդ դրամի չափով ծախսեր: Արդյունքում՝ 31.03.2004 թ. դրությամբ բանկերի զուտ շահույթը (հարկումից հետո) կազմել է 2.0 մլրդ դրամ:

Եռամսյակի ընթացքում շահույթով են աշխատել 15 բանկեր, որոնց շահույթը 2.3 մլրդ դրամ է, իսկ վնասով աշխատած 4 բանկերի վնասը՝ 323 մլն դրամ:

Համախառն եկամուտների կազմում տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը կազմել է 49.1%, ոչ տոկոսային եկամուտների տեսակարար կշիռը՝ 23.3% և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներից վերադարձի տեսակարար կշիռը ՝ 27.6%:

Համախառն ծախսերում մեծ տեսակարար կշիռը բաժին է ընկել ոչ տոկոսային ծախսերին՝ 41.5%, իսկ տոկոսային ծախսերին և ակտիվների հնարավոր կորուստների պահուստներին բաժին են ընկել համապատասխանաբար 19.8% և 38.7% տեսակարար կշիռներ:

ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31.03.04 թ. դրությամբ ՀՀ տարածքում գործել են 6 վարկային կազմակերպություններ՝ մեկ մասնաճյուղով:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր ակտիվների մեծությունը եռամսյակի ընթացքում նվազել է 4.9%-ով և կազմել 3.4 մլրդ դրամ, որը, սակայն, բանկային համակարգի ակտիվների ծավալի ընդամենը 1.1%-ն է:

Եռամսյակի ընթացքում վարկային կազմակերպությունների տրամադրած վարկերի ընդհանուր ծավալը նվազել է 15.4%-ով և 31.03.04թ. դրությամբ կազմել 1.3 մլրդ դրամ, իսկ լիզինգի և ֆակտորինգի ընդհանուր ծավալը նվազել է 20.3%-ով և կազմել 754 մլն դրամ: Վարկային կազմակերպությունների տեղաբաշխած վարկերի, լիզինգի և ֆակտորինգի ընդհանուր ծավալի 31.6%-ը տրամադրված է արդյունաբերությանը, 31.3%-ը՝ սպառողական ոլորտին, 13.1%-ը՝ առևտրի ոլորտին, 11.5%-ը՝ գյուղատնտեսությանը, իսկ 12.5%-ը՝ այլ ճյուղերին: Ինչպես բանկերի, այնպես էլ վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներում աճի միտումներ է դրսևորվում սպառողական ոլորտին տրամադրվող վարկերում (հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվել է սպառողական վարկերի 26.7% աճ): Եռամսյակի ընթացքում ընդհանուր վարկերի և դեբիտորական պարտքերի կազմում ստանդարտ վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը ավելացել է 14.4 տոկոսային կետով: 31.03.04թ. դրությամբ կազմել են 89.3%, իսկ վատորակ (հսկվող, ոչ ստանդարտ, կասկածելի) վարկերի և դեբիտորական պարտքերի տեսակարար կշիռը՝ 10.7%:

Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալը նվազել է 10.3%-ով և 31.03.04թ. դրությամբ կազմել 2.0 մլրդ դրամ: Ընդհանուր պարտավորությունները ավելանալով 4.0%-ով կազմել են 1.4 մլրդ դրամ:

2004թ. առաջին եռամսյակում վարկային կազմակերպություններից չորսը աշխատել են շահույթով, իսկ երկուսը՝ վնասով: Վարկային կազմակերպությունների ընդհանուր վնասը 2004թ. երեք ամիսներին կազմել է 156 մլն դրամ:

ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2004 թ. առաջին եռամսյակի ընթացքում մի շարք փոփոխություններ և լրացումներ են կատարվել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» (30 հունիսի 1996 թ., ՀՕ-69), «Բանկերի և բանկային գործունեության մասին» (30 հունիսի 1996 թ., ՀՕ-68), «Բանկային գաղտնիքի մասին» (7 հոկտեմբերի 1996 թ., ՀՕ-80), «Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» (06 նոյեմբերի 2001 թ., ՀՕ-262) և «Վարկային կազմակերպությունների մասին» (29 մայիսի 2002թ., ՀՕ-359-Ն) ՀՀ օրենքներում:

«Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքում կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում կատարելագործվել է առևտրային բանկերի գործունեությունը կարգավորող

օրենսդրական դաշտը: Մասնավորապես՝ Կենտրոնական բանկը կարող է մերժել օտարերկրյա պետությունում գործող բանկում մասնակցություն ձեռք բերելուն կամ մասնակցությամբ բանկ ստեղծելուն նախնական համաձայնություն տալու դիմումը, եթե դա չի համապատասխանում օրենքի պահանջներին ու պայմաններին կամ, Կենտրոնական բանկի հիմնավորված կարծիքով, տվյալ պետությունում բանկային վերահսկողության համար պատասխանատու մարմինը պատշաճ և միջազգային չափանիշներին համապատասխան վերահսկողություն չի իրականացնում տվյալ պետությունում գրանցված բանկերի գործունեության նկատմամբ, կամ տվյալ պետությունը Կենտրոնական բանկին հնարավորություն չի ընձեռում վերստուգել կամ պատշաճ վերահսկել այդպիսի մասնակցությամբ բանկի գործունեությունը: Նոր փոփոխությունների համաձայն՝ յուրաքանչյուր նոր գործարքի կամ գործարքների իրականացման դեպքում, որոնց արդյունքում անձի կամ փոխկապակցված անձանց մասնակցությունը բանկի կանոնադրական կապիտալում կգերազանցի համապատասխանաբար 20 տոկոսը և 50 տոկոսը, բանկը պարտավոր է ստանալ ԿԲ նախնական համաձայնությունը: Բանկերում որոշակի ռիսկեր զսպելու նպատակով կատարելագործվել է նաև առևտրային բանկերի գործունեությունը կարգավորող նորմատիվային դաշտը, մասնավորապես՝ առևտրային կենտրոնացման ռիսկը զսպելու նպատակով սահմանվել է բանկի խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափի նորմատիվ: Բանկի ռիսկերը նվազեցնելու նպատակով հստակեցվել է մեկ փոխառուի, խոշոր փոխառուների, բանկի հետ կապված անձանց վերաբերող նորմատիվների հաշվարկման մեթոդաբանությունը, համաձայն որի՝ վերջիններիս գծով ռիսկի հաշվարկում ընդգրկվում են նաև բանկերում թղթակցային հաշիվների մնացորդները և միջբանկային ավանդները, ինչպես նաև, անհրաժեշտության դեպքում, ԿԲ խորհրդի սահմանած այլ պարտավորություններ:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում լրացումները հիմնականում վերաբերում են առևտրային բանկերում ստուգումների կանոնակարգմանը:

«Վարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքում կատարված լրացման համաձայն՝ այն անձանց մոտ, որոնք չեն հանդիսանում բանկ, վարկային կազմակերպություն կամ Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորող այլ անձ, և որոնց հաշվեկշիռները Կենտրոնական բանկի սահմանած կարգով վարկային կազմակերպությունը միավորում է իր հաշվեկշռում, Կենտրոնական բանկը ստուգումները իրականացնում է «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Ըստ «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքում կատարված լրացման՝ Կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ մամուլով կամ զանգվածային լրատվության այլ միջոցներով պետք է հրապարակի բանկերի հանդեպ խոշոր պարտավորություն(ներ) ունեցող անպարտաճանաչ պարտապանների անվանումներն ու անունները:

«Բանկերի և վարկային կազմակերպությունների սնանկության մասին» ՀՀ օրենքի փոփոխությունները և լրացումները պայմանավորված են բանկերի և վարկային կազմակերպությունների ժամանակավոր ադմինիստրացիաների գործունեության հրապարակայնության ապահովման, լուծարման գործընթացի արդյունավետության բարձրացման, պահանջների բավարարման հերթականության և կարգի հստակեցման անհրաժեշտությամբ: Մասնավորապես՝ հստակեցվել է բանկն անվճարունակ ճանաչելու համար հիմնական կապիտալի 50% և ավելին սպառած համարելու հիմքի որոշման կարգը, հանվել է ԿԲ խորհրդի կողմից բանկն անվճարունակ ճանաչելու որոշումը դատական կարգով բողոքարկման ենթակա չլինելու դրույթը, վերանայվել է բանկի լուծարման ժամանակ պարտատերերի պահանջների բավարարման հերթականությունը, որոշակի փոփոխությունների է ենթարկվել բանկի ֆինանսական առողջացման գործընթացը, ինչպես նաև ավելացել է ժամանակավոր ադմինիստրացիայի գործունեության հրապարակայնության ապահովման դրույթը: Միևնույն ժամանակ, սահմանվել է, որ բանկի անկախ աուդիտոն իրագործող մարմինը բանկի անվճարունակության հիմքեր հայտնաբերելու դեպքում պարտավոր է դրա մասին անմիջապես տեղեկացնել Կենտրոնական բանկին:


2004 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկը շարունակել է ՀՀ վճարահաշվարկային համակարգի զարգացման աշխատանքները: Մասնավորապես՝ իրականացվել են ՀՀ վճարահաշվարկային բնագավառը, ինչպես նաև վճարային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի կանոնակարգման, Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգի, էլեկտրոնային վճարումների համակարգի, քարտերով վճարումների միասնական համակարգի զարգացման աշխատանքներ:

2004 թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ տարածքում կատարված անկանխիկ վճարումների ծավալը կազմել է 750777 մլն ՀՀ դրամ (քանակը՝ 333797), այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումների ծավալը կազմել է 417362 մլն ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 138329: 2003 թ. չորրորդ եռամսյակի համեմատ անկանխիկ վճարումների ծավալը և քանակը նվազել են 0.7 անգամ, ինչը պայմանավորված է նախորդ տարվա չորրորդ եռամսյակի համեմատ յուրաքանչյուր տարվա առաջին եռամսյակում դիտարկվող տնտեսական պասիվությամբ:

2003 թ. առաջին եռամսյակի համեմատ անկանխիկ վճարումների ծավալն աճել է 1.4 անգամ (223285 մլն ՀՀ դրամով), իսկ քանակը նվազել է 1.1 անգամ, որը կազմում է 39565: Դրամական փոխանցումների միջին օրական ծավալը կազմել է մոտ 6.5 մլրդ ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 2161: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, դրամական փոխանցումների միջին օրական ծավալն աճել է 1.9 մլրդ ՀՀ դրամով (քանակը նվազել է 966-ով): 2003թ. առաջին եռամսյակի համեմատ վճարումների ծավալային աճը խթանել է հարկային և մաքսային եկամուտների (վճարների) հավաքագրման աճը:

Առաջին եռամսյակում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով իրականացված վճարումներում շարունակել են մեծ տեսակարար կշիռ կազմել Գանձապետարանի նախաձեռնած, ինչպես նաև վերջինիս ուղղված փոխանցումները, որոնք կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 34.8%-ը և քանակի 49%-ը: ՀՀ կենտրոնական բանկի միջոցով Գանձապետարան ուղղված, ինչպես նաև վերջինիս իրականացրած փոխանցումների ընդհանուր ծավալը, նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ, աճել է 25%-ով, իսկ քանակը նվազել է 49.3%-ով:

ՀՀ ԿԲ միջոցով իրականացված վճարումների քանակի և ծավալի դինամիկան



Ընդլայնվել է քարտային վճարային համակարգի տրամադրած ծառայությունների ցանկը, մասնավորապես՝ քարտատերերին հնարավորություն է ընձեռվել կոմունալ ծառայությունների դիմաց վճարումները իրականացնել ինտերնետ միջավայրում՝ պլաստիկ քարտերի միջոցով:

2004 թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ տարածքում պլաստիկ քարտերով կատարվել է 18406 մլն ՀՀ դրամի 329177 գործառնություն: Այդ թվում՝ կոմունալ ծառայությունների դիմաց անկանխիկ վճարումների ծավալը մոտ 48 մլն ՀՀ դրամ է: Քարտային գործառնությունների ծավալը 2003 թ. նույն ժամանակահատվածի համեմատ աճել է 4.6 անգամ, որը կազմում է 37 մլն ՀՀ դրամ, իսկ գործառնությունների քանակն աճել է 4.7 անգամ, որը կազմում է 4007 գործառնություն:

Շրջանառության մեջ գտնվող ընդհանուր քարտերի քանակը կազմել է 75963 քարտ, որը եռամսյակի ընթացքում ավելացել է 1.2 անգամ (14853 քարտով): Նշված ժամանակահատվածում VISA միջազգային քարտային համակարգի քարտերն ավելացել են 1.3 անգամ (7772 քարտով), իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերի քանակը՝ 1.28 անգամ (378 քարտով):

Էլեկտրոնային վճարումների համակարգ

2004թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ կենտրոնական բանկի էլեկտրոնային վճարումների համակարգի մասնակիցների ընդհանուր քանակը մնացել է անփոփոխ՝ 186, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և նրա 3 տարածքային դրամարկղային կենտրոնները, ՀՀ գանձապետարանը՝ 44 բաժանմունքներով, 20 առևտրային բանկեր՝ 115 մասնաճյուղերով, «Արմենիան Քարդ» պրոցեսինգային կենտրոնը և Միջպետական բանկը (ք. Մոսկվա):

Եռամսյակի ընթացքում վճարումների գերակշիռ մասը իրականացվել է էլեկտրոնային վճարումների համակարգի միջոցով (միջին հաշվով կազմել են ընդհանուր վճարումների ծավալի 76.35%-ը և քանակի 97.1%-ը): Նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ տեսակարար կշիռը նվազել է համապատասխանաբար՝ 0.41% և 1.35%-ով: Առևտրային բանկերի կատարած էլեկտրոնային վճարումները վերջիններիս ընդհանուր վճարումների կառուցվածքում, 2003թ. առաջին եռամսյակի համեմատ, նվազել են՝ վճարումների ծավալային կառուցվածքում 5.5%-ով՝ կազմելով մոտ 83.4%, իսկ քանակային կառուցվածքում՝ 0.4%-ով՝ կազմելով մոտ 99.1%:


Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված դրամական փոխանցումների միջին օրական քանակը նախորդ տարվա համեմատ նվազել է 972-ով՝կազմելով մոտ 2099, իսկ ծավալն աճել է 1512 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 4979 մլն ՀՀ դրամ: Էլեկտրոնային վճարումների համակարգում մեկ էլեկտրոնային փոխանցման միջին ծավալը, նախորդ տարվա համեմատ, աճել է մոտ 1243 հազ. ՀՀ դրամով և կազմել 2342 հազ. ՀՀ դրամ:

Էլեկտրոնային վճարումների համակարգում գրանցված մերժումները կազմել են իրականացված վճարումների քանակի 0.03%-ը և ծավալի 0.3%-ը (46 փոխանցում՝ 948 մլն ՀՀ դրամ ծավալով), ընդ որում, իրացվելիության չբավարարման պատճառով մերժված վճարումները կազմել են համակարգում նախաձեռնված վճարումների քանակի 0.004%-ը և ծավալի 0.06%-ը (5 փոխանցում՝ 184 մլն ՀՀ դրամ ծավալով):

Էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված վճարումներն ըստ հաղորդագրության տեսակների

Հաղորդագրության տեսակը	2001	2002	2003	I եռ. 03	II եռ. 03	III եռ. 03	IV եռ. 03	I եռ. 04
ՀՏ 100 (Վճարման հանձնարարական)								
Գումար (մլն ՀՀ դրամ)	478783	590026	864149	140224	222238	245569	256119	193252
Քանակ	216563	251794	386469	67895	95290	115880	107404	72665
ՀՏ 120 (Բյուջեի մուտքի հանձնարարական)								
Գումար (մլն ՀՀ դրամ)	118767	156358	229550	428556	57943	59091	69661	32713
Քանակ	364041	424288	545427	99702	138058	198963	108704	44355
ՀՏ 122 (Բյուջե բազմակի փոխանցման հանձնարարական)								
Գումար (մլն ՀՀ դրամ)	14	1	0	0	0	0	0	0
Քանակ	27	4	0	0	0	0	0	0
ՀՏ 123 (Բյուջետային վճարման հավաքական հանձնարարական)								
Գումար (մլն ՀՀ դրամ)	4047	5128	5197	930	1356	1987	924	0.01
Քանակ	112721	127122	106593	23481	28287	40054	14771	1
ՀՏ 131 (Բազմակի փոխանցման հանձնարարական)								
Գումար (մլն ՀՀ դրամ)	412	534	360	37	70	147	105	94
Քանակ	526	324	361	50	80	118	113	317
ՀՏ 132 (Հավաքական վճարումների հանձնարարական)								
Գումար (մլն ՀՀ դրամ)	13194	610	27	8	8	4	8	2
Քանակ	749	327	344	65	104	97	78	2
ՀՏ 202 (Միջբանկային վճարման հանձնարարական)								
Գումար (մլն ՀՀ դրամ)	150299	196161	278981	37838	52874	70696	117573	92587
Քանակ	19430	24506	37262	5351	7398	9761	14752	17000
Ընդամենը								
Գումար (մլն ՀՀ դրամ)	765515	948818	1378264	221893	334488	377494	444389	318649
Քանակ	714057	828365	1076456	196544	269217	364873	245822	134340

էլեկտրոնային վճարումների համակարգով իրականացված միջին օրական փոխանցումները 2001-2003թթ. և 2003 - 2004թթ. I-ին եռամսյակների ընթացքում



Համախառն թղթային վճարումներ

2004թ. առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ կենտրոնական բանկի միջոցով թղթային վճարումներ են նախաձեռնել ՀՀ կենտրոնական բանկը, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը, ՀՀ գանձապետարանը: Առևտրային բանկերի կողմից թղթային եղանակով կատարված վճարումները կազմել են վերջիններիս վճարումների ծավալի 14%-ը (նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 6.7 տոկոսով) և քանակի 0.8%-ը (նախորդ տարվա առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 0.4 տոկոսով):

Թղթային եղանակով իրականացված վճարումների միջին օրական քանակը կազմել է 57 փոխանցում՝ 2003թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել են 7-ով, իսկ ծավալն ավելացել է 439 մլն ՀՀ դրամով՝ կազմելով 1237 մլն ՀՀ դրամ: Մեկ թղթային փոխանցման միջին ծավալը 2003թ. չորրորդ եռամսյակի համեմատ աճել է մոտ 5.7 մլն ՀՀ դրամով և կազմել 22.8 մլն ՀՀ դրամ: Թղթային եղանակով փոխանցումների աճը հիմնականում պայմանավորվել է ավանդային և վարկային գործառնությունների աճով: 2004թ. առաջին եռամսյակի ընթացքում առևտրային բանկերի միջև թղթային եղանակով իրականացվել է 2238 մլն ՀՀ դրամ ծավալով 21 փոխանցում:

ՀՀ կենտրոնական բանկի, ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերի և Գանձապետարանի կողմից իրականացված վճարումները ՀՀ կենտրոնական բանկի վճարային համակարգերով

Ժամանակահատված	Համախառն				Զուտ		Պետ. արժեթղթ. հաշվառմ. և հաշվարկ. իրակ. համակարգ		Ընդամենը ԿԲ միջոցով	
	էլեկտրոնային		Թղթային							
	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ	Գումար (մլն դրամ)	Քանակ
Ընդամենը 2003	221 893	196 544	54 895	3 206	0	0	15 393	391	292 181	200 141
տեսակարար կշիռը վճարումներում (%)	75.94	98.20	18.79	1.60	0	0	5.27	0.20	100	100
2003 – I եռ.	334 488	269 217	53 059	3 643	0	0	21 920	491	409 467	273 351
տեսակարար կշիռը վճարումներում (%)	81.69	98.49	12.96	1.33	0	0	5.35	0.18	100	100
2003 – II եռ.	377 494	364 873	77 067	3 797	0	0	25 579	561	480 140	369 231
տեսակարար կշիռը վճարումներում (%)	78.62	98.82	16.05	1.03	0	0	5.33	0.15	100	100
2003 – III եռ.	444 389	245 822	102 650	4 189	0	0	17 457	430	564 496	250 441
տեսակարար կշիռը վճարումներում (%)	78.72	98.16	18.18	1.67	0	0	3.09	0.17	100	100
2003 – IV եռ.	221 893	196 544	54 895	3 206	0	0	15 393	391	292 181	200 141
տեսակարար կշիռը վճարումներում (%)	75.94	98.20	18.79	1.60	0.	0	5.27	0.20	100	100
2004 – I եռ.	318 649	134 340	82 982	3 639	0	0	15 731	350	417 362	138 329
տեսակարար կշիռը վճարումներում (%)	76.35	97.12	19.88	2.63	0.0	0.0	3.77	0.25	100	100

Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգ

2004 թ. առաջին եռամսյակի ընթացքում Պետական արժեթղթերի հաշվառման և հաշվարկների իրականացման համակարգում տեստավորվել և ներդրվել է երկրորդային շուկայում պետական արժեթղթերով գործառնությունների իրականացման ենթահամակարգը: Վերջինս ապահովում է պետական արժեթղթերով գործառնությունների իրականացումը DVP (առաքում՝ վճարման դիմաց) սկզբունքով:

Եռամսյակի վերջի դրությամբ համակարգին անդամակցել են ՀՀ տարածքում գործող 5 գործակալ և 12 դիլեր բանկեր, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը (թողարկողի կարգավիճակով), Գանձապետական պահառուն և ՀՀ կենտրոնական բանկը (կենտրոնական պահառուի կարգավիճակով):

Պետական արժեթղթերի առաջնային տեղաբաշխման և մարման նպատակով համակարգի կողմից ձևավորվել է 350 հանձնարարական՝ 15731 մլն ՀՀ դրամ ծավալով (նախորդ տարվա 1-ին եռամսյակի համեմատ աճել է 338 մլն ՀՀ դրամով): Այդ թվում՝ առաջնային տեղաբաշխման ժամանակ ձեռք բերված պարտատոմսերի դիմաց բանկերը կատարել են 7829 մլն ՀՀ դրամի փոխանցում, իսկ արժեթղթերի մարման դիմաց Գանձապետարանը կատարել է 7902 մլն ՀՀ դրամի փոխանցում:

Գանձապետական պահառու համակարգը արժեթղթերի դիմաց կատարել է 330 մլն ՀՀ դրամի վճարում, այդ թվում՝ 106 մլն ՀՀ դրամ՝ արժեթղթերի տեղաբաշխման և 224 մլն ՀՀ դրամ՝ արժեթղթերի մարման դիմաց:

Եռամսյակի ընթացքում պետական արժեթղթերի երկրորդային շուկայում կատարված գործառնությունների արդյունքում դեպո հաշիվների վրա գրանցված արժեթղթերի ծավալի շարժը 2003 թ. առաջին եռամսյակի համեմատ նվազել է 7.6%-ով և կազմել 8644 մլն ՀՀ դրամ՝ անվանական արժեքով, իսկ գործառնությունների քանակը նվազել է 51-ով և կազմել 215:

«ԱրՔա» պլաստիկ քարտերով վճարումների միասնական համակարգ

2004թ. առաջին եռամսյակի վերջի դրությամբ «ԱրՔա» քարտերով վճարումների միասնական համակարգին անդամակցել է 15 բանկ, այդ թվում՝ ՀՀ կենտրոնական բանկը և ՀՀ տարածքում գործող 14 առևտրային բանկեր: Սակայն «ԱրՔա» քարտերը թողարկել և սպասարկել են համակարգի անդամ 12 առևտրային բանկերը:

Քարտային բնագավառում ընդգրկված բանկերը 2003թ. ընթացքում ընդլայնել էին քարտատերերին մատուցվող ծառայությունների ցանկը, և հնարավորություն էր ստեղծվել կոմունալ ծառայությունների դիմաց վճարումներն իրականացնել ավտոմատ գանձման մեքենաների (ԱԳՄ) միջոցով: Մեկ տարվա ընթացքում զարգացնելով քարտային ծառայությունների բնագավառը՝ 2004թ. առաջին եռամսյակից քարտատերերին հնարավորություն է տրվել կոմունալ ծառայությունների դիմաց վճարումները իրականացնել ինտերնետի միջոցով: Եռամսյակի ընթացքում քարտերի սպասարկման նպատակով տեղադրվել են 2 նոր ավտոմատ գանձման մեքենաներ և ժամանակահատվածի վերջի դրությամբ դրանց ընդհանուր քանակը կազմել է 44: Այդ թվում՝ «ԱրՔա» պլաստիկ քարտերով վճարումների միասնական համակարգի քարտեր կարող են սպասարկել 30 ավտոմատ գանձման սարքավորումներ:


Եռամսյակի վերջի դրությամբ գործող «ԱրՔա» քարտերի քանակը, նախորդ եռամսյակի համեմատ, ավելացել է 1.2 անգամ (6385 քարտով):

Շրջանառության մեջ գտնվող «ԱրՔա» քարտերով իրականացվել է 147985 գործարք՝ 3829 մլն ՀՀ դրամ ծավալով:

VISA միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացված գործառնությունների ծավալը կազմել է 5202 մլն ՀՀ դրամ (67445 գործառնություն), իսկ MasterCard միջազգային քարտային համակարգի քարտերով իրականացվել է 1724 մլն ՀՀ դրամ ծավալով 10867 գործառնություն:

Հաշվետու եռամսյակի ընթացքում «ԱրՔա» քարտերով կատարված գործառնությունների ծավալը 2003 թ. չորրորդ եռամսյակի համեմատ ավելացել է մոտ 1.07 անգամ, իսկ քանակը՝ 1.13 անգամ: Շրջանառության մեջ գտնվող մեկ «ԱրՔա» քարտով շարունակվել է ամսական իրականացվել միջինը մոտ 2 գործառնություն: Մեկ գործառնության միջին ծավալը 2003 թ. առաջին եռամսյակի համեմատ ավելացել է 1 հազար ՀՀ դրամով և կազմել 25 հազ. ՀՀ դրամ:

Եռամսյակի վերջի դրությամբ մեկ ավտոմատ գանձման մեքենայի կողմից սպասարկման ենթակա «ԱրՔա» քարտերի քանակը միջինը 1079 քարտ է:



Քարտեր սպասարկող սարքավորումների միջոցով «ԱրՔա» քարտերով կատարված գործարքներ (2004 թ. առաջին եռամսյակում)

	Գումար (մլն դրամ)	*Քանակ*
Ավտոմատ գանձման սարքերի միջոցով	2176.7	96276
POS – տերմինալների միջոցով	1652.3	51709
Իմպրինտերների միջոցով	0.0	0
Ընդամենը	3829	147985

Միջազգային փոխանցումների համակարգեր

ՀՀ տարածքում գործող առևտրային բանկերը դրամական փոխանցումները արագ իրականացնելու նպատակով անդամակցում են՝ WESTERN UNION, MONEYGRAM, ANELIK, UNISTREAM, EXPRESS և այլ համակարգերի: 2004թ. առաջին եռամսյակի ընթացքում այս համակարգերի միջոցով Հայաստանի Հանրապետություն փոխանցումների ծավալը կազմել է 28823 մլն ՀՀ դրամ (քանակը՝ 128232), որը 7.9 անգամ գերազանցել է արտասահման կատարված փոխանցումների ծավալը: Այս համակարգերով Հայաստանի Հանրապետություն կատարված մեկ փոխանցման միջին ծավալը 225 հազ. ՀՀ դրամ է:

SWIFT համակարգի միջոցով Հայաստանի Հանրապետություն կատարված փոխանցումները կազմել են՝ ծավալը՝ 679934 մլն ՀՀ դրամ, իսկ քանակը՝ 58961 փոխանցում. մեկ փոխանցման միջին ծավալը կազմել է 11.5 մլն ՀՀ դրամ:

Վճարահաշվարկային բնագավառի կարգավորում և զարգացում

2004թ. առաջին եռամսյակի ընթացքում շահագրգիռ գերատեսչությունների հետ ՀՀ վճարահաշվարկային բնագավառը կարգավորող «Վճարահաշվարկային համակարգի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի նախագծի քննարկումներից և լրամշակման աշխատանքներից հետո վերջինս ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

Էլեկտրոնային վճարումների համակարգի զարգացման շրջանակներում տեստավորվել և ներդրվել է համակարգի նոր տարբերակը: Վերջինիս արդյունքում մոտ 10 անգամ բարձրացվել է համակարգի թողունակությունը՝ մեկ օրվա ընթացքում կարող է մշակվել մինչև 100 հազար հաղորդագրություն:

Մակրոտնտեսական ցուցանիշները 2004 թ. հունվար-մարտին

(ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա)

I. Իրական հատված

Ամվանում	*Հունվար*	*Հունվար-փետրվար*	*Հունվար-մարտ*	*2004 թ. հունվար-մարտի իրական աճի ինդեքսը՝ 2003 թ. հունվար-մարտի նկատմամբ (%)*
Համախառն ներքին արդյունք *(մլն դրամ)*	61100.7	134225.7	215472.8	107.5
ՀՆԱ դեֆլյատոր *(%. աճողական)*	112.4	111.9	106.2	-
Մեկ զբաղվածին բաժին ընկնող ՀՆԱ *(հազար դրամ)* [1,2]	55.8	122.7	196.9	106.8
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն դրամ)*	33342.4	69329.5	114532.1	102.8
Էլեկտրաէներգիայի արտադրությունը *(մլն կվտ/ժամ)*	603.4	1205.2	1742.3	107.1
Գյուղատնտեսության համախառն արտադրանք *(մլն դրամ)*	12624.1	21934.6	35185.5	106.2
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը *(մլն դրամ)*	44861.5	90279.5	147778.1	109.5
Կապիտալ շինարարության ծավալը *(մլն դրամ)*	2782.1	7858.6	15730.7	110.7
Բնակչության դրամական եկամուտները *(մլն դրամ)*	63691.9	141942.7	235710.9	113.0[1]
Բնակչության դրամական ծախսերը *(մլն դրամ)*	76843.9	154565.5	248242.1	111.0[1]
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը *(ՀՀ դրամ)*	35316	36236	37273	122.1[1]
Տնտեսապես ակտիվ բնակչություն *(հազար մարդ)*	1212.7	1212.7	1212.9	-
Պաշտոնապես գրանցված գործազուրկներ *(հազար մարդ)*	118.4	118.4	118.4	-
Գործազրկության մակարդակը (%)	9.8	9.8	9.8	-

II. Արտաքին հատված

Ամվանում	*Հունվար (մլն ԱՄՆ դոլար)*	*Հունվար-փետրվար (մլն ԱՄՆ դոլար)*	*Հունվար-մարտ (մլն ԱՄՆ դոլար)*	*2004 թ. հունվար-մարտը 2003 թ. հունվար-մարտի նկատմամբ (%)*
Արտահանում *(FOB)*	37.7	84.8	151.9	114.3
Ներմուծում *(CIF)*	74.9	164.6	281.3	109.5
Առևտրային հաշվեկշռի պակասուրդ	37.3	79.9	129.4	104.4

III. Գների ինդեքսներ

Ժամանակաշրջան	*Սպառողական գների ինդեքս*	*Արդյունաբերական արտադրանքի գների ինդեքս*	*Գների ինդեքս կապիտալ շինարարությունում*	*Գյուղատնտեսական մթերքների իրացման գների ինդեքս*
Նախորդ ամսվա նկատմամբ (%)				
Հունվար	102.5	99.5[3]	100.3	98.5
Փետրվար	99.4	108.6[3]	97.9	101.0
Մարտ	100.3	101.9	102.4	97.2
2004 թ. հունվար-մարտը 2003 թ. հունվար-մարտի նկատմամբ	107.5	127.7	102.1	98.1

IV. Սղաճ

Ժամանակաշրջան	*2002*	*2003*	*2004*	*2004*
	Նախորդ ամսվա նկատմամբ (%)			*Նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ (%)*
Հունվար	2.2	4.1	2.5	2.5
Փետրվար	-0.7	-1.5	-0.6	1.9
Մարտ	-0.6	-0.5	0.3	2.2
Ապրիլ	2.5	2.0		
Մայիս	1.7	1.2		
Հունիս	-0.5	1.4		
Հուլիս	-5.0	-5.5		
Օգոստոս	-3.0	-2.3		
Սեպտեմբեր	-0.6	2.5		
Հոկտեմբեր	0.5	-0.1		
Նոյեմբեր	2.2	2.2		
Դեկտեմբեր	3.6	5.2		
Տարեկան *(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)*	2.0	8.6		
Տարեկան *(նախորդ տարվա նկատմամբ)*	1.1	4.7		

[1] Ըստ ՀՀ ԿԲ հաշվարկների՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների հիման վրա:

[2] Ցուցանիշը հաշվարկելիս կիրառվել է ՀՀ ԱՎԾ կողմից 2001թ. մարդահամարի արդյունքների հիման վրա վերանայված զբաղված-ների թվաքանակի ցուցանիշը:

[3] Տվյալները ճշգրտվել են ՀՀ ԱՎԾ կողմից:

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԵՎ ԳԱՆՁԱՊԵՏԱՐԱՆԻ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

(մլն դրամ)

Ժամանակաշրջան	Պահանջներ կառավարության նկատմամբ				Կառավարության ավանդներ					Զուտ պահանջներ կառավարության նկատմամբ[2]	Զուտ պահանջներ կառավարության նկատմամբ[2,3]
	Կենտրոնական կառավարության արժեթղթեր	Պետական արժե-կտրոնային պարտատոմսեր	Պետ. տրժեթղթերի գերշտարիս	Ընդամենը	Կենտրոնական կառավարության հաշիվներ և ավանդներ	Կենտրոնական կառավարության հաշիվներ արտարժույթով	ՕՀԳ-երի միջոցներ դրամով	ՕՀԳ-երի միջոցներ արտարժույթով	Ընդամենը		
2003											
Դեկտեմբեր	0	1047	0	1047	32357	156	41	0	32554	**-31507**	***-31800***
2004											
Հունվար	0	1047	0	1047	41597	156	3	0	41757	**-40710**	***-40804***
Փետրվար	0	1047	0	1047	42325	156	0	0	42481	**-41434**	***-41624***
Մարտ	0	0	0	0	35028	155	0	0	35184	**-35184**	***-35507***

[1] Ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով՝ հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Կառավարության նկատմամբ պահանջների և կառավարության ավանդների տարբերությունը:

[3] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

ՓՈՂԻ ԲԱԶԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03[4]	Հ - 04	Փ - 04	Մ - 04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [1,2]	***153802***	***151496***	***148209***	***145491***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-35216***	***-48377***	***-48226***	***-42062***
Կառավարություն	-31507	-40710	-41434	-35184
Բանկեր	8600	4375	3487	4344
այդ թվում՝ ռեպո համաձայն.	0	0	0	0
ավանդներ (-)	-100	-3300	-2150	-3710
Հակադարձ ռեպո (-)	0	-1025	-1031	0
Արտարժույթի տրամադրման սվոպ (-)	0	0	-2032	-646
Զուտ այլ ակտիվներ	-12309	-12042	-10279	-11222
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***116654***	***105172***	***101742***	***103573***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***118586***	***103119***	***99983***	***103429***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	96838	83686	84225	84317
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	21047	18856	15243	18155
Այլ հաշիվներ	700	577	515	957
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	657	517	493	528
Այլ հաշիվներ (արտարժույթով)	43	60	21	429
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-2306***	***-3287***	***-2718***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-13161***	***151***	***6164***
Կառավարություն	-	-9203	-724	6250
Բանկեր	-	-4225	-888	857
այդ թվում՝ ավանդներ (-)	-	3200	-1150	1560
Զուտ այլ ակտիվներ	-	267	1763	-943
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-11482***	***-3430***	***1831***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-15467***	***-3136***	***3446***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13152	539	92
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-2191	-3613	2912
Այլ հաշիվներ	-	-123	-62	442
Այլ հաշիվներ (ՀՀ դրամով)	-	-140	-24	35
Այլ հաշիվներ (արտարժույթով)	-	17	-39	408
(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-1.5***	***-2.2***	***-1.8***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-37.4***	***0.3***	***12.8***
Կառավարություն	-	-29.2	-1.8	15.1
Բանկեր	-	-49.1	-20.3	24.6
Զուտ այլ ակտիվներ	-	2.2	14.6	-9.2
ՓՈՂԻ ԲԱԶԱ (միջինացված) [3]	***-***	***-9.8***	***-3.3***	***1.8***
ՓՈՂԻ ԲԱԶԱ	***-***	***-13.0***	***-3.0***	***3.4***
ԿԲ-ից դուրս կանխիկ ՀՀ դրամ	-	-13.6	0.6	0.1
Պարտադիր պահուստ. (ՀՀ դրամով)	-	-10.4	-19.2	19.1
Այլ հաշիվներ	-	-17.6	-10.7	85.8

[1] Առանց սեփականաշնորհման միջոցների: ԶԱՄ-ն ընդգրկում են փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[2] ԶԱՄ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 566 ՀՀ դրամ, 1 ՀՓԻ = 1.4860 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.2407 ԱՄՆ դոլար, 1 ունցիա ոսկի = 413.5 ԱՄՆ դոլար:

[3] Փողի բազան հաշվարկված է որպես տվյալ ամսվա վերջին օրվան նախորդող հինգ օրերի և հաջորդ ամսվա սկզբի հինգ օրերի միջին:

[4] Ներառում է ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները:

ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ԱՄՓՈՓ ՀԱՇՎԵԿՇԻՌ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03[3]	Հ – 04	Փ - 04	Մ - 04
ԶԱԱ (փոխարկելի արտարժույթով)	**40586**	**43037**	**42114**	**43607**
Արտաքին ակտիվներ փոխարկելի արտարժույթով	97945	101612	107518	106957
Արտաքին պարտավոր. փոխարկելի արտարժույթով	-54608	-55919	-62767	-60710
Արտաքին պարտավորություններ ՀՀ դրամով	-2750	-2656	-2637	-2640
ԶՆԱ	**100535**	**98225**	**99613**	**102516**
Կառավարություն	16902	16184	16484	17318
Զուտ պահանջներ ԿԲ նկատմամբ	16607	18601	15809	17876
Պահուստային ակտիվներ	25478	27360	24623	26750
Պարտավորություններ ԿԲ նկատմամբ	-8870	-8759	-8814	-8874
Տնտեսություն	103218	101543	106737	109837
Ձեռնարկություններ	61094	59714	62114	62528
Դրամով	22875	23017	23412	22192
Արտարժույթով	38183	36661	38666	40299
Արժեթղթեր	37	37	37	37
Տնային տնտեսություններ	35384	35916	38297	41222
Դրամով	7839	7836	8353	8731
Արտարժույթով	27544	28079	29944	32491
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	59	35	35	33
Դրամով	12	13	14	9
Արտարժույթով	47	23	21	24
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6645	5841	6254	6018
Դրամով	2145	1752	1874	2411
Արտարժույթով	4500	4090	4380	3607
Այլ ռեզիդենտներ[2]	37	37	37	36
Դրամով	0	0	0	0
Արտարժույթով	37	37	37	36
Զուտ այլ ակտիվներ	-36193	-38103	-39417	-42515
Արտաքին ակտիվներ ՀՀ դրամով	3028	2784	2799	2170
Արտաքին ակտիվներ (ոչ փոխարկելի արտարժ.)	1974	12319	15827	12148
Արտաքին պարտավոր. (ոչ փոխարկելի արտարժ.)	-412	-10571	-14553	-10828
Ներդրումներ փայաբաժիններում	514	501	501	456
Միջբանկային պահանջներ	3574	4793	4764	4541
Այլ ակտիվներ	26558	27114	26839	25608
Միջբանկային պարտավորություններ	-3544	-4654	-4660	-4491
Դրամական շուկայի գործիքներ	-562	-566	0	0
Կապիտալ հաշիվներ	-55148	-54195	-55428	-56376
Այլ պարտավորություններ	-12175	-15628	-15506	-15744
ԱՎԱՆԴՆԵՐ	**141121**	**141262**	**141727**	**146123**
Դրամով ավանդներ	40756	40476	38928	39744
Ցպահանջ ավանդներ	30618	26540	26298	26284
Ժամկետային ավանդներ	10138	13936	12629	13459
Ավանդներ արտարժույթով	100365	100785	102799	106379
Ցպահանջ ավանդներ	51034	48978	49878	54173
Ժամկետային ավանդներ	49331	51808	52922	52206

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն՝ ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] Չդասակարգված պահանջներ: «Փողի զանգվածի կառուցվածքը» աղյուսակում սույն պահանջներն ընդգրկված են «Ձեռնարկություններ և կազմակերպություններ» տողում:

[3] Կատարվել է հաշիվների վերադասակարգում՝ համապատասխան ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության նոր ձեռնարկի (2004 թ.), որի արդյունքում որոշ ցուցանիշներ տարբերվում են 2003 թ. հրապարակումներից:

ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ՀՀ դրամ)

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	Դ - 03[6]	Հ - 04	Փ - 04	Մ - 04
(մնացորդը ժամանակահատվածի վերջի դրությամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ [2]	***194389***	***194533***	***190323***	***189098***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***39429***	***26434***	***31603***	***37516***
Կառավարություն	-14605	-24525	-24950	-17866
Տնտեսություն	103257	101576	106777	109876
Չեռնարկ. և կազմակերպ.	61131	59751	62151	62564
որից՝ կուտակված տոկոսներ	455	497	478	531
Տնային տնտեսություններ	35422	35949	38337	41261
որից՝ կուտակված տոկոսներ	474	534	564	641
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	59	35	35	33
որից՝ կուտակված տոկոսներ	0	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	6645	5841	6254	6018
որից՝ կուտակված տոկոսներ	71	43	58	60
Զուտ այլ ակտիվներ	-49223	-50617	-50224	-54494
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ [3]	***133230***	***119963***	***118916***	***119620***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոսների)*	***233198***	***220283***	***221244***	***225903***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ [4]	***233818***	***220967***	***221926***	***226614***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	91997	79128	79685	79535
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով [5]	31275	27057	26791	26812
կուտակված տոկոսներ	17	16	28	22
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	10138	13936	12629	13459
կուտակված տոկոսներ	163	142	163	164
Արտարժույթով ավանդներ	100408	100846	102820	106808
Ցպահանջ[5]	51076	49038	49899	54602
կուտակված տոկոսներ	5	6	12	7
Ժամկետային	49331	51808	52922	52206
կուտակված տոկոսներ	435	520	480	518
(փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***144***	***-4210***	***-1225***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	***-***	***-12995***	***5169***	***5913***
Կառավարություն	-	-9920	-425	7084
Տնտեսություն	-	-1681	5201	3099
Չեռնարկ. և կազմակերպ.	-	-1380	2400	413
որից՝ կուտակված տոկոսներ	-	42	-19	53
Տնային տնտեսություններ	-	527	2388	2924
որից՝ կուտակված տոկոսներ	-	60	30	77
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-24	0	-2
որից՝ կուտակված տոկոսներ	-	0	0	0
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-804	413	-236
որից՝ կուտակված տոկոսներ	-	-28	15	2
Զուտ այլ ակտիվներ	-	-1394	393	-4270
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ	***-***	***-13267***	***-1048***	***705***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոսների)*	***-***	***-12915***	***961***	***4659***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ	***-***	***-12851***	***959***	***4688***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-12869	557	-150
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-4218	-266	21
կուտակված տոկոսներ	-	-1	12	-6
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	3798	-1307	830
կուտակված տոկոսներ	-	-21	21	2
Արտարժույթով ավանդներ	-	438	1974	3988
Ցպահանջ	-	-2038	861	4703
կուտակված տոկոսներ	-	1	6	-5
Ժամկետային	-	2477	1114	-716
կուտակված տոկոսներ	-	85	-40	38

(տոկոսային փոփոխություններ նախորդ ժամանակահատվածի նկատմամբ)				
ԶՈՒՏ ԱՐՏԱՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***0.1***	***-2.2***	***-0.6***
ԶՈՒՏ ՆԵՐՔԻՆ ԱԿՏԻՎՆԵՐ	**-**	***-33.0***	***19.6***	***18.7***
Կառավարություն	-	-67.9	-1.7	28.4
Տնտեսություն	-	-1.6	5.1	2.9
Չեռնարկ. և կազմակերպ.	-	- 2.3	4.0	0.7
Տնային տնտեսություններ	-	1.5	6.6	7.6
Շահույթ չհետապնդող կազմակերպություններ	-	-40.7	0.7	-6.4
Այլ ֆինանսական կազմակերպություններ	-	-12.1	7.1	-3.8
Զուտ այլ ակտիվներ	-	-2.8	0.8	-8.5
ԴՐԱՄԱՅԻՆ ՁԱՆԳՎԱԾ	-	***-10.0***	***-0.9***	***0.6***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ *(առանց կուտ. տոկոսների)*	-	***-5.5***	***0.4***	***2.1***
ՓՈՂԻ ՁԱՆԳՎԱԾ	-	***-5.5***	***0.4***	***2.1***
Շրջանառությունում կանխիկ ՀՀ դրամ	-	-14.0	0.7	-0.2
Ցպահանջ ավանդներ ՀՀ դրամով	-	-13.5	-1.0	0.1
Ժամկետային ավանդներ ՀՀ դրամով	-	37.5	-9.4	6.6
Արտարժույթով ավանդներ	-	0.4	2.0	3.9
Ցպահանջ	-	-4.0	1.8	9.4
Ժամկետային	-	5.0	2.1	-1.4

[1] Ներառված են այն բանկերի ցուցանիշները, որոնց պարտավորությունների բնույթը համապատասխանում է փողի սահմանման սկզբունքներին, այսինքն՝ ավանդատուների կողմից իրենց միջոցների տնօրինման սահմանափակումներ չկան:

[2] ՁԱՍ-ն ընդգրկում են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները: Կենտրոնական բանկի ՁԱՍ-ն հաշվարկված են ծրագրային փոխարժեքներով՝ 1 ԱՄՆ դոլար = 566 ՀՀ դրամ, 1 ՀՓԻ = 1.4860 ԱՄՆ դոլար, 1 եվրո = 1.2407 ԱՄՆ դոլար, 1 ուսցիա ոսկի = 413.5 ԱՄՆ դոլար:

[3] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ միայն դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները (առանց կուտակված տոկոսների):

[4] Ընդգրկում է կանխիկը շրջանառությունում, ռեզիդենտների՝ դրամով ցպահանջ և ժամկետային ավանդները, արտարժութային ավանդները (ներառյալ կուտակված տոկոսները):

[5] Ընդգրկում են ռեզիդենտների հաշիվները և ցպահանջ ավանդները:

[6] Ներառում է ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները: Կատարվել է հաշիվների վերադասակարգում՝ համապատասխան ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության նոր ձեռնարկի (2004 թ.), որի արդյունքում որոշ ցուցանիշներ տարբերվում են 2003 թ. հրապարակումներից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՀՈՒՍՏՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ [1]

(մլն ԱՄՆ դոլար)

Անվանումը	**2003** [3]	**2004**		
	Դ	Հ	Փ	Մ
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)*	502.0	499.3	489.6	481.5
Համախառն միջազգային պահուստներ	510.2	507.7	498.0	489.9
Ոսկի	0	0	0	0
ՀՓԻ ԱՄՀ-ում	18.8	18.8	13.7	13.7
Արտարժույթ [2]	491.4	489.0	484.3	476.2
Համախառն միջազգային պահուստներ *(առանց սեփականաշն. միջոցների)* [4]	***504.1***	***501.7***	***492.2***	***483.6***

[1] Հաշվարկված են փաստացի փոխարժեքներով: Աղյուսակում ներկայացված ցուցանիշները հաշվարկված են կանխիկ սկզբունքի մեթոդով, հակառակ դեպքում առանձին նշում է կատարված:

[2] Ընդգրկված են միայն փոխարկելի արտարժույթով ակտիվները:

[3] Ներառված են ԿԲ եզրափակիչ շրջանառության արդյունքները: ԱՄՀ-ում ՀՓԻ-ով միջոցները հաշվարկված են՝ հիմք ընդունելով 2003 թ. դեկտեմբերի 31-ին ԱՄՀ կողմից սահմանված 1 ՀՓԻ = 1.4860 ԱՄՆ դոլար փոխարժեքը, որը տարբերվում է այդ օրվա դրությամբ ԿԲ կողմից սահմանված փոխարժեքից: Այդ պատճառով 2003 թ. դեկտեմբերի համախառն միջազգային պահուստները տարբերվում են 2003 թ. դեկտեմբեր, 2004 թ. հունվար, փետրվար և մարտ ամիսների «ՀՀ ԿԲ տեղեկագիր» պարբերականում հրապարակված համապատասխան ցուցանիշներից:

[4] Հաշվարկված են կուտակման սկզբունքի մեթոդով:

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Ցուցանիշներ	2003[3]	2004		
	Դ	Հ	Փ	Մ
Վարկեր [1]				
Իրավաբանական անձանց				
ՀՀ դրամով	21.7	24.4	18.2	21.5
ԱՄՆ դոլարով	17.7	19.0	15.9	16.4
Ֆիզիկական անձանց				
ՀՀ դրամով	23.9	22.4	22.6	20.9
ԱՄՆ դոլարով	25.4	27.5	16.6	26.4
Ավանդներ [1]				
Իրավաբանական անձանցից				
ՀՀ դրամով	6.1	8.2	6.8	5.2
ԱՄՆ դոլարով	6.7	5.4	5.2	0.5
Ֆիզիկական անձանցից				
ՀՀ դրամով	6.5	8.6	3.9	5.7
ԱՄՆ դոլարով	6.1	5.2	4.3	5.9
ԿԲ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	7.0	7.0	7.0	6.0
ԿԲ-ում ՀՀ բանկերի ավանդների տոկոսադրույքը	3.5	3.5	3.5	3.0
ԿԲ լոմբարդային վարկերի տոկոսադրույքը	20.0	20.0	20.0	20.0
Պետական պարտատոմսերի եկամտաբերությունը [2]	9.7	7.5	6.4	5.9
Սղաճ	8.6	2.5	-0.6	0.3

[1] Ներկայացված են 90-օրյա վարկերի և ավանդների միջին կշռված տոկոսադրույքները:

[2] Ներկայացված է 9 – 12-ամսյա պարտատոմսերի միջին կշռված եկամտաբերությունը:

[3] Ներկայացված են տարվա վերջին ամսվա տոկոսադրույքները: Սղաճը ներկայացված է նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ:

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԼՈՄԲԱՐԴԱՅԻՆ ՎԱՐԿԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

ժամկետ	Ավանդի ծավալ*	Տոկոսադրույք	Վարկի ծավալ*	Տոկոսադրույք
2003				
Հունվար	750	6.0	-	-
Փետրվար	8110	5.7	-	-
Մարտ	2720	5.0	-	-
Մայիս	3450	5.0	-	-
Հունիս	4950	5.0	-	-
Հուլիս	7635	5.0	-	-
Օգոստոս	6120	5.0	-	-
Սեպտեմբեր	4170	5.0	-	-
Հոկտեմբեր	4410	5.0	-	-
Նոյեմբեր	2790	5.0	-	-
Դեկտեմբեր	4750	5.0	-	-
2004				
Հունվար	11650	3.5	-	-
Փետրվար	8840	3.5	-	-
Մարտ	14830	3.0	-	-

** Մարումները հաշված չեն:*

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԿՆՔՎԱԾ ՌԵՊՈ ԵՎ ՀԱԿԱԴԱՐՁ ՌԵՊՈ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

(մլն ՀՀ դրամ)

Ժամկետ	Ռեպո համաձայն. ծավալը *	Ռեպո գործառնությունների տոկոսադրույքը	Հակադարձ ռեպո համաձայն. ծավալը*	Հակադարձ ռեպո գործառնությունների տոկոսադրույքը
2003				
Փետրվար	-	-	159.0	10.0
Օգոստոս	-	-	1056.0	9.0
Սեպտեմբեր	-	-	821.7	9.0
Հոկտեմբեր	-	-	517.0	9.0
Նոյեմբեր	-	-	624.5	9.0
2004				
Հունվար	-	-	1025.4	7.0
Փետրվար	-	-	1030.7	7.0
Մարտ	-	-	-	-

** Մարումները հանված չեն:*

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՍՎՈՓ

(ԱՄՆ դոլար)

	Արժութային սվոփի ծավալը *	Տոկոսադրույք
2003		
Հոկտեմբեր	500000	7.88
Նոյեմբեր	1300000	7.88
Դեկտեմբեր	1850000	7.83
2004		
Փետրվար	3600000	5.90
Մարտ	1150000	4.91

** Մարումները հանված չեն:*

ՄԻՋԲԱՆԿԱՅԻՆ ՌԵՊՈ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Ցուցանիշներ	Միջբանկային ռեպո շուկայի շրջանառությունը									
	մինչև 7 օր		8 - 14 օր		15 - 28 օր		28 օր և ավելի		Ընդամենը	
	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%	մլն դրամ	%
2004										
Հունվար	***1861.52***	***6.01***	***1038.00***	***6.00***	***300.75***	***6.33***			***3200.27***	***6.04***
Առավելագույն տոկոսադրույք		7.50		8.00		7.00				8.00
Նվազագույն տոկոսադրույք		5.00		6.00		5.00				5.00
Ստանդարտ շեղում		0.63		0.78		1.15				0.73
Փետրվար	***3341.41***	***5.04***	***1879.40***	***5.63***	***694.14***	***5.92***	***48.00***	***6.00***	***5962.95***	***5.34***
Առավելագույն տոկոսադրույք		7.00		7.00		8.00		6.00		8.00
Նվազագույն տոկոսադրույք		4.00		5.00		5.00		6.00		4.00
Ստանդարտ շեղում		0.71		0.61		0.91				0.78
Մարտ	***6380.60***	***4.48***	***1017.30***	***4.58***	***165.50***	***4.50***			***7563.4***	***4.50***
Առավելագույն տոկոսադրույք		6.00		6.00		4.50				6.00
Նվազագույն տոկոսադրույք		4.00		4.00		4.50				4.00
Ստանդարտ շեղում		0.53		0.53		-				0.52
Ընդամենը	***11583.53***	***4.89***	***3934.70***	***5.46***	***1160.39***	***5.82***	***48.00***	***6.00***	***16726.62***	***5.09***
Առավելագույն տոկոսադրույք		7.50		8.00		8.00		6.00		8.00
Նվազագույն տոկոսադրույք		4.00		4.00		4.50		6.00		4.00

** ԿԲ կողմից իրականացված գործառնություններն ընդգրկված չեն:*

ՀՀ ԴՐԱՄ / ԱՄՆ ԴՈԼԱՐ ՓՈԽԱՐԺԵՔԸ

Ամսաթիվ	Դ - 03	Հ - 04	Փ - 04	Մ - 04
1	566.17	-	-	563.75
2	566.55	-	565.47	564.11
3	566.55	-	565.31	564.80
4	566.34	-	565.31	564.30
5	566.53	568.48	564.54	564.66
6	-	-	564.37	-
7	-	568.48	-	-
8	566.53	569.07	-	-
9	566.53	568.96	564.45	564.74
10	568.01	-	564.71	564.79
11	567.71	-	564.44	565.03
12	567.34	569.78	564.25	562.42
13	-	569.74	563.84	-
14	-	569.55	-	-
15	566.90	568.94	-	562.19
16	566.74	569.66	563.61	562.30
17	566.12	-	563.61	561.87
18	565.79	-	563.52	562.78
19	565.21	570.00	563.94	562.67
20	-	568.98	564.07	-
21	-	568.67	-	-
22	563.88	568.35	-	562.38
23	562.16	568.11	564.07	562.29
24	561.52	-	564.45	561.55
25	562.00	-	564.23	561.62
26	562.83	567.82	564.60	561.87
27	562.83	567.47	564.32	561.87
28	562.83	-	564.32	-
29	563.27	566.25	-	561.43
30	566.00	566.04	-	561.55
31	-	566.04	-	561.55
ժամանակահատվածի վերջ	566.00	566.04	564.32	561.55
ժամանակահատվածի միջին	565.26	568.44	564.35	562.89

ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՀԱՇՎԵԿՇԻՌ

(2004թ. մարտի 31-ի դրությամբ)

Հաշվեկշիռ

(հազար ՀՀ դրամ)

	31.03.04	*31.12.03*
Ակտիվներ		
Ակտիվներ ոսկով և արտարժույթով		
Կանխիկ դրամական միջոցներ	209,996	330,188
Օտարերկրյա բանկերի և վարկային կազմակերպությունների նկատմամբ պահանջներ	195,910,538	223,367,484
ԱՄՀ-ին առնչվող ակտիվներ	83,925,259	87,734,369
Ներդրումային արժեթղթեր		
- վաճառքի համար նախատեսված ներդրումներ	1,112	1,141
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ	72,468,694	55,603,679
Այլ ակտիվներ արտարժույթով	1,774,545	394,624
	354,290,144	367,431,485
Ակտիվներ ՀՀ դրամով		
Վարկեր	8,825,834	8,821,023
Ներդրումային արժեթղթեր		
- վաճառքի համար նախատեսված ներդրումներ	604,655	1,655,939
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	5,179,039	5,157,998
Այլ ակտիվներ ՀՀ դրամով	439,654	508,948
	15,049,182	16,143,908
Ընդամենը ակտիվներ	**369,339,326**	**383,575,393**
Պարտավորություններ		
Արտարժույթով պարտավորություններ		
Փոխառված միջոցներ		
- բանկեր և վարկային կազմակերպություններ	8,463,556	8,666,554
- ԱՄՀ	111,193,922	115,184,984
- Հայաստանի կառավարություն	4,878,999	4,804,461
Այլ ավանդային հաշիվներ արտարժույթով	428,845	43,208
Այլ պարտավորություններ արտարժույթով	17,134	427,468
	124,982,456	129,126,675
ՀՀ դրամով պարտավորություններ		
Շրջանառության մեջ թղթադրամներ և մետաղադրամներ	84,316,917	96,838,171
Փոխառված միջոցներ		
- բանկեր և վարկային կազմակերպություններ	22,951,664	21,174,527
- ԱՄՀ	82,038,505	82,995,453
- Հայաստանի կառավարություն	35,351,721	32,694,708
Այլ ավանդային հաշիվներ ՀՀ դրամով	763,151	773,494
ՀՀ դրամով այլ պարտավորություններ	233,141	197,035
	225,655,099	234,673,388
Ընդամենը պարտավորություններ	**350,637,555**	**363,800,063**
Կապիտալ		
Կանոնադրական կապիտալ	100,000	100,000
Գլխավոր պահուստ	9,335,186	9,335,186
Շահույթ և պահուստներ	9,266,585	10,340,144
Ընդհանուր կապիտալ	**18,701,771**	**19,775,330**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ	**369,339,326**	**383,575,393**

Հաշվեկշիռը հաստատվել է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2004 թվականի մայիսի 19-ին և ստորագրվել:

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագահ

ԱԻԴԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ

ՀՀ ԲԱՆԿԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ (2004 թ., հունվար)*

Վիճակագրության վարչություն
Տնտեսական վիճակագրության զարգացման բաժին

2004 թ. հունվարին ՀՀ ԿԲ վիճակագրության վարչության տնտեսական վիճակագրության զարգացման բաժնի անցկացրած հարցումներին մասնակցել են ՀՀ–ում գործող բոլոր 20 բանկերը:

Հարց 1. Տնտեսական աճի նշված մակարդակներից ո՞րն եք 2004 թ. համար համարում ավելի իրատեսական (պատասխանները կշռված են բանկային համակարգի ընդհանուր վարկային ներդրումներում բանկերի վարկերի տեսակարար կշիռներով)[1]:

2004 թ. տնտեսական աճ	Բանկերի քանակ, տեսակարար կշիռ
Մինչև 4%	0(0)
4-6%	3(12.4%)
6-8%	9(51.8%)
8-10%	7(29.4%)
10%-ից բարձր	1(6.4%)
Միջին կշռված	**7.4**

Համաձայն բանկերի պատասխանների՝ 2004 թ. սպասվում է 7.4% (միջին կշռված) տնտեսական աճ: Պետք է նշել, որ բանկերի պատասխաններն ունեն մեծ կենտրոնացվածություն՝ 6-10% աճ կանխատեսել են 16 բանկեր, որոնց տեսակարար կշիռը կազմում է 81%: Բանկերի սպասումները շատ չեն շեղվում ՀՀ ԿԲ ԴՎՔ ծրագրով կանխատեսված 7% տնտեսական աճի մակարդակից: Ըստ 2003 թ. հունվարի հարցման արդյունքների՝ բանկերը սպասում էին 7.7% տնտեսական աճ, ըստ հուլիսի հարցման արդյունքների՝ 9.8% (փաստացին կազմել է 13.9%):

Տնտեսության ճյուղերի ազդեցությունը տնտեսական աճի վրա՝ ըստ առաջնայնության

Ճյուղեր	Ճյուղերի նպաստումը աճին			
	1	2	3	4
	Բանկերի քանակը			
Արդյունաբերություն	6	5	4	5
Գյուղատնտեսություն	0	5	6	9
Շինարարություն	12	3	4	1
Ծառայություններ	2	7	6	5

** Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*
[1] Հարցերում, որտեղ ամփոփման կշիռներ նշված չեն, պատասխանները կշռվել են բանկերի քանակով:

Ըստ տնտեսական աճի վրա ճյուղերի ունեցած ազդեցության չափի՝ կունենանք հետևյալ հաջորդականությունը[2].

Ճյուղը	Միավոր
Արդյունաբերություն	2.60
Շինարարություն	3.30
Ծառայություններ	2.30
Գյուղատնտեսություն	1.80

Ըստ բանկերի ակնկալիքների՝ 2004 թ. տնտեսական աճի ձևավորման վրա, ինչպես և 2003 թ., ամենաէական ազդեցությունը կունենա շինարարության ոլորտը: Համաձայն ՀՀ ԿԲ ԴՎՔ 2004 թ. ծրագրի՝ էական ազդեցություն կունենան արդյունաբերության և ծառայությունների ոլորտները: Բանկերի պատասխանները հավանաբար հիմնված են 2003 թ. տնտեսական աճի փաստացի ճյուղային կառուցվածքի վրա:

Ուշագրավ է, որ 2003 թ. հուլիսի հարցման արդյունքներով՝ բանկերը գրեթե անսխալ կանխատեսել էին տնտեսական աճի ճյուղային կառուցվածքը:

Հարց 2. Սղաճի նշված մակարդակներից ո՞րն եք համարում առավել իրատեսական:

Սղաճի մակարդակ	Բանկերի քանակ
Մինչև 0%	0
0-2%	1
2-4%	8
4-6%	9
6%-ից բարձր	2
Միջին կշռված	**4.2%**

Բանկերի մեծ մասը կանխատեսել է 4-6% սղաճ, երկու բանկ կանխատեսել է 6%-ից բարձր սղաճ: Ի տարբերություն նախորդ մի քանի տարիների հարցումների, կանխատեսվող սղաճի միջին մակարդակը 1.2%-ով գերազանցում է ՀՀ ԿԲ ԴՎՔ ծրագրով նախատեսված առավելագույն մակարդակը, որի հիմնական պատճառը, ամենայն հավանականությամբ, 2003 թ-ին փաստացի սղաճի գերազանցումն է ծրագրայինից:

Հարց 3. Ձեր սպասումները ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամի փոխարժեքի վարքագծի վերաբերյալ (պատասխանները կշռված են բանկային համակարգի ընդհանուր ակտիվներում բանկերի ակտիվների տեսակարար կշիռներով):

Փոխարժեք	Բանկերի քանակ, տեսակարար կշիռ	
	2004 թ. հունիսի վերջ	2004 թ. դեկտեմբերի վերջ
Մինչև 570 դրամ	0(0%)	1(2.82%)
571-580 դրամ	7(50.4%)	3(11.5%)
581-590 դրամ	10(40.5%)	9(60%)
591-600 դրամ	3(9.2%)	7(25.7%)
601 դրամից ավելի	0(0%)	0(0%)
Միջին կշռված	**580.8 դրամ**	**585.8 դրամ**

Ի տարբերություն 2003 թ., ինչպես 2004 թ. հունիսի վերջի, այնպես էլ դեկտեմբերի վերջի դրությամբ ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի վերաբերյալ բանկերի սպասումները համեմատաբար ցրված են: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ 2004 թ. ակնկալվող արտարժութային հոսքերի անորոշության պայմաններում բանկերի համար փոխարժեքի կանխատեսելիությունը նվազել է: Ի տարբերություն նախորդ

[2] Տնտեսության ճյուղերի ազդեցությունը տնտեսական աճի վրա գնահատվել է 4 միավոր ունեցող համակարգով՝ ամենամեծ ազդեցություն ունեցող ճյուղին տալով 4, համապատասխանաբար ամենափոքր ազդեցություն ունեցող ճյուղին՝ 1 միավոր: Հետևաբար ամենափոքր ամփոփ գնահատականով ճյուղն ունի ամենափոքր ազդեցությունը տնտեսական աճի վրա և հակառակը:

տարվա հունվարի հարցման, այս տարի բանկերից ոչ մեկի սպասումները չեն գերազանցում 600 դրամը: Նշենք նաև, որ նախորդ տարվա հունվարին իրականացված հարցումների ժամանակ բանկերը 2003 թ. վերջի դրությամբ կանխատեսել էին ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքի 598.1 դրամ մակարդակ, ինչն էականորեն շեղվել է տարվա վերջին գրանցված 566.0 դրամ մակարդակից: Միաժամանակ, 2004 թ. վերջի դրությամբ ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար փոխարժեքը, ըստ բանկերի կանխատեսումների, կարժեզրկվի մոտ 3.5%-ով, ինչը ենթադրում է ՀՀ ԿԲ ԴՎՔ ծրագրով նախատեսվածից ավելի բարձր արժեզրկում:

Հարց 4. 2004 թ. ընթացքում Ձեր հաճախորդների կողմից արտասահմանից ներգրավվող միջոցների (վարկերի և փայամասնակցությունների տեսքով) վերաբերյալ Ձեր սպասումները:

ԱՄՆ դոլար	**Բանկերի քանակ**
Մինչև 500 հազար	5
500 - 1000 հազար	3
1001 - 1500 հազար	0
1501 - 2000 հազար	3
2001 - 2500 հազար	3
2501 հազարից ավելի	6
Ընդամենը (մլն ԱՄՆ դոլար)	**33.5**

Ըստ բանկերի սպասումների՝ 2004 թ-ին բանկային համակարգի հաճախորդների կողմից վարկերի և փայամասնակցությունների տեսքով միջոցների ներգրավումը 2003 թ. համեմատությամբ էականորեն կավելանա և կկազմի 33.5 մլն ԱՄՆ դոլար (նախորդ հարցման ժամանակ կանխատեսվել էր 21.8 մլն):

Հարց 5. 2004 թ. ընթացքում Ձեր հաճախորդների միջոցով արտասահման վճարվող միջոցների (վարկերի մարման և փայամասնակցությունների տեսքով) վերաբերյալ Ձեր սպասումները:

ԱՄՆ դոլար	**Բանկերի քանակ**
Մինչև 500 հազար	13
500 - 1000 հազար	1
1001 - 1500 հազար	0
1501 - 2000 հազար	1
2001- 2500 հազար	2
2501 հազարից ավելի	3
Ընդամենը (մլն ԱՄՆ դոլար)	**19.2**

Ի տարբերություն նախորդ տարվա հունվարի հարցման, այս հարցման ժամանակ տրված պատասխանները ցրված են՝ հինգ բանկ սպասում է 2 մլն ԱՄՆ դոլարից ավելի միջոցների վճարում արտերկիր:

Այսպիսով, ինչպես և նախորդ հարցումների ժամանակ, բանկերը ակնկալում են վարկերի և փայամասնակցությունների տեսքով զուտ ներհոսք:

Հարց 6. Դատելով Ձեր հաճախորդների գործունեության ակտիվությունից՝ ինչպիսի՞ն են Ձեր սպասումները արտահանման և ներմուծման ծավալների վերաբերյալ (պատասխանները կշռված են բանկային համակարգի արտարժութային վարկերի ընդհանուր ծավալում բանկերի արտարժութային վարկերի տեսակարար կշիռներով):

Սպասում	**Բանկերի քանակ, տեսակարար կշիռ**			
	2003 թ. հուլիսի հարցում 2003 թ. վերաբերյալ		2004 թ. հունվարի հարցում 2004 թ. վերաբերյալ	
	արտահանում	ներմուծում	արտահանում	ներմուծում
Կաճեն	21 (99.3%)	21 (99.3%)	19 (97.4%)	18 (87.1%)
Կմնան նույնը	0 (0.0%)	0 (0.0%)	0 (0%)	2 (12.9%)
Կնվազեն	0 (0.0%)	0 (0.0%)	1 (2.6%)	0 (0%)

Ինչպես երևում է աղյուսակից, ի տարբերություն 2003 թ. հուլիսի հարցումների, այս հարցման ժամանակ պատասխանները միասնական չեն: Մեկ բանկ (2.6%) սպասում է արտահանման նվազում, ըստ երկու բանկի (12.9%)՝ ներմուծումը կմնա նույն մակարդակի վրա:

Արտահանման և ներմուծման ծավալների թվային գնահատականները ներկայացված են ստորև:

Սպասում	Արտահանում (%)	Ներմուծում (%)
Աճ	18	14
Նվազում	10	0
Միջին կշռված (+ աճ, - նվազում)	**17**	**14**
Առավելագույն/նվազագույն աճ	35/3	40/3.5
Առավելագույն/նվազագույն անկում	10/10	0/0
Ստանդարտ շեղում	9.7 տ.կ.	9.9 տ.կ.

Արտահանման վարքագծի վերաբերյալ բանկերի սպասումները գրեթե համընկնում են ՀՀ ԴՎՔ ծրագրով նախատեսված մակարդակին, իսկ ներմուծման միջին կշռված աճը զգալիորեն գերազանցում է ԴՎՔ ծրագրով նախատեսված մակարդակը:

Հատկանշական է, որ 2003 թ. գրանցվել է թե՛ ներմուծման, թե՛ արտահանման ծավալների անհամեմատ ավելի բարձր աճ, քան բանկերն ակնկալում էին նախորդ տարվա հարցումների արդյունքներով:

Հարց 7. Համաձայն Ձեր գնահատականների՝ որքա՞ն է կազմում կանխիկ արտարժույթի հոսքը (մլն ԱՄՆ դոլար) (պատասխանները կշռված են բանկային համակարգի ընդհանուր ակտիվներում բանկերի տեսակարար կշիռներով):

	Կանխիկ արտարժույթ	2003 թ. (մլն ԱՄՆ դոլար)	2004 թ. (մլն ԱՄՆ դոլար)
1	Ներհոսք	329.0	326.2
2	Արտահոսք	144.1	144.7
3	Զուտ ներհոսք (= 1 - 2)	184.9	181.5

Ըստ բանկերի գնահատականների՝ 2003 թ. կանխիկ արտարժույթի զուտ ներհոսքը կանխատեսվել էր 184.9 մլն ԱՄՆ դոլար, 2004 թ. համար ակնկալվում է 181.5 մլն ԱՄՆ դոլարի զուտ ներհոսք: Զուտ ներհոսքի նվազումը, ըստ բանկերի, կպայմանավորվի ներհոսքի նվազմամբ և արտահոսքի աճով:

Հարց 8. Ձեր կարծիքով որքա՞ն կկազմի Ձեր բանկի միջոցով արտասահմանից մեր երկրի ֆիզիկական անձանց ուղարկվող փոխանցումների միջին ամսական ծավալը 2004 թվականին:

Ծավալ	Բանկերի քանակ
Մինչև 500 հազար դոլար	9
500 - 1000 հազար դոլար	2
1001 - 2000 հազար դոլար	1
2001- 3000 հազար դոլար	3
3001 հազար դոլարից ավելի	5

Ըստ բանկերի սպասումների՝ 2004 թ. ընթացքում բանկերի միջոցով մեր երկրի ֆիզիկական անձանց ուղարկված փոխանցումների տարեկան ծավալը կկազմի 363 մլն ԱՄՆ դոլար: Նշենք, որ 2003 թ. այդ ցուցանիշի փաստացի մակարդակը կազմել է 544 մլն ԱՄՆ դոլար, այնինչ, ըստ հուլիսի հարցումների, բանկերը սպասում էին 366 մլն դոլար:

Հարց 9. Ձեր կարծիքով 8-րդ կետում նշված միջոցների ո՞ր մասը հաճախորդները կկանխիկացնեն փոխանցմանը հաջորդող մեկ ամսվա ընթացքում (պատասխանները կշռված են բանկերի միջոցով ուղարկված դրամական միջոցների սպասվելիք ծավալներով):

	Բանկերի քանակ
Մինչև 10%	0
10-20%	0
20-30%	0
30-40%	0

	Բանկերի քանակ
40-50%	1
50-60%	0
60-80%	4
80-100%	15

Ըստ բանկերի պատասխանների, մեկ ամսվա ընթացքում միջին հաշվով կկանխիկացվի ատասահմանից ուղարկված դրամական փոխանցումների շուրջ 82%-ը, ինչը գրեթե համընկնում է բանկերի նախորդ տարվա սպասումներին (81%):

Հարց 10. Ձեր սպասումները 9-12 ամիս ժամկետայնությամբ ՊԿՊ ձևավորվող տոկոսադրույքների միտումների վերաբերյալ (պատասխանները կշռված են ՊՊ-ում բանկային համակարգի ներդրումներում բանկերի ներդրումների տեսակարար կշիռներով):

	2004 թ. հունիսի վերջ	2004 թ. դեկտեմբերի վերջ
Կաճեն	1(7.7%)	1(27.2%)
Կմնան նույնը	5(39.2%)	6(17.0%)
Կնվազեն	14(53.1%)	13(55.9%)

Բանկերի մեծ մասը կանխատեսել է ՊԿՊ տոկոսադրույքերի նվազում թե՛ 2004 թ. հունիսի վերջին, թե՛ դեկտեմբերի վերջին: 2004 թ. հունիսի վերջին և դեկտեմբերի վերջին տոկոսադրույքների աճ է ակնկալում մեկական բանկ: Տոկոսադրույքների վերաբերյալ բանկերի սպասումները, նախորդ տարվա համեմատ, այս տարի ավելի մոտ են միմյանց:

ՊԿՊ ձևավորվող տոկոսադրույքների վերաբերյալ բանկերի սպասումների թվային գնահատականները.

Վարքագիծը	2004 թ. հունիսի վերջ, %	2004 թ. դեկտեմբերի վերջ, %
Աճ	11.0	10.0
Անփոփոխ մակարդակ	9.4	9.7
Նվազում	6.8	7.9
Միջին կշռված	**8.1**	**6.7**
Առավելագույնը	11.0	11.0
Նվազագույնը	7.0	6.0
Ստանդարտ շեղում	1.1 տ.կ.	1.3 տ.կ.

Հատկանշական է, որ հունվարի հարցումների ժամանակ 2003 թ. դեկտեմբերի վերջին բանկերը ակնկալում էին ՊԿՊ տոկոսադրույքների 14.8% մակարդակ, մինչդեռ դեկտեմբերին 9 - 12-ամսյա ՊԿՊ միջին եկամտաբերությունը կազմեց 9.7%: 2004 թ. հունիսին բանկերն ակնկալում են ՊԿՊ տոկոսադրույքների 8.1% մակարդակ, մինչդեռ 333-օրյա ՊԿՊ տոկոսադրույքը փետրվարին արդեն իսկ կազմել է 6.7%:

Հարց 11. Ձեր սպասումները Ձեր բանկի կողմից 2003 թ. վերջի դրությամբ ներգրավված դրամային և արտարժութային ավանդների (ցպահանջ և ժամկետային) մնացորդների վերաբերյալ:

	Դրամային (մլն դրամ)	Արտարժութային (հազար ԱՄՆ դոլար)
Ռեզիդենտներից	47000	200406
Ոչ ռեզիդենտներից	4845.9	63750

2004 թ. վերջի դրությամբ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանցից ներգրավվող դրամային ավանդների ակնկալվող ծավալը, ըստ բանկերի կանխատեսումների, կկազմի 47.0 մլրդ դրամ, որը

15.8%-ով գերազանցում է 2003 թ. դեկտեմբերի մակարդակը: Հատկանշական է, որ ՀՀ ԴՎՔ ծրագրով նախատեսված է դրամային ավանդների 13.8% աճ:

Ռեզիդենտ իրավաբանական և ֆիզիկական անձանցից ներգրավվող արտարժութային ավանդների ծավալը շուրջ 14%-ով կգերազանցի 2003 թ. դեկտեմբերի փաստացի մակարդակը, մինչդեռ ՀՀ ԴՎՔ ծրագրով կանխատեսված է արտարժութային ավանդների 12% աճ: Այսպիսով, բանկերն ակնկալում են փողի զանգվածում ընդգրկված ավանդների շուրջ 14%-ով աճ, այն դեպքում, երբ ՀՀ ԴՎՔ ծրագրով նախատեսվում է դրանց 12%-ով աճ:

Հարց 12. Ձեր սպասումները բանկի կողմից ներգրավվող դրամային և արտարժութային ավանդների տոկոսադրույքների վերաբերյալ (պատասխանները կշռված են բանկային համակարգի ընդհանուր ավանդներում բանկերի ավանդների տեսակարար կշիռներով):

	Բանկերի քանակ			
	դրամային		արտարժութային	
	3-ամսյա	12-ամսյա	3-ամսյա	12-ամսյա
Կաճեն	1(0.5%)	1(0.5%)	1(2.6%)	1(2.6%)
Կմնան նույնը	10(17.8%)	8(17.8%)	12(52.3%)	10(51.8%)
Կնվազեն	9(81.6%)	11(81.6%)	7(45.1%)	9(45.6%)

Ի տարբերություն անցած տարվա հունվարի հարցումների, այս տարի բանկերի պատասխանները մի փոքր ավելի ցրված են: Մասնավորապես՝ բանկերի գերակշիռ մասը սպասում է դրամային ավանդների տոկոսադրույքների նվազում: Արտարժութային ավանդների տոկոսադրույքների փոփոխությունների սպասումներն, ինչպես 3-ամսյա, այնպես էլ 12-ամսյա, ունեն միևնույն ուղղվածությունը՝ բանկերի մեծ մասը ակնկալում է անփոփոխ մակարդակ:

Դրամային և արտարժութային ավանդների տոկոսադրույքների վերաբերյալ բանկերի սպասումների թվային գնահատականները հետևյալն են.

Դրամային ավանդներ

Վարքագիծը	3-ամսյա	12-ամսյա
Աճ	6.0	7.5
Անփոփոխ մակարդակ	5.9	9.1
Նվազում	5.9	7.2
Միջին կշռված	**5.9**	**7.5**
Առավելագույնը	8.5	10.0
Նվազագույնը	3.0	4.5
Ստանդարտ շեղում	1.4 տ.կ.	1.5 տ.կ.

Արտարժութային ավանդներ

Վարքագիծը	3-ամսյա	12-ամսյա
Աճ	7.0	8.0
Անփոփոխ մակարդակ	4.4	6.8
Նվազում	5.5	6.1
Միջին կշռված	**4.9**	**6.5**
Առավելագույնը	7.0	8.5
Նվազագույնը	0.2	0.2
Ստանդարտ շեղում	1.9 տ.կ.	2.3 տ.կ.

Նախորդ տարվա համեմատ որոշակիորեն նվազել են բանկերի կողմից ակնկալվող՝ տոկոսադրույքների ստանդարտ շեղումները, ինչը նշանակում է, որ բանկերի սպասումները ավելի մոտ են միմյանց: Ուշագրավ է, որ 2003 թ. հուլիսի հարցման արդյունքներով բանկերը գրեթե ճշգրիտ կանխատեսել էին դրամային ավանդների տոկոսադրույքները (հունվարի հարցումների ժամանակ բանկերը սպասում էին ավելի բարձր տոկոսադրույքներ): Ինչ վերաբերում է արտարժութային տոկոսադրույքներին, ապա նախորդ տարվա երկու հարցումների արդյունքներով՝ բանկերը սպասում էին դրանց ավելի մեծ նվազում, քան իրականում տեղի ունեցավ:

Հարց 13. 2004 թ. որքա՞ն կլինի Ձեր բանկի ավանդատուների մոտավոր քանակը, ավանդների ակնկալվող չափը և ժամկետը (պատասխանները կշռված են դրամային և արտարժութային ավանդների սպասվելիք ծավալներով):

Ըստ բանկերի ակնկալիքների՝ 2004 թ. բանկային համակարգի ավանդատուների միջին տարեկան թվաքանակը կկազմի 317.3 հազ. ավանդատու: Մեկ ավանդի միջին չափը՝ 425 հազ. դրամ (750 ԱՄՆ դոլար), ընդ որում՝ մեկ արտարժութային ավանդի միջին չափը, ինչպես և նախկինում, էականորեն գերազանցում է դրամային ավանդի չափը:

Դրամային ավանդների միջին ժամկետը, ըստ բանկերի, կազմելու է 6, իսկ արտարժութային ավանդներինը՝ 7.2 ամիս: Ի տարբերություն նախորդ տարվա, երբ դրամային ավանդների միջին ժամկետը բանկերի սպասումներով պետք է գերազանցեր արտարժութային ավանդների ժամկետը, 2004 թ. համար բանկերի սպասումները հակառակն են:

Հարց 14. Ձեր սպասումները Ձեր բանկի կողմից տարվա վերջի դրությամբ ռեզիդենտներին տրված վարկերի ծավալների վերաբերյալ:

Վարկեր	Ծավալ
Դրամային (մլն դրամ)	46607
Արտարժութային (մլն ԱՄՆ դոլար)	141.3

Համաձայն բանկերի կանխատեսումների՝ 2004 թ. վերջի դրությամբ ռեզիդենտներին տրված դրամային վարկերի ծավալը կկազմի 46.6 մլրդ դրամ՝ 2003 թ. վերջի համեմատությամբ կավելանա 43%-ով:

Արտարժութային ավանդների կանխատեսվող ծավալը 141.3 մլն ԱՄՆ դոլար է, որը 2003 թ. վերջի մակարդակը գերազանցում է 15%-ով: Տնտեսությանը տրամադրված վարկերի ընդհանուր ծավալը, ըստ բանկերի, կաճի 24%-ով, այն դեպքում, երբ 2004 թ. ՀՀ ԿԲ ԴՎՔ ծրագրով նախատեսված է վարկերի աճ 15%-ով:

Հարկ է նշել, որ 2003 թ. բանկերի վարկավորման ծավալների փաստացի աճը գերազանցել է ինչպես 2002 թ. հունվարին, այնպես էլ հուլիսին իրականացված հարցման արդյունքներով կանխատեսվող աճը (փաստացի աճը գերազանցել է նաև 2003 թ. ԴՎՔ ծրագրով ակնկալվող մակարդակը):

Հարց 15. Նշեք Ձեր կողմից տրամադրվող դրամային և արտարժութային վարկերի՝ տարվա վերջի դրությամբ ակնկալվող տոկոսադրույքները (պատասխանները կշռված են բանկային համակարգի ընդհանուր վարկային ներդրումներում բանկերի ներդրումների տեսակարար կշիռներով):

Վարկեր	Դրամային		
	3-ամսյա	12-ամսյա	1 տարուց ավելի
Կաճեն	0(0.0%)	0(0.0%)	0(0.0%)
Կմնան նույնը	12(66.7%)	9(4.,5%)	8(42.2%)
Կնվազեն	4(23.4%)	8(58.5%)	8(50.6%)
	Արտարժութային		
	3-ամսյա	12-ամսյա	1 տարուց ավելի
Կաճեն	0(0.0%)	0(0.0%)	0(0.0%)
Կմնան նույնը	14(72.9%)	9(41.0%)	9(53.7%)
Կնվազեն	5(27.1%)	10(58.9%)	9(44.8%)

Դրամային և արտարժութային վարկերի տոկոսադրույքների վերաբերյալ բանկերի պատասխանների թվային գնահատականները.

Դրամային վարկեր

Տոկոսադրույք	3-ամսյա	12-ամսյա	1 տարուց ավելի
Աճ	-	-	-
Անփոփոխ մակարդակ	22.6	24.3	21.7
Նվազում	23.3	19.4	18.5
Միջին կշռված	**20.6**	**19.7**	**18.2**
Առավելագույնը	28.0	28.0	26.0
Նվազագույնը	20.0	18.0	15.0
Ստանդարտ շեղում	2.5 տ.կ.	3.3 տ.կ.	2.7 տ.կ.

Արտարժութային վարկեր

Տոկոսադրույք	3-ամսյա	12-ամսյա	1 տարուց ավելի
Աճ	-	-	-
Անփոփոխ մակարդակ	19.7	19.7	17.7
Նվազում	18.6	16.6	15.0
Միջին կշռված	**17.6**	**16.3**	**15.0**
Առավելագույնը	24.0	24.0	21.0
Նվազագույնը	8.0	10.0	12.0
Ստանդարտ շեղում	4.2 տ.կ.	3.5 տ.կ.	2.5 տ.կ.

Բանկերի գերակշիռ մասը նախատեսում է թե՛ դրամային, թե՛ արտարժութային վարկերի տոկոսադրույքների անփոփոխ մակարդակ, միաժամանակ երկարաժամկետ հատվածում բանկերն ակնկալում են տոկոսադրույքների նվազում: Տոկոսադրույքների սպասումների միջին կշռված մակարդակները, 2003 թ. հուլիսի հարցման գնահատումների համեմատ, ունեն ընդգծված նվազման միտում: Ավելացնենք նաև, որ չնայած տոկոսադրույքների ընդհանուր մակարդակի նվազմանը, վարկերի և ավանդների տոկոսադրույքների միջև մարժան պահպանվում է բավականին բարձր մակարդակի վրա:

Նախորդ տարվա հարցումների ընթացքում արձանագրված սպասումները գրեթե համընկել են թե՛ դրամային, թե՛ արտարժութային վարկերի փաստացի տոկոսադրույքներին:

Հարց 16. 2004 թ. որքա՞ն կլինեն Ձեր վարկառուների մոտավոր քանակը, վարկերի ակնկալվող չափը և ժամկետը (պատասխանները կշռված են համապատասխանաբար դրամային և արտարժութային վարկերի սպասվելիք ծավալներով):

Համաձայն բանկերի սպասումների՝ 2004 թ. բանկային համակարգի վարկառուների միջին տարեկան թվաքանակը կկազմի 119,2 հազ. վարկառու, մեկ վարկի միջին չափը՝ 3,8 մլն դրամ (6,7 հազ. ԱՄՆ դոլար):

Դրամային վարկերի սպասվող միջին ժամկետը, ըստ բանկերի, կկազմի 11 ամիս, արտարժութային վարկերի սպասվող միջին ժամկետը՝ 13 ամիս:

Հարց 17. Ըստ Ձեր գնահատումների՝ 2004 թ. տնտեսության ո՞ր ոլորտներին են ուղղվելու Ձեր վարկային ներդրումները (պատասխանները կշռված են տնտեսության վարկերում բանկերի վարկերի տեսակարար կշիռներով):

Վարկավորման ոլորտը	Բանկերի քանակ	Վարկավորման աճը, %
Արդյունաբերություն, այդ թվում՝	18	20.9
էներգետիկա	4	7.0
լեռնահանքային	7	8.9
վերամշակող	16	30.6
Գյուղատնտեսություն	10	11.5
Շինարարություն	13	13.9
Առևտուր	18	23.2
Տրանսպորտ և կապ	7	6.8
Այլ	15	32.2

«Այլ ճյուղերի» վարկավորում սպասում է 15 բանկ՝ 32.2%-ի չափով: Որպես «Այլ ճյուղեր» բանկերը հիմնականում նշել են սպառողական վարկերը, սպասարկման ոլորտի վարկավորումը (հիմնականում՝ հանրային սնունդ) և հիփոթեքային վարկավորումը:

Հարց 18. Որո՞նք են 2003 թ. ընթացքում Ձեր հաճախորդներին տրամադրված վարկերի օգտագործման հիմնական ուղղությունները:

Օգտագործման ուղղությունները	Բանկերի քանակը
Շրջանառու միջոցների համալրում	19
Հիմնական միջոցների ձեռքբերում	8
Սպառողական ծախսերի կատարում	7
Նոր բիզնեսի նախաձեռնում	1
Այլ նպատակներ	2

Բանկերի մեծ մասը նշել է, որ 2003 թ. ընթացքում իրենց հաճախորդներին տրամադրված վարկերը հիմնականում կօգտագործվեն շրջանառու միջոցների համալրման նպատակով: 2002 թ. համեմատ վարկերի օգտագործման ուղղությունները գրեթե նույնն են, ուշադրության է արժանի միայն այն հանգամանքը, որ որպես օգտագործման «Այլ նպատակներ» երկու բանկ նշել է հիփոթեքային վարկավորումը:

Հարց 19. Ըստ Ձեր գնահատումների՝ 2004 թվականին որքանո՞վ կաճի Ձեր բանկի կանոնադրական կապիտալը ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների հաշվին:

Կանոնադրական կապիտալ (մլրդ դրամ)	8.9
Ռեզիդենտների հաշվին	6.8
Ոչ ռեզիդենտների հաշվին	2.1

2003 թ. դեկտեմբերի համեմատ բանկերը նախատեսում են կանոնադրական կապիտալի 8.9 մլրդ դրամի աճ: Կանոնադրական կապիտալի աճ սպասում է 11 բանկ, որոնցից 5-ը կանոնադրական կապիտալը նախատեսում է համալրել միայն ոչ ռեզիդենտների հաշվին, 4-ը՝ միայն ռեզիդենտների հաշվին, իսկ մնացածը 2-ը՝ և՛ ռեզիդենտների, և՛ ոչ ռեզիդենտների հաշվին: Հարկ է նշել, որ 2003 թ. բանկային համակարգի կանոնադրական կապիտալի աճը կազմել է ճիշտ այնքան, որքան բանկերը կանխատեսել էին 2003 թ. հունվարի հարցումներով:

Այսպիսով, հաշվի առնելով բանկային համակարգի 2003 թ. ընդհանուր կապիտալի փաստացի մակարդակը, ինչպես նաև բանկերի կողմից ակնկալվող՝ կանոնադրական կապիտալի աճը, 2004 թ. վերջի դրությամբ մեկ բանկի միջին ընդհանուր նորմատիվային կապիտալը կկազմի շուրջ 4.8 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:

Հարց 20. Դասակարգեք 2004 թ. Ձեր գործառնություններն ըստ առաջնայնության (հիմնվելով ընդհանուր շահույթում նշված գործառնություններից ստացված եկամտի տեսակարար կշռի վրա):

Գործառնություններ	Բանկերի գործառնություններն ըստ առաջնայնության						
	1	2	3	4	5	6	7
	բանկերի քանակը						
Տնտեսության վարկավորում	17	0	1	0	1	0	0
Արտարժույթի առք ու վաճառք	0	4	6	4	0	3	1
Արժեթղթերի առք ու վաճառք	0	4	2	4	2	0	3
Փոխանցումներ ՀՀ և հակառակը	1	4	5	4	2	1	0
Պլաստիկ քարտերի սպասարկում	0	5	2	4	4	1	0
Լիզինգային վարկեր	0	0	0	0	1	6	3
Այլ	2	4	1	2	0	0	0

Աղյուսակից երևում է որ բանկերի մեծ մասը առաջնային գործունեություն է համարում տնտեսության վարկավորումը: «Այլ» տողում բանկերը հիմնականում նշել են հիփոթեքային վարկավորումը, սպառողական վարկերի տրամադրումը:

Աղյուսակում նշված տվյալներն ամփոփելու նպատակով կիրառվել է 7 միավոր ունեցող համակարգ՝ առաջին տեղում դասակարգված գործառնությանը տալով 7, իսկ վերջին տեղում դասակարգված գործառնությանը՝ 1 միավոր: Այնուհետև յուրաքանչյուր գործառնության բալային գնահատականները

կշռվել են բանկերի քանակով: Արդյունքում՝ միավորային գնահատականներով արտահայտված գործառնությունների դասակարգումը ստացել է հետևյալ տեսքը (ամենաբարձր գնահատական ունեցող գործառնությունը զբաղեցնում է առաջին տեղը, ամենացածրը՝ վերջին):

Գործառնությունները	Միջին կշռված բալը
Տնտեսության վարկավորում	6.68
Այլ	5.67
Փոխանցումներ ՀՀ և հակառակ ուղղությամբ	4.71
Պլաստիկ քարտերի սպասարկում	4.38
Արտարժույթի առք ու վաճառք	4.28
Արժեթղթերի առք ու վաճառք	3.93
Լիզինգային վարկեր	1.80

Ի տարբերություն նախորդ տարվա հարցումների, այս տարի բանկերն ակնկալում են հարաբերականորեն ավելի շատ եկամուտներ ստանալ «Այլ» գործառնություններից (հիփոթեքային վարկավորում և սպառողական վարկեր), ինչպես նաև պլաստիկ քարտերի սպասարկումից:

Հարց 21. Ձեր սպասումները 2004 թ. վերջին Ձեր բանկի կողմից ՀՀ-ից դուրս տեղաբաշխված միջոցների մնացորդների վերաբերյալ:

Միջոցներ	Ծավալ (հազար ԱՄՆ դոլար)
Վարկեր	2700
Ավանդներ	24620
Թղթակցային հաշիվներ	94920
Արժեթղթեր	1102
Այլ	730

Համաձայն հարցման արդյունքների՝ 2004 թ. վերջի դրությամբ բանկերը նախատեսում են ունենալ 124.1 մլն ԱՄՆ դոլարի տեղաբաշխումներ արտասահմանում:

Հարց 22. Նշեք 2003 թ. ընթացքում ճյուղերում զբաղված Ձեր հաճախորդների ֆինանսական վիճակի փոփոխության ուղղությունը նախորդ տարվա համեմատ:

Ճյուղեր	Բարելավվել է	Վատացել է	Չի փոփոխվել
	բանկերի քանակ		
Արդյունաբերություն, այդ թվում՝	13	2	5
էներգետիկա	4	1	4
հանքագործական	6	0	3
մշակող	10	1	3
Գյուղատնտեսություն	5	3	3
Շինարարություն	16	0	1
Առևտուր	13	0	5
Տրանսպորտ և կապ	4	1	7
Այլ	4	0	3

Բանկերի պատասխանները հաճախորդների ֆինանսական վիճակի վերաբերյալ ընդհանուր առմամբ դրական են:

Ըստ ճյուղերի բանկերի հաճախորդների ֆինանսական վիճակի մասին պատկերացում կազմելու նպատակով կիրառվել է ամփոփման հետևյալ մեթոդիկան: Ֆինանսական վիճակի փոփոխության ուղղությունները՝ «բարելավվել է», «վատթարացել է», «չի փոփոխվել», գնահատվել են համապատասխանաբար 1, -1 և 0 միավորներով: Այնուհետև միավորները կշռվել են պատասխանած բանկերի քանակով: Արդյունքում ստացվել են հետևյալ ընդհանրացված ցուցանիշները.

Ճյուղեր	Միջին կշռված բալը
Արդյունաբերություն, այդ թվում՝	0.6
էներգետիկա	0.3
հանքագործական	0.7
մշակող	0.6
Գյուղատնտեսություն	0.2
Շինարարություն	0.9
Առևտուր	0.7
Տրանսպորտ և կապ	0.3
Այլ	0.6

Հարց 23. Որքանո՞վ եք բավարար համարում ՀՀ կենտրոնական բանկի կողմից իր հիմնական խնդրի՝ Հայաստանի Հանրապետությունում գների կայունության ապահովման և այլ խնդիրների (ՀՀ ԿԲ մասին ՀՀ օրենքով ամրագրված) իրականացման արդյունավետությունը:

ա) Հիմնական խնդրի՝ ՀՀ-ում գների կայունության ապահովումը

Լիովին բավարարված եմ	8
Մասամբ բավարարված եմ	11
Ընդհանրապես բավարարված չեմ	1

բ) Այլ խնդիրներ

Լիովին բավարարված եմ	5
Մասամբ բավարարված եմ	15
Ընդհանրապես բավարարված չեմ	0

Այսպիսով, բանկերն ավելի արդյունավետ են համարել ՀՀ կենտրոնական բանկի կողմից գների կայունության ապահովումը, քան այլ խնդիրների իրականացումը: Չնայած դրան, նախորդ հարցումների համեմատ, գների կայունության ապահովման հարցում բանկերի բավարարվածությունը փոքր-ինչ նվազել է: Հիմնական խնդրի հետ կապված իրենց պատասխանները բանկերը բացատրում են նախորդ տարվա ծրագրայինի համեմատ բարձր սղաճով:

Բացի հարցաթերթիկի հարցերին պատասխանելուց, բանկերը ներկայացրել են նաև մի շարք այլ մեկնաբանություններ և առաջարկություններ:

Բանկերն առաջարկում են լողացող փոխարժեքի պայմաններում թույլ չտալ փոխարժեքի կտրուկ տատանումներ, բանկային օրենսդրության հաճախակի և կտրուկ փոփոխություններ չիրականացնել՝ բանկերի կայունության ապահովման նպատակով: Մեկ բանկ առաջարկել է վերանայել ընդհանուր իրացվելիության նորմատիվը այն բանկերի համար, որոնց կարճաժամկետ պարտավորությունների ծավալները փոքր են:

ԲՆԱԿԱՆՈՆ ՍՂԱՑԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ*

Կարեն Պողոսյան, Գագիկ Աղաջանյան, Արտակ Հարությունյան

Վիճակագրության վարչություն

Սկսած 20-րդ դարի կեսերից, կենտրոնական բանկերը բավականին ակտիվ դեր են խաղում համախառն պահանջարկի կառավարման գործընթացում: Կենտրոնական բանկերի առջև որպես կառավարման օբյեկտ դրվել են տնտեսական աճը, գործազրկությունը, անվանական աշխատավարձը և այլն: Միայն Բրետոն-վուդյան մոնետար համակարգի փլուզումից հետո կենտրոնական բանկերի ուշադրությունը բևեռվեց գների կայունության ապահովման խնդրի վրա: Աշխարհի տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ գների կայունության ապահովումը առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում տնտեսության զարգացման համար: Այս դեպքում տնային տնտեսությունները և բիզնեսը, ձևավորելով գների միտումների առողջ սպասումներ, հնարավորություն են ստանում պլանավորելու իրենց գործունեության բնականոն ընթացքը:

Այս հանգամանքներով պայմանավորված՝ որոշ երկրներում, մասնավորապես՝ որտեղ սահմանվում է սղաճի նպատակային ցուցանիշ, կենտրոնական բանկերին օրենսդրորեն վերապահվում է գների մակարդակի կայունության ապահովման խնդիրը: Այստեղ հույժ կարևորվում է սղաճի մակարդակը պատշաճ բնութագրող ցուցանիշի ընտրությունը: Սղաճի ընտրված ցուցանիշը, նախ, պետք է ճշգրիտ պատկերացում տա գների միտումների վերաբերյալ՝ առավելագույնս զերծ պահելով վերլուծողներին գների ընդհանուր մակարդակի փոփոխությունների գերագնահատումից կամ թերագնահատումից: Բացի այդ, նշված ցուցանիշը պետք է կառավարելի լինի կենտրոնական բանկի կողմից: Այսինքն, կենտրոնական բանկը պետք է հնարավորություն ունենա դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառման միջոցով ազդելու սղաճի ընթացքի վրա: Վերջապես, ընտրված ցուցանիշը պետք է լինի հասկանալի և շոշափելի լայն հասարակության համար:

1996 թ. ընդունված «ՀՀ կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքում ամրագրվել է դրույթ այն մասին, որ Կենտրոնական բանկի հիմնական խնդիրը գների կայունության ապահովումն է, որի իրականացման համար մշակվում է դրամավարկային քաղաքականության ծրագիր:

ՀՀ-ում սղաճի մակարդակը չափվում է սպառողական գների ինդեքսի (ՍԳԻ) միջոցով, որն արտացոլում է սպառողական զամբյուղի արժեքի փոփոխությունը: Սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ ՍԳԻ կիրառումը սղաճը բնութագրելու համար որոշ դեպքերում այդքան էլ նպատակահարմար չէ: Նախ, ՍԳԻ-ն, որպես կշռված միջին ցուցանիշ, կարող է գների ընդհանուր մակարդակի փոփոխության ամփոփ գնահատական հանդիսանալ, եթե սպառողական գների բաշխումը համապատասխանում է նորմալ բաշխման տեսքին: Բացի այդ, տարվա ընթացքում ՍԳԻ միտումները բնութագրվում են զգալի տատանողականությամբ՝ հիմնականում պայմանավորված որոշ ապրանքների և ծառայությունների արտադրության ու սպառման սեզոնայնությամբ: Նշենք նաև, որ սպառողական գների միտումները պայմանավորված են առաջարկի և պահանջարկի զանազան գործոնների (շոկերի) ազդեցությամբ, որոնք բարդացնում են կենտրոնական բանկի կողմից սղաճի կառավարման խնդիրը: Վերջապես, կենտրոնական բանկերը պետք է տարանջատեն ժամանակավոր շոկերով պայմանավորված գների փոփոխությունները՝ գների մակարդակի երկարաժամկետ փոփոխությունները կառավարելու համար:

Հաշվի առնելով նշված հանգամանքները՝ որոշ երկրների կենտրոնական բանկեր մշակել են բնականոն սղաճի հաշվարկման մի շարք մեթոդներ[1]: Բնականոն սղաճը արտահայտում է գների մակարդակի ընդհանուր միտումը երկարաժամկետ հատվածում: Այլ խոսքերով, բնականոն սղաճն իրենից ներկայացնում է սղաճի կայուն բաղադրամասը. առավելագույնս ազատված է պատահական գործոնների ազդեցությունից և բնութագրվում է ժամանակի մեջ ցածր տատանողականությամբ: Տեսության մեջ նշվում է նաև հետևյալ տեսակետը. բնականոն սղաճը բնութագրում է ազգային տնտեսությունում երկարաժամկետ հաշվեկշռվածությունը:

** Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

[1] «Բնականոն սղաճի» անգլերեն տարբերակներն են՝ core inflation, underlying inflation, trend inflation, long-term inflation, demand-driven inflation.

Ընդհանուր առմամբ, բնականոն սղաճի հաշվարկը կենտրոնական բանկերի համար կարևորվում է հետևյալ հանգամանքներով.

1. Բնականոն սղաճը առավելագույնս մոտ է սղաճի միտումներին: Դրա հաշվարկը հնարավորություն կտա պատկերացում կազմելու սղաճի ընդհանուր ուղղվածության մասին:
2. Բնականոն սղաճը կարող է օգտագործվել որպես առաջնորդող ինդիկատոր սղաճի կանխատեսման ընթացքում: Կենտրոնական բանկի դրամավարկային քաղաքականությունը ազդում է գների մակարդակի վրա որոշակի լագով, հետևապես, դրամավարկային քաղաքականությունն իրականացնողներին առաջին հերթին հետաքրքրում է սղաճի ոչ թե ներկա, այլ ապագա մակարդակը:
3. Դրամավարկային ցուցանիշների և բնականոն սղաճի սերտ կապերի (փոխկապվածության) առկայության դեպքում վերջինս կարող է օգտագործվել որպես քաղաքականության նպատակադրվող պարամետր:

Ներկայումս բնականոն սղաճը հաշվարկվում է մի շարք երկրներում, որպես կանոն, կենտրոնական բանկերի կողմից: Այսպես, բազմաթիվ զարգացած և զարգացող երկրներ պարբերաբար հաշվարկում և հետազոտում են բնականոն սղաճի միտումները: Որոշ երկրներում բնականոն սղաճի ցուցանիշը օգտագործվում է որպես սղաճի նպատակային մեծություն (Թաիլանդ, Մեծ Բրիտանիա) կամ գործառնական նպատակ (Կանադա): Վերջապես, մի շարք երկրներ կիրառում են բնականոն սղաճի ցուցանիշը դրամավարկային քաղաքականության ընթացքը ուսումնասիրելու և գնահատելու նպատակով (ԱՄՆ, Ավստրալիա[2] և այլն):

Սկսած 1996 թ.՝ ՀՀ կենտրոնական բանկը նույնպես հաշվարկում է բնականոն սղաճը և օգտագործում վերլուծական նպատակներով: Հաշվարկը հիմնված է սղաճի ցուցանիշից սեզոնային ապրանքների՝ մրգի ու բանջարեղենի գների և պետության կողմից կարգավորվող ծառայությունների սակագների ինդեքսների բացառման վրա: Բացի նշված մեթոդից, ուսումնասիրվել են նաև մի շարք այլ մեթոդներ. հատած միջիններ (5, 10 և 15%), մեդիանա[3] և այլն:

Սույն աշխատանքի առաջին բաժնում ուսումնասիրվում են ՀՀ-ում ՍԳԻ հաշվարկման առանձնահատկությունները, սպառողական զամբյուղի ապրանքների և ծառայությունների կշիռների դինամիկան տարիների ընթացքում, ներկայացվում են ապրանքների և ծառայությունների բաշխվածությունը բնութագրող ցուցանիշները (միջին, դիսպերսիա, ասիմետրիա, էքսցես): Երկրորդ բաժնում ներկայացվում է բնականոն սղաճի ցուցանիշի հաշվարկը մի շարք մեթոդներով՝ հիմնվելով միջազգային փորձի վրա: Երրորդ բաժնում մի շարք չափանիշներով գնահատվում են բնականոն սղաճի հաշվարկված ցուցանիշները:

Սղաճի միտումները ՀՀ-ում

Կարճաժամկետ և միջինժամկետ ժամանակահատվածում սղաճը հանդիսանում է առաջարկի և պահանջարկի բազմաթիվ մոնետար և ոչ մոնետար գործոնների ազդեցության արդյունք: Ընդ որում, ոչ մոնետար գործոններից են՝ տնտեսությունում կառուցվածքային տեղաշարժերը, հարկաբյուջետային քաղաքականությունը, փոխարժեքի և ներմուծման գների տատանումները, իրական հատվածի շոկերը, բնակլիմայական պայմանների փոփոխությունները և այլն: Դրանց ազդեցությամբ սղաճը ՀՀ կենտրոնական բանկի համար վերածվում է բավականին տատանվող և անվերահսկելի ցուցանիշի: Բացի այդ, սպառողական գները Հայաստանում բնութագրվում են զգալի սեզոնային տատանումներով[4]: Մյուս կողմից, ՍԳԻ վարիացիայում պատահական բաղադրատարրի զգալի մակարդակը, որը, մասնավորապես, խմիչքի, ծխախոտի, դեղամիջոցների և բուժսպասարկման ծառայությունների համար 1995 – 2003 թթ. կազմել է 50%-ից ավելի, դժվարացնում է սղաճի ճշգրիտ կանխատեսումը:

Սղաճի միտումները հասկանալու համար անհրաժեշտ է բազմակողմանի ուսումնասիրել սպառողական զամբյուղում ապրանքների և ծառայությունների տեսակարար կշիռները, ինչպես նաև ժամանակի ընթացքում դրանց անհատական գների շարժը:

---

[2] Ավստրալիայում որպես սղաճի նպատակային ցուցանիշ է ընդունվում սղաճի միջինժամկետ մակարդակը:

[3] Տես՝ «Սղաճը Հայաստանի Հանրապետությունում. 1999 թ. 2-րդ կիսամյակ»:

[4] Համաձայն ՀՀ ԿԲ հաշվարկների՝ վերջին տարիներին սեզոնային բաղադրատարրը կազմում է ՍԳԻ վարիացիայի շուրջ 80%-ը: Հաշվարկների մեթոդաբանությունը ներկայացված է «Սղաճը Հայաստանի Հանրապետությունում. 1999 թ. 2-րդ կիսամյակ» պարբերականում:

ՀՀ-ում ՍԳԻ-ն հաշվարկվում է Լասպերեյսի ինդեքսային բանաձևի օգնությամբ:

$$CPI^t = \frac{\sum_{i=1}^{K} p_i^0 q_i^0 \frac{p_i^t}{p_i^0}}{\sum_{i=1}^{K} p_i^o q_i^o} \qquad (1)$$

p_i^0, p_i^1՝ - i-րդ ապրանքի կամ ծառայության գների մակարդակն է, համապատասխանաբար բազիսային և ընթացիկ ժամանակահատվածում,

q_i^0՝ - i-րդ ապրանքի սպառման ծավալը բազիսային ժամանակահատվածում,

K-ն՝ - սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանքների և ծառայությունների քանակը, որը ՀՀ դեպքում հավասար է 400:

ՍԳԻ բանաձևը կարելի է ներկայացնել.

$$CPI^t = \sum w_i \pi_i^t \qquad (2)$$

w_i՝ i-րդ ապրանքի տեսակարար կշիռն է սպառողական զամբյուղում, բազիսային ժամանակահատվածում ($w_i = \frac{p_i^0 q_i^0}{\sum_{i=1}^{K} p_i^0 q_i^0}$), որն անփոփոխ է տարվա համար,

π_i^t՝ i-րդ ապրանքի կամ ծառայության գնի ինդեքսը ($\pi_i^t = \frac{p_i^t}{p_i^o}$):

Սպառողական զամբյուղի ապրանքների և ծառայությունների կշիռների վերաբերյալ նշենք, որ ամեն տարի Ազգային վիճակագրական ծառայությունը (ԱՎԾ) իրականացնում է տնային տնտեսությունների ընտրանքային հետազոտություններ: Սկսած 1998 թ., սպառողական զամբյուղում ընդգրկվում են 400 ապրանքներ և ծառայություններ, որոնք բաշխված են ըստ երեք խոշոր խմբերի. պարենային ապրանքներ, ոչ պարենային ապրանքներ և ծառայություններ: Նախորդ տարիների ընթացքում բնակչության սպառողական ծախսերի կառուցվածքը ենթարկվել է զգալի փոփոխությունների, մասնավորապես մեծացել է ծառայությունների վրա կատարվող ծախսերի տեսակարար կշիռը: 1998 - 2003 թթ. ընթացքում ՀՀ բնակչության սպառողական զամբյուղի կառուցվածքը ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. Սպառողական զամբյուղի կառուցվածքը ՀՀ-ում, 1998 - 2003 թթ.

	1998	1999	2000	2001	2002	2003
Պարենային ապրանքներ*	61.5	66.6	70.5	70.2	69.3	66.0
Ոչ պարենային ապրանքներ	21.2	16.0	15.5	15.7	15.9	15.5
Ծառայություններ	17.4	17.4	14.0	14.2	14.8	18.4

** Ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ*

Շուկայական տնտեսությանն անցման տարիներին սղաճի տեմպերը զգալիորեն նվազել և կայունացել են: Այսպես, 1994-2003 թթ. սղաճի տարեկան տեմպը նվազել է համապատասխանաբար 1761.9%-ից մինչև 8.6% (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Սղաճը ՀՀ-ում (%-ով՝ նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ)

	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Սղաճ	1761.9	32.2	5.7	21.9	-1.3	2.0	0.4	2.9	2.0	8.6
Պարենային*	1601.0	25.8	2.3	20.6	-4.3	-1.6	-0.2	4.1	1.9	12.4
Ոչ պարենային	1332.6	8.9	1.9	6.9	0.9	2.9	1.6	-0.7	2.7	0.4
Ծառայություններ	4817.5	129.9	30.3	48.3	6.5	15.2	1.9	0.6	1.5	2.1

** Ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ*

Սղաճի միտումները հասկանալու համար անհրաժեշտ է ուսումնասիրել սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանքների և ծառայությունների գների ինդեքսների բաշխվածությունը բնութագրող վիճակագրական ցուցանիշները, մասնավորապես՝ միջին թվաբանականը, ստանդարտ շեղումը, ասիմետրիան և էքսցեսը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ միջին թվաբանական մեծությունը դրսևորում է սեզոնային բարձր տատանողականություն: Ստանդարտ շեղման գործակիցը համեմատաբար կայուն է. վարիացիայի գործակցի մեծությունը 1996-2003թթ. ընթացքում միջին արտահատությամբ կազմել է՝ չկշռված տվյալների համար՝ 8.6%, իսկ կշռված տվյալների՝ շուրջ 9.3%: Ինչպես չկշռված, այնպես էլ կշռված տվյալների համար ասիմետրիայի գործակիցը հիմնականում դրական է. չկշռված տվյալների համար այն դրական է ընդհանուր դեպքերի շուրջ 83%-ում, իսկ կշռված տվյալների համար՝ շուրջ 85%-ում: Այսինքն՝ կարելի է եզրակացնել, որ ապրանքների և ծառայությունների գների բաշխվածությունը գերակշռող դեպքերում աջակողմյան է: Միևնույն ժամանակ, էքսցեսի գործակիցը զգալիորեն շեղվում է նորմալ բաշխման նմանատիպ ցուցանիշից (վերջինիս համար այն հավասար է զրոյի): Ըստ էության, ստացված էքսցեսի գործակիցը ցույց է տալիս, որ սպառողական գների բաշխվածությունը շատ ավելի սրածայր է, քան նորմալ բաշխման դեպքում:

Ներկայացված բաշխվածության ցուցանիշների հիման վրա կարելի է եզրակացնել, որ գների ինդեքսները բաշխված են նորմալ–լոգարիթմական բաշխման օրենքով, հետևաբար այդ դեպքում գների կենտրոնական միտումը բնութագրելու համար նպատակահարմար է կիրառել ոչ թե միջին թվաբանականը, այլ մեդիանան (Roger (2000)):

Բնականոն սղաճի հաշվարկման եղանակները

Բնականոն սղաճի հաշվարկման եղանակները կարելի է դասակարգել հետևյալ հիմնական խմբերի՝ արտաքսման, վիճակագրական և էկոնոմետրիկ եղանակներ: Մանրամասն դիտարկենք յուրաքանչյուր խմբում ընդգրկված եղանակների առանձնահատկությունները: Արտաքսման և վիճակագրական եղանակների կիրառման դեպքում հաշվարկներից բացառվում են բարձր տատանողականություն ունեցող ապրանքները և ծառայությունները, իսկ էկոնոմետրիկ եղանակները հնարավորություն են տալիս մոդելավորել սղաճը, այսինքն՝ չափել բնականոն սղաճը գների և այլ տնտեսական ինդիկատորների միջև փոխկապվածության հիման վրա:

Բնականոն սղաճի հաշվարկման ***արտաքսման եղանակների*** կիրառման ընթացքում մենք բացառում ենք (1) որոշ ապրանքների և ծառայությունների գների ինդեքսները, կամ (2) գների վրա որոշ մակրոտնտեսական ցուցանիշների և պետական կարգավորման մեխանիզմների ազդեցությունը:

Տարբեր մակրոտնտեսական ցուցանիշների և պետական կարգավորման սկզբունքների փոփոխությունը զգալի շեղումներ կարող է մտցնել գների միտումների մեջ: Այսպես, որոշ կենտրոնական բանկեր (օրինակ՝ Նոր Զելանդիայի, Ֆինլանդիայի, Կանադայի, Մեծ Բրիտանիայի, Շվեդիայի) գնահատում և առանձնացնում են անուղղակի հարկերի, սուբսիդիաների, միջազգային գների և փոխարժեքի ազդեցությունը: Սակայն սույն մեթոդի կիրառումը դժվարանում է այն առումով, որ գործնականում անհնար է հստակ տարանջատել բոլոր նմանատիպ գործոնների ազդեցությունը գների վրա:

Առավել տարածված է արտաքսման այն եղանակը, երբ սպառողական զամբյուղից արտաքսվում են այն ապրանքները, որոնց արտադրությունը ունի սեզոնային բնույթ և այն ծառայությունները, որոնց սակագները կարգավորվում են պետության կողմից: Որոշ երկրներում բնականոն սղաճի հաշվարկման ընթացքում սպառողական զամբյուղից բացառվում են պարենային ապրանքները, էլեկտրաէներգիան, պետական տուրքերը, տոկոսային ծախսերը, բնակվարձը: Սույն եղանակով բնականոն սղաճի հաշվարկները ՀՀ կենտրոնական բանկը սկսել է իրականացնել 1996 թ. սկսած: Սպառողական զամբյուղից արտաքսվող ապրանքների և ծառայությունների տեսակարար կշիռը տարիների ընթացքում տատանվել է՝ 1996 – 2003 թթ. կազմելով միջինը 19% (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Սեզոնային ապրանքների և պետության կողմից կարգավորվող ծառայությունների տեսակարար կշիռները սպառողական զամբյուղում 1996 - 2003 թթ. (%)

	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Սեզոնային ապրանքներ	14.9	9.7	13.8	8.3	7.5	8.5	10.2	10.4
Պետության կողմից կարգավորվող ծառայություններ	7.8	7.7	9.0	10.9	6.8	6.8	8.5	9.0
Ընդամենը	**22.7**	**17.3**	**22.8**	**19.2**	**14.3**	**15.3**	**18.7**	**19.4**

Այսպիսով, արտաքսելով սպառողական զամբյուղից սեզոնային ապրանքները և պետության կողմից կարգավորվող ծառայությունները՝ Լասպերեյսի ինդեքսային բանաձևի միջոցով հաշվարկվել է բնականոն սղաճի դինամիկան (EXCLcore1)[5]:

Արտաքսման մեկ այլ եղանակի դեպքում սպառողական զամբյուղից հանվում են համեմատաբար բարձր տատանողականություն ունեցող ապրանքները և ծառայությունները: Որպես ապրանքների և ծառայությունների գների տատանողականության բնութագրիչներ են ընտրվել վարիացիայի գործակիցը և ստանդարտ շեղումը:

Վարիացիայի գործակցի կիրառման դեպքում, նախ, յուրաքանչյուր ապրանքի և ծառայության համար մեկ տարվա կտրվածքով հաշվարկվել են գների ինդեքսների վարիացիայի գործակիցները, որոնց հիման վրա՝ վերջիններիս միջին մակարդակը համապատասխան տարվա համար: Համեմատելով յուրաքանչյուր ապրանքի կամ ծառայության վարիացիայի գործակիցը տվյալ տարվա վարիացիայի գործակցի միջին մեծության հետ, հաշվարկներից բացառել ենք այն ապրանքները և ծառայությունները, որոնց տատանողականությունն ավելի բարձր է եղել վարիացիայի միջին մակարդակի համեմատ: Սույն եղանակով հաշվարկված բնականոն սղաճի դինամիկան (EXCLcore2 և EXCLcore2(12)) ներկայացված է հավելված 1-ում:

Ստանդարտ շեղման կիրառումը ենթադրում է, նախ, յուրաքանչյուր ամսվա համար սպառողական զամբյուղի մեջ ընդգրկված ապրանքների և ծառայությունների գների ինդեքսների ստանդարտ շեղման հաշվարկ: Այնուհետև, այդ ցուցանիշը բազմապատկվում է 1.5 գործակցով: Ստացված ցուցանիշը ընդունվում է որպես ուղենիշ. հաշվարկներից բացառվել են այն ապրանքները և ծառայությունները, որոնց գների ինդեքսները դուրս են (բարձր կամ ցածր են) պաշտոնական սղաճ $\pm$ ուղենիշ միջակայքից: Այս եղանակով հաշվարկված բնականոն սղաճի (EXCLcore3 և EXCLcore3(12)) դինամիկան ներկայացված է հավելված 1-ում:

Փորձ է արվել նաև հարթեցնելու սեզոնային ապրանքների ամսական գների ինդեքսները և հաշվարկելու սղաճի նոր ցուցանիշ: Այսպես, սեզոնային ապրանքների՝ մրգի և բանջարեղենի ամսական գների ինդեքսները հարթեցվել են՝ բացառելով սեզոնային տատանումները, և այնուհետև հաշվարկվել է բնականոն սղաճի ցուցանիշը (EXCLcore4):

Նշենք նաև, որ արտաքսման եղանակներն ունեն որոշ թերություններ: Այսպես, սպառողական զամբյուղից այս կամ այն ապրանքի (ծառայության) բացառումը նշանակում է, որ վերջինիս գնի փոփոխությունները պայմանավորված են միայն ոչ մոնետար գործոնների ազդեցությամբ: Այնինչ իրականում այդ փոփոխությունների մի մասը կարող է պայմանավորվել մոնետար գործոնների ազդեցությամբ: Բացի այդ, տարբեր ոչ մոնետար կարճաժամկետ շոկերի ազդեցությունը պահպանվում է մնացած ապրանքների և ծառայությունների գների միտումներում:

Բնականոն սղաճի հաշվարկման ***վիճակագրական եղանակների*** հիմնական նպատակն է կրճատել սպառողական գների ամփոփ ինդեքսի տատանողականությունը: Մեր կողմից կիրառվել են վիճակագրական եղանակներից հետևյալ առավել տարածվածները՝ մեդիանայի, հատած միջինների, կրկնակի կշռման, Հոդրիկ-Պրեսկոթի հարթեցման եղանակները: Ներկայացնենք այդ եղանակների էությունը և դրանց օգնությամբ հաշվարկված բնականոն սղաճի ցուցանիշների դինամիկան:

Բնականոն սղաճի հաշվարկը *մեդիանայի* եղանակով ենթադրում է անհատական գների ինդեքսների սովորական մեդիանայի հաշվարկ յուրաքանչյուր ամսվա համար: Կիրառելով մեդիանայի եղանակը՝ ՀՀ պաշտոնական գների ինդեքսների օգնությամբ հաշվարկվել է բնականոն սղաճի դինամիկան (MED, MED(12)) (տե՛ս հավելված 1):

Աշխարհի մի շարք երկրներում ընդունված է բնականոն սղաճը հաշվարկել *հատած միջինների* (trimmed means) եղանակով: Սույն եղանակի կիրառումը պայմանավորված է այն հանգամանքով, որ երբ տնտեսությունում տեղի են ունենում շոկեր՝ պահանջարկի կամ առաջարկի, համապատասխան շեղումներ են գրանցվում գների ինդեքսների բաշխվածության մեջ: Արդյունքում, թվաբանական միջինը ճշգրիտ չի արտացոլում գների մակարդակի ընդհանուր միտումը և անհրաժեշտություն է առաջանում հատել գների բաշխումը:

Համաձայն սույն եղանակի՝ սպառողական զամբյուղի ապրանքների և ծառայությունների գների ինդեքսները դասակարգվել են ըստ աճողական կարգի: Այնուհետև դասակարգված գների ինդեքսների շարքի յուրաքանչյուր ծայրից արտաքսվում են ապրանքների և ծառայությունների մի մասի գների ինդեքսները, ընդ որում՝ յուրաքանչյուր ծայրից հատվող ապրանքների և ծառայությունների տեսակարար կշիռների կումուլյատիվ հանրագումարը հավասար է[6]:

---

[5] Բնականոն սղաճի հաշվարկված որոշ ցուցանիշների միտումները ներկայացված են հավելված 1-ում:

[6] Սույն նյութում դիտարկվում է սիմետրիկ հատած միջինների եղանակը: Ինչ վերաբերում է ասիմետրիկ հատած միջիններին, ապա դրանց կիրառման համար անհրաժեշտ է համապատասխան ծրագրային ապահովվածություն:

Հատած միջինի հաշվարկը իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$X_{\alpha}^{*} = \frac{1}{1-2\frac{\alpha}{100}} \sum_{i \in I_{\alpha}} w_i x_i \qquad (3)$$

α-ն սպառողական զամբյուղից արտաքսվող ապրանքների և ծառայությունների կումուլյատիվ տեսակարար կշիռն է,

$I_{\alpha} = \left\{ \frac{\alpha}{100} \lhd W \lhd (1-\frac{\alpha}{100}) \right\}$ ցույց է տալիս գների այն ինդեքսների բազմությունը, որոնք ընկած են α/100 և (1-α /100) միջակայքում:

Այն դեպքում, երբ α = 0, հատած միջինի եղանակով հաշվարկված բնականոն սղաճի դինամիկան համընկնում է պաշտոնական սղաճի ցուցանիշին, իսկ α = 50%-ի դեպքում՝ կշռված մեդիանային: Այսպիսով, հատած միջինով հաշվարկված բնականոն սղաճի վերին սահմանը համընկնում է կշռված մեդիանային, իսկ ներքին սահմանը՝ պաշտոնական սղաճին: Կիրառելով հատած միջինների եղանակը՝ հաշվարկվել են բնականոն սղաճի ցուցանիշներ α = 5, 10, 15, 20, 25, 30, 35, 40, 45, 50% դեպքերի համար:

Կրկնակի կշռման եղանակի դեպքում սպառողական զամբյուղում ընդգրկված ապրանքների և ծառայությունների պաշտոնական կշիռները վերակշռվում են: Ըստ էության, բոլոր ապրանքները և ծառայությունները մասնակցում են բնականոն սղաճի ինդեքսի կառուցմանը: Միևնույն ժամանակ, ներքոնշյալ բանաձևերի միջոցով առավել տատանողական ապրանքների կամ ծառայությունների ազդեցությունը բնականոն սղաճի վրա համապատասխանորեն նվազեցվում է: Բնականոն սղաճի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևերի օգնությամբ.

$$\pi_i^{cpiw} = \sum_{i=1}^{n} \pi_{it} * dwt_{it} \qquad (4)$$

$$dwt_{it} = \frac{\left(w_{it} * \frac{1}{\sigma_i} \right)}{\left(\sum_{i=1}^{n} w_{it} * \frac{1}{\sigma_i} \right)} \qquad (5)$$

$$\sigma_i = \left[\frac{1}{n-1} \sum \left[(\pi_{it} - \pi_t^{cpi}) - (\overline{\pi_{it} - \pi_t^{cpi}}) \right]^2 \right]^{\frac{1}{2}} \qquad (6)$$

π_i^{cpiw}՝ բնականոն սղաճն է,

dwt_{it}՝ i– րդ ապրանքի (ծառայության) կրկնակի կշիռն է:

π_{it}՝ i–րդ ապրանքի կամ ծառայության գների ինդեքսն է t- րդ ժամանակահատվածում,

σ_i՝ i –րդ ապրանքի կամ ծառայության գնի ինդեքսի ստանդարտ շեղումն է պաշտոնական սղաճից,

π_t^{cpi}՝ ՍԳԻ-ն է t-րդ ժամանակահատվածում,

w_{it}՝ i– րդ ապրանքի (ծառայության) տեսակարար կշիռն է:

Կրկնակի կշռման եղանակով հաշվարկված բնականոն սղաճի (DW) դինամիկաները ներկայացված են հավելված 1-ում:

Բնականոն սղաճի հաշվարկման համար կիրառվել է նաև վիճակագրության տեսության մեջ հայտնի՝ ժամանակային շարքերի հարթեցման *Հոդրիկ-Պրեսկոթի ֆիլտրի* մեթոդաբանությունը: Նշենք, որ Հոդրիկ-Պրեսկոթի ֆիլտրով ժամանակային շարքի հարթեցման աստիճանը անմիջականորեն պայմանավորվում է λ պարամետրի արժեքով: Կիրառելով Հոդրիկ-Պրեսկոթի ֆիլտրը՝ հաշվարկվել է բնականոն սղաճի ցուցանիշը λ = 50, 100, 500, 1000, 5000, 10000 և 14400 դեպքերի համար: Հաշվարկներն իրականացվել են EVIEWS ծրագրային փաթեթի օգնությամբ:

Էկոնոմետրիկական եղանակների կիրառման դեպքում բնականոն սղաճը դիտվում է որպես փաստացի սղաճի այն մասը, որը երկարաժամկետ ժամանակահատվածում չի ազդում արտադրության իրական ծավալների աճի վրա: Բնականոն սղաճի հաշվարկը էկոնոմետրիկական եղանակներով ներկայացված է մի շարք աշխատանքներում (տե՛ս, օր., Quah and Vahey (1995)): Մասնավորապես, այդ աշխատանքում բնականոն սղաճի հաշվարկն իրականացվում է երկչափ վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելի օգնու-

թյամբ, որում որպես փոփոխականներ հանդես են գալի ՀՆԱ իրական աճի և սղաճի ցուցանիշները: Սույն աշխատանքում բնականոն սղաճի հաշվարկը էկոնոմետրիկական եղանակներով չի իրականացվել մի շարք օբյեկտիվ պատճառներով: Նախ, ՀՆԱ ամսական իրական աճի վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը բացակայում է: Երկրորդ, վերոնշյալ աշխատությունում հեղինակները բոլոր դատողությունները կատարել են Ֆիլիպսի կորի հիման վրա, որը ՀՀ-ում դեռևս կառուցված չէ, հետևաբար մեզ հայտնի չեն Ֆիլիպսի կորի առանձնահատկությունները ՀՀ տնտեսության պայմաններում: Երրորդ, անցումային տնտեսություններում կառուցվածքային փոփոխությունները տեղի են ունենում բավականին հաճախ, հետևապես վեկտոր ավտոռեգրեսիոն մոդելների կիրառելիության հնարավորությունները և դրանց հիման վրա կատարվող դատողությունների ճշմարտության հավանականության աստիճանը զգալիորեն նվազում են: Չնայած նշված խոչընդոտներին՝ էկոնոմետրիկական եղանակների օգնությամբ բնականոն սղաճի հաշվարկը մեր կողմից դիտվում է որպես ապագայի խնդիր:

Բնականոն սղաճի ընտրության սկզբունքները

Բնականոն սղաճի առավել օպտիմալ ցուցանիշի ընտրությունը զգալիորեն կախված է բնականոն սղաճի էությունից և կիրառման ուղղություններից: Այսպես, տնտեսական քաղաքականություն իրականացնողների կողմից կիրառման առավել նպատակահարմար ուղղություններից է բնականոն սղաճի ցուցանիշի սահմանումը որպես սղաճի նպատակ (target): Սղաճի նպատակադրման համար ընտրվող բնականոն սղաճի ցուցանիշը պետք է բավարարի որոշ պայմանների: Տնտեսագիտական գրականության մեջ առանձնանում են երկու հիմնական մոտեցումներ այս հարցի շուրջ: Տնտեսագետների մի մասը (տե՛ս, օր., Roger (1998), Johnson (1999)) գտնում է, որ բնականոն սղաճը պետք է սերտ կոռելացված լինի փողի ագրեգատների հետ, իսկ միտումներով համընկնի սղաճի միտումներին: Սույն մոտեցմանը հարող տնտեսագետների կարծիքով բնականոն սղաճի նման ցուցանիշի տատանողականությունն ավելի քիչ կլինի, որի արդյունքում կնվազի նաև դրամավարկային քաղաքականության գործիքների կիրառման տատանողականությունը (հաճախականությունը): Մյուս կողմից, տնտեսագետների մեկ այլ խումբ (տե՛ս, օր., Cutler (2001)) գտնում է, որ եթե երկրում սղաճի ինչ-որ ցուցանիշ սահմանված է որպես դրամավարկային քաղաքականության վերջնական նպատակ, ապա բնականոն սղաճի ցուցանիշը պետք է խիստ կոռելացված լինի այդ նպատակի հետ և ծառայի որպես առաջնորդող ինդիկատոր վերջինիս կանխատեսման ընթացքում: Այստեղ անհրաժեշտ է նշել նաև բնականոն սղաճի ցուցանիշի հետևյալ թերությունները. նախ, ցուցանիշի հաշվարկման որոշ մեթոդներ գրեթե չունեն տնտեսագիտական հիմնավորում (տնտեսագիտորեն առավել հիմնավորված են արտաքսման եղանակները): Բացի այդ, բնականոն սղաճը կարող է զգալիորեն շեղվել փաստացի սղաճից:

Առավել օպտիմալ ցուցանիշի ընտրության վերաբերյալ վերջնական որոշումը կայացվում է արդյունավետության որոշ չափանիշների հաշվարկման և վերլուծության հիման վրա: Սույն նյութում դրամավարկային քաղաքականության նպատակներին համապատասխան բնականոն սղաճի ցուցանիշի ընտրությունը առաջարկվում է իրականացնել արդյունավետության հետևյալ չափանիշներով.

- բնականոն սղաճի դինամիկայի մոտիկության աստիճանը ուղենիշային (benchmark) ցուցանիշի տրենդին (RMSE և MAD[7] գործակիցների կիրառություն),
- բնականոն սղաճի և փողի ագրեգատների միջև վիճակագրական կապը,
- բնականոն սղաճի կիրառումը որպես առաջնորդող ինդիկատոր՝ պաշտոնական սղաճի կանխատեսման նպատակով:

Բնականոն սղաճի հաշվարկմանը նվիրված հոդվածներում և գիտական հետազոտություններում առաջին խմբի չափանիշները հաշվարկելիս որպես ուղենիշ առաջարկվում է կիրառել սովորական սահող միջինների եղանակը: Այսպես, օրինակ, ուղենիշային ցուցանիշի հաշվարկը կարող է կատարվել 36-ամսյա սահող միջինով [8], 24-ամսյա սահող միջինով [29]: ՀՀ դեպքում, հաշվի առնելով ժամանակային շարքերի համեմատական կարճությունը, նպատակահարմար ենք գտել ուղենիշային ցուցանիշի հաշվարկը իրականացնել 12-ամսյա սահող միջինների օգնությամբ, որոնց հաշվարկման բանաձևը և արդյունքները ներկայացվել են սույն աշխատանքի երկրորդ բաժնում:[8]

[7] *RMSE – root mean square error, MAD – mean absolute deviation*

[8] *13- ամսյա սահող միջինների բանաձևը հետևյալն է.*

$$\pi_t^{sm} = \frac{\frac{1}{2}\pi_{t-6} + \pi_{t-5} + \pi_{t-4} + \pi_{t-3} + \pi_{t-2} + \pi_{t-1} + \pi_t + \pi_{t+1} + \pi_{t+2} + \pi_{t+3} + \pi_{t+4} + \pi_{t+5} + \frac{1}{2}\pi_{t+6}}{12}$$

RMSE (միջին քառակուսային շեղում) և MAD (միջին բացարձակ շեղում) չափանիշների կիրառումը կապված է այն գաղափարի հետ, որ եթե բնականոն սղաճը արտահայտում է սղաճի միտումները, ապա պետք է բավականին մոտ լինի սղաճի տրենդին: Հաշվարկն իրականացվել է հետևյալ բանաձևերով.

$$RMSE = \sqrt{\frac{1}{N}\sum_{t=1}^{N}(core_t - \pi_t^{sm})^2} \qquad (7)$$

$$MAD = \frac{\sum_{t=1}^{N}\left|core_t - \pi_t^{sm}\right|}{N} \qquad (8)$$

$core_t$՝ բնականոն սղաճի մեծությունը t-րդ ամսվա ընթացքում,

π_t^{sm}՝ 13-ամսյա սահող միջինների բանաձևի օգնությամբ հաշվարկված սղաճի հարթեցված մեծությունը t-րդ ամսվա ընթացքում:

Կիրառելով նշված բանաձևերը՝ բնականոն սղաճի բոլոր ցուցանիշների համար հաշվարկվել են RMSE և MAD չափանիշները (աղյուսակ 4): Ինչպես ցույց են տալիս հաշվարկները, RMSE և MAD ցուցանիշները ընդունում են իրենց ամենափոքր արժեքները[9] Հոդրիկ-Պրեսկոթի (λ=50, 100, 500) ֆիլտրով հաշվարկված բնականոն սղաճի դեպքում:

Մյուս կողմից անհրաժեշտ է նշել, որ RMSE և MAD ցուցանիշները դեռևս բավարար չեն բնականոն սղաճի առավել օպտիմալ տարբերակը ընտրելու համար: Դա բացատրվում է նրանով, որ RMSE և MAD ցուցանիշների հիման վրա ընտրված բնականոն սղաճը կարող է վիճակագրորեն թույլ կապված լինել փողի ագրեգատների հետ: Այդ տեսանկյունից, RMSE-ն և MAD-ը անհրաժեշտ, բայց ոչ բավարար չափանիշներ են՝ վերջնական որոշում կայացնելու համար: Հետևաբար բնականոն սղաճի ցուցանիշների արդյունավետությունն անհրաժեշտ է գնահատել նաև այլ չափանիշներով: Մասնավորապես, մեր կողմից ընտրվել են փողի ագրեգատների և պաշտոնական սղաճի միջև վիճակագրական փոխկապվածության աստիճանները:

Աղյուսակ 4. RMSE և MAD ցուցանիշների մեծությունները բնականոն սղաճի տարբեր ցուցանիշների համար

	Նախորդ ամսվա նկատմամբ		Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ			Նախորդ ամսվա նկատմամբ		Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ	
	RMSE	MAD	RMSE	MAD		RMSE	MAD	RMSE	MAD
EXCLcore1	0,940	0,649	--	--	TR 35%	0,588	0,429	3,856	2,927
EXCLcore2	0,670	0,472	2.872	2.332	TR 40%	0,599	0,433	3,968	3,000
EXCLcore3	0,793	0,584	2,849	2,238	TR 45%	0.610	0.438	4.057	3.082
EXCLcore4	1.088	0.777	--	--	TR 50%	0,611	0,438	4,123	3,149
MED	0,501	0,356	4,133	3,284	DW	0,893	0,581	4,540	3,385
TR 5%	0,998	0,776	2,445	1,735	**HP 50**	**0,385**	**0,292**	**1,105**	**0,836**
TR 10%	0,776	0,568	2,787	2,134	**HP 100**	**0,245**	**0,177**	**0,627**	**0,440**
TR 15%	0,703	0,499	3,048	2,412	**HP 500**	**0,231**	**0,178**	**1,596**	**1,145**
TR 20%	0,656	0,470	3,298	2,601	HP 1000	0,283	0,215	2,262	1,579
TR 25%	0,611	0,447	3,515	2,719	HP 5000	0,372	0,273	3,241	2,245
TR 30%	0,584	0,429	3,732	2,844	HP10000	0,396	0,287	3,451	2,409
					HP 14400	0,405	0,292	3,529	2,486

Բնականոն սղաճի և փողի ագրեգատների միջև վիճակագրական կապերի ուսումնասիրությունն իրականացվել է երկու փուլով: Առաջին փուլում կառուցվել և հետազոտվել են պարզագույն ռեգրեսիոն հավասարումներ հետևյալ բանաձևով.

[9] *RMSE և MAD ցուցանիշների լավագույն մակարդակներ են համարվում առավել նվազագույն արժեքները:*

$$CORE_t = \beta_0 + \beta_1 * MA_{t-l} + \varepsilon_t \quad (9)$$

որտեղ՝

$CORE_t$՝ բնականոն սղաճի մակարդակն է (%-ով) t-րդ ամսվա ընթացքում,

MA_{t-l}՝ փողի ագրեգատի մեծությունը (%-ով) t-l ամսվա ընթացքում (l = 1, 3, 6, 9, 12)

Ռեգրեսիոն վերլուծության ընթացքում հաշվարկվել են դետերմինացիայի գործակիցների (R^2) մեծությունները, որոնք ներկայացված են հավելված 2-ում[10]: Հաշվարկները ցույց են տալիս, որ բնականոն սղաճի ամսական տատանումները գրեթե չեն պայմանավորվում փողի ագրեգատների տատանողականությամբ, ինչի մասին են վկայում դետերմինացիայի գործակիցների չափազանց փոքր արժեքները: Ինչ վերաբերում է բնականոն սղաճի և փողի ագրեգատների (հատկապես շրջանառության մեջ գտնվող կանխիկի և փողի բազայի) 12-ամսյա փոխկապվածությանը, ապա հաշվարկված դետերմինացիայի գործակիցները բավականին նշանակալից են: Այսպես, դետերմինացիայի գործակիցը ընդունում է համեմատաբար բարձր արժեքներ Հոդրիկ-Պրեսկոթի ֆիլտրով, մեդիանայի և հատած միջինի եղանակներով հաշվարկված բնականոն սղաճի դեպքերում: Ընդ որում, համեմատելով նշված եղանակներով հաշվարկված բնականոն սղաճի դետերմինացիայի գործակիցները և սպառողական գների ինդեքսի նույն գործակիցը, տեսնում ենք, որ վերջինիս գործակիցը նշանակալիորեն զիջում է բնականոն սղաճի ցուցանիշների գործակցին: Հետևաբար կարելի է եզրակացնել, որ փողի ագրեգատները համեմատաբար ավելի լավ են բացատրում բնականոն սղաճի տատանողականությունը, քան անմիջականորեն պաշտոնական սղաճի տատանողականությունը:

Բնականոն սղաճի և փողի ագրեգատների միջև վիճակագրական կապերի ուսումնասիրության երկրորդ փուլը կապված է այդ ցուցանիշների միջև պատճառահետևանքային կապերի բացահայտման հետ (ընդ որում, ուսումնասիրությունը կատարվել է միայն դետերմինացիայի գործակցի համեմատաբար բարձր մակարդակ ունեցող ցուցանիշների համար): Այդ նպատակով իրականացվել է Գրենջերի պատճառահետևանքային վիճակագրական թեստը (արդյունքները ներկայացված են հավելված 2-ում):

Շրջանառության մեջ կանխիկ դրամի փոփոխությունները համեմատաբար լավ են կանխորոշում Հոդրիկ-Պրեսկոթի ֆիլտրով (λ=500, 1000, 5000) հաշվարկված բնականոն սղաճի միտումները ապագայում: Գրենջերի թեստը կիրառվել է նաև պաշտոնական սղաճի նկատմամբ, և արդյունքում ստացել ենք, որ շրջանառության մեջ կանխիկ դրամը պաշտոնական սղաճի փոփոխման պատճառ չի հանդիսանում: Այդ թեստը ևս մեկ անգամ հավաստիացնում է, որ շրջանառության մեջ կանխիկ դրամի և գների փոփոխության վերլուծություններ իրականացնելիս առավել նպատակահարմար է կիրառել ոչ թե պաշտոնական սղաճը, այլ Հոդրիկ-Պրեսկոթի ֆիլտրով հաշվարկված բնականոն սղաճի մեծությունները:

Այժմ անդրադառնանք փողի բազայի և բնականոն սղաճի ցուցանիշների պատճառահետևանքային կապերի ուսումնասիրմանը: Մեդիանայի և հատած միջինի (α=5%, 10%, 15%) եղանակներով հաշվարկված բնականոն սղաճի համար պատճառահետևանքային կախվածության վարկածը կարելի է ընդունել բավականին բարձր հավանականությամբ: Մյուս կողմից, հաշվարկները ցույց են տալիս նաև պաշտոնական սղաճի և փողի բազայի միջև պատճառահետևանքային կախվածության բարձր մակարդակ, որը, սակայն, զիջում է բնականոն սղաճի ցուցանիշների համապատասխան փոխկապվածության մակարդակին: Հետևաբար, նշված եղանակներով հաշվարկված բնականոն սղաճի կիրառությունը դրամավարկային քաղաքականության մշակման ընթացքում ավելի նպատակահարմար է, քան պաշտոնական սղաճինը:

Վերջին չափանիշի կիրառումը ենթադրում է բնականոն սղաճի և պաշտոնական սղաճի միջև վիճակագրական կապերի ուսումնասիրություն, որի արդյունքում պետք է ընտրվի պաշտոնական սղաճի կանխատեսման համար առավել լավագույն առաջնորդող ցուցանիշը: Ուսումնասիրության ընթացքում, նախ, կառուցվել և հետազոտվել են բնականոն սղաճի և պաշտոնական սղաճի միջև ռեգրեսիոն կապերը, հետևյալ բանաձևով.

$$\pi_t = \alpha_0 + \alpha_1 core_{t-l} + u_t \quad (10)$$

որտեղ՝

π_t՝ սղաճի պաշտոնական մակարդակն է t – րդ ամսվա ընթացքում,

$core_{t-l}$՝ բնականոն սղաճի մակարդակը t-l – րդ ամսվա ընթացքում (l = 1, 3, 6, 9, 12)

Ռեգրեսիոն վերլուծության ընթացքում հաշվարկվել են դետերմինացիայի գործակիցների մեծությունները (որոնք ներկայացված են հավելված 3-ում): Ինչպես տեսնում ենք հավելվածից, ամսական բնա-

[10] *Դետերմինացիայի գործակիցը ցույց է տալիս, թե անկախ փոփոխականի տատանողականությունը որքանով է բացատրում կախյալ փոփոխականի տատանողականությունը:*

կանոն սղաճի և պաշտոնական սղաճի դետերմինացիայի գործակիցների մեծությունները չափազանց փոքր են: Հետևաբար կարող ենք եզրակացնել, որ տարբեր ժամանակային լագերի համար հաշվարկված բնականոն սղաճի փոփոխությունները չեն բացատրում պաշտոնական սղաճի տատանողականությունը: Մյուս կողմից, դետերմինացիայի գործակիցները բավականին բարձր են 12-ամսյա ցուցանիշների համար: Այսպես, մեդիանայի և Հոդրիկ-Պրեսկոթի եղանակներով հաշվարկված բնականոն սղաճի փոփոխությունները զգալիորեն պայմանավորում են պաշտոնական սղաճի տատանողականությունը (կապը առավել վառ արտահայտվում է մեկ և երեք լագի դեպքում):

Այնուհետև իրականացվել է ռեգրեսիոն վերլուծություն, որի նպատակն է պարզել, թե պաշտոնական սղաճի կանխատեսման համար որ ցուցանիշն է առավել նպատակահարմար կիրառել՝ բնականոն սղաճը, թե՞ պաշտոնական սղաճի լագային մակարդակները: Այդ վարկածը պարզաբանելու համար կիրառվել է հետևյալ ռեգրեսիոն հավասարումը.

$$\pi_t = a + b * core_{t-l} + (1-b) * \pi_{t-l} + \varepsilon_t \qquad (11)$$

Կիրառելով բանաձևը, նվազագույն քառակուսիների եղանակի (OLS) օգնությամբ հաշվարկվել են ռեգրեսիոն հավասարման *a* և *b* պարամետրերը, ապա վիճակագրության մեջ հայտնի Վալդի թեստի միջոցով ստուգվել է $b=1$ վարկածը: Նշենք, որ այն դեպքում, երբ $b=1$, պաշտոնական սղաճի փոփոխությունները կարելի է ամբողջությամբ բացատրել բնականոն սղաճի տատանողականությամբ, եթե $0<b<1$, ապա բնականոն սղաճը միայն օգնում է բացատրելու պաշտոնական սղաճի փոփոխությունները, և, վերջապես, $b>1$ դեպքում սղաճի փոփոխությունները ընդհանրապես կապված չեն բնականոն սղաճի միտումների հետ:

Հաշվարկները ցույց են տալիս, որ $b=1$ ենթադրությունը հիմնականում ժխտվում է, այսինքն՝ բնականոն սղաճը պաշտոնական սղաճի ապագա փոփոխությունները բացատրող բացարձակ արդյունավետ ցուցանիշ չէ: Սակայն որոշ դեպքերում պատկերը փոքր-ինչ այլ է. այսպես, կրկնակի կշռման եղանակով հաշվարկված բնականոն սղաճի դինամիկան համեմատաբար ավելի լավ է բացատրում պաշտոնական սղաճի փոփոխությունները 6 և 9 ամիս ժամանակային լագերի համար, իսկ Հոդրիկ-Պրեսկոթի ֆիլտրով ($\lambda = 100, 500$) հաշվարկված բնականոն սղաճի դինամիկան՝ 3 ամիս ժամանակային լագի դեպքում: Այնուհետև, պաշտոնական սղաճի կանխատեսման համար, առաջնորդող ինդիկատորի ընտրությունն իրականացվել է Գրենջերի պատճառահետևանքային վիճակագրական թեստի միջոցով: Թեստի արդյունքներից եզրակացնում ենք, որ մեդիանայի (3 և 12 լագով) մեթոդով և Հոդրիկ-Պրեսկոթի ֆիլտրով ($\lambda = 50$, 1 լագով) հաշվարկված բնականոն սղաճը կարելի է կիրառել սղաճի կանխատեսման ընթացքում:

Ըստ տարբեր սկզբունքների և չափանիշների բնականոն սղաճի ցուցանիշների գնահատման արդյունքները ներկայացված են ներքոնշյալ աղյուսակներում:

Աղյուսակ 5. Բնականոն սղաճի (նախորդ ամսվա նկատմամբ) ցուցանիշների գնահատման արդյունքները

	Շեղում	Կապը փողի ագրեգ. հետ	Կապը ապագա սղաճի հետ	Ժամկետայնություն	Տնտեսագիտական հիմնավորվածություն
1	*2*	*3*	*4*	*5*	*6*
EXCLcore1	–	–	–	+	+
EXCLcore2	–	–	–	+	–
EXCLcore3	–	–	–	+	–
EXCLcore4	–	–	–	+	–
MED	-	–	–	+	+
TR 5%	–	–	–	+	+
TR 10%	–	–	–	+	+
TR 15%	–	–	–	+	+
TR 20%	–	–	–	+	+
TR 25%	–	–	–	+	+
TR 30%	–	–	–	+	+
TR 35%	–	–	–	+	+
TR 40%	–	–	–	+	+
TR 45%	–	–	–	+	+

1	2	3	4	5	6
TR 50%	–	–	–	+	+
DW	–	–	–	+	–
HP 50	+	–	–	–	–
HP 100	+	–	–	–	–
HP 500	+	–	–	–	–
HP 1000	+	–	–	–	–
HP 5000	–	–	–	–	–
HP10000	–	–	–	–	–
HP 14400	–	–	–	–	–

Աղյուսակ 6. Բնականոն սղաճի (նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ) ցուցանիշների գնահատման արդյունքները

	Շեղում	Կապը փողի ագրեգ. հետ	Կապը ապագա սղաճի հետ	Ժամկետայ-նություն	Տնտեսագիտական հիմնավորվածություն
EXCLcore2	–	–	–	+	–
EXCLcore3	–	–	–	+	–
MED	–	+	+	+	–
TR 5%	–	+	–	+	+
TR 10%	–	+	–	+	+
TR 15%	–	+	–	+	+
TR 20%	–	–	–	+	+
TR 25%	–	–	–	+	+
TR 30%	–	–	–	+	+
TR 35%	–	–	–	+	+
TR 40%	–	–	–	+	+
TR 45%	–	–	–	+	+
TR 50%	–	–	–	+	+
DW	–	–	–	+	–
HP 50	+	–	+	–	–
HP 100	+	–	–	–	–
HP 500	+	–	–	–	–
HP 1000	+	–	–	–	–
HP 5000	–	–	–	–	–
HP10000	–	–	–	–	–
HP 14400	–	–	–	–	–

Որպես շեղման գնահատական՝ վերցված են RMSE և MAD չափանիշները: Ժամկետայնության սկզբունքը ենթադրում է բնականոն սղաճի վերջնական և ճշգրիտ մակարդակի հաշվարկ հաշվետու ժամանակաշրջանում: Այսպես, օրինակ, սեզոնային հարթեցումներով կամ Հոդրիկ-Պրեսկոթով հաշվարկված ցուցանիշները ենթարկվում են ճշգրտման՝ նոր տվյալների ստացման դեպքում: Հետևապես, դրանք չեն բավարարում ժամկետայնության սկզբունքը: Բնականոն սղաճի հաշվարկված ցուցանիշներից արժանահավատ են այն ցուցանիշները, որոնք հասկանալի և ընդունելի են հասարակության համար, ինչպես նաև կարող են հեշտորեն հաշվարկվել ու ստուգվել կենտրոնական բանկից դուրս վերլուծողների կողմից:

Այսպիսով, բնականոն սղաճի հաշվարկված այս կամ այն ցուցանիշի կիրառումը պայմանավորված է վերլուծության նպատակներով: Միևնույն ժամանակ, ինչպես արդեն նշվել է, տնտեսագիտորեն առավել հիմնավորված և իմաստավորված են արտաքսման եղանակներով հաշվարկված բնականոն սղաճի ցուցանիշները: Հետևապես, չի բացառվում նաև դրանց կիրառումը վերլուծողների և քաղաքականություն մշակողների կողմից:

Եզրակացություն

Տարբեր երկրների փորձը, առավել ևս այն երկրների, որտեղ սահմանվում է սղաճի նպատակային ցուցանիշ, ցույց է տալիս, որ գների ընդհանուր մակարդակի փոփոխությունների կառավարման ընթացքում զգալիորեն կարևորվում է սղաճը բնութագրող ճշգրիտ ցուցանիշի ընտրությունը: Պաշտոնական սղաճը արտահայտող ՍԳԻ-ին նպատակահարմար չէ կիրառել քաղաքականություն մշակելիս, քանզի այն բնութագրվում է բարձր տատանողականությամբ, իսկ ապրանքների և ծառայությունների գների ինդեքսների փոփոխությունների ոչ նորմալ բաշխման դեպքում սղաճի ընդհանուր միտումը ցույց տվող առավել արդյունավետ ցուցանիշ չէ: Բացի այդ, քաղաքականություն իրականացնողները պետք է արձագանքեն գների միայն երկարաժամկետ փոփոխություններին: Այսպիսով, շատ երկրներում պաշտոնական սղաճի փոխարեն հաշվարկվում և կիրառվում է բնականոն սղաճը:

Բնականոն սղաճը ցույց է տալիս սղաճի ընդհանուր միտումը կամ գների երկարաժամկետ փոփոխությունների ուղղությունը: Այսպիսով, բնականոն սղաճի միտումները ազատված են սեզոնային և պատահական գործոնների ազդեցությունից և բնութագրվում են ցածր տատանողականությամբ:

Հաշվի առնելով համաշխարհային փորձը, ինչպես նաև ՀՀ ներկայիս տնտեսական իրավիճակը, փորձ է կատարվել հաշվարկել և այնուհետև ընտրել ՀՀ համար բնականոն սղաճի առավել նպատակահարմար ցուցանիշ: Սույն աշխատանքում ներկայացվում է բնականոն սղաճի հաշվարկման տարբեր մեթոդների կիրառումը ՀՀ համար, ապա, հիմնվելով մի շարք չափանիշների վրա, կատարվում է բնականոն սղաճի առավել նպատակահարմար ցուցանիշների ընտրություն:

Այսպես՝ վերլուծությունների արդյունքները ցույց են տվել, որ ամսական բնականոն սղաճի և այլ ցուցանիշների, մասնավորապես՝ սղաճի տրենդի և ապագա մակարդակների, ինչպես նաև փողի ագրեգատների փոխկապվածությունը վիճակագրորեն չի ապացուցվում: Հետևապես, ամսական բնականոն սղաճը չի կարող կիրառվել դրամավարկային քաղաքականության նպատակների համար: Նշենք նաև, որ Հոդրիկ-Պրեսկոթի մեթոդով հաշվարկված բնականոն սղաճի ցուցանիշները ընդհանուր առմամբ բնութագրում են ամսական սղաճի միտումները: Սակայն դրանք չեն կարող լիովին հասկանալի և ընդունելի լինել հասարակության համար, քանզի հստակ չէ հաշվարկման ընթացքում հարթեցնող պարամետրի մեծության ընտրության հարցը:

12-ամսյա (նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ հաշվարկված) բնականոն սղաճի ցուցանիշների կիրառումը պայմանավորված է վերլուծության առանձնահատկություններով: Այսպես, 10% և 15% հատած միջինները կարող են օգտագործվել որպես դրամավարկային քաղաքականության արդյունավետությունը բնութագրող առավել նպատակահարմար ցուցանիշներ, քանզի դրանք որոշ լագերով սերտորեն կապված են փողի ագրեգատների հետ: Բացի այդ, դրանց միտումները զգալիորեն չեն շեղվում սղաճի տրենդից: Վերջապես, հատած միջիններն իրենցից ներկայացնում են միջին կշռված ցուցանիշ (ինչպես և պաշտոնական սղաճը):

Մյուս կողմից, մեդիանայի եղանակով և Հոդրիկ-Պրեսկոթի ֆիլտրով ($\lambda = 50$) հաշվարկված 12-ամսյա բնականոն սղաճի ցուցանիշները կարելի է կիրառել վարքագծային մոդելներում փաստացի սղաճի կանխատեսման նպատակով: Նշված պարագայում բնականոն սղաճի ցուցանիշները ծառայում են որպես առաջնորդող ինդիկատոր ապագա սղաճի կանխատեսման ընթացքում:

Ամփոփելով նշենք, որ բնականոն սղաճի հաշվարկված ոչ մի ցուցանիշ լիովին չի բավարարում ներկայացվող պահանջները և չի կարող կիրառվել որպես դրամավարկային քաղաքականության նպատակներին ծառայող բացարձակ ցուցանիշ: Այսպես, արտաքսման եղանակներով հաշվարկված ցուցանիշները ընդունելի և հասկանալի են հասարակության համար, սակայն կրում են տարբեր տեսակի ժամանակավոր ցնցումների (հիմնականում պայմանավորված համախառն առաջարկի գործոններով) ազդեցությունը և վիճակագրորեն թույլ են կապված դրամավարկային ցուցանիշների հետ: Վիճակագրական և էկոնոմետրիկ մեթոդներով հիմնականում հաջողվում է բացահայտել գների ինդեքսների ընդհանուր միտումները: Միևնույն ժամանակ, այդ մեթոդները ներառում են հաշվարկման բազմաթիվ պայմանականություններ և տնտեսագիտորեն դժվար են մեկնաբանվում:


Հաշվի առնելով վերոնշյալը և այն հանգամանքը, որ սպառողական գները ունեն նորմալ լոգարիթմական բաշխում, պետք է փաստել, որ մեդիանայի եղանակով հաշվարկված բնականոն սղաճը պետք է առավելագույնս համապատասխանի վերը նշված պայմաններին: Սակայն այստեղ պետք է նկատի ունենալ ՀՀ սպառողական զամբյուղի հետևյալ յուրահատկությունը՝ զամբյուղի մեջ կան մի շարք (մոտ 150) ապրանքներ և ծառայություններ, որոնց գներն ամսվա ընթացքում շատ քիչ են տատանվում և դրանց գների ինդեքսները անընդհատ տատանվում են 100-ի շուրջը. մեդիանան միշտ համընկնում է այդ ապրանքներից և ծառայություններից որևէ մեկի հետ: Արդյունքում ստացվում է, որ մեդիանայի մեթոդով հաշվարկված բնականոն սղաճը, թեև բավարարում է բնականոն սղաճի օպտիմալ մեթոդի ընտրության մի շարք

պայմանների, այնուամենայնիվ, ելնելով մեր սպառողական զամբյուղի կառուցվածքային առանձնահատկություններից, իրականում չի արտացոլում գների տատանումները, չի համընկնում պաշտոնական սղաճի միտումներին, հետևաբար չի կարող օգտագործվել որպես առաջնորդող ինդիկատոր սղաճի կանխատեսման համար:


Այսպիսով առաջարկում ենք, որպես բնականոն սղաճի ցուցանիշ, պաշտոնապես հրապարակել 15 տոկոսով հատած միջինների եղանակով հաշվարկված բնականոն սղաճը, քանի որ վերջինս, ի տարբերություն 10 տոկոսով հատած միջինի, համեմատաբար քիչ է արտացոլում սեզոնային ու այլ շոկերի ազդեցությունը և առավել մոտ է պաշտոնական սղաճի միտումներին: Նույն ցուցանիշը կարելի է օգտագործել որպես առաջնորդող ինդիկատոր՝ սղաճի կանխատեսման, ինչպես նաև մակրովերլուծությունների և տարբեր մակրոմոդելներում կիրառելու նպատակով:

Նշենք նաև, որ հետագա տարիներին նախատեսում ենք մշտապես զարգացնել բնականոն սղաճի հաշվարկման գործընթացը՝ կիրառելով հաշվարկման այլ մեթոդներ (ասիմետրիկ հատած միջիններ, էկոնոմետրիկ մեթոդներ և այլն) և գնահատման լրացուցիչ չափանիշներ:


Սղաճի և բնականոն սղաճի (EXCLcore 1) դինամիկաները
(%-ով՝ նախորդ ամսվա նկատմամբ)





Սղաճի և բնականոն սղաճի (EXCLcore 2) դինամիկաները
(%-ով՝ նախորդ ամսվա նկատմամբ)





Սղաճի և բնականոն սղաճի դինամիկաները
(%-ով՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ)






Սղաճի և բնականոն սղաճի (MED) դինամիկաները
(%-ով՝ նախորդ ամսվա նկատմամբ)
7
5
3
1
-1
-3
-5
-7
հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ
96 97 98 99 00 01 02 03
Սղաճ
Բնականոն սղաճ(MED)



Սղաճի և բնականոն սղաճի (MED (12)) դինամիկաները
(%-ով՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ)
40
35
30
25
20
15
10
5
0
-5
-10
հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ
96 97 98 99 00 01 02 03
Սղաճ
Բնականոն սղաճ (MED (12))



Սղաճի և բնականոն սղաճի դինամիկաները
(%-ով՝ նախորդ ամսվա նկատմամբ)
7
5
3
1
-1
-3
-5
-7
հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ հ ա հ հ
96 97 98 99 00 01 02 03
Սղաճ
Բնականոն սղաճ (TR 5%)
Բնականոն սղաճ (TR 15%)



Սղաճի և բնականոն սղաճի դինամիկաները
(%-ով՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ)
60
50
40
30
20
10
0
-10
Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ
96 97 98 99 00 01 02 03
Սղաճ
Բնականոն սղաճ (TR 5% (12))
Բնականոն սղաճ (TR 15% (12))


Սղաճի և բնականոն սղաճի դինամիկաները
(%-ով՝ նախորդ ամսվա նկատմամբ)
7
5
3
1
-1
-3
-5
-7
Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ
96 97 98 99 00 01 02 03
Սղաճ
Բնականոն սղաճ (TR 50%)
Բնականոն սղաճ (DW)


Սղաճի և բնականոն սղաճի դինամիկաները
(%-ով՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ)
40
35
30
25
20
15
10
5
0
-5
-10
Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ
96 97 98 99 00 01 02 03
Սղաճ
Բնականոն սղաճ (TR 50% (12))
Բնականոն սղաճ (DW (12))


Սղաճի և բնականոն սղաճի դինամիկաները
(%-ով՝ նախորդ ամսվա նկատմամբ)
7
5
3
1
-1
-3
-5
-7
Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ
96 97 98 99 00 01 02 03
Սղաճ
Բնականոն սղաճ (HP50)
Բնականոն սղաճ (HP5000)


Սղաճի և բնականոն սղաճի դինամիկաները
(%-ով՝ նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ)
40
35
30
25
20
15
10
5
0
-5
-10
Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ
96 97 98 99 00 01 02 03
Սղաճ
Բնականոն սղաճ (HP50 (12))
Բնականոն սղաճ (HP5000 (12))


Սղաճի և բնականոն սղաճի (HP500) դինամիկաները
(%-ով՝ նախորդ ամսվա նկատմամբ)
7
5
3
1
-1
-3
-5
-7
Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ Հ Ա Հ Հ
96 97 98 99 00 01 02 03
Սղաճ
Բնականոն սղաճ (HP500)
Բնականոն սղաճ (HP14400)

Աղյուսակ 1. Դետերմինացիայի գործակիցների (R^2) հաշվարկված մեծությունները 12-ամսյա տվյալների համար

	CPI	MED	TR 5%	TR 10%	TR 15%	TR 20%	TR 25%	TR 30%	TR 35%	TR 40%	TR 45%	HP 50	HP 100	HP 500	HP 1000	HP 5000
Շրջանառության մեջ կանխիկ դրամ (CC)																
1	0.33	0.39	0.49	0.45	0.43	0.40	0.35	0.31	0.29	0.28	0.29	0.36	0.38	0.45	0.47	0.46
3	0.24	0.35	0.41	0.39	0.37	0.33	0.28	0.24	0.22	0.20	0.21	0.36	0.39	0.48	0.50	0.51
6	0.29	0.39	0.32	0.31	0.31	0.28	0.25	0.21	0.20	0.19	0.19	0.35	0.39	0.51	0.55	0.57
9	0.29	0.39	0.29	0.29	0.29	0.27	0.25	0.23	0.22	0.21	0.20	0.34	0.38	0.53	0.59	0.63
12	0.21	0.44	0.29	0.31	0.32	0.33	0.32	0.31	0.29	0.28	0.26	0.33	0.38	0.55	0.61	0.68
Փողի բազա (RM)																
	CPI	MED	TR 5%	TR 10%	TR 15%	TR 20%	TR 25%	TR 30%	TR 35%	TR 40%	TR 45%	HP 50	HP 100	HP 500	HP 1000	HP 5000
1	0.28	0.32	0.26	0.25	0.25	0.25	0.25	0.24	0.23	0.22	0.22	0.29	0.31	0.36	0.37	0.34
3	0.30	0.37	0.38	0.37	0.37	0.36	0.34	0.33	0.31	0.30	0.30	0.40	0.43	0.46	0.45	0.39
6	0.44	0.53	0.54	0.53	0.52	0.51	0.49	0.46	0.44	0.42	0.41	0.54	0.57	0.58	0.55	0.45
9	0.50	0.56	0.59	0.60	0.59	0.57	0.54	0.52	0.50	0.48	0.48	0.55	0.57	0.60	0.57	0.49
12	0.29	0.47	0.46	0.50	0.53	0.54	0.54	0.54	0.52	0.51	0.50	0.37	0.40	0.48	0.50	0.49
Փողի զանգված (BM)																
	CPI	MED	TR 5%	TR 10%	TR 15%	TR 20%	TR 25%	TR 30%	TR 35%	TR 40%	TR 45%	HP 50	HP 100	HP 500	HP 1000	HP 5000
1	0.22	0.32	0.24	0.23	0.23	0.23	0.22	0.22	0.21	0.21	0.20	0.24	0.27	0.35	0.36	0.37
3	0.22	0.34	0.30	0.29	0.28	0.28	0.26	0.25	0.24	0.23	0.23	0.30	0.33	0.38	0.38	0.36
6	0.32	0.40	0.38	0.36	0.33	0.32	0.30	0.28	0.27	0.26	0.26	0.38	0.39	0.39	0.38	0.33
9	0.35	0.37	0.37	0.36	0.35	0.33	0.32	0.32	0.32	0.31	0.30	0.34	0.34	0.33	0.32	0.28
12	0.14	0.26	0.20	0.21	0.22	0.23	0.24	0.24	0.25	0.25	0.24	0.18	0.19	0.21	0.21	0.21
Վարկեր տնտեսությանը (CE)																
	CPI	MED	TR 5%	TR 10%	TR 15%	TR 20%	TR 25%	TR 30%	TR 35%	TR 40%	TR 45%	HP 50	HP 100	HP 500	HP 1000	HP 5000
1	0.12	0.16	0.20	0.19	0.18	0.18	0.19	0.19	0.20	0.20	0.20	0.11	0.11	0.09	0.07	0.06
3	0.07	0.09	0.15	0.14	0.13	0.12	0.11	0.10	0.11	0.11	0.11	0.09	0.08	0.05	0.05	0.04
6	0.04	0.01	0.04	0.04	0.03	0.02	0.02	0.01	0.01	0.01	0.01	0.02	0.01	0.01	0.01	0.01
9	0.01	0.01	0.01	0.01	0.01	0.01	0.02	0.02	0.02	0.02	0.02	0.01	0.01	0.01	0.00	0.00
12	0.16	0.05	0.14	0.13	0.13	0.12	0.12	0.11	0.11	0.11	0.12	0.11	0.09	0.05	0.03	0.00

Աղյուսակ 2. Գրենջերի պատճառահետևանքային կախվածության վիճակագրական թեստի արդյունքները 12-ամսյա տվյալների համար

	CC does not cause HP 500	HP 500 does not cause CC	CC does not cause HP 1000	HP 1000 does not cause CC	CC does not cause HP5000	HP5000 does not cause CC	CC does not cause CPI	CPI does not cause CC
1	0.13	0.03	0.01	0.11	0.00	0.36	0.00	0.13
3	0.03	0.13	0.00	0.11	0.20	0.04	0.00	0.28
6	0.02	0.05	0.07	0.04	0.09	0.03	0.03	0.04
9	0.01	0.54	0.01	0.53	0.01	0.50	0.05	0.31
12	0.22	0.91	0.20	0.90	0.10	0.86	0.19	0.54
	RM does not cause MED	MED does not cause RM	RM does not cause TR 10%	TR 10% does not cause RM	RM does not cause HP1000	HP1000 does not cause RM	RM does not cause CPI	CPI does not cause RM
1	0.00	0.01	0.00	0.00	0.00	0.25	0.00	0.00
3	0.00	0.63	0.00	0.29	0.00	0.12	0.00	0.37
6	0.00	0.68	0.00	0.27	0.01	0.09	0.00	0.45
9	0.00	0.86	0.01	0.75	0.00	0.63	0.00	0.65
12	0.00	0.57	0.01	0.55	0.02	0.91	0.00	0.91

Աղյուսակ 1. Բնականոն սղաճի և պաշտոնական սղաճի միջև հաշվարկված դետերմինացիայի գործակիցների (R2) մեծությունները

	Նախորդ ամսվա նկատմամբ					Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ				
	1	3	6	9	12	1	3	6	9	12
CPI	0.21	0.01	0.23	0.01	0.38	0.92	0.58	0.16	0.02	0.00
EXCLcore1	0.12	0.00	0.01	0.07	0.00	--	--	--	--	--
EXCLcore2	0.00	0.03	0.00	0.04	0.01	0.65	0.53	0.23	0.02	0.01
EXCLcore3	0.15	0.00	0.00	0.07	0.02	0.80	0.53	0.15	0.01	0.00
EXCLcore4	0.06	0.00	0.02	0.03	0.09	--	--	--	--	--
MED	0.17	0.01	0.01	0.06	0.04	0.75	0.66	0.35	0.13	0.04
TR 5%	0.21	0.00	0.05	0.05	0.15	0.71	0.46	0.12	0.00	0.00
TR 10%	0.17	0.00	0.01	0.06	0.03	0.83	0.55	0.15	0.01	0.00
TR 15%	0.16	0.00	0.00	0.05	0.01	0.79	0.50	0.13	0.01	0.00
TR 20%	0.17	0.01	0.00	0.04	0.00	0.76	0.48	0.13	0.01	0.00
TR 25%	0.18	0.01	0.00	0.04	0.00	0.75	0.47	0.13	0.01	0.00
TR 30%	0.17	0.02	0.00	0.05	0.00	0.74	0.47	0.13	0.01	0.00
TR 35%	0.14	0.03	0.00	0.05	0.01	0.73	0.46	0.13	0.01	0.00
TR 40%	0.12	0.03	0.00	0.04	0.02	0.72	0.46	0.13	0.00	0.00
TR 45%	0.11	0.03	0.01	0.04	0.02	0.71	0.46	0.13	0.00	0.00
TR 50%	0.10	0.03	0.01	0.04	0.02	0.71	0.46	0.13	0.00	0.00
DW	0.08	0.02	0.09	0.02	0.24	0.75	0.58	0.27	0.02	0.01
HP 50	0.39	0.02	0.10	0.01	0.02	0.90	0.66	0.23	0.04	0.01
HP 100	0.30	0.03	0.04	0.01	0.00	0.86	0.66	0.26	0.06	0.03
HP 500	0.09	0.03	0.00	0.00	0.00	0.70	0.58	0.34	0.18	0.12
HP 1000	0.06	0.02	0.00	0.00	0.00	0.61	0.53	0.37	0.24	0.19
HP 5000	0.02	0.01	0.00	0.00	0.00	0.46	0.44	0.38	0.33	0.30
HP10000	0.02	0.01	0.00	0.00	0.00	0.43	0.41	0.38	0.34	0.31
HP 14400	0.02	0.01	0.00	0.00	0.00	0.42	0.40	0.37	0.34	0.32

Աղյուսակ 2. Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները

	Regression between MED and inflation				
	b coefficient	t-statistic	Prob. H0:b=0	Wald test statistics	Prob. H0:b=1
1	0.18	3.34	0.00	243.18	0.00
3	0.74	7.39	0.00	6.42	0.01
6	1.28	10.12	0.00	4.80	0.03
9	1.71	12.32	0.00	26.09	0.00
12	1.92	13.31	0.00	40.88	0.00
	Regression between TR 20% and inflation				
	b coefficient	t-statistic	Prob. H0:b=0	Wald test statistics	Prob. H0:b=1
1	-0.08	-0.87	0.39	146.02	0.00
3	0.09	0.44	0.66	19.19	0.00
6	0.45	1.49	0.14	3.40	0.07
9	0.49	1.30	0.20	1.82	0.18
12	0.84	2.02	0.04	0.16	0.69
	Regression between DW and inflation				
	b coefficient	t-statistic	Prob. H0:b=0	Wald test statistics	Prob. H0:b=1
1	0.15	2.50	0.01	189.32	0.00
3	0.62	4.78	0.00	8.51	0.00
6	0.96	5.19	0.00	0.05	0.82
9	0.74	2.90	0.00	1.00	0.32
12	0.32	1.08	0.28	5.21	0.02

	Regression between HP 100 and inflation				
	b coefficient	t-statistic	Prob. H0:b=0	Wald test statistics	Prob. H0:b=1
1	0.34	3.44	0.00	46.40	0.00
3	1.31	6.80	0.00	2.55	0.11
6	1.88	6.69	0.00	9.80	0.00
9	2.37	6.74	0.00	15.17	0.00
12	2.93	8.25	0.00	29.50	0.00
	Regression between HP 500 and inflation				
	b coefficient	t-statistic	Prob. H0:b=0	Wald test statistics	Prob. H0:b=1
1	0.17	2.52	0.01	162.42	0.00
3	0.78	5.97	0.00	2.83	0.09
6	1.39	8.35	0.00	5.44	0.02
9	1.97	11.14	0.00	29.94	0.00
12	2.34	14.86	0.00	72.60	0.00

Աղյուսակ 3. Բնականոն սղաճի և պաշտոնական սղաճի միջև պատճառահետևանքային կախվածության Գրենջերի թեստի արդյունքները

	MED does not cause inflation	Inflation does not cause MED	TR 5% does not cause inflation	Inflation does not cause TR 5%	TR 10% does not cause inflation	Inflation does not cause TR 10%
1	0.03	0.02	0.09	0.00	0.04	0.00
3	0.01	0.09	0.28	0.00	0.61	0.00
6	0.00	0.01	0.08	0.01	0.12	0.01
9	0.00	0.01	0.00	0.05	0.00	0.02
12	0.00	0.26	0.01	0.19	0.01	0.06
	DW does not cause inflation	Inflation does not cause DW	HP 100 does not cause inflation	Inflation does not cause HP 100	HP 500 does not cause inflation	Inflation does not cause HP 500
1	0.15	0.01	0.02	0.56	0.28	0.51
3	0.16	0.06	0.00	0.00	0.00	0.00
6	0.34	0.00	0.00	0.00	0.00	0.00
9	0.11	0.00	0.00	0.00	0.00	0.00
12	0.11	0.00	0.00	0.00	0.00	0.00

ԳՆԱԳՈՅԱՑՈՒՄԸ ՍՆՆԴԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐՈՒՄ*


Անահիտ Թևոսյան, Արթուր Նախշիկյան

Դրամավարկային քաղաքականության վարչություն

Անցումային շրջանի տնտեսություններին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տնտեսությանը, բնորոշ են հաճախակի և նշանակալի կառուցվածքային տեղաշարժերը: Կառուցվածքային տեղաշարժերին զուգահեռ՝ տնտեսությունը բնականաբար կրում է նաև արտաքին տնտեսական գործոնների ազդեցությունը, որոնք գումարվելով ներքին գործընթացներին, իրենց արտահայտությունն են գտնում հիմնական տնտեսական ցուցանիշների վարքագծում: Նորմալ մրցակցային պայմաններում տնտեսական ցուցանիշները, մասնավորապես գները, բավականին զգայուն են նման փոփոխությունների նկատմամբ: Սակայն անցումային ժամանակահատվածին առավել հատուկ են ոչ բավարար մրցակցային պայմանները, որոնք նույն մակրոտնտեսական միջավայրում տարբեր ապրանքային շուկաներում թելադրում են գների տարբեր վարքագծեր:

Ընդհանուր առմամբ կոնկրետ ապրանքային շուկայում գնի ձևավորման գործընթացը պայմանավորված է տվյալ շուկայի կառուցվածքային ձևով (մրցակցային և ոչ մրցակցային, այդ թվում՝ խմբաշնորհային, մենաշնորհային մրցակցային ու մենաշնորհային) և բևեռացվածությամբ (հավասար մասնաբաժիններով ձեռնարկությունների խումբ՝ ոչ բևեռացված, և իրարից էապես տարբերվող շուկայական մասնաբաժիններով ձեռնարկությունների խումբ՝ բևեռացված): Կախված այդ հանգամանքներից՝ նույն տնտեսությունում տարբեր ապրանքների գներ կարող են դրսևորել տարբեր վարքագծեր:

Ուսումնասիրելով մեր տնտեսությունում թողարկվող ապրանքների գները՝ կարելի է առանձնացնել վարքագծով խիստ տարբեր գնային երկու ապրանքախումբ: Դրանցից մեկի գները ցուցաբերում են համեմատաբար հաստատուն, ոչ ճկուն վարքագիծ, իսկ մյուսի գները ճկուն են և առանձնանում են ընդհանուր ագրեգացված ցուցանիշից:



Այն ապրանքային շուկաներում, որոնցում նկատվում է գների համեմատական հաստատուն վարքագիծ, ձեռնարկությունները՝ շուկայական մասնաբաժնի առումով, միմյանց նկատմամբ չունեն էական առավելություններ՝ ճյուղերը բևեռացված չեն: Մինչդեռ ներքին արտադրության այն ճյուղերում, որտեղ գները հատկապես աճի ուղղությամբ բավականին ճկուն են, ձեռնարկություններն առանձնանում են շուկայի մասնաբաժինների էական տարբերություններով՝ ճյուղերն ունեն բևեռացվածության բարձր աստիճան:

Փորձենք հետազոտել ՀՀ տնտեսության մի քանի ապրանքային շուկաներ, որոնք տարբերվում են բևեռացվածությամբ, և մեկնաբանել գնագոյացման առանձնահատկություններն այդ շուկաներում, մասնավորապես, շարադրել հետազոտված շուկաների գնագոյացման վերաբերյալ երկու հիպոթեզ.

1. ՀՀ տնտեսության ուսումնասիրված մի քանի ճյուղերում առկա է գների կոշտության երևույթ, կամ գները ճկուն չեն. այս ճյուղերը չունեն բևեռացվածության բարձր աստիճան,

** Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

2. բարձր աստիճանի բևեռացվածությամբ որոշ խմբաշնորհային շուկաներում գինը ղեկավարվում է մեկ առաջարկողի կողմից (գործում է գնային առաջատարությունը) և դրսևորում ճկուն վարքագիծ:

Ներկայացվում են տեսական դրույթներ գների կոշտության և գնային առաջատարության վերաբերյալ:

ՀՀ ԿԲ կողմից իրականացված՝ սննդի արդյունաբերության ձեռնարկությունների հարցման միջոցով ստացված տեղեկատվության հիման վրա կատարվել է ՀՀ սննդի ապրանքային շուկաներում գնագոյացման վերլուծություն, որի միջոցով ձևակերպվում և փաստարկվում են առաջարկվող հիմնական հիպոթեզները:

«Գնագոյացման նկարագրությունը ըստ շուկաների բևեռացվածության» մասում հիմնավորվում են գների կոշտության և գնային առաջատարության երևույթները՝ շեշտը դնելով շուկաների կառուցվածքային տարբերությունների վրա:

Դիտարկված շուկաների համար առաջարկվող հիպոթեզների հիման վրա ուսումնասիրության վերջում ներկայացվում է գնագոյացման մոդելավորումը:

Գների կոշտությունը և գնային առաջատարությունը մեկնաբանող տեսություններ

Գների կոշտություն ասելով հասկանում ենք գների անփոփոխ վարքագիծ. թեև որոշ գործոնների փոփոխությունները գների փոփոխման հավանականություն են առաջացնում, սակայն արդյունքում ձեռնարկությունն անփոփոխ վարքագիծը դիտում է ավելի արդյունավետ կամ ոչ ռիսկային և չի փոփոխում գները: Գների կոշտության երևույթը գործում է հիմնականում ոչ երկար ժամանակահատվածում, քանի որ կարճ ժամկետում մասնակի հավասարակշիռ վիճակը հակված է վերածվելու լրիվ շուկայական հավասարակշռության:

Հայտնի են գների կոշտության պատճառները լուսաբանող և կոշտությունը բացառող մի քանի տեսություններ:

Համաձայն Քեյնսի ծախսերի տեսության, քանի որ մրցակցային պայմաններում ձեռնարկության գները սահմանվում են հաշվի առնելով միջին ծախսերը, ապա դրանք կարող են փոփոխվել ծախսերի փոփոխությունների դեպքում: Այլ գործոնների փոփոխություններին (օրինակ՝ պահանջարկի փոփոխությանը) գները կարող են չարձագանքել:

Պահանջարկի տատանումների նկատմամբ գների կոշտության տեսության[1] առանցքային դրույթն այն է, որ չգործարկված արտադրական հզորության և պահեստավորման հնարավորության պայմաններում ձեռնարկությունները կարող են արդյունավետ արձագանքել պահանջարկի տատանումներին (օրինակ՝ պահանջարկի սեզոնային նվազումների դեպքում պահեստավորել)՝ այդպիսով գները պահելով անփոփոխ:

Ձեռնարկության աստիճանակարգության տեսությունը ենթադրում է, որ խոշոր, բարդ կազմակերպչական կառուցվածքով ձեռնարկությունների համար գները փոփոխելը երկարատև գործընթաց է և պահանջում է զգալի ծախսեր: Նման տիպի ձեռնարկությունները հակված են վարել ամրագրված գնային քաղաքականություն:

Ըստ գնացուցակի ծախսերի տեսության՝[2] ձեռնարկությունները գները հաճախ չեն փոփոխում, քանի որ դրա հետևանքով կրած վնասներն ավելի կլինեն, քան սպասվելիք օգուտները:

Փոխկապակցվածության տեսությունը (փոխհամաձայնության ձախողման տեսություն) կիրառելի է հիմնականում ոչ բևեռացված, փոքրաթիվ ձեռնարկություններով ճյուղերում.[3] եթե ճյուղում ձեռնարկությունների միջև չի սահմանվում վարքագծային փոխհամաձայնություն, նրանցից յուրաքանչյուրը խուսափում է գներն առաջինը փոփոխելուց, քանի որ չգիտի, թե դրան ինչպես կարձագանքեն մյուսները:

Փոխկապակցվածության տեսությանը անդրադառնանք ավելի հանգամանորեն: Այս տեսությունը գների կոշտությունը բացատրում է այն հանգամանքով, որ ճյուղի ձեռնարկությունների ոչ մեծ քանակության դեպքում ստեղծվում է մի իրավիճակ, երբ յուրաքանչյուր ձեռնարկություն խուսափում է փոխել գինը՝ զերծ մնալով նախածեռնողի ռիսկից: Ձեռնարկությունների սակավությունը ապահովում է նրանց միջև վարքագծերի փոխկապակցվածություն, և մրցակցի վարքագծի անորոշության պայմաններում ընդհանուր հավասարակշիռ վիճակից անհատական շեղումը կարող է անարդյունավետ լինել. արդյունքում պահպանվում է նախկին վիճակը: Այս դեպքում ասում են, որ իրավիճակը հավասարակշիռ է ըստ Նեշի, որը ենթադրում է հավասարակշիռ վիճակի կայունություն:[4]

---

[1] *Տե՛ս Mankiw G., Romer D., Imperfect Competition and Sticky Prices, London, 1995, էջ 29-147:*
[2] *Նույն տեղում, էջ 313-427:*
[3] *Տե՛ս Mankiw G., Romer D., Coordination Failures and Real Rigidities, London, 1995, էջ 377-387:*
[4] *Տե՛ս «Տնտեսության վերլուծության մաթեմատիկական եղանակներ», Երևան, 1998, էջ 267-275: Andrew Mas-Colell, Microeconomic Theory, էջ 246-258:*

Հավելված 1

Խաղերի տեսություն և Նեշի հավասարակշռություն

Վերջին երկու-երեք տասնամյակներում խաղերի տեսությունն օգտագործվում է որպես արդյունավետ գործիք ոչ մեծ թվով սուբյեկտների (այստեղ՝ խաղացողների) գործունեության և վարքագծի վերլուծության համար:

Քիչ թվով տնտեսավարող սուբյեկտների վարքագիծը կարելի է դիտարկել որպես ռազմավարական խաղ, որը ենթադրում է մեկից ավելի, բայց ոչ մեծ թվով խաղացողներ, որոնցից յուրաքանչյուրը ձգտում է ստանալ առավելագույն շահույթ (այստեղ՝ շահում - payoff) և գիտի կամ գիտակցում է, որ իր վարվելակերպը, հետևաբար և շահումի ֆունկցիան կախված է մյուս խաղացողների վարքագծից:

Խաղերի տեսությունում ռազմավարություն են անվանում յուրաքանչյուր խաղացողի վերջնական վարքագծային պլանը: Եթե i-րդ խաղացողի բոլոր հնարավոր ռազմավարությունները նշանակենք S_i, հնարավոր հասանելի վարքագծերից մեկը կլինի $s_i \in S_i$: Ցանկացած $i \in I$ խաղացողի համար S_i ռազմավարության կիրառումից ունեցած շահումը նշանակենք $p_i(s)$:

$s^* \in S$ ռազմավարությունների համադրումը կոչվում է Նեշի հավասարակշռություն, եթե

$p_i(s^*) \geq p_i(s_i, s^{*-i})$, բոլոր $s_i \in S_i$, $i \in I$ համար: (1)

Նեշի հավասարակշռության սահմանումից հետևում է, որ ոչ մի i-րդ խաղացող շահագրգռված չէ հրաժարվելու s_i ռազմավարությունից: (1)-ի համաձայն՝ s_i -ի փոխարեն s^{*-i} վարքագծի դեպքում նրա շահումը կարող է միայն նվազել, երբ մյուս խաղացողները չեն հրաժարվում հավասարակշիռ s^* իրավիճակը ձևավորող իրենց վարքագծից: Այսպիսով, եթե ձևավորվել է այնպիսի իրավիճակ, որի դեպքում տեղի ունի (1) պայմանը, ապա դրանից անհատական շեղումը (հրաժարվելը) շահավետ կամ արդյունավետ չէ խաղացողի համար:

Այլ կերպ ասած, Նեշի հավասարակշռությունն այնպիսի իրավիճակ է, որի դեպքում յուրաքանչյուր խաղացողի ռազմավարություն մյուսների ռազմավարության պատասխանն է, ընդ որում, այն վատ չէ մյուս՝ նրան հասանելի ոչ մի ռազմավարությունից:

Օրինակ՝ երկու խաղացողների համար Նեշի հավասարակշռությունը կարտահայտվի որպես երկու խաղացողների ռազմավարությունների խումբ՝ (s^*_1, s^*_2), եթե յուրաքանչյուր i-րդ խաղացողի համար (i=1,2) գործում է հետևյալ պայմանը՝

$p_i(s_i^* s_j^*) \geq p_i(s_i, s^*_j)$, բոլոր $s_i \in S_i$ համար: (2)

Այստեղից էլ յուրաքանչյուր i-րդ խաղացողի s_i^* ռազմավարություն կոչված է լուծելու շահումի մաքսիմալացման խնդիրը՝

$$\max_{s_i \in S_i} p_i(s_i, s_j^*)$$

Փաստորեն, եթե փոքրաթիվ ձեռնարկություններ ունեցող ճյուղում սահմանված կարճաժամկետ հավասարակշռությունն ընդունենք որպես Նեշի հավասարակշռության մասնակի դեպք, կարող ենք ասել, որ յուրաքանչյուր ձեռնարկության վարքագիծ և որոշում պայմանավորված է մյուս ձեռնարկությունների վարքագծով: Այս պայմաններում ոչ մի ձեռնարկություն, մյուսների անփոփոխ վարքագծի դեպքում, չի շեղվի նախկին հավասարակշիռ վիճակից, քանի որ դրանից, այլ հավասար պայմաններում, հավանական է իր և, որոշ դեպքերում նաև մյուս ձեռնարկությունների, արդյունավետության նվազում:

Պարզաբանենք՝ դիտարկելով գների փոփոխությունն աճի և նվազման ուղղություններով:

Եթե ճյուղում ձեռնարկություններից մեկը որոշի սահմանել ավելի բարձր գին, հնարավոր է՝ մյուս ձեռնարկությունները չհետևեն ընդհանուր հավասարակշռությունից շեղված ձեռնարկության վարքագծին, ինչը այլ հավասար պայմաններում կհանգեցնի ձեռնարկության շուկայական մասնաբաժնի նվազման (սպառողը նույն արտադրանքը կնախընտրի ձեռք բերել ավելի ցածր գնով): Իսկ եթե որոշի իջեցնել գինը, հնարավոր է մյուս ձեռնարկությունները ևս նվազեցնեն գները՝ շուկայում մասնաբաժինը չկորցնելու նկատառումով: Արդյունքում, ճյուղի ընդհանուր շահութաբերությունը կնվազի, ինչը ընդունելի չէ ոչ մի ձեռնարկության համար:

Ընդհանուր առմամբ, փոխկապակցվածությամբ պայմանավորված գների կոշտությունը գործում է այն ճյուղերում, որտեղ տնտեսավարող սուբյեկտների նպատակային ֆունկցիաների միջև չկան էական տարբերություններ, այլ գոյություն ունեն նմանատիպ խնդիրներ:

Գների կոշտությունն ավելի հավանական է դառնում, եթե վերը նկարագրվածից բացի ձեռնարկությունները գործում են ըստ P>MC պայմանի (գինը մեծ է սահմանային ծախսերից), քանի որ այս դեպքում հնարավոր է գները հաստատուն պահել նաև տնտեսական շահույթի (P-MC) կարճաժամկետ տատանումների հաշվին[5]:

Ոչ մրցակցային պայմանով գներ սահմանած ձեռնարկությունը հնարավոր է կարճ ժամկետում խուսափի գների փոփոխությամբ շահույթի օպտիմալացումից, քանի որ անհայտ է, թե ինչ գնային քաղաքականությամբ հանդես կգան մրցակիցները: Ենթադրվում է, որ այս իրավիճակում գների փոփոխությունից ունեցած կորուստներն ավելի շատ լինեն և ավելի երկարաժամկետ բնույթ կրեն: Բացի այդ, ոչ մրցակցային շուկաներում կարճաժամկետ օպտիմալացման պայմանը հնարավոր է բարելավել նաև ծավալային փոփոխությունների միջոցով՝ գները պահելով հաստատուն:

Գների կոշտությունն ավելի հազվադեպ երևույթ է մրցակցային պայմաններում գործող ձեռնարկության համար, քանի որ ծախսերի աճը, այլ հավասար պայմաններում, հանգեցնում է գների աճի (վերջինս գները սահմանում է՝ ելնելով P = MC պայմանից): Իսկ, օրինակ, մենաշնորհայլը, ճյուղում լինելով միակ գին սահմանողը և չունենալով մրցակցի քայլի վերաբերյալ սպասումներ, օպտիմալացման պայմանից չշեղվելու համար անպայմանորեն կվերանայի գները:

Սակայն լինում են դեպքեր, երբ տվյալ ճյուղում ձեռնարկությունների տնտեսական պայմաններն անհավասար են՝ ձեռնարկություններից մեկը մյուսների համեմատությամբ ունենում է էական առավելություններ (այստեղ հասկանում ենք հիմնականում շուկայական մասնաբաժնում ունեցած տարբերությունը, որը թույլ է տալիս ձեռնարկությանը հանդիսանալ գնային առաջատար)[6]: Այդ դեպքում տնտեսավարող սուբյեկտներից մեկը հանձն է առնում գների սահմանումն ու փոփոխումը, իսկ մյուսները՝ համաձայնվում են հետևել նրա որոշումներին: Գնային առաջատարին հետևող ձեռնարկությունները ձևավորում են մրցակցային դաշտ (competitive fringe), իսկ առաջատար ձեռնարկությունը գտնվում է «քվազի-մոնոպոլ» կարգավիճակում, քանի որ գներին և թողարկման ծավալներին վերաբերող որոշումներ կայացնում է մենաշնորհային կարգավիճակում և ճյուղում հանդես գալիս որպես գին սահմանող (price setter), իսկ մյուսները, ինչպես մրցակցության դեպքում, շուկա են դուրս գալիս արդեն ճյուղում սահմանված գնով (առաջատարի սահմանած գին) և գործում որպես գին ընդունողներ (price taker):

Այսպիսով, ՀՀ չբևեռացված շուկաներում գների կոշտության երևույթը մեկնաբանելու համար հետագայում կանդրադառնանք փոխկապակցվածության տեսությանը, իսկ բևեռացված շուկաներում գների վարքագիծը բացատրելու համար հիմնվելու ենք գնային առաջատարության տեսական դրույթների վրա:

Գնագոյացման վերլուծություն ՀՀ սննդի ապրանքային շուկաներում

Ուսումնասիրելով ՀՀ կենտրոնական բանկի կողմից սննդի արդյունաբերության՝ գյուղմթերքները որպես հումք օգտագործող որոշ ճյուղերում իրականացված հարցման արդյունքները՝ փորձ է արվել բացահայտել գնագոյացման հիմնական սկզբունքները, այն հիմնական գործոնները, որոնք հաշվի առնելով՝ ձեռնարկությունները կատարում են գնորոշում, որոնց փոփոխությունները հանգեցնում են գնային քաղաքականության վերանայման: Պարզվել է ձեռնարկությունների կողմից գների վերանայման և փաստացի փոփոխման հաճախականությունը:

Համաձայն հիշատակված տեսությունների՝ գների կոշտությունը նկատելի է այն ճյուղերում, որոնցում, շուկայում ունեցած մասնաբաժնի առումով, բացակայում է բևեռացվածության բարձր աստիճանը. դրանք գործում են իրարից էականորեն չտարբերվող պայմաններում և մեծաքանակ չեն: Եվ հակառակը՝ բևեռացված շուկաներում հնարավոր է գնային առաջատարությունը: Այդ պատճառով նախ պարզենք մեր կողմից դիտարկված ճյուղերում տնտեսավարող սուբյեկտների՝ շուկայում ունեցած մասնաբաժինները և տեսնենք՝ արդյո՞ք առկա են էական առավելություններ ունեցող ձեռնարկություններ:

Բևեռացվածությունը կամ դրա բացակայությունը պարզելու համար ուսումնասիրենք՝ «Ձեր կարծիքով շուկայի որ մասին եք տեղեկացված» հարցի պատասխանները ըստ ճյուղերի:

---

[5] Տե՛ս Â. Å. Åñèïîâ, Öåíû è öåíîîáðàçîâàíèå, Ìîñêâà, 1997, էջ 152-162:
Ð. Ìàêêîííåëë, Ýêîíîìèêñ, ò. 2, Ìîñêâà, 1995, էջ 127-129:
[6] Տե՛ս Ð. Øåðåð, Ñòðóêòóðà îòðàñëåâûõ ðûíêîâ, Ìîñêâà, 1993, էջ 239-330:

Աղյուսակ 1. Ձեռնարկությունների՝ շուկայում ունեցած մասնաբաժիններն ըստ դիտարկված ճյուղերի

Արտադրության ճյուղը	Շուկայում ունեցած մասնաբաժինը (%)
Մսամթերքի արտադրություն	
Ձեռնարկություն 1	20
Ձեռնարկություն 2	15
Ձեռնարկություն 3	15
Կաթնամթերքի արտադրություն	
Ձեռնարկություն 1	20
Ձեռնարկություն 2	15
Ձեռնարկություն 3	10
Ձեռնարկություն 4	15
Հյութեր-պահածոների արտադրություն	
Ձեռնարկություն 1	25
Ձեռնարկություն 2	25
Ձեռնարկություն 3	20
Ձեռնարկություն 4	20
Ոգելից խմիչքների արտադրություն (կոնյակ)	
Ձեռնարկություն 1	80
Ձեռնարկություն 2	10
Ձեռնարկություն 3	5
Ոգելից խմիչքների արտադրություն (օղի)	
Ձեռնարկություն 1	50
Ձեռնարկություն 2	10

Ակնհայտ է, որ միայն ոգելից խմիչքների արտադրության ճյուղն է առանձնանում իրացման ծավալներում առաջատար ձեռնարկության առկայությամբ. կոնյակի արտադրությունում մեկ ձեռնարկությանը պատկանում է շուկայի 80 %-ը, օղու արտադրությունում՝ 50 %-ը: Մյուս ճյուղերում բացակայում է նման բարձր բևեռացումը: Ոգելից խմիչքների արտադրությունում բևեռացվածության բարձր աստիճան կարելի է տեսնել նաև Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի տվյալներով:

Աղյուսակ 2. Ոգելից խմիչք արտադրողների քանակը, շուկայում մասնաբաժինը

Ապրանքների շուկայի անվանումը	Տնտեսավարողների քանակը	Ընդհանուր ծավալում խոշոր տնտեսավարող սուբյեկտների բաժինը ըստ իրացման ծավալների (%)		
		Առաջին	Առաջին երկու	Առաջին երեք
Կոնյակ	13	84	91.10	95.10
Գարեջուր	5	74.62	99.53	99.56
Օղի	44	50	66.20	77.60
Փրփրուն գինի և շամպայն	6	84.70	91.10	95.30

Բոլոր արտադրատեսակների գծով ընդամենը մեկ արտադրողի պատկանում է շուկայական մասնաբաժնի կեսից ավելին, թեև ձեռնարկությունների թիվը բավականաչափ մեծ է (մասնավորապես օղու և կոնյակի արտադրության գծով):

Պարզելու համար գների կոշտության առկայությունը մեր կողմից դիտարկված բևեռացված և չբևեռացված շուկաներում (ճյուղերում)՝ անհրաժեշտ է ուսումնասիրել.

- առկա՞ են արդյոք գների փոփոխման հավանականություն առաջացնող գործոններ. որքա՞ն հաճախ են դրանք փոփոխվում,
- որքա՞ն հաճախ են վերոնշյալ գործոնները գների փոփոխման քննարկումների անհրաժեշտություն առաջացնում,

- գների փոփոխման քննարկումների արդյունքում փոփոխվո՞ւմ են գները, թե հակված են կոշտ մնալ:


Համաձայն հարցման արդյունքների՝ բոլոր ճյուղերում որպես գների վերանայման հիմնական պատճառ ձեռնարկությունները կարևորել են ինքնարժեքի փոփոխությունը: Այն ճյուղերում, որտեղ ներմուծման գործոնը էական է, մեծ է ներմուծվող մթերքի գների փոփոխության ազդեցությունը գների վրա: Պահանջարկի փոփոխությունը զգալի է համեմատաբար բարձր առաձգականություն ունեցող արտադրատեսակների՝ մսամթերքի և հյութեր-պահածոների արտադրության գծով: Ձեռնարկությունները կարևորել են նաև փոխարժեքի փոփոխությունը:

Աղյուսակ 3. Իրացման գների փոփոխման հավանականություն առաջացնող հիմնական գործոնները (յուրաքանչյուր տողի գումարը՝ 100%) [7]

Արտադրատեսակի անվանումը	Ինքնարժեքի փոփոխություն	Պահանջարկի փոփոխություն	Մրցակցի գնի փոփոխություն	Ներմուծվող մթերքի գնի փոփոխություն	Փոխարժեքի փոփոխություն	Այլ
Մսամթերք	45	10		40	5	
Կաթնամթերք	100					
Հյութեր-պահածոներ	45	30		15	10	
Ոգելից խմիչքներ	30					70[7]

Վերը նշված բոլոր գործոնները ենթարկվում են զգալի փոփոխությունների:

Ինքնարժեքի փոփոխությունները դիտարկված ապրանքային շուկաներում զգալի են եղել: Մասնավորապես, ինքնարժեքի բաղադրատարրերից հումքի գները՝ հիմնականում պայմանավորված թողարկման ծավալներով, ունեցել են զգալի տատանումներ, և քանի որ նշված ճյուղերում արտադրանքի մոտ 70% և ավելին հումքն է, վերջինիս տատանումներն առավելապես կարևորվում են:



Վերջին երեք-չորս տարում կաթնամթերքի և հյութեր-պահածոների արտադրությունում հումքի գները[8] 20-30%-ով տատանվել են, որը հանգեցրել է արտադրանքի ինքնարժեքի էական տատանումների (մոտ 80%-ը հումքն է կազմում):

[7] *Հարկային դրույքաչափի փոփոխություն:*


[8] *Արտադրության յուրաքանչյուր ճյուղում հումքի գները հաշվարկվել են՝ հիմք ընդունելով հիմնական հումքատեսակների գները ըստ ընդհանուր հումքի մեջ ունեցած կշիռների: Կշիռների մասին տեղեկատվության աղբյուրը վիճակագրական հարցումն է:*

Մսամթերքի արտադրությունում ինքնարժեքի (մոտ 70%-ը հումքն է) տատանումները զգալի են եղել: Երեք տարում հումքի գները՝ մասնավորապես ներմուծված, տատանվել են մոտ 20%-ով, իսկ ներմուծված պատրաստի մսամթերքի գները՝ մոտ 30%-ով:


Աղյուսակ 4. Ինքնարժեքի բաղադրատարրերի կշիռներն ըստ ճյուղերի (յուրաքանչյուր տողի գումարը՝ 100%)

Արտադրատեսակի անվանումը	Հումք	էլեկտրաէներգիա և վառելիք	Աշխատավարձ	Այլ ծախսեր
Մսամթերք	78	7	9	6
Կաթնամթերք	80	10	10	-
Հյութեր-պահածոներ	70	20	10	-
Ոգելից խմիչքներ	90	4.6	4	1.4

Ձեռնարկությունները կարևորել են նաև պահանջարկի և փոխարժեքի փոփոխությունները: Որպես պահանջարկի բնութագրիչ կարելի է դիտարկել մասնավոր սպառումը, որի իրական աճը վերջին երեք տարում կազմել է մոտ 30%: Փոխարժեքի տատանումները տարվա ընթացքում էական են լինում. երեք տարվա կտրվածքով միջին փոխարժեքի աճը կազմել է 8 %:



Ոգելից խմիչքների ճյուղի համար կարևորվել են հարկերի հավաքագրման խստացումները: Եթե բացառենք հարկահավաքման սեզոնայնությունը, ապա նկատելի է, որ ակցիզահարկի հավաքագրումը (այս ճյուղում մեծ տեղ է զբաղեցնում) իսկապես փոփոխվել է խստացման ուղղությամբ: 1999թ. երրորդ և 2001թ. առաջին եռամսյակներին ակցիզահարկի գծով մուտքերն աճել են մոտ 100 %-ով: Դա սեզոնայնությամբ չի պայմանավորված, քանի որ մյուս տարիների նույն եռամսյակներում նման աճ չի գրանցվել:



Այսպիսով, պարզվեց արված հարցադրումներից մեկը. իսկապես կան գործոններ, որոնք գների փոփոխման հավանականություն են առաջացնում, և այդ գործոնները կամ փոփոխականները վերջին երեք տարիներին հաճախակի տատանվել են:

Քննարկենք հաջորդ երկու հարցադրումները. հաճա՞խ են արդյոք այդ գործոնները գների փոփոխության քննարկումների անհրաժեշտություն առաջացնում, և դրանց արդյունքում փոփոխվո՞ւմ են գները, թե հակված են կոշտ մնալ:

Ըստ հարցման արդյունքների՝ սննդի արդյունաբերության որոշ ճյուղերում ձեռնարկությունները, գների փոփոխություն առաջացնող գործոնների տատանումների արդյունքում, գների փոփոխության քննարկումներ բավականին հաճախ են իրականացնում, սակայն գների փաստացի փոփոխություն գրեթե չի լինում:

Գների կոշտությունն արտահայտելու նպատակով յուրաքանչյուր ճյուղի համար հաշվարկվել է S_p գործակիցը, որը ցույց է տալիս ձեռնարկությունների կողմից գների փոփոխության քննարկումների արդյունքում դրանց փաստացի փոփոխման հաճախականությունը՝

$$S_p = \frac{C_p}{R_p * t}$$

C_p – երեք տարվա ընթացքում գների փաստացի փոփոխության հաճախականությունը,

R_p – գների փոփոխության քննարկումների տարեկան հաճախականությունը,

t – երեք տարի, քանի որ փաստացի փոփոխությունները դիտարկվել են այդ ժամանակահատվածում:

Եթե գների կոշտության գործակիցը հավասար է մեկի, ապա յուրաքանչյուր անգամ ձեռնարկության գների փոփոխության քննարկումների արդյունքում տեղի է ունենում գների փաստացի փոփոխում: Գործակիցը զրո է, երբ ձեռնարկությունը գների փոփոխման քննարկման արդյունքում գները չի փոխում, ինչը վկայում է գների կոշտության մասին:

Աղյուսակ 5. Գների կոշտությունը՝ըստ ապրանքախմբերի

Ապրանքախմբեր	Գների փոփոխության քննարկումների տարեկան հաճախականությունը (R_p)	Երեք տարվա ընթացքում գների փաստացի փոփոխության հաճախականությունը (C_p)	Գների կոշտության գործակիցը (S_p)
Մսամթերք	6	2	0.1
Կաթնամթերք	2	0	0.0
Հյութեր-պահածոներ	3	0	0.0
Ոգելից խմիչքներ	3	5	0.5

Կաթնամթերքի և հյութեր-պահածոների արտադրությունում գների կոշտության գործակիցը զրո է: Թեև տարվա ընթացքում երկու-երեք անգամ գների փոփոխության քննարկումներ են կատարվում, այնուամենայնիվ դրանք երեք տարվա ընթացքում փոփոխության չեն ենթարկվել: Ընդ որում, հյութեր-պահածոների արտադրությունում գների փոփոխության քննարկումների հիմնական պատճառ հանդիսացած հումքի գների և պահանջարկի տատանումները զգալի են եղել: Ըստ հարցման արդյունքների՝ 2001 թվին, 2000-ի համեմատ, գրանցվել է իրացման ծավալների 50%-ով աճ, իսկ ծախսերի տատանումներն ամեն տարի կազմել են 15-20%: Ծախսերի առումով նույն տատանումները դրսևորվել են նաև կաթնամթերքի արտադրությունում:

Կարող ենք արձանագրել, որ կաթնամթերքի և հյութեր-պահածոների արտադրության ճյուղերում գները կոշտ են ձեռնարկությունների կարևորած՝ գների փոփոխության քննարկում առաջացնող գործոնների, մասնավորապես՝ ինքնարժեքի փոփոխությունների նկատմամբ:

Մսամթերքի արտադրությունում գները բավականին հաճախ (տարվա ընթացքում մոտ 6 անգամ) վերանայվում են: Ճյուղում, որպես գների փոփոխության քննարկումներ առաջացնող հիմնական պատճառներ, նշվել են ինքնարժեքի (տեղական թարմ մսի կամ ներմուծվող հումքի գները բավականաչափ տատանողական են) և ներմուծվող մսամթերքի գների փոփոխությունները, որոնցից յուրաքանչյուրի տարեկան տատանումները կազմել են 20-30%: Արդյունքում, երեք տարվա ընթացքում գները տատանվել են երկու անգամ՝ 5% աճի ուղղությամբ: Գների կոշտության գործակիցը կազմել է 0.1: Այս ճյուղում գները որոշ չափով արձագանքել են գների փոփոխություն առաջացնող գործոնների փոփոխություններին (18 վերանայումների արդյունքում գները 2 անգամ փոփոխվել են), սակայն ավելի ցածր գործակցով, քան գործոնների փոփոխություններն են: Մսամթերքի արտադրությունում գրանցված գների փոփոխությունները չեն եղել ծախսերի փոփոխությունների չափով, որը ևս կարող է վկայել, որ գները մինչև որոշակի սահմանը կոշտ են գտնվել:

Ոգելից խմիչքների արտադրության ճյուղում գները, ինչպես և ակնկալվում էր, կոշտ չեն և բավականին առաձգական են փոփոխության հավանականություն առաջացնող գործոնների նկատմամբ: Գների կոշտության գործակիցը 0.5 է, այսինքն՝ գների փոփոխությունների քննարկումների կեսի արդյունքում ձեռնարկությունները փոփոխում են գները:

Հարցման արդյունքները հնարավորություն են տալիս քննարկելու երկու հիպոթեզ.

- ոգելից խմիչքների շուկան բարձր բևեռացված է, և այնտեղ գործում է գնային առաջատարությունը,
- դիտարկված ցածր բևեռացված շուկաներում առկա է գների կոշտություն:

Գնագոյացման նկարագրությունը ըստ շուկաների բևեռացվածության

Ինչպես տեսանք, դիտարկված շուկաները տարանջատելու և գնագոյացման վերաբերյալ տարբեր հիպոթեզներ առաջ քաշելու առաջնային պայմանը շուկաների բևեռացվածության աստիճանն է: Այդ նպատակով նկարագրենք դիտարկված շուկաներում գնագոյացումը և հիմնավորենք առաջարկվող հիպոթեզները ըստ շուկաների բևեռացվածության:

Գների կոշտությունը չբևեռացված շուկաներում (կաթնամթերքի, մսամթերքի, հյութեր- պահածոների)

Ձեռնարկությունների կողմից կարճաժամկետ հատվածում գների՝ հաստատուն մակարդակի պահպանման հնարավորությունը պայմանավորված է շուկայի առանձնահատկություններով: Մասնավորապես՝ կարևորվում է այն հանգամանքը, թե շահութաբերության ինչ մակարդակ ունի ձեռնարկությունը, որից կարելի է եզրակացնել, թե կարճ ժամանակահատվածում գների կոշտությունը մինչև որ սահմանն է անվնաս: Այս տեսակետից կարևորվում է շուկայի կառուցվածքային ձևը. որքան շուկան կառուցվածքային բնույթով անկատար է, այնքան ձեռնարկությունների տնտեսական շահույթը բարձր է:

Հայաստանի Հանրապետության տնտեսության որոշ առանձնահատկություններ, մասնավորապես՝ տնտեսության փոքր չափերը, իրացման շուկայի սահմանափակվածությունը, անցումային տնտեսությանը բնորոշ կառուցվածքային այլ խնդիրներ ենթադրում են ներքին սպառման շուկայում գործող ձեռնարկությունների սակավություն: Դրանից հետևում է, որ հնարավոր է ոչ մրցակցային, հատկապես խմբաշնորհային պայմանների առկայություն: Տնտեսության պայմանների՝ ոչ մրցակցայինին հակված լինելու մասին վարկածն ավելի կհիմնավորվի, եթե հաշվի առնենք, որ Հայաստանի Հանրապետության տնտեսությունում գները մի շարք այլ երկրների համեմատ բարձր են և, հետևաբար, դրանք բարձր են մրցակցային մակարդակից:

Ինչպես ինքնարժեքի, այնպես էլ մյուս գործոնների տատանումների նկատմամբ գների կոշտությունը, ոչ մեծ թվով ձեռնարկությունների պայմաններում, կարելի է բացատրել փոխկապակցվածության տեսությամբ: Ինչպես արդեն նշել ենք, այս տեսությունը գների կոշտությունը բացատրում է հիմնականում այն հանգամանքով, որ ձեռնարկությունների ոչ մեծ քանակությունն ապահովում է վարքագծային փոխկապակցվածություն, որն էլ իր հերթին՝ գների կոշտություն:


Ինչպես նշեցինք առաջին մասում՝ ձեռնարկությունների նման վարքագծի դեպքում իրավիճակը հավասարակշիռ է ըստ Նեշի: Այժմ քննարկենք այն պայմանները, որոնք ապահովում են Նեշի հավասարակշռությունը.

- տնտեսության չափերի, իրացման շուկայի փոքր լինելու օբյեկտիվ պատճառով պայմանավորված՝ ձեռնարկությունների քիչ քանակությունը (դիտարկված ծյուղերից յուրաքանչյուրում ձեռնարկությունների թիվը չի գերազանցում 20-ը),
- ներքին տնտեսության գների համեմատական բարձր մակարդակը:

Հավելված 2

Գները Հայաստանի Հանրապետությունում

Ընդհանուր առմամբ գների մակարդակը կարելի է գնահատել՝ համեմատելով ՀՀ-ում և գործընկեր երկրներում գին/աշխատավարձ և արտադրողականություն/աշխատավարձ հարաբերությունները[9]:



Դիտարկված երկրներից Հայաստանում գները հարաբերականորեն ամենաբարձրն են:

Գների մակարդակն արտահայտող գին-աշխատավարձ հարաբերության արժեքի մեծ լինելը հնարավոր է երկու դեպքում՝

- կամ մեր երկրում, մյուս երկրների համեմատ, արտադրողականությունը հարաբերականորեն ցածր է աշխատավարձից, որի դեպքում աշխատավարձի բարձր մակարդակը հանգեցնում է գների բարձր մակարդակի,
- կամ, եթե մեր երկրում, մյուս երկրների համեմատ, արտադրողականությունը բարձր է աշխատավարձից, ապա գների հարաբերականորեն բարձր մակարդակի պատճառ կարող է լինել տնտեսավարողների կողմից արդեն ստացված հարաբերականորեն բարձր շահույթը:

Ինչպես տեսնում ենք, ՀՀ-ում արտադրողականություն/աշխատավարձ ցուցանիշը զիջում է ընդամենը երեք երկրի համապատասխան ցուցանիշին: Սա թերևս վկայում է այն մասին, որ գների հարաբերականորեն (համեմատաբար) բարձր մակարդակը պայմանավորված է շահույթի բարձր մակարդակով: Իսկ որքան բարձր է շահույթի մակարդակը, այնքան ավելի ընդգծված է շուկայի անկատարությունը:

Գների բարձր մակարդակը կարող է պատճառ լինել տնտեսությունում բարձր ռիսկերի առկայության, որը նշանակում է, որ տնտեսավարող սուբյեկտները ստանձնած ռիսկի դիմաց պետք է ստանան համապատասխան պարգևատրում: Հետևաբար, որքան բարձր է տնտեսավարող սուբյեկտի գործունեության միջավայրի ռիսկայնությունը, այնքան, այլ հավասար պայմաններում, մեծ է նաև ռիսկ-պարգևատրում մեծությունը՝ շահույթը: Եվ քանի որ շահույթը գնային բաղադրատարր է, ուստի բարձր շահույթը նշանակում է գների բարձր մակարդակ:

[9] Որպեսզի թվերը համեմատելի լինեն, երկրների ցուցանիշները հաշվարկվել են ԱՄՆ-ի համապատասխան ցուցանիշների համեմատությամբ:

Առաջին պայմանը՝ ձեռնարկությունների փոքրաթիվ լինելը կապահովի Նեշի հավասարակշռության առաջին պայմանը՝ խաղացողների վարքագծային փոխկապվածությունը: Երկրորդը՝ գների համեմատական բարձր մակարդակը կապահովի շահույթի մաքսիմալացման և հնարավոր ռազմավարություններից ոչ վատի ընտրության պայմանը: Պարզաբանենք.

1. Համաձայն տեսության, ճյուղում փոքրաթիվ ձեռնարկությունների պայմաններում ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ արտադրողներն իրենց գնային քաղաքականությունը մշակելու և արտադրության ծավալները որոշելու համար անխուսափելիորեն պետք է հաշվի առնեն նաև ճյուղում գործող մյուս ձեռնարկությունների որոշումները (մեծ թվով ձեռնարկությունների դեպքում յուրաքանչյուր արտադրողի ազդեցությունը մյուսների վրա փոքրանում է կամ, նույնիսկ, չեզոքանում): Այլ կերպ՝ արտադրության ծավալների և գնի վերաբերյալ որոշում կայացնելիս քիչ թվով մրցակիցներ ունեցող ձեռնարկությունը չի կարող համարել իր արտադրանքի նկատմամբ պահանջարկի ֆունկցիան տրված, քանի որ իր վարքագիծը պայմանավորված է տվյալ ճյուղում գործող մյուս ձեռնարկությունների վարքագծով և հակառակը: Իսկ որքան փոքրաթիվ են ձեռնարկությունները, այնքան մեծանում է յուրաքանչյուրի նշանակությունը մյուսների համար:

Մեր կողմից դիտարկված ճյուղերում ևս ձեռնարկությունները փոքրաթիվ են, ուստի անխուսափելի է ձեռնարկությունների վարքագծերի (որոշումների) փոխկապակցվածությունը:

2. Գների բարձր մակարդակը կարող է վկայել ձեռնարկությունների կողմից լավագույն կամ հնարավոր ռազմավարություններից ոչ վատի ընտրության մասին:

Ոչ մրցակցային շուկաներում գները սահմանվում են սահմանային ծախսերից բարձր, կամ այլ կերպ՝ գները բարձր են մրցակցային մակարդակից: Եթե մրցակցային գինը ընդունենք դիտարկված ճյուղերում ձեռնարկությունների հնարավոր ռազմավարություններից մեկը, ապա ոչ մրցակցային գինը վերջիններիս համար կհամարվի լավագույն կամ մյուսներից ոչ վատ ռազմավարությունը:

Այսպիսով, դիտարկված ճյուղերում գները կայուն պահելու հիմնական գործոնը շահույթի բարձր մակարդակն է և մրցակցի պատասխան քայլի վերաբերյալ անորոշությունը, որը և ստիպում է ձեռնարկություններին պահպանել նախկին հավասարակշիռ վիճակը:

Այն, որ մեր կողմից դիտարկված չբևեռացված ճյուղերում իսկապես գործում է գների կոշտություն, կարելի է ցույց տալ նաև ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների:

Գնային առաջատարությունը բևեռացված շուկաներում

Ընդհանուր առմամբ, ՀՀ տնտեսության շուկաներից մի քանիսում, ինչպես և ոգելից խմիչքների արտադրությունում, նկատվում է բևեռացվածության բարձր մակարդակ: Այսինքն, թեև տվյալ ճյուղում գործում են բավարար քանակով ձեռնարկություններ, սակայն շուկայում առկա արտադրանքի ծավալի կեսից ավելին ապահովում է միայն մեկ ձեռնարկություն, իսկ մնացած մասը կամ այլ կերպ՝ մնացորդային պահանջարկը բավարարում են մեկ տասնյակից ավելի ձեռնարկություններ:

Այսպիսով, միևնույն ճյուղում գործում են գերիշխող ձեռնարկություն և միմյանց հետ մրցակցող մանր արտադրողներ: Ընդ որում, ինչպես արդեն նշվել է, ենթադրվում է, որ ճյուղում գերիշխող ձեռնարկությունը գներին և թողարկման ծավալներին վերաբերող որոշումները կայացնում է մենաշնորհային կարգավիճակով և ճյուղում հանդես է գալիս որպես գին սահմանող, իսկ մյուսները, ինչպես մրցակցության դեպքում, շուկայում առաջնորդվում են ճյուղում սահմանված (առաջատարի սահմանած) գնով և գործում որպես գինը ընդունողներ: Եվ քանի որ գին սահմանողը մենաշնորհյալ է և շահույթի օպտիմալացման խնդրի լուծման ժամանակ մրցակցի վարքագծից բացասական սպասումներ չունի, ուստի չկան նաև գները կոշտ պահելու այն շարժառիթները, որոնք առկա էին մեր դիտարկած մյուս շուկաներում:

Գնային առաջատարի վերաբերյալ դատողությունները մասնավորեցնենք կոնյակի շուկայի օրինակով:

Կրկնենք, որ դիտարկվող ճյուղն ունի բևեռացման բարձր աստիճան. թողարկման ծավալների համարյա 90%-ը պատկանում է մեկ ձեռնարկության, սակայն ճյուղում գոյություն ունեն կոնյակ արտադրող ևս 12 ձեռնարկություն, որոնց միասնական արտադրանքը բավարարում է շուկայի մնացորդային պահանջարկը: Այժմ պարզենք՝ հանդիսանո՞ւմ է արդյոք գերիշխող ձեռնարկությունը գնային առաջատար, թե՝ ոչ:

Այն փաստը, որ շուկայական պահանջարկի գերակշիռ մասը բավարարում է այս ձեռնարկությունը, նշանակում է կոնյակի շուկայական գինը սահմանում է նա: Միևնույն ժամանակ, համեմատելով մյուս ձեռնարկությունների իրացման գները, համոզվում ենք, որ գերիշխող ձեռնարկությունը, իրոք, գները սահմանում է մենաշնորհային դիրքերից, քանի որ նրա իրացման գներն ամենաբարձրն են:

Աղյուսակ 6. Կոնյակի (երեքաստղանի) իրացման միջին գները (ՀՀ դրամ)

Ձեռնարկություն 1 (գերիշխող)	2205
Ձեռնարկություն 2	1700
Ձեռնարկություն 3	1650

Գերիշխող ձեռնարկության արտադրանքի իրացման միջին գները 30 %-ով բարձր են, քան մյուսներինը: Եվ եթե պայմանականորեն ընդունենք, որ միավոր արտադրանքին բաժին ընկնող արտադրական ծախսերը բոլոր ձեռնարկություններում հավասար են[10], ապա ակնհայտ է, որ ընդհանուր դեպքում գերիշխող ձեռնարկությունն ապահովում է 30%-ով ավելի շահույթ, քան մյուսները (ավելին, գերիշխող ձեռնարկության միավոր արտադրանքի վրա կատարված ծախսերը, այլ հավասար պայմաններում, պետք է ավելի ցածր լինեն, քանի որ վերջինս կարող է օգտվել մասշտաբի էֆեկտից):

Փաստորեն, գերիշխող ձեռնարկությունը հանդես է գալիս որպես գին սահմանող, իսկ թողարկման ծավալները որոշում է՝ հաշվի առնելով իր արտադրական ներուժը:

Նշենք նաև, որ ձեռնարկության ծախսերի կառավարելիությունը բավականին բարձր է: Նա ոչ մրցակցային պայմաններում է գտնվում հումքի՝ խաղողի ձեռքբերման ժամանակ և այստեղ ևս հանդիսանում է գին սահմանող, քանի որ հումքի ձեռքբերման շուկայում միակ խոշորագույն գնորդն է և ստեղծում է մենաշնորհային իրավիճակ:

Փորձենք ցույց տալ, թե ինչ դեր ունի ձեռնարկությունը խաղողի գնագոյացման առումով: Ձեռնարկության ծախսերի 93 %-ը հումքն է, և ինչպես արդեն նշել ենք, վերջինիս է պատկանում ճյուղի թողարկման ծավալների 84 %-ը: Այստեղից կարող ենք եզրակացնել, որ վերամշակվող խաղողի (կազմում է խաղողի համախառն բերքի մոտ 80%-ը) պահանջարկի կեսից ավելին ներկայացնում է այս ձեռնարկությունը, որը թույլ է տալիս խաղողը ձեռք բերել հնարավորինս ցածր գներով, քանի որ ինչպես փաստում են տնտեսությունները, խաղողի գինը որոշելիս գնորդի ազդեցությունը շատ մեծ է, և նա հանդիսանում է գին սահմանող[11]:

Այսպիսով, ձեռնարկությունը ինքնարժեքը կարողանում է կառավարել օպտիմալ մակարդակում՝ զերծ մնալով անցանկալի փոփոխություններից:

Ունենալով կոնյակի ապրանքային շուկայի վերաբերյալ որոշ դատողություններ՝ փորձենք պատկերացնել ճյուղում պահանջարկի կորի տեսքը: Քանի որ գերիշխող ձեռնարկությունը քվազի-մոնոպոլ կարգավիճակում է, հետևաբար պահանջարկի այն մասը, որն ապահովում է ձեռնարկությունը, ավելի ուղղահայաց տեսք ունի: Մենաշնորհային շուկայում ապրանքի պահանջարկի առաձգականությունը գնի առաձգականությունից թույլ է՝ $\varepsilon^{p}_{i,j} \longrightarrow 0$, այսինքն, եթե որոշակի արտադրանք թողարկող ձեռնարկությունը սահմանել է մենաշնորհային գին և գործում է ճյուղում ամենաբարձր գնով, նշանակում է արտադրանքը մրցունակ է, և սպառողը պատրաստ է վճարել արտադրողի սահմանած գինը: Հետևում է, որ կոնյակի ապրանքային շուկան պատկանում է դիֆերենցված խմբաշնորհի դասին, այն է՝ գերիշխող ձեռնարկության արտադրանքն ունի որակական հատկանիշներ, որոնց համար սպառողը պատրաստ է վճարել այն գինը, որը սահմանվում է արտադրողի կողմից:

Փաստորեն, գերիշխող ձեռնարկությունը գին սահմանող է, որովհետև շուկայում ունի գերակշիռ, համարյա մենաշնորհային մասնաբաժին. նրա՝ գին սահմանելու նախադրյալ են նաև արտադրանքի յուրահատկությունները՝ որակական հատկանիշները, ձեռնարկության հին և ճանաչված լինելը և այլն:

Ճյուղում մյուս ձեռնարկությունների պահանջարկի կորերն ավելի հորիզոնական տեսք ունեն՝ պահանջարկի գնային առաձգականությունն ավելի բարձր է, քան նախորդ դեպքում, քանի որ մնացորդային պահանջարկը (ընդհանուր պահանջարկի 10 %-ը) բավարարվում է մյուս 10 ձեռնարկությունների կողմից: Այսինքն, հնարավոր է, որ որոշ ձեռնարկություններ բավարարում են ճյուղի պահանջարկի ընդամենը 1 կամ ավելի քիչ տոկոսը, որի դեպքում գնային մրցակցությունն անխուսափելի է:

Այժմ փորձենք պարզել, թե որքանով է գերիշխող ձեռնարկության գնային քաղաքականությունը պայմանավորում մյուս ձեռնարկությունների գների վարքագիծը: Ըստ հարցման արդյունքների՝ գերիշխող ձեռնարկությունն իրոք հանդիսանում է գնային առաջատար:

Աղյուսակում ներկայացված են այն հիմնական սկզբունքները, որոնցով առաջնորդվում են ձեռնարկությունները գները սահմանելիս:

---

[10] Նման ենթադրության հիմնական պատճառը ծախսերի մասին տվյալների բացակայությունն է. ձեռնարկությունները հրաժարվել են տալ ինքնարժեքին վերաբերող տեղեկատվություն:

[11] Ըստ գյուղմթերքների գնագոյացման վերաբերյալ ՀՀ ԿԲ հարցման արդյունքների:

Աղյուսակ 7. Իրացման գները որոշող հիմնական սկզբունքները

	Շուկայում առավելագույն գին	Մրցակցի թելադրած գին	Ինքնարժեք + հավելադիր	Գնորդի առաջարկած գին	Այլ
Ձեռնարկություն 1 (գերիշխող)	-	-	100	-	-
Ձեռնարկություն 2	50	-	-	50	-
Ձեռնարկություն 3	70	10	-	20	-

Գերիշխող ձեռնարկությունը գները սահմանելիս հաշվի է առնում միայն ծախսերը և սահմանում հավելադիր, որի մեծությունը կախված է պահանջարկի առաձգականությունից: Մասնավորապես՝ ըստ տեսության.

$$P = AVC \ (1 + k)$$ [12]

որտեղ՝ k-ն հավելադիրն է և հավասար $k = 1/e$,
AVC-ն՝ միջին փոփոխական ծախսերն են,
e-ն՝ պահանջարկի գնային առաձգականությունն է,
P-ն՝ գերիշխող ձեռնարկության սահմանած գինն է:

Քանի որ գերիշխող ձեռնարկությունը ճյուղում գին սահմանող է՝ քվազի մենաշնորհյալ, ապա k-ի հայտարարը կձգտի 0-ի, որի դեպքում կոտորակն անվերջ կմեծանա՝ շահույթի կամ հավելադրի արժեքը կձգտի իր առավելագույն արժեքին: Դա է պատճառը, որ գերիշխող ձեռնարկության իրացման գները ճյուղում ամենաբարձրն են:

Մյուս ձեռնարկությունները այս սկզբունքից չեն օգտվում և գները սահմանում են՝ հաշվի առնելով հիմնականում շուկայում գործող գինը (գերիշխող ձեռնարկության սահմանած գինը), քանի որ նրանք գին ընդունող են. մնացորդային պահանջարկում իրենց մասնաբաժինն ունենալու համար հաշվի են առնում սպառողների օգտակարության ֆունկցիան՝ գնորդի թելադրած գինը:

Ամփոփելով կոնյակի ապրանքային շուկայում գնագոյացման վերաբերյալ դատողությունները՝ եզրակացնում ենք, որ շուկայի բարձր բևեռացվածության արդյունքում ճյուղում գները սահմանվում են ամենամեծ թողարկման ծավալներն ապահովող ձեռնարկության կողմից, իսկ մյուս ձեռնարկությունները, բավարարելով իրացման ծավալների ընդամենը մեկ իններորդ մասը, հանդիսանում են գնի հետևորդներ:

Դիտարկված ճյուղերում գների մոդելավորումը

Կոշտ կամ ոչ առաձգական գներով ճյուղեր

Գների կոշտության երևույթը կարող է ունենալ որոշակի սահման. կախված գործոնի փոփոխման չափից՝ գները կոշտ պահելու շարժառիթները կարող են լինել պակաս արդյունավետ, քան գները փոփոխելը: Այսպիսով, գները կոշտ պահելու սահման կարող է հանդիսանալ շահույթի այնպիսի մակարդակ, որի դեպքում գների տատանումներ առաջացնող գործոնների փոփոխության պայմաններում գների նախկին մակարդակը կարող է հանգեցնել ձեռնարկության վնասով աշխատելուն. այս դեպքում օպտիմալացման նոր մակարդակը կարող է սահմանվել գների փոփոխմամբ: Մասնավորապես՝ ցանկացած ձեռնարկություն շահույթի օպտիմալացումն ապահովում է՝ սահմանային ծախսերը հավասարեցնելով սահմանային եկամտին, քանի որ՝

$$\frac{\partial \pi}{\partial Q} = \frac{\partial (TR - TC)}{\partial Q} = \frac{\partial TR}{\partial Q} - \frac{\partial TC}{\partial Q} = MC - MR = 0 \qquad (1)$$

կամ

$$MC = MR = 0 \qquad (2)$$

[12] *Բանաձևի ստացումը տե՛ս «Դիտարկված ճյուղերում գների մոդելավորումը» մասում:*

Ընդ որում, եթե մրցակցային ճյուղի համար առկա է հետևյալ պայմանը՝

$$MC = MR = P \ , \qquad (2')$$

ապա ոչ մրցակցայինի դեպքում ունենք՝

$$MC = MR \neq P \qquad (3)$$

ավելի ճիշտ՝

$$MC = MR < P \qquad (3')$$

Նշված (2') և (3') պայմանների ճշտությունը ստուգելու համար դիտարկենք սահմանային եկամտի ստացումը՝

$$MR = \frac{\partial(TR)}{\partial Q} = \frac{\partial(P*Q)}{\partial Q} = P\frac{\partial Q}{\partial Q} + Q\frac{\partial P}{\partial Q} = P + Q\frac{\partial P}{\partial Q} \qquad (4)$$

Եթե մրցակցային պայմաններում գործող ձեռնարկության համար գինը սահմանված է, պահանջարկի ֆունկցիան ունի ուղղահայաց տեսք, կամ՝

$$\frac{\partial P}{\partial Q} = 0 \qquad (5)$$

(5) պայմանը տեղադրելով (4)-ի մեջ՝ կունենանք $MR = P$, այսինքն՝ պայման (2)-ը:
Ոչ մրցակցայինի դեպքում ունենք՝

$$\frac{\partial P}{\partial Q} < 0 \qquad (6)$$

որը տեղադրելով (4)-ի մեջ՝ կունենանք $MR = P + Q\frac{\partial P}{\partial Q} < P$, այսինքն՝ պայման (3')-ը:

Այս պայմանի առկայության դեպքում ձեռնարկությունն ունենում է շահույթ (π), որը հավասար է գների և սահմանային ծախսերի տարբերությանը:

$$P - MC = \pi \qquad (7)$$

Դիցուք, գներն անփոփոխ պահելը հանգեցնում է շահույթի տատանմանը λ մեծությամբ: Այդ դեպքում գների կոշտությունը կգործի, երբ՝

$$\pi \geq \lambda \qquad (8)$$

կամ մինչև այն պահը, երբ գնի և սահմանային ծախսերի միջև ճեղքվածքը զրոյանա՝ $MC = P$:

Ինչ վերաբերում է ձեռնարկությունների միջև փոխկապակցվածությանը, ապա դա կարելի է արտահայտել հետևյալ կերպ՝

$$\frac{(P - MC)}{P} = \frac{1}{ne} \qquad (9)$$

Բանաձևն արտահայտում է գներն այն ճյուղերում, որտեղ կան սահմանափակ թվով ձեռնարկություններ, որոնց ծախսերը նույնն են, և յուրաքանչյուրը շուկայում ունի հավասար մենաշնորհային իշխանություն: Կախված ձեռնարկությունների քանակից՝ գների և սահմանային ծախսերի միջև ճեղքվածքը կարող է տարբեր լինել, մասնավորապես՝ շուկայում տնտեսավարող սուբյեկտների ավելացումը (n-ի աճը) կհանգեցնի ճեղքվածքի կրճատման և հակառակը: Փաստորեն, որքան քիչ լինեն ձեռնարկությունները, այնքան այլ հավասար պայմաններում գների և սահմանային ծախսերի միջև տարբերությունը մեծ կլինի, հետևաբար մեծ կլինի նաև ձեռնարկությունների՝ գները կոշտ պահելու հնարավորությունը: Մյուս կողմից, ձեռնարկությունների սակավությունը կմեծացնի վարքագծերի փոխկապակցվածությունը, որը մրցակցի պատասխան քայլի վերաբերյալ անորոշության պայմաններում կսրի գները կոշտ պահելու շարժառիթները:

Այսպիսով, գների կոշտության պայմաններն են՝ շահույթի մեծությունը և տվյալ ճյուղում ձեռնարկությունների քանակի ավելացումը: Գների կոշտության խախտման պատճառ կարող են լինել խաղացողների վարքագծերի փոխկապակցվածության նվազումը՝ տնտեսավարող սուբյեկտների թվի նկատելի աճի դեպքում, ինչպես նաև ձեռնարկությունների՝ գները փոփոխելու վերաբերյալ համաձայնության գալը:

Բևեռացված ճյուղեր

Բևեռացված ճյուղերում, ինչպես նշվեց վերը ձևակերպված հիպոթեզում, գներն ածանցվում են գերիշխող ձեռնարկության գնային քաղաքականությունից, ուստի այս տիպի ճյուղերում գները մոդելավորելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել միայն գնային առաջատարի գնային քաղաքականությունը: Հարցման արդյունքներով պարզ դարձավ, որ գերիշխող ձեռնարկությունն օգտվում է ոչ մրցակցային շուկաներում գնագոյացման հիմնական սկզբունքից՝ ծախսերին գումարելով որոշակի հավելադիր՝ պայմանավորված վերջինիս թողարկած ապրանքի նկատմամբ պահանջարկի առաձգականությամբ, որին տրվում է էմպիրիկ գնահատական: Դիտարկենք գնագոյացման հավելադրի սկզբունքը:

Ինչպես հայտնի է՝

$$MR = P(1 - 1/e) \qquad (10)$$

(10)-ը կարելի է ստանալ (4)-ի մեջ տեղադրելով պահանջարկի գնային առաձգականությունը՝

$$e_d = -\frac{\partial Q}{\partial P} * \frac{P}{Q}$$

$$MR = P + Q\frac{\partial P}{\partial Q} = P - Q\frac{P}{e_d Q} = P - \frac{P}{e_d},$$

որը նույնն է, ինչ (10)-ը:

MC>0 դեպքում շահույթի մաքսիմալացման համար պահանջվում է, որ *MR*-ը լինի դրական: Իսկ դա նշանակում է՝ շահույթի մաքսիմալացումը հնարավոր է միայն, երբ՝ *|e| >1*: Այլ դեպքերում շահույթի մաքսիմալացումն անհասանելի է՝

երբ *e =1, MR = 0,*

երբ *e <1, MR < 0* :

Երկու դեպքում էլ *MC = MR* պայմանը չի կարող գոյություն ունենալ: Ուստի, որպես այլընտրանքային տարբերակ, պետք է դիտարկել հետևյալ հավասարությունը՝

$$AVC = MR \qquad (11)$$

Տեղադրելով (11) պայմանը (10)-ի մեջ՝ կստանանք՝

$$AVC = P(1-1/e) = P(e-1)/e \text{ , որտեղից՝}$$

$$P = AVC * e/(e-1) \qquad (12)$$

Կատարենք նշանակում՝ ներմուծելով նոր փոփոխական՝

$$e/(e-1) = 1 + k \qquad (13)$$

որտեղ *k > 0*, հետևաբար՝

$$P = AVC\ (1 + k) \qquad (14)$$

k -ն համախառն հավելադիրն է (%-ով՝ *AVC*-ի նկատմամբ) կամ համախառն մարժան (gross profit margin): (13)-ից կարող ենք ստանալ k -ն՝ արտահայտված պահանջարկի գնային առաձգականությամբ՝

$$k = 1/e$$

Ինչպես արդեն ներկայացրել ենք, այս ճյուղերում գների վարքագծերն ուսումնասիրելիս պահանջարկի առաձգականությանը տրվում է սուբյեկտիվ գնահատական:

Այսպիսով, ըստ բանաձև 14-ի, բևեռացված ճյուղերում գնագոյացման վերաբերյալ պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է առաջին հերթին ունենալ առաջատար ձեռնարկությունների ծախսերի կառուցվածքը, ինչպես նաև էմպիրիկ գնահատական տվյալ ճյուղի պահանջարկի կորի վերաբերյալ:

Ամփոփում

Վերլուծությունների արդյունքները ցույց տվեցին, որ ՀՀ տնտեսության որոշ ճյուղերին բնորոշ են նոր քեյնսյան տնտեսագիտության մի շարք տեսական դրույթներ, որոնք վերաբերում են կարճ ժամանակահատվածում ոչ մրցակցային կամ ոչ կատարյալ շուկաներում մասնակի կամ կարճաժամկետ հավասարակշռության վիճակների սահմանմանը: Այդպիսի վիճակ ստեղծվում է շուկայական մեխանիզմի անկատարության արդյունքում (անկատար մրցակցություն, տեղեկատվություն)՝ ոչ բոլոր մասնակիցների ցանկությամբ, և հանգեցնում նրան, որ սահմանված մասնակի հավասարակշռությունն արդյունավետ է լինում միայն տնտեսական գործակալների որոշ շերտերի համար:

Մասնավորապես բացահայտվեց, որ այն շուկաներում, որտեղ տնտեսավարող սուբյեկտների թիվը մեծ չէ, և դրանք բավարարում են իրարից էապես չտարբերվող շուկայական պահանջարկի մի մաս, գները քիչ զգայուն են այն գործոնների նկատմամբ, որոնց նկատմամբ նորմալ մրցակցային պայմաններում հակված են զգայուն լինել: Գների ոչ ճկունությունը կամ, այսպես կոչված, կոշտությունը, որն իր հերթին հանգեցնում է երկարաժամկետ կամ լրիվ հավասարակշիռ վիճակի ձգձգման, կարող է հետևանք լինել այն հանգամանքի, որ ներքին տնտեսության որոշ օբյեկտիվ գործոններ ստիպում են տնտեսավարող սուբյեկտներին գործել ոչ լրիվ տեղեկացվածության պայմաններում: Վերջիններս պետք է ավելի զգուշավոր լինեն նոր հավասարակշռության վիճակի սահմանման հարցում և գործեն նախկինում սահմանված գնի պայմաններում: Փաստորեն, տնտեսության ոչ բևեռացված ճյուղերում գները համեմատականորեն ոչ առաձգական են՝ անփոփոխ:

Դիտարկված այն ճյուղերում, որտեղ գոյություն ունի իրացման շուկայում գերիշխող ձեռնարկություն, գործում է ոչ մրցակցային ճյուղերին բնորոշ մեկ այլ տեսական մոտեցում, համաձայն որի՝ այս ճյուղերում գինը կարգավորվում է առաջատարի կողմից, գները բավարար չափով զգայուն են գները սահմանող գործոնների նկատմամբ, հատկապես եթե վերջիններս գները մեծացնելու միտում ունեն: Փաստորեն, տնտեսության բևեռացված ճյուղերում գներն առաձգական են հատկապես աճի ուղղությամբ:

Վերլուծության արդյունքում կատարված եզրահանգումները կկիրառվեն դիտարկված ապրանքային շուկաներում գները կանխատեսելու համար:

ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎՐԱ*

Մարիաննա Խաչատրյան, Անդրանիկ Մամիկոնյան
*Դրամավարկային քաղաքականության վարչություն***

Ստվերային տնտեսության վրա հարկային համակարգի ազդեցության խնդիրը բավականին համընդգրկուն է, հետևաբար կարող են բազմաթիվ մոտեցումներ կիրառվել դրա վերլուծության համար: Ցանկացած դեպքում, որևէ վերլուծություն չի կարող պատասխանել այս խնդրին առնչվող բոլոր հարցերին: Նյութի հիմնական նպատակն է. սահմանել այն փոփոխականները, որոնց ընտրությունը հավասարակշռության վիճակ է ձևավորում ստվերային տնտեսության որոշակի մակարդակների համար և որոշել Կառավարության կողմից կառավարվող այն գործոնները, որոնք հարկատուների համար ավելի գրավիչ կդարձնեն տնտեսության ստվերային հատվածից պաշտոնականին անցնելը:

Վերլուծության մեջ ստվերային տնտեսության վրա հարկային համակարգի ազդեցության գնահատումը կատարվել է տեսական մոդելի ձևավորման միջոցով, որի հիմքում թերզարգացման թակարդների ժամանակակից տեսությունն է (Modern theory of underdevelopment traps): Ներկայացվող մոդելում տնտեսավարող սուբյեկտների տնտեսական որոշումները ազդում են նրանց քաղաքական դիրքորոշման վրա, այսինքն՝ հարկատուների՝ հարկեր վճարելու կամ հարկերից խուսափելու ընտրությունը ազդում է բարեփոխումներին կողմ կամ դեմ լինելու ընտրության վրա: Եթե բավարար թվով տնտեսավարող սուբյեկտներ չպահանջեն բարեփոխումներ, ապա այդ բարեփոխումների իրականացման հավանականությունը կփոքրանա, որն իր հերթին կնվազեցնի մնացած տնտեսավարող սուբյեկտների հարկային պարտավորությունները կատարելու շարժառիթները և կազդի նրանց քաղաքական դիրքորոշման վրա: Հարկեր վճարող առանձին տնտեսավարող սուբյեկտի եկամուտը կարող է աճել՝ հարկերը վճարող այլ տնտեսավարող սուբյեկտների քանակից կախված: Այսինքն, եթե հարկատուների գերակշիռ մասը վճարում է հարկերը, ապա ամեն մի հարկատուի ձեռնտու է կատարել իր հարկային պարտավորությունները, իսկ եթե մեծամասնությունը փորձում է խուսափել հարկերից, ապա հարկատուին ձեռնտու է իր հարկային պարտավորություններից խուսափելը: Արդյունքում՝ կարող են առաջանալ ցածր և բարձր մակարդակների հավասարակշռություններ, և պարտադիր չէ, որ շուկայական ուժերը տանեն վատ հավասարակշռությունից ավելի լավ հավասարակշռության:

Նյութի առաջին մասում ներկայացված են ստվերային տնտեսության վրա հարկային համակարգի ազդեցության վերաբերյալ առկա տեսամեթոդաբանական մոտեցումները, երկրորդ մասում՝ մոդելը, ըստ որի՝ քննարկվում են Հայաստանում ստվերային տնտեսության ձևավորման և դրա աճի վրա ազդող գործոնները: Վերջում ամփոփվում են վերլուծության արդյունքները:

Ստվերային տնտեսության սահմանումը, հետևանքները և պատճառները

Ստվերային տնտեսության սահմանումը և հետևանքները. Գրականության մեջ գոյություն ունեն ստվերային տնտեսության բազմաթիվ սահմանումներ, սակայն նշենք դրանցից մի քանիսը: Ստվերային տնտեսությունը չգրանցված ազգային եկամուտն է, որը հաշվարկվում է որպես շրջանառության մեջ գտնվող փողին համապատասխան «պոտենցիալ» ազգային եկամտի և գրանցված ազգային եկամտի տարբերություն: Ստվերային տնտեսությունը սահմանվում է նաև որպես ապրանքների և ծառայությունների շուկայական արտադրություն, օրինական կամ անօրինական, որը չի ներառվում ՀՆԱ հաշվարկում կամ որպես տնտեսական գործունեություն, որը աջակցել է պաշտոնական ՀՆԱ աճին, բայց գրանցված չէ: Այս սահմանումները փոքր-ինչ տարբերվում են, սակայն գաղափարը նույնն է՝ ստվերային տնտեսությունը կառավարության վերահսկողությունից դուրս է:

Ստվերային տնտեսության չափի որոշումը բավականին բարդ է, և չնայած գոյություն ունեն ստվերային տնտեսության գնահատման մի քանի մեթոդներ, պետք է նկատի ունենալ, որ ցանկացած մեթոդով հաշվարկված ստվերային տնտեսության չափը ճշգրիտ չէ: Սա զարմանալի չէ, քանի որ հաշվարկվում է այն տնտեսավարող սուբյեկտների իրականացրած գործունեությունը, որոնք ցանկանում են աննկատ և չգրանցված մնալ:

** Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

*** Պոտենցիալ հարկային բեռի ցուցանիշների հաշվարկը կատարել է Վ. Ջանվելյանը:*

Ըստ Շնայդերի հաշվարկների՝ 49 երկրների ստվերային տնտեսության ցուցանիշը ՀՆԱ-ում տատանվում է 7.8%-ից (Շվեյցարիա) մինչև 76% (Նիգերիա):

Աֆրիկա	
Նիգերիա	76
Եգիպտոս	68
Թունիս	45
Մարոկո	39

Կենտրոնական և Հարավային Ամերիկա	
Գվատեմալա	61
Մեքսիկա	49
Պերու	44
Պանամա	40
Չիլի	37
Կոստա Ռիկա	34
Վենեսուելա	30
Բրազիլիա	29
Պարագվայ	27
Կոլումբիա	25

Ասիա	
Թաիլանդ	71
Ֆիլիպիններ	50
Շրի Լանկա	40
Մալայզիա	39
Սինգապուր	13

Անցումային տնտեսություններ	
Հունգարիա	28.4
Բուլղարիա	32.7
Լեհաստան	13.9
Ռումինիա	18.3
Սլովակիա	10.2
Չեխիա	14.2
Վրաստան	63
Ադրբեջան	59.3
Ուկրաինա	47.3
Բելառուս	19.1
Ռուսաստան	41
Լիտվա	25.2
Լատվիա	34.8
Էստոնիա	18.5

OECD երկրներ	
Հունաստան	28.6
Իտալիա	26
Իսպանիա	22.4
Պորտուգալիա	22.1
Բելգիա	21.5
Շվեդիա	19.5
Նորվեգիա	18.2
Դանիա	17.8
Իռլանդիա	15.4
Ֆրանսիա	14.8
Նիդեռլանդներ	13.7
Գերմանիա	13.5
Ճապոնիա	10.6
ԱՄՆ	8.8
Ավստրիա	8.6
Շվեյցարիա	7.8

Ըստ աղյուսակի տվյալների՝ որոշ երկրներում (Նիգերիա, Եգիպտոս, Թաիլանդ) ստվերային տնտեսությունը կազմում է պաշտոնական ՀՆԱ-ի երեք քառորդը: Կենտրոնական և Հարավային Ամերիկայի շատ երկրներում այս ցուցանիշը կազմում է մեկ քառորդից մեկ երրորդը, անցումային երկրներում՝ պաշտոնական ՀՆԱ-ի մոտավորապես մեկ քառորդը, Կենտրոնական Եվրոպայի երկրներում (Իռլանդիա, Հոլանդիա, Ֆրանսիա և Գերմանիա)՝ 13-16%: Ստվերային հատվածի ամենացածր ցուցանիշը հաշվարկված է փոքր պետական հատված և բարձր հարկային կարգապահություն ունեցող զարգացած երկրներում (Ճապոնիա, ԱՄՆ, Շվեյցարիա): Մասնավորապես, ասիական երկրներում, որտեղ համեմատաբար փոքր է պետական հատվածը, առկա են բարձր հարկային օրինապահություն և խիստ պատժամիջոցներ՝ հարկային պարտավորությունները չկատարելու համար (օրինակ՝ Հոնկոնգում և Սինգապուրում) ստվերային տնտեսության չափը մոտավորապես նույնն է, ինչ՝ զարգացած երկրներում:

Ստվերային տնտեսության առկայության և դրա ընդլայնման հետ կապված խնդիրները բազմաթիվ են և բազմակողմանի, ուստի ստվերային տնտեսության դեմ պայքարը պետք է կառավարության քաղաքականության կարևոր մասը կազմի: Նշենք այդ խնդիրներից մի քանիսը:

- Ստվերային տնտեսության վրա ազդող գործոններից առանձնահատուկ կարևորություն ունեն հարկերը և այլ տիպի պարտադիր վճարումները, որոնք ստվերային գործելակերպի անցման ամե-

նաազդեցիկ գործոններն են: Հարկերի և սոցիալական ապահովության մուծումների բեռի ավելացման պայմաններում ստվերային տնտեսության աճը կարող է հանգեցնել պետական բյուջեի եկամուտների թերհավաքագրման: Եթե այս պարագայում կառավարությունը ստիպված լինի բարձրացնել հարկային բեռը, դա իր հերթին շղթայական ձևով կանդրադառնա տնտեսության պաշտոնական հատվածում օրինական գործող տնտեսավարող սուբյեկտների վրա ու կստիպի նրանց անցնել ստվերային հատված՝ ավելի վատացնելով տնտեսության վիճակը:

- Կարևոր է ստվերային տնտեսության ազդեցությունը պաշտոնական տնտեսության վրա: Ծաղկող ստվերային տնտեսությունը կարող է գրավիչ դառնալ աշխատուժի համար, որի արդյունքում մասնագիտական ներուժը կարող է տեղափոխվել ստվեր՝ ստեղծելով պաշտոնական հատվածում աշխատող ձեռնարկությունների մրցակցություն:
- Քանի որ ստվերային տնտեսությունը գրանցված չէ, ուստի պաշտոնական վիճակագրությունը ճիշտ չի ցույց տալիս տնտեսության իրական վիճակը, և քանի որ պաշտոնական վիճակագրությունը օգտագործվում է տնտեսական քաղաքականությունը մշակելիս, սա կարող է հանգեցնել քաղաքականության առնչվող սխալ որոշումների:
- Տնտեսության ստվերային հատվածը խոչընդոտում է նաև հասարակության զարգացման գործընթացները: Ստվերային տնտեսությունը բացասաբար է անդրադառնում հասարակության սոցիալական տարբեր ոլորտների (առողջապահության, կրթության և գիտության, բնապահպանության և այլն) ֆինանսավորման վրա, դանդաղեցնում է այդ ճյուղերի բարեփոխումները և զարգացման գործընթացները: Ավելին, պետբյուջեի եկամուտների թերհավաքագրման պատճառով չի իրականացվում պետական համակարգի աշխատակիցների բավարար ֆինանսավորումը, որը նպաստում է այդ համակարգերում կոռուպցիայի զարգացմանը:

Ստվերային տնտեսության առաջացման պատճառները. Ստվերային տնտեսության աճին նպաստող ամենաէական գործոններն են՝ հարկերի և սոցիալական ապահովագրության վճարումների բեռի աճը, պաշտոնական տնտեսության, մասնավորապես աշխատուժի շուկայի, կարգավորման խստացումը, շաբաթական աշխատանքային ժամերի պարտադիր կրճատումը, թոշակին անցնելու ժամկետի կրճատումը, գործազրկությունը, պետական հաստատությունների հանդեպ վստահության նվազումը: Տվյալ նյութի նպատակից ելնելով՝ հիմնական ուշադրությունը կդարձվի ստվերային տնտեսության վրա հարկային համակարգի ազդեցության գնահատմանը:

Հարկերի ազդեցությունը. Քանի որ հարկերն ազդում են աշխատանք-հանգիստ ընտրության վրա, ինչպես նաև խթանում են աշխատանքի առաջարկը ստվերային տնտեսությունում, ուստի կարևոր է այն միջոցառումների իրականացումը, որոնք կխթանեն աշխատանքի ընտրությունը և կնպաստեն ստվերային տնտեսությունում աշխատանքի առաջարկի կրճատմանը:

Պետության կողմից հարկային դրույքաչափերի բարձրացումը ինքնըստինքյան խթանում է հարկային պարտավորություններից խուսափումը: Եթե հարկերը բարձր են, նվազում է նաև քաղաքացու բարեխղճությունը, այսինքն՝ տնտեսավարող այն սուբյեկտները, որոնք ցածր հարկերի պայմաններում պարտաճանաչ մուծում էին հարկերը, հարկային բեռի մեծացման դեպքում գերադասում են հարկերից խուսափելու միջոցով, թեկուզ մասամբ, թեթևացնել հարկային պարտավորությունների իրենց բեռը:

Հարկային բեռի բարձրացումը կարող է պայմանավորված լինել մի քանի գործոններով, մասնավորապես՝ հարկային դրույքաչափերի բարձրացմամբ: Ըստ Լաֆերի՝ հարկային դրույքաչափի բարձրացման դեպքում հարկային եկամուտները սկզբում աճում են, իսկ հետո, ինչ-որ կետից սկսած, նվազում: Հարկային եկամուտների նվազումը պայմանավորված է նրանով, որ ավելի բարձր դրույքաչափերը զսպում են տնտեսական աճը (նվազում են խնայողությունները, ներդրումները, սպառումը և այլն), հետևաբար կրճատվում է հարկային բազան: Ուստի, նույնիսկ հարկային դրույքաչափերի աճի դեպքում, հարկերի գումարը նվազում է: Հիմնական խնդիրն այն է, որ իրականում դժվար է պարզել, թե Լաֆերի կորի որ մասում է գտնվում տնտեսությունը: Բացի այդ, հարկերի ազդեցությունը կախված է նաև հարկային դրույքաչափերի նկատմամբ տնտեսության զգայունությունից: Այսպես, օրինակ, դժվար է միանշանակ պնդել, որ եկամտահարկի դրույքաչափի նվազեցման արդյունքում մարդիկ կսկսեն ավելի շատ աշխատել, այլ ոչ թե կնախընտրեն հանգստանալ, քանի որ այդ դեպքում ավելի քիչ աշխատելով կարելի է ստանալ նույն տնօրինվող եկամուտը:

Ստվերային հատվածի գործունեությանը նպաստում է ոչ միայն հարկային դրույքաչափերի բարձր մակարդակը, այլև երկրում առկա ընդհանուր հարկային անկարգապահության մթնոլորտը: Արդյունավետ հարկային վարչարարության և հարկային վճարումներից խուսափելու դեպքում, բարձր տույժերի պայմաններում, բարձր սահմանային հարկային դրույքաչափերը կարող են չնպաստել ստվերային գործու-

նեության ծավալների մեծացմանը, այսինքն՝ կարելի է ենթադրել, որ ոչ բավարար հարկային վարչարարությունը և պետական ծախսերի անարդյունավետ կառավարումը կարող են տնտեսության ստվերայնացման խթան հանդիսանալ:

Այժմ անդրադառնանք քննարկվող թեմային առնչվող աշխատություններից մեկին, որտեղ վերլուծվում են ԱՄՆ-ում ուղղակի հարկերի դրույքաչափերի, հարկային մարմինների իրականացրած ստուգումների, տուգանքների քաղաքականության հավանական ազդեցությունները ստվերային տնտեսության հարաբերական չափի վրա (Schneider, 2000): Վերլուծությունը ցույց է տալիս, որ հարկային դրույքաչափերի բարձրացումը կարող է հանգեցնել ստվերային տնտեսության աճի, մինչդեռ ստուգումների և տուգանքների աճը՝ ստվերի նվազման: Ընդհանուր առմամբ, հեղինակը ցույց է տալիս, որ կառավարության գործողությունները բավականին ուժեղ ազդեցություն ունեն: Այսպես, ֆեդերալ եկամտահարկի սահմանային դրույքաչափի 1%-ով բարձրացումը, այլ հավասար պայմաններում, մեծացնում է ստվերային տնտեսությունը 1.4%-ով:

Ֆրիդմանը և Զոնսոնը երկրների համեմատական վերլուծության միջոցով հանգել են այն եզրակացության, որ ոչ թե բարձր դրույքաչափերն են ազդում ստվերային տնտեսության չափի վրա, այլ կառավարության կողմից հարկային համակարգի ոչ էֆեկտիվ և դիսկրեցիոն կիրառումը և կարգավորումը: Բարձր հարկային դրույքաչափերը կարող են հանգեցնել ստվերային տնտեսության ավելի ցածր մակարդակի: Նրանց կարծիքով, ձեռնարկություններն անցնում են ստվեր ոչ թե հարկերից խուսափելու համար, այլ բյուրոկրատիայի և կոռուպցիայի բեռից խուսափելու համար: Սակայն եզրակացության մեջ հեղինակները նշում են, որ վերլուծության այս արդյունքը այնքան էլ վստահելի չէ, քանի որ տարբեր դրույքաչափերի օգտագործման դեպքում ոչ միշտ է, որ ստացված արդյունքները վիճակագրորեն նշանակալի են:

Հարկային համակարգի ճիշտ կառուցվածք ընտրելու տեսանկյունից կարևորվում է ստվերային տնտեսության վրա ուղղակի և անուղղակի հարկերի ազդեցության գնահատումը: Շնայդերը այս խնդիրը քննարկել է Ավստրիայի և Սկանդինավյան երկու երկրների վերլուծության միջոցով: Ավստրիայի դեպքում հեղինակը որպես ստվերային տնտեսության շարժիչ ուժ է դիտարկում 4 փոփոխականներ՝ ուղղակի հարկերը, անուղղակի հարկերը, հարկային համակարգի բարդությունը և պետական կարգավորումների ինտենսիվությունը: Այս առումով ամենանշանակալի ազդեցությունն ունեն ուղղակի հարկերը, որին հետևում է հարկային համակարգի բարդությունը: Բոլոր երեք երկրներում հարկային փոփոխականներն (ուղղակի հարկերի միջին դրույքաչափը, ընդհանուր հարկերի միջին դրույքաչափը, սահմանային հարկային դրույքաչափերը) ունեն սպասվող դրական ազդեցություն ստվերային տնտեսության վրա և վիճակագրորեն նշանակալի են:

Զարգացած և անցումային երկրներում ներկայումս ձևավորված հարկային եկամուտների կառուցվածքը հետևյալն է.

- 2002 թվականին ԱՊՀ երկրներում հարկային եկամուտների կշիռը ՀՆԱ-ում 22% է, Արևելյան Եվրոպայում՝ 33% և զարգացած երկրներում՝ 37%: Ընդ որում, վերջին 10 տարիներին այս ցուցանիշը նվազել է, մասնավորապես՝ ԱՊՀ երկրներում եղել է 24%, Արևելյան Եվրոպայում՝ 35%:
- Ուղղակի հարկերի կշիռը հարկային եկամուտների մեջ վերջին 10 տարիների ընթացքում ԱՊՀ երկրներում նվազել է 56%-ից մինչև 43%, Արևելյան Եվրոպայում՝ 59-ից 54%: Զարգացած երկրներում այս ցուցանիշը 63% է:
- Անուղղակի հարկերի կշիռը առավել բարձր է ԱՊՀ երկրներում. 37%-ից դարձել է 44%, Արևելյան Եվրոպայում՝ 32%-ից 38%, մինչդեռ զարգացած երկրներում 30% է:
- Արտաքին առևտրից ստացված հարկերի կշիռը բավականին ցածր է ԱՊՀ երկրներում և 0-ին մոտ՝ զարգացած երկրներում:

Անցումային և զարգացած երկրների մեջ Հայաստանի համեմատական դիրքը պատկերացնելու համար հավելվածի երկու աղյուսակում ներկայացված են այդ երկրների հարկային համակարգերի կառուցվածքները:

Հայաստանի Հանրապետությունում հարկային եկամուտների կառուցվածքի զարգացումը՝ ըստ միջին ժամկետ ծրագրի (2004 – 2006 թթ.), ունի հետևյալ պատկերը.

Ցուցանիշներ (%՝ հարկային եկամուտներում)	2001	2002	2003	2004	2005	2006
	փաստ.		կանխատեսում			
Անուղղակի հարկեր	74.5	73.5	72.7	72.8	72.6	72.1
Ուղղակի հարկեր	17.7	17.4	18.8	19	19.6	20.5
Այլ հարկեր	7.8	9.1	8.5	8.2	7.8	7.4

Ըստ աղյուսակի տվյալների՝ եկամուտների կառուցվածքում ավելի մեծ տեսակարար կշիռ ունեն անուղղակի հարկերը և եթե հիմք ընդունենք միջին ժամկետ ծրագիրը, կարելի է ասել, որ 2004-2006 տարիների ընթացքում հարկային եկամուտների կառուցվածքում էական փոփոխություններ չեն լինելու: Ծրագրում ներկայացվում են նաև առանձին հարկատեսակների կանխատեսվող մակարդակները և դրանց հավաքագրման ցուցանիշը, որի հաշվարկի համար օգտագործվում են այդ հարկատեսակների անվանական (օրենքով սահմանված) և փաստացի (փաստացի եկամուտների և հարկման փաստացի բազայի հարաբերության ցուցանիշ) դրույքաչափերը:

	ԱԱՀ		
	Անվան. դրույքաչափ (%)	Փաստ. դրույքաչափ (%)	Հավաքագրման ցուցանիշ (%)
2001	20	10.1	50.7
2002	20	11.4	56.8
2003	20	12.3	61.7
2004	20	12.8	64.2
2005	20	13.5	67.4
2006	20	14.3	71.4

	Եկամտահարկ			Շահութահարկ		
	Անվանական դրույքաչափ (%)	Փաստացի դրույքաչափ (%)	Հավաքագրման ցուցանիշ (%)	Անվանական դրույքաչափ (%)	Փաստացի դրույքաչափ (%)	Հավաքագրման ցուցանիշ (%)
2001	10	3.7	37.4	20	6.5	32.3
2002	10	3.5	35.1	20	6.2	31.1
2003	10	3.6	35.8	20	6.8	34.2
2004	10	3.7	37.2	20	7.1	35.5
2005	10	3.9	39.1	20	7.5	37.3
2006	10	4.1	41.4	20	7.9	39.6

Ըստ ներկայացված տվյալների՝ հարկային եկամուտների փաստացի մակարդակը զգալիորեն տարբերվում է այն մակարդակից, որը կարող էր հավաքագրվել հարկային օրենսդրության պատշաճ կատարման դեպքում: Չնայած հետագա տարիների ընթացքում նախատեսվում է հավաքագրման ցուցանիշի բարձրացում, սակայն 2006 թվականին հարկերի հավաքագրման աստիճանը բավականին ցածր է:

Հարց է առաջանում, թե արդյոք ստվերային տնտեսության հիմնախնդիրը վատ օենքների կամ օրենքների վատ կիրառման հետևանք է: Ըստ որոշ ուսումնասիրությունների՝ Հայաստանի տնտեսավարող սուբյեկտների համար սահմանված հարկերն այնքան էլ բարձր չեն և դա չէ ստվերում գործելու հիմնական շարժառիթը: Շատ դեպքերում, մեր երկրի ստվերային տնտեսությունում գործող տնտեսավարող սուբյեկտները, ուղղակի ծանոթ չլինելով հարկային և մաքսային օրենսդրությանը, չափազանց «բարդ ու թանկ» են համարում տնտեսության պաշտոնական հատվածում գործունեություն իրականացնելը: Հաճախ համապատասխան վերահսկող մարմինների ներկայացուցիչներին անօրինական վճարումներ և կաշառք տալու ճանապարհով նրանք շրջանցում են պետական մարմիններին, չեն գործում օրենքով սահմանված կարգով, կարծելով, թե ի վիճակի չեն պահպանել ներկայացվող բոլոր պահանջները:

Ամեն դեպքում, այսօրվա հարկային օրենսդրությամբ սահմանված հարկային համակարգը գնահատելու համար, պետք է նախ աշխատացնել այդ համակարգը, տեսնել դրա իրական ազդեցությունը տնտեսության վրա և հետո նոր գնահատել դրա ճիշտ կամ սխալ լինելը: Իհարկե, գործող օրենսդրական դաշտում կարելի է գտնել թերություններ, բայց, կարծում ենք, դրանց շտկումը դժվար թե լուծի այսօրվա հարկային համակարգի հիմնական խնդիրը՝ հարկատուների կողմից հարկերը վճարելու ցանկության բացակայությունը: Հասկանալի է, որ յուրաքանչյուր հասարակությունում հարկերի վճարումը ցանկալի չէ որևէ հարկատուի համար, բայց, եթե ընդունվում է պետության դերը տնտեսության կարգավորման գործընթացում, ապա պետք է հստակ գիտակցել, որ պետությունը իր գործառույթները կատարելու համար պետք է ունենա միջոցներ, այսինքն՝ հարկերի հավաքագրումը անհրաժեշտություն է: Սակայն ներկայիս պայմաններում հարկատուները չեն ցանկանում հարկեր վճարել, քանի որ իրատես հարկատուի տեսանկյունից այսօր հարկային պարտավորությունների կատարումը օպտիմալ չէ:

Ստորև ներկայացվող մոդելի նպատակը ստվերային տնտեսության վրա ազդող գործոնների բացահայտումն է և դրանց միջոցով ստվերային տնտեսության կրճատման միջոցառումների առաջարկումը:

Մոդելում ամեն հարկատու իր տնտեսական գործունեությունն իրականացնելիս անտեսում է դրա ազդեցությունը բարեփոխումների վերաբերյալ մնացած հարկատուների սպասումների, հետևաբար՝ հարկեր վճարելու նրանց որոշումների վրա: Մենք ենթադրում ենք, որ յուրաքանչյուր անհատ իրականացվող բարեփոխմանը կողմ կամ դեմ է լինում՝ կախված այն բանից, թե ինչպես դա կանդրադառնա իր սեփական բարեկեցության վրա:

Հարկատուների տնտեսական և քաղաքական որոշումները փոխկապակցված են. նրանք որոշում են վճարել հարկերը, թե՝ ոչ (տնտեսական որոշում), կողմ լինել բարեփոխմանը, թե՝ դեմ (քաղաքական որոշում): Հարկատուի տնտեսական որոշումը ազդում է նրա քաղաքական դիրքորոշման վրա: Այսպես, օրինակ, եթե հարկատուն որոշում է խուսափել կամ մասամբ կատարել հարկային պարտավորությունները, ապա նա դեմ կլինի բարեփոխմանը, քանի որ դա կսահմանափակի հարկերից խուսափելու իր կարողությունները: Բացի այդ, եթե բավարար քանակությամբ հարկատուներ չպահանջեն բարեփոխում, ապա դրանց իրականանալու հավանականությունը կնվազի, որի արդյունքում մնացած հարկատուների՝ հարկ վճարելու շարժառիթները կնվազեն, և դա կազդի բարեփոխմանը կողմ լինելու նրանց որոշման վրա:

Այստեղ հարկ է նշել, որ ընդունելով հարկային բեռի ծանրության ազդեցությունը՝ տնտեսության ստվերայնության մեծացման առումով, պետք է միաժամանակ գիտակցել, որ հարկային բեռի խիստ կրճատումներից չի կարելի ակնկալել ստվերային տնտեսության կտրուկ փոքրացում: Հարկային բարեփոխումներից, գործնականում, կարելի է սպասել միայն ստվերային տնտեսության ընդարձակման գործընթացի կասեցում կամ էլ, լավագույն դեպքում, պաշտոնական հատվածի որոշ չափով ընդլայնում: Հարկային բարեփոխումները պետք է զուգորդվեն ստվերային տնտեսության վրա ազդող այլ գործոնների համանման փոփոխություններով՝ ստվերային տնտեսության ծավալների կրճատումը տեսանելի դարձնելու համար: Պետք է նշել մեկ այլ հանգամանք ևս. այստեղ գործում է նաև սովորույթի ուժը, այսինքն՝ մարդիկ, ովքեր երկար տարիներ գործել են ստվերային ոլորտում, դժվար թե հարկային դրույքաչափերի կրճատումից ելնելով՝ փոխեն իրենց գործելակերպը:

Մոդելը

Գոյություն ունեն մեծ թվով հարկատուներ: Ենթադրենք՝ դրանց թիվը 1-է: Հարկատուները տարբերակվում են θ պարամետրով, որը $[\theta min, \theta max]$ միջակայքում է և ցույց է տալիս հարկերից խուսափելու հարկատուների հնարավորությունը: Ավելի բարձր θ-ի դեպքում հարկատուների՝ հարկերից խուսափելու հնարավորությունն ավելի բարձր է: θ-ի հավանականությունների խտության ֆունկցիան $h(\theta)$ է, իսկ հավանականությունների բաշխման ֆունկցիան՝ $H(\theta)$:

Հարկատուներն ունեն երկու ընտրություն.

- վճարել հարկերը կամ
- խուսափել հարկերի վճարումից:

Քաղաքական միջավայր. Նախնական վիճակն այն է, որ հարկերն արդյունավետ չեն օգտագործվում, հարկատուներին չի բավարարում պետական ապրանքների և ծառայությունների որակը: Այն հարկատուները, ովքեր վճարում են հարկերը, պահանջում են բարեփոխում, բայց նրանք, ովքեր չեն վճարում կամ մասամբ են վճարում, անտարբեր են կամ նույնիսկ դեմ են բարեփոխմանը, որովհետև դա կսահմանափակի հարկերից խուսափելու իրենց հնարավորությունը: Ներկայացվող մոդելը ստատիկ է, սակայն հնարավոր է կազմել նաև դրա դինամիկ տարբերակը: Ստատիկ մոդելի դեպքում հարկատուների տնտեսական ռազմավարությունն է որոշում նրանց քաղաքական դիրքորոշումը:

x-ով նշանակենք հարկատուների այն մասը, որը դեմ է բարեփոխմանը, իսկ $\pi(x)$-ը բարեփոխում իրականացնելու հավանականությունն է, որը կախված է x-ից:

$\pi'(x) \leq 0$, այսինքն՝ ինչքան ավելի քիչ լինեն բարեփոխմանը դեմ մարդիկ, այնքան ավելի բարձր կլինի բարեփոխման հավանականությունը. $\pi(1)=0$, $\pi(0)=1$

Սպասվող եկամուտներ (տե՛ս հավելված, գծապատկեր 1). Հարկերից խուսափելիս սպասվող եկամուտը, բարեփոխման բացակայության դեպքում, ցանկացած θ կարողությամբ հարկատուի համար հետևյալն է.

$$S^N = f - f^*(t-t\theta) \qquad (1)$$

որտեղ՝ f-ը հարկատուի միավոր ակտիվից ստացված եկամուտն է, t-ն՝ օրենքին համապատասխան վճարվելիք հարկի դրույքաչափն է, fθ-ը չվճարված հարկերի գումարն է[1]:

Հարկերից խուսափելու դեպքում սպասվող եկամուտը, եթե բարեփոխում է իրականացվել, կլինի.

$$S^R = f - f*(t-t\theta) - \lambda f t\theta \qquad (2)$$

որտեղ՝ λ-ն ներկայացնում է բարեփոխման արդյունքում հարկերից խուսափելու հնարավորության նվազումը (այսուհետև՝ հարկային վարչարարություն). 0<λ<1: N և R-ը համապատասխանաբար նշանակում են ռեֆորմի բացակայություն և ռեֆորմի առկայություն:

Հարկերը վճարողների սպասվող եկամուտները կլինեն.

$$V^N = f*(1+g)*(1-t) \qquad (3)$$

$$V^R = f*(1+g)*(1-t) + \beta\left(\int_0^{\theta^*} ftd\theta + \int_{\theta^*}^{1} f*(t-t\theta)d\theta\right) \qquad (4)$$

որտեղ՝ g-ն՝ ակտիվների եկամտաբերության աճն է, որը պայմանավորված է տնտեսության պաշտոնական հատվածում գործունեություն իրականացնելով, այսինքն՝ այս գործակիցը ցույց է տալիս պաշտոնական հատվածում գործող հարկ վճարողի համեմատական առավելությունը ստվերային հատվածում աշխատողի նկատմամբ. 0<g<1, β-ն կառավարության ծախսերի կառավարման արդյունավետությունն է, 0<β<1, իսկ $\left(\int_0^{\theta^*} ftd\theta + \int_{\theta^*}^{1} f*(t-t\theta)d\theta\right)$-ը պետական բյուջեի հարկային եկամուտների ընդհանուր մակարդակը: Այսինքն՝ հարկերի վճարումից հարկատուի եկամուտը կախված է ոչ միայն իր կողմից վճարված հարկերի գումարից, այլ բոլոր հարկատուների կողմից վճարված հարկերից, ինչպես նաև այդ հավաքագրված եկամուտների արդյունավետ կառավարումից: β-ն գտնվում է [0,1] միջակայքում, ինչքան ավելի բարձր է β-ն, այնքան ավելի արդյունավետ է կառավարությունը իրականացնում պետական ծախսերի կառավարումը:

Հարկերից խուսափելու և հարկեր վճարելու դեպքում սպասվող եկամուտների տարբերությունը θ տեսակի հարկատուի համար նշանակենք Δ(x,θ):

$$\Delta(x,\theta) = \pi(x)*\{f - f*(t-t\theta) - \lambda f t\theta\} + (1-\pi(x))*\{f - f*(t-t\theta)\} - [\pi(x)*\{f*(1+g)*(1-t) + (\beta f t)/2*(1+\theta^2)\} + (1-\pi(x))*\{f*(1+g)*(1-t)\}]$$

Սահմանային գիծը կարող ենք ընտրել այնպես, որ այդ գծի ցանկացած կետում θ տիպի հարկատուն անտարբեր է հարկեր վճարելու կամ հարկերից խուսափելու ընտրության հարցում և իր գործողությունը ծրագրելիս հարկատուն հավատում է, որ բնակչության x մասը բարեփոխում չի ցանկանում:

Δ(x,θ*) = 0 (տե՛ս հավելված, գծապատկեր 2)

Լուծելով հավասարումը՝ θ* համար կստանանք՝

$$\theta^*(x) = \{t*(1-\pi(x)\lambda - [(t*(1-\pi(x)\lambda)^2 - (2\pi(x)\beta t)*(g*(1-t)+(\pi(x)\beta t)/2))]^{1/2}\}/(\pi(x)\beta t)$$

θ*-ը θ-ի այն մակարդակն է, երբ հարկերը վճարելու և հարկերից խուսափելու դեպքում հարկատուն ստանում է նույն եկամուտը: θ*-ից ավելի բարձր θ ունեցողները կգերադասեն խուսափել հարկերի վճարումից, իսկ ավելի ցածր θ ունեցողները՝ վճարել հարկերի ամբողջ գումարը:

Մոդելի կարևոր առանձնահատկությունը dθ*/dx <0 կապի առկայությունն է: Կարևոր է հասկանալ, որ θ*(x)-ը կախված է x քաղաքական միջավայրից: Ինչքան ավելի քիչ լինեն բարեփոխմանը դեմ մարդիկ, այնքան ավելի բարձր կլինի θ*-ը, այսինքն՝ հարկերից խուսափելու ավելի մեծ հնարավորություններ ունեցող տնտեսավարող սուբյեկտներին ձեռնտու կլինի վճարել հարկերը:

---

*[1] Ընդհանուր դեպքում հարկատուի եկամուտը՝ S = I-I*t, որտեղ՝ I-ը այդ տնտեսավարող սուբյեկտի ավելացված արժեքն է, իսկ t-ն՝ նրա կողմից վճարվող հարկերի դրույքաչափը: Որպեսզի բոլոր տնտեսավարող սուբյեկտների եկամուտները քննարկվեն միևնույն մասշտաբում, մոդելի հաշվարկները ներկայացվել են միավոր ակտիվների եկամտաբերության նկատմամբ, այսինքն, եթե A-ն տվյալ սուբյեկտի ակտիվներն են, ապա՝ S/A=I/A-(I/A)*t = f-ft:*


Այս կորի ցանկացած կետ բնութագրվում է (x,θ*) զույգով, որը նշանակում է, որ որևէ ընտրված x-ի պայմաններում անհրաժեշտ է θ* որոշակի մակարդակ՝ անտարբեր լինելու համար հարկերի վճարման և հարկերից խուսափելու ընտրության հարցում, բայց հնարավոր է, որ մինչև θ* խուսափելու կարողություն ունեցող տնտեսավարող սուբյեկտների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ տարբերվի x-ի ընտրված մակարդակից: Բնականաբար այդ ընտրված x-ի մակարդակը չի կարող տնտեսությունում լինել հավասարակշռության կետ: Հավասարակշռության կետը պարզելու համար անհրաժեշտ է քննարկել θ-ի հավանական բաշխման ֆունկցիան՝ H(θ): Ըստ էության, այն ցույց է տալիս հարկերից խուսափելու մինչև որևէ θ հնարավորություն ունեցող տնտեսավարող սուբյեկտների տեսակարար կշիռը ընդհանուրի մեջ: Քանի որ, ըստ սահմանային կորի, մինչև θ* մակարդակը սուբյեկտները մուծում են հարկեր և կողմ են բարեփոխմանը, ապա բարեփոխումներ չցանկացողների տեսակարար կշիռը կսահմանվի որպես 1-H(θ): x(θ) = 1-H(θ) անվանենք հարկերից խուսափելու հնարավորությունների կոր:

Հավասարակշռությունը որոշվում է հարկատուների x մասով, որը դեմ է բարեփոխմանը.

$x = 1 - H(\theta^*(x))$

x-ը կախված կլինի θ-ի հավանականության բաշխման ֆունկցիայից: Եթե θ-ն ունի հավասարաչափ բաշխում [0,1] միջակայքում, ապա հարկերից խուսափումների կորը կունենա ուղիղ գծի տեսք, ինչպես պատկերված է գծապատկեր 1-ում: Ինչպես երևում է գծապատկերից, սահմանային գծի տեղաշարժերը կարող են հանգեցնել երկակի հավասարակշռության, որոնցից մեկը բնութագրվում է բարձր θ*-ով և ցածր x-ով, այսինքն՝ մի իրավիճակով, երբ հարկատուների մեծամասնությանը ձեռնտու է կատարել իրենց հարկային պարտավորությունները և բնակչության մեծ մասը կողմ է բարեփոխումներին, իսկ մյուսը՝ ցածր θ*-ով և բարձր x-ով: Սակայն գծապատկերից երևում է, որ այս երկու հավասարակշիռ վիճակներից միայն մեկն է կայուն, քանի որ ծախ հավասարակշռության կետից մի փոքր շեղվելու դեպքում հարկերից խուսափելու արդյունքում ստացվող եկամուտը գերազանցում է հարկերի վճարման պարագայում սպասվող եկամուտը, ուստի հարկատուն կնախընտրի խուսափել հարկերից և հավասարակշռության կետը կտեղաշարժվի դեպի աջ՝ հեռանալով (x_1, θ_1) հավասարակշռությունից: Իսկ հավասարակշռության մյուս կետից (x_2, θ_2) մի փոքր աջ տեղաշարժվելիս հարկերի վճարումից սպասվող եկամուտը կգերազանցի հարկեր չվճարելու դեպքում ստացվող եկամուտը և, հետևաբար, հարկատուները կնախընտրեն վճարել հարկերը, այսինքն՝ բարեփոխումներին կողմ տնտեսավարող սուբյեկտների թիվը կաճի և հավասարակշռության կետը կտեղաշարժվի ծախ՝ դեպի իր նախնական դիրքը:

Գծապատկեր 1



Մոդելից որոշակի եզրահանգումներ անելու համար դիտարկենք ստացված երկու կորերի տեղաշարժի պատճառները և դրա հետևանքները:

Սահմանային կորի տեղաշարժը դեպի վեր, որը կարող է տեղի ունենալ, օրինակ՝ λ, β, g պարամետրերի աճի կամ t-ի կրճատման պայմաններում, սկզբնական շրջանում կմեծացնի θ*-ը: Սակայն հարկերից խուսափողների՝ հարկերը վճարելու դեպքում ենթադրվում է նաև բարեփոխումներին դեմ տնտեսավարող սուբյեկտների քանակի նվազում, որն էլ իր հերթին լրացուցիչ խթանում է էլ ավելի բարձր θ*-ի ձևավորումը: Այսինքն՝ x-ի և θ*-ի բացասական կապը հանգեցնում է այդ պարամետրերի նախնական փոփոխությունների բազմարկչային էֆեկտի:

λ, β, g և t պարամետրերի էությունը և չափի որոշումը

Հարկերի հավաքագրման արդյունավետություն (λ). Ներկայացվող մոդելում λ-ի մեծությունը որոշելու համար որպես հարկային վարչարարությունը բնութագրող ցուցանիշ է օգտագործվել փաստացի հավաքագրված հարկերի և պոտենցիալ հարկերի հարաբերությունը, որը 2003 թվականի համար 0.65 է:

Պետական ծախսերի կառավարման արդյունավետություն (β). Հարկ վճարող տնտեսավարող սուբյեկտները ակնկալում են, որ պետության կողմից այդ միջոցները օգտագործվելով, կծառայեն նաև իրենց անձնական շահերին, այսինքն՝ վճարելով հարկերը՝ նրանք ցանկանում են, որ պետությունը բարձրացնի առողջապահության, կրթական համակարգի և սոցիալական ոլորտի, այլ ծառայությունների որակը, պետական համակարգի աշխատավարձերը, թոշակները, նպաստները, վերանորոգվեն ճանապարհները և այն: Հետևաբար պետության ծախսերի կառավարման արդյունավետությունը շատ կարևոր գործոն է հարկերը վճարելու վերաբերյալ որոշում ընդունելու համար: Որպես պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը բնութագրող ցուցանիշներ են օգտագործվել պետական և մասնավոր հատվածներում միջին աշխատավարձերի հարաբերությունը և սոցիալական ծախսերի կշիռը համախմբված բյուջեի ծախսերում: Այս ցուցանիշների հիման վրա հաշվարկված պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը (β) 2003 թվականի համար 0.4 է:

Հարկային բեռ. Ինչպես արդեն նշվել է, թե՛ տեսությունը, թե՛ էմպիրիկ վերլուծությունները պատասխան չեն տալիս այն հարցին, թե տնտեսության վրա հարկային դրույքաչափերը ինչպես են ազդում, այսինքն՝ ազդեցությունը կախված է ոչ միայն դրույքաչափի մեծությունից, այլև տնտեսության զարգացման աստիճանից և առանձնահատկություններից: Մոդելում հարկային բեռը (t-ն) հաշվարկված է 0.42, այսինքն՝ տնտեսավարող սուբյեկտի կողմից վճարվող բոլոր հարկերի գումարը կազմում է նրա ավելացված արժեքի 42%-ը: Ինչպես ցույց է տալիս մոդելը, դրույքաչափի իջեցման արդյունքում ավելանում է հարկեր վճարողների թիվը և, հետևաբար, հասարակության մեջ բարեփոխումների կողմնակիցների թիվը: Այսինքն՝ ավելի ցածր դրույքաչափերը խթաններ կստեղծեն աշխատանքի, խնայողությունների, ներդրումների համար, որը կնպաստի արտադրության ընդլայնմանը և եկամտի աճին:

Հարկատուի ակտիվների եկամտաբերության համեմատական առավելություն (g). Հարկատուի ակտիվները կարող են ունենալ համեմատական առավելություն՝ ինտենսիվ ներդրումներ իրականացնելու արդյունքում: Ենթադրում ենք, որ տնտեսության պետական հատվածում գործող տնտեսավարող սուբյեկտների ներդրումներից ստացվող եկամուտը ավելի բարձր է, քան ստվերային հատվածում գործողներինը, քանի որ ներդրում իրականացնելու համար բանկային համակարգից միջոցներ ստանալը ավելի մատչելի է գրանցված, հետևաբար, հարկային մարմինների կողմից վերահսկվող տնտեսավարող սուբյեկտների համար: Ինչքան ավելի բարձր լինի ներդրումներից սպասվող եկամուտը, այնքան ավելի շատ տնտեսավարող սուբյեկտներ կնախընտրեն դուրս գալ տնտեսության ստվերային հատվածից, որպեսզի հնարավորություն ունենան ավելի շահավետ ներդրումներ իրականացնել: Ինչպես կտեսնենք հետագայում, θ*-ը ավելի զգայուն է g-ի, քան λ և β-ի նկատմամբ, քանի որ λ և β-ի բարձրացումից տնտեսավարող սուբյեկտները ստանում են անուղղակի եկամուտ, որը ավելի դժվար է գնահատել, քան g-ի բարձրացումից ստացվող եկամտաբերության աճը, հետևաբար g-ի բարձրացմանն ուղղված քաղաքականությունը կարող է շատ արդյունավետ լինել ստվերային տնտեսության դեմ պայքարում: Ներդրումը իրականացվում է, եթե շահութաբերության նորման գերազանցում է տոկոսադրույքը, և քանի որ մոդելում օգտագործվող g-ն ներդրումից սպասվող զուտ եկամուտն է, ապա նպատակահարմար է որպես այն գնահատող ցուցանիշ դիտարկել շահութաբերության սպասվող նորմայի և իրական տոկոսադրույքների տարբերությունը: Հաշվարկներ կատարելիս g-ն գնահատել ենք 0.2:

λ, β, g և t պարամետրերի ազդեցությունը θ*-ի վրա ներկայացված է հավելվածի գծապատկեր 1-ում: Ինչպես երևում է գծապատկերից, այս պարամետրերի որոշ արժեքների համար ստանում ենք θ*-ի երկու արժեք, որը բացատրվում է երկակի հավասարակշռության առկայությամբ: Սակայն ինչպես նշվել է, հավասարակշռության երկու կետերից միայն մեկն է կայուն, այդ իսկ պատճառով θ*-ի վրա λ, β և g պարամետրերի ազդեցությունը տեսնելու համար համապատասխան գծապատկերներում դիտարկում ենք կորերի միայն դրական կապը պատկերող հատվածը, իսկ t պարամետրի համար՝ միայն բացասական հատվածը (տե՛ս հավելված, գծապատկեր 3):

Համեմատենք θ*-ի վրա նշված գործոնների ազդեցության չափը: Դիտարկելով λ-ի և g-ի համեմատական ազդեցությունը, ստանում ենք՝

$$(d\theta/dg)/(d\theta/d\lambda) = (1/t-1)/\theta^{n+1}$$

Ինչպես երևում է բանաձևից, (dθ/dg)/(dθ/dλ) >1, t-ի (0-0.5) ընկած միջակայքում, այսինքն՝ t-ի նշված միջակայքում g պարամետրի փոփոխության ազդեցությունը θ*-ի վրա ավելի մեծ է, քան λ-ի փոփոխության ազդեցությունը: t-ի մեծ արժեքների դեպքում (dθ/dg)/(dθ/dλ) <1: Քանի որ մոդելում t = 0.42, g պարամետրի բարձրացմանն ուղղված քաղաքականությունը ավելի արդյունավետ ազդեցություն կունենա θ*-ի վրա, քան հարկային վարչարարության բարելավումը: Նմանատիպ համեմատություն կատարելով g-ի և β-ի միջև, ստանում ենք՝

$$(d\theta/dg)/(d\theta/d\beta) = (2(1-t))/(t(1+\theta^2)*\theta^n)$$

Ինչպես λ-ի դեպքում՝ (dθ/dg)/(dθ/dβ) >1, երբ t - ի արժեքները մեզ հետաքրքրող միջակայքում են, այսինքն՝ (0 - 0.5)-ում, θ*-ը ավելի զգայուն է g-ի փոփոխության նկատմամբ, քան β-ի: Համեմատելով λ և β պարամետրերի ազդեցությունը θ*-ի վրա՝ ստանում ենք.

$$(d\theta/d\beta)/(d\theta/d\lambda) = (1+\theta^2)/2\theta$$

Քանի որ (dθ/dβ)/(dθ/dλ) >1 (բացառությամբ θ =1 կետի, որտեղ dθ/dβ = dθ/dλ, որը անտեսում ենք՝ իրատեսական չլինելու պատճառով), ապա կարող ենք եզրակացնել, որ տնտեսության ստվերային հատվածի կրճատման համար ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացումը ավելի արդյունավետ միջոց է, քան հարկային վարչարարության խստացումը: Համեմատությունների արդյունքում ստանում ենք, որ շատ կարևոր է կառավարության կողմից g-ի բարձրացմանն ուղղված քաղաքականությունը, քանի որ g-ի ազդեցությունը θ*-ի վրա, ըստ մոդելի, λ, β և g պարամետրերից ամենամեծն է: Ինչ վերաբերում է t-ին, ապա թեև ստացված արդյունքը բավականին բարդ է մեկնաբանել ((dθ/dg)/(dθ/dt) = $(\lambda\theta^{n+1}-\theta+\theta^n\beta/2(1+\theta^2)-g)/(1+t)$), սակայն տեղադրելով մեր տնտեսությանը բնորոշ արժեքները, ստանում ենք, որ հարկային բեռի միավոր աճի բացասական ազդեցությունը θ*-ի վրա ավելի մեծ է, քան g-ի միավոր աճի դրական ազդեցությունը, այսինքն՝ θ*-ը շատ զգայուն է t-ի նկատմամբ:

Այսպիսով, հարկային բեռի կրճատումից ստվերային տնտեսության զգալի կրճատում ակնկալելու համար հարկային բարեփոխումները պետք է զուգորդվեն ստվերային տնտեսության վրա այլ գործոնների ազդեցության համանման փոփոխություններով: Ըստ մեր մոդելի արդյունքների, բնակչության հարկերից խուսափելու հնարավորությունները նվազեցնելու համար կառավարությունը առավել ուշադրություն պետք է դարձնի g-ի և t-ի վրա՝ չանտեսելով λ և β պարամետրերի ազդեցությունը:

Իսկ ինչպե՞ս կանդրադառնա θ*-ի փոփոխությունը ստվերային տնտեսության մակարդակի վրա: Ըստ մոդելի՝ $\int T\theta^* d\theta = kT$, որտեղ՝ T = ft, իսկ k-ն հարկերի չհավաքագրված մասը բնութագրող գործակիցն է, որն ընկած է (0, 1) միջակայքում: Ըստ մեր գնահատումների՝ 2003 թվականին Հայաստանում այս գործակիցը կազմել է 0.4, այսինքն՝ հավաքագրվել է հնարավոր հարկային եկամուտների 60%-ը: Ենթադրում ենք, որ k-ն ցույց է տալիս ստվերային տնտեսության մոտավոր չափը: Վերը բերված բանաձևի մեջ տեղադրելով k = 0.4 արժեքը, ստանում ենք, որ θ*-ը 0.45 է, այսինքն՝ հարկվում են 0.45 խուսափելու հնարավորություններ ունեցող հարկատուները, և տնտեսավարող սուբյեկտների 55%-ը չի հավատում և դեմ է բարեփոխումներին:

Մոդելում հաշվարկները կատարվել են θ-ի հավասարաչափ բաշխման համար՝ արդյունքները ավելի պարզ տեսքով ներկայացնելու նպատակով: Սակայն ավելի իրատեսական կլինի ենթադրել, որ θ-ն ունի նորմալ բաշխում, որի դեպքում հարկերից խուսափելու հնարավորությունների կորը կունենա S-ի տեսք (տե՛ս գծապատկեր 3): Կարելի է ցույց տալ, որ եթե ստացված երկու կորերը հատվում են գոնե մեկ կետում, ապա գոյություն կունենան առնվազն ևս երկու այլ հատման կետեր, այսինքն՝ կունենանք բազմակի հավասարակշռության դեպք: Ինչպես երևում է գծապատկերից, այս երեք կետերից երկուսը կայուն հավա-

սարակշռության կետեր են, որոնցից մեկը բնութագրում է լավ, իսկ մյուսը՝ վատ հավասարակշիռ վիճակները:

Ըստ գծապատկեր 3-ի՝ θ-ի նորմալ բաշխման դեպքում ևս սահմանային կորի դեպի վեր տեղաշարժը, λ, β, g պարամետրերի աճի կամ t պարամետրի կրճատման պայմաններում, հանգեցնում է θ^* և θ^{***}-ի աճին և x^* և x^{***}–ի կրճատմանը: Նմանատիպ արդյունքի կարելի է հասնել նաև հարկերից խուսափումների կորի միջոցով, որը տեղաշարժող գործոն է, ասենք, քաղաքացիական կամքը: Այսինքն՝ անկախ իրենց անձնական շահերից, միշտ բարեփոխման կողմնակից մարդկանց թվի աճը հարկերից խուսափումների կորը կտեղաշարժի ձախ (տե՛ս հավելված, գծապատկերներ 4 և 5):

Ներկայացվող մոդելը ցույց է տալիս, որ ապագա բարեփոխումների վերաբերյալ հարկատուների թերահավատությունը կարող է հանգեցնել բազմակի հավասարակշռության, և կառավարության կողմից ճիշտ քաղաքականություն չընտրելու դեպքում տնտեսությունը կարող է հայտնվել թերզարգացման թակարդում:

Առաջարկություններ

Ըստ մոդելի՝ ստվերային տնտեսության վրա ազդող հիմնական գործոններն են՝ հարկային վարչարարությունը, պետական ծախսերի կառավարման արդյունավետությունը, հարկային բեռը և պաշտոնական հատվածում գործող հարկ վճարողի համեմատական առավելությունը՝ ստվերային հատվածում աշխատողի նկատմամբ: Հետևաբար, ստվերային տնտեսության կրճատման միջոցառումները մշակելիս և իրականացնելիս Կառավարությունը պետք է հաշվի առնի այս գործոնների դերը և դրանց ազդեցության չափը ստվերային հատվածի վրա: Ուսումնասիրելով նշված գործոնների ազդեցությունը՝ առաջարկում ենք.

- Հարկային քաղաքականության բնագավառում բոլոր փոքր և միջին ձեռնարկությունների՝ օրենքով սահմանված հարկային պարտավորությունների անխտիր կատարման ապահովում: Իհարկե ամենացանկալի տարբերակը կլիներ այն, որ այս անխտիր հարկումը վերաբերեր նաև խոշոր հարկատուներին, սակայն այսօրվա քաղաքական և տնտեսական միջավայրում դա գրեթե անհնար է: Հատկապես միջին և փոքր ձեռնարկությունների նկատմամբ հարկային վարչարարության խստացումը պետք է զուգորդվի հարկային բեռի իջեցմամբ: Այդ նպատակով անհրաժեշտ է տնտեսության առանձին ճյուղերի եկամտաբերության և հարկային օպտիմալ հնարավոր մակարդակի գնահատում, որը պետք է հաշվի առնվի հարկային բեռի վերաբերյալ օրենսդրական փոփոխություններն իրականացնելիս: Ընդ որում, այդ փոփոխությունները իրականացնելիս պետք է գնահատվեն նաև տնտեսության վրա դրանց ազդեցությունները: Այս վերլուծությունները, հարկային մարմինների ուսումնասիրություններին զուգահեռ, պետք է կատարվեն և հրապարակվեն նաև անկախ գիտահետազոտական կառույցների կողմից: Այսպես, հարկային բեռի օպտիմալ չափը գնահատելու համար դիտարկենք, օրինակ, համակարգչային ծառայությունների սրահ տնօրինող տնտեսավարող սուբյեկտի մասնավոր դեպքը: Ենթադրենք՝ սրահում առկա են 7 համակարգիչներ, որոնցից յուրաքանչյուրի համար նա պետք է հարկ վճարի, սակայն հաշվարկելով, որ այդ հարկերի վճարման դեպքում կաշխատի կորուստով, վճարում է միայն 4 համակարգչի համար հաշվարկված հարկը, իսկ մնացած 3-ի դիմաց հարկ չվճարելու համար հարկային մարմիններին որոշակի գումար է վճարում (օրինակ՝ մեկ համակարգչի հարկի չափով): Այս պայմաններում ճիշտ կլինի գնահատել հարկային բեռի այն մակարդակը, որի դեպքում տնտեսավարող սուբյեկտը կվճարի հարկի ամբողջ գումարը և դրանից հետո միջոցներ կունենա իր գործունեությունը շարունակելու համար: Արդյունքում՝ հարկատուին ձեռնտու կլինի ամբողջությամբ կատարել իր հարկային պարտավորությունները և համաձայնության չգալ հարկային աշխատողների հետ: Հնարավոր է՝ սկզբնական շրջանում պետական բյուջեի հարկային եկամուտները չավելանան և նույնիսկ մի փոքր նվազեն, սակայն հարկային վարչարարության բարելավման նման տարբերակ կիրառելիս, ըստ մոդելի, ավելի մեծ թվով հարկատուներ կսկսեն վճարել հարկեր, որի արդյունքում բարեփոխումներ պահանջող տնտեսավարող սուբյեկտների թիվը կավելանա: Սա կմեծացնի բարեփոխումների հավանականությունը, որը իր հերթին ավելի կբարձրացնի θ^*-ի մակարդակը: Այսինքն՝ հասարակության մեջ ստեղծվում է մի խավ, որը վճարված հարկերի դիմաց Կառավարությունից պահանջում է բարեփոխումներ, և դա ժամանակի ընթացքում պետք է հանգեցնի հարկերից խուսափելու ավելի մեծ հնարավորություններ ունեցող հարկատուների հարկմանը:
- Պետական ծախսերի արդյունավետության բարձրացումը պետք է ուղղված լինի հարկատուների անուղղակի եկամտի ավելացմանը, այսինքն՝ հարկատուները, հարկեր վճարելով, ակնկալում են պետական ծախսերի որակական բարելավում: Այսօր հարկատուները հարկեր են վճարում, սակայն նրանց ոչ միայն չի բավարարում պետական ծառայությունների որակը, այլ նաև ստիպված են լրացուցիչ գումարներ վճարել՝ այդ ծառայություններից օգտվելու համար: Օրինակ, վճարելով

2002 թվականին հաստատված ՀՀ կառավարության միջին ժամկետ ծախսային ծրագրում նախատեսվում են պետական ծախսերի կառավարման արդյունավետության բարձրացման բազմաթիվ միջոցառումներ և, կարծում ենք, դրանց ճիշտ իրականացումը կնպաստի β-ի աճին: Օրինակ, կրթության բնագավառում նախատեսվում է ուսուցիչների թվաքանակի կրճատում, որը հիմնավորված է. ա) դպրոցներում ուսուցիչների ուսումնական ծանրաբեռնվածության ցածր մակարդակով (շաբաթական 18 ժամ), բ) դասարանների ցածր խտությամբ (21 աշակերտ): Արդյունքում՝ հնարավոր կլինի բարձրացնել ուսուցիչների աշխատավարձը: Այս միջոցառումը կարող է նպաստել արդյունավետության բարձրացմանը, եթե նախատեսված կրճատումը իրականացվի ոչ թե սուբյեկտիվ գործոնների, այլ օբյեկտիվ սահմանված չափանիշների հիման վրա և զուգորդվի մի շարք այլ միջոցառումներով: Հակառակ դեպքում, արդյունավետության բարձրացման փոխարեն կարող ենք ստանալ լրիվ հակառակ պատկերը: Այսինքն՝ կարևոր է ոչ միայն միջոցառումների ճիշտ ընտրությունը, այլ նաև դրանց ճիշտ իրականացումը:

Ինչպես արդեն նշվել է, բնակչության՝ հարկերից խուսափելու հնարավորությունը նվազեցնելու համար Կառավարությունը առավել ուշադրություն պետք է դարձնի g-ին ուղղված միջոցառումներին: Ըստ մոդելի՝ g-ի բարձր մակարդակը անհրաժեշտ պայման է տնտեսության ստվերային հատվածից հարկման դաշտ տեղափոխվելու համար: Այն ներառում է այն բոլոր խթանների համակարգը, որը պետք է ստեղծվի Կառավարության կողմից և նպաստի տնտեսավարող սուբյեկտների՝ հարկային դաշտում գործունեությանը: Ընդ որում, այդ խթանները պետք է ուղղված լինեն փոքր և միջին բիզնեսին, որոնց ընդլայնումը կնպաստի ներկայիս օլիգարխների նկատմամբ նրանց մրցունակության բարձրացմանը և միաժամանակ կօժանդակի հարկային վարչարարության խստացմանը: Ստվերային հատվածում աշխատողի նկատմամբ պաշտոնական հատվածում գործող հարկ վճարողի համեմատական առավելությունը մեծացնելու անհրաժեշտ միջոցառումներից են՝

- Կոռուպցիայի և բյուրոկրատիայի կրճատումը, օրենսդրական դաշտի հստակեցումը, հեղինակային իրավունքների պաշտպանությունը և այլն: Ըստ էության, տնտեսավարող սուբյեկտը պետական մարմիններից պետք է ստանա օժանդակություն, այլ ոչ թե հակառակը, որն առավել բնորոշ է մեր իրականությանը: Մասնավորապես՝ տարբեր նախարարություններ իրենց գործունեությամբ պետք է խթանեն ձեռնարկությունների գործունեությունը, օժանդակեն հումք և իրացման արտաքին շուկաներ ձեռք բերելու հարցերում, օգնեն խորհրդատվությամբ երկարաժամկետ ծրագրեր կազմելիս և այլն: Հակառակ պարագայում, այդ նախարարությունները ուղղակի բեռ են և լրացուցիչ ծախս հարկատուների համար, և իրենց ոչ արդյունավետ գործունեությամբ դասվում են այն գործոնների շարքը, որոնք նպաստում են տնտեսավարող սուբյեկտների՝ հարկերից խուսափելուն:
- Կարևոր նշանակություն կունենա նաև հարկային մարմինների կողմից հարկային ռեգիստրի ստեղծումը, որը կներառի բարեխիղճ հարկատուների մոնիտորինգը և կիրապարակվի պարբերաբար՝ լայն հասարակության համար: Այս պայմաններում անհրաժեշտ է, որ ՀՀ կառավարության կողմից վերը նշված օժանդակություններն իրականացվեն բարեխիղճ հարկատուների համար՝ օգտագործելով հարկային ռեգիստրի տվյալները: Իհարկե խնդիր է առաջանում՝ ինչպես սահմանել բարեխիղճ հարկատուի կարգավիճակը: Այստեղ, բացի փաստացի վճարված հարկերից, պետք է նաև անուղղակի հաշվի առնել ձեռնարկության այլ ցուցանիշներ՝ որոշելու համար այդ ձեռնարկության գործունեության առավել իրատեսական չափերը: Օրինակ, կապիտալի նկատմամբ շրջանառության ծավալների և անկանխիկ շրջանառությամբ իրականացված գործունեության տեսակարար կշիռները:

ՀՀ ԿԲ կողմից ձեռնարկությունների վարկանշման համակարգի ներդրումը և վարկային ռեգիստրի տվյալները կարելի է նույնպես զուգորդել վերը նշված միջոցառումներին:

- Քանի որ պաշտոնական հատվածում գործող հարկ վճարողի համեմատական առավելությունը ստվերային հատվածում աշխատողի նկատմամբ ավելի շատ արտահայտվում է արդյունավետ ներդրումներ իրականացնելու միջոցով, ապա կարևորվում է նաև բարեխիղճ հարկատուի համար ֆինանսական միջոցների հասանելիության խթանումը: Մասնավորապես՝ Կենտրոնական բանկը կարող է խթանել առևտրային բանկերին, որպեսզի նրանք վարկավորվող տնտեսավարող սուբյեկտներ ընտրեն պաշտոնական հատվածում գրանցված և պարտաճանաչ հարկ վճարողներից: Դա, օրինակ, կարելի է իրականացնել առևտրային բանկերին սուբյեկտիվ գնահատական տալիս, այսինքն՝ ավելի բարձր գնահատելով այն բանկերին, որոնց կողմից վարկավորվող ձեռնարկու-

Եզրակացություն

Ըստ ներկայացված մոդելի՝ ինչքան շատ են բարեփոխումներին կողմ տնտեսավարող սուբյեկտները, այնքան ավելի մեծ թվով տնտեսավարող սուբյեկտներ կգտնվեն հարկային դաշտում, որոնք կունենան հարկային եկամուտներից խուսափելու ավելի մեծ հնարավորություն: Ընդ որում, այս եզրահանգումը արված է՝ ելնելով տնտեսավարող սուբյեկտների համար կառուցված անտարբերության կորից, որի յուրաքանչյուր կետում նրա եկամուտները՝ հարկեր վճարելուց և դրանցից խուսափելու դեպքում, հաշվի առնելով նաև բարեփոխումների իրականացման նրա հավանական գնահատականները, հավասար են: Վերը նշված երկու ցուցանիշների միջև գնահատված կապը թույլ է տալիս եզրակացնել, որ ցանկացած բարեփոխման նախնական ազդեցությունը ստվերային տնտեսության վրա հետագայում բազմապատկվում է, և հավասարակշռությունը (անտարբերության կորի և տնտեսավարող սուբյեկտների՝ ըստ հարկային եկամուտներից խուսափելու հավանական բաշխման կորերի հատման կետերը) ձևավորվում է առավել բարենպաստ պայմաններում:

Որպես բարեփոխումներ նյութում դիտարկվում են՝ հարկային վարչարարությունը, պետական ծախսերի արդյունավետությունը, որից տնտեսավարող սուբյեկտը անուղղակի եկամուտ է ստանում, և բարեխիղճ հարկատուի ակտիվների եկամտաբերության համեմատական առավելության ապահովումը հարկերից խուսափող հարկատուի նկատմամբ: Մոդելից արվել է այն եզրահանգումը, որ վերջին գործոնի ազդեցությունը առավել մեծ է մնացած երկուսի համեմատ: Ընդ որում, առաջարկությունների մասում, միջոցառումները որոշ չափով փոխկապակցվում են, որը նաև նշանակում է, որ բարեփոխումները՝ վերը նշված երեք ուղղություններով, պետք է իրականացվեն զուգահեռաբար փոխլրացնելով միմյանց:

Ինչ վերաբերում է հարկային դրույքաչափերի ազդեցությանը, ապա Հայաստանում ստվերային տնտեսության վրա հարկային համակարգի ազդեցության գնահատականը տալու համար նախ անհրաժեշտ է, որ համակարգը նորմալ աշխատի: Այսինքն՝ որպեսզի պարզ լինի ներկայումս գործող հարկային օրենսդրության լավ կամ վատ լինելը, պետք է այն կիրառվի այնպես, ինչպես սահմանված է: Ակնհայտ է, որ այսօր հարկային օրենքների դրույթները լիարժեք չեն գործում. հաճախ շրջանցվում են և՛ հարկատուների, և՛ հարկային մարմինների կողմից: Ուստի, այս պայմաններում ՀՀ հարկային օրենսդրության ազդեցության գնահատումը չափազանց դժվար է: Ամեն դեպքում, հարկային համակարգի բացասական ազդեցությունը ստվերային տնտեսության վրա ներկայումս հիմնականում պայմանավորված է ոչ թե վատ հարկային օրենքներով, այլ հարկատուների և հարկային մարմինների աշխատողների մենթալիտետով, վերջիններիս կողմից Կառավարության նկատմամբ ունեցած վերաբերմունքով:

Զարգացած երկրների հարկային եկամուտների կառուցվածքը

(վերջին 5 տարիների միջին, %՝ հարկային եկամուտներում)


Երկիր	Ուղղակի հարկեր՝			Ապրանքներից և ծառայություններից ներքին հարկեր			Դաոնկացումներ աշխատավարձի ֆոնդից	Միջազգային առևտրից հարկեր	Այլ հարկեր
	Ընդամենը	որից՝		Ընդամենը					
		Եկամտահարկ	Շահութահարկ		ԱԱՀ	Ակցիզահարկ			
Ավստրիա	30.5			28.5			38.9	0	2.1
Բելգիա	37.6	30.7	6.3	26.8	16.2	5.3	32.9	0	2.8
Դանիա	59.8	52.3	4.5	32.3	19.6	7.7	3.7	0	4
Ֆինլանդիա	49.8	19.9	4.2	36	21.5	12.1	10.8	0.2	3.2
Ֆրանսիա	18.7	14.8	4	28.1	18.2	6.4	42.8	0	10.4
Գերմանիա	29	25.4	1.3	27.6	9.6	7.9	40.2	0	3.2
Հունաստան	33.1	17	9.9	57.1	33.7	21	2.1	0.1	7.6
Իռլանդիա	42.6	33	9.6	37.7	19.5	15.5	16.3	0	3.4
Իտալիա	33.4	26.6	6.3	23.8	13.3	6.2	31.3	0	11.5
Լյուքսեմբուրգ	38.6	26	11.7	25.9	14	10.8	25.9	0	9.6
Նիդեռլանդներ	27.6	19.4	8.2	23.4	15.2	6.3	41.4	0	7.6
Պորտուգալիա	28.3	17.7	8.9	40.1	22.3	14.1	26.1	0	5.5
Իսպանիա	30.5	24.1	5.8	27.2	12.8	8.1	36.1	0	6.2
Շվեդիա	41.2	3.9	5.7	22.7	14.1	7.5	32.2	0.3	3.6
Անգլիա	39.2	28	11.2	32.7	19.3	11.4	17.7	0	10.4
Ավստրալիա	55.1	40.6	13.9	26.4	8.4	8.8	2	2.2	14.3
Կանադա	48.1	37.2	6.4	23.6	7	2.4	14.1	0.7	13.5
Իսլանդիա	36.5	33.4	2.8	44.6	28.9	9.7	8	1.1	9.8
Ճապոնիա	45.9	28.9	17	16.4	7.7	7.2	30.2	1.2	6.3
Նոր Զելանդիա	62.2	45.5	11.6	28.2	19.4	5.7	1	2.3	6.3
Նորվեգիա	37	26.7	8.7	37.6	21.4	13.2	22	0.6	2.8
Շվեյցարիա	36.8	30.8	2.5	18	10.3	5.3	36.7	0.7	7.8
ԱՄՆ	48.3	39.1	7.7	16		2.1	23.9	0.8	11

Արևելյան Եվրոպայի և ԱՊՀ երկրների հարկային եկամուտների կառուցվածքը


(1999-2000 թթ. միջին, %՝ հարկային եկամուտներում)

	Ուղղակի հարկեր՝			Ապրանքներից և ծառայություններից ներքին հարկեր			Դաստկացումներ սոցապահովության ֆոնդից	Միջազգային առևտրից հարկեր	Այլ հարկ
		որից							
	Ընդամենը	Եկամտահարկ	Շահութահարկ	Ընդամենը	ԱԱՀ	Ակցիզհարկ			
Արևելյան Եվրոպա									
Ալբանիա	13.1	4.2	8.9	44.8	36.2	8.6	20.3	13.4	8.4
Բուլղարիա	24.8	14.8	10	44.1	29.3	11.8	25.7	3.3	5.1
Խորվաթիա	10.9	7.4	3.5	46.9	35.5	11.4	34.1	6.9	1.3
Չեխիա	24.1	13.8	10.1	30.6	20.3	10.3	40.1	1.9	3.4
Էստոնիա	27.3	22.9	4.4	34.8	25.2	9.6	33.8	0	4.1
Հունգարիա	25.6	19.4	6.2	40.3	23.7	11.1	27.7	3.2	3.2
Լատվիա	25	18.7	6.3	36.2	24.5	11.7	34.3	1.1	3.4
Լիտվա	30.3	27.7	2.6	40.8	26.7	12.1	23.6	1.4	3.9
Մակեդոնիա	18.4	14.7	3.7	35.6	18.8	15.9	33.3	11.3	1.4
Լեհաստան	24.5	16.9	7.7	36.3	24.4	12	30.4	2.8	6
Ռումինիա	25.6	11.2	9.7	34.3	20.5	9.2	35.8	4.3	0
Սլովակիա	23.7	15.2	8.5	31.5	22.2	9.3	37.4	4.4	2.9
Սլովենիա	18.8	15.8	3	38.9	38.1	0.7	33.8	2.7	5.8
Միջին ցուցանիշ	*22.5*	*15.6*	*6.5*	*37.9*	*26.6*	*10.3*	*31.6*	*4.3*	*3.7*
ԱՊՀ									
Հայաստան	22.7	8.9	11.4	48.9	36.2	12.7	13	4.3	11.1
Ադրբեջան	31.4	15.3	16	32.8	28.9	3.8	16.7	13.2	5.9
Բելառուս	19.2	0	19.2	48.2			24.5	4.3	3.8
Վրաստան	21.4	13.2	8.2	45.9	33.1	12.8	16.7	5.3	10.7
Ղազախստան	36.6			38			20.8	3.9	0.8
Ղրղզստան	13.9	7.3	6.3	53.8	29.3	15.1	25.4	3	3.9
Մոլդովա	14.2	6.9	7.3	47.8	32.3	15.5	25.3	6.6	6
Ռուսաստան	25.9	9	16.9	29.5	21.4	8.1	26.9	8.4	9.2
Տաջիկստան	17.1	8.9	7.4	49.4	45.1	4.3	9.7	10.9	12.5
Թուրքմենստան	28	12.5	15.4	45.8	35.2	10.6	23.9		2.4
Ուկրաինա	28.6	11.4	16	33.8	21.6	4.6	30.4	2.9	4.2
Ուզբեկստան	28.3	13.8	14.3	54.7	26.5	28.3	0	2	15.1
Միջին ցուցանիշ ԱՊՀ համար	*23.9*	*9.8*	*12.6*	*44*	*31*	*11.6*	*19.4*	*5.9*	*6.7*

Գծապատկեր 1




Գծապատկեր 2




Գծապատկեր 3. λ, β, g և t պարամետրերի և θ*-ի կապը


t-ի ազդեցությունը θ*-ի վրա




g-ի ազդեցությունը θ*-ի վրա




β-ի ազդեցությունը θ*-ի վրա




λ-ի ազդեցությունը θ*-ի վրա



Գծապատկեր 4




θ
θ*
θ***
0
x*
x***
1
x
Սահմանային գիծ
Հարկերից խուսափելու
հնարավորությունների կոր

ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ՊԱՐՏՔԸ 2003 ԹՎԱԿԱՆԻՆ*,[1]

Լուսինե Հարությունյան, Կարինե Կարապետյան
Վիճակագրության վարչություն


Հայաստանի արտաքին պարտքը 2003 թվականի վերջի դրությամբ կազմել է 1431.3 մլն ԱՄՆ դոլար[2], որից 1097.7 մլն ԱՄՆ դոլարը պետական և պետական երաշխիքով պարտքն է[3], 14.3 մլն ԱՄՆ դոլարը՝ առևտրային բանկերի պարտքը[4], իսկ 319.3 մլն ԱՄՆ դոլարը՝ մասնավոր հատվածի պարտքը[5]:

ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքը[6] 2003 թվականին ավելացել է 72.2 մլն ԱՄՆ դոլարով և տարեվերջի դրությամբ կազմել 1097.7 մլն ԱՄՆ դոլար, որից 1090.3 մլն ԱՄՆ դոլարը արտաքին պետական, իսկ 7.3 մլն ԱՄՆ դոլարը՝ արտաքին պետական երաշխիքով վարկերն են:

ՀՀ առևտրային բանկերի արտաքին պարտքը նվազել է 3.7 մլն ԱՄՆ դոլարով և տարեվերջին կազմել 14.3 մլն ԱՄՆ դոլար: Առևտրային բանկերը արտաքին աշխարհից ներգրավել են 36.1 մլն ԱՄՆ դոլար վարկային միջոցներ, նախկինում ձեռք բերված վարկերի դիմաց կատարել են 36.3 մլն ԱՄՆ դոլար հիմնական գումարի մարումներ և 0.6 մլն ԱՄՆ դոլար տոկոսագումարի վճարում: Առևտրային բանկերի արտաքին պարտքի նվազումը զուտ արտահոսքի հաշվին կազմել է ընդամենը 0.2 մլն ԱՄՆ դոլար, իսկ մնացածը տեղի է ունեցել արտաքին պարտքի դուրսգրումների և փոխարժեքի փոփոխությունների հաշվին:

ՀՀ մասնավոր հատվածի արտաքին պարտքը[7] նախորդ տարվա համեմատ ավելացել է 24.8 մլն ԱՄՆ դոլարով և կազմել 319.3 մլն ԱՄՆ դոլար, որից 126.5 մլն ԱՄՆ դոլարը կազմել է երկարաժամկետ պարտքը, իսկ 192.7 մլն ԱՄՆ դոլարը՝ կարճաժամկետ: Ընդ որում, գործառնությունների հաշվին պարտքը 2003 թվականի ընթացքում ավելացել է 78.3 մլն ԱՄՆ դոլարով, իսկ փոխարժեքի և այլ ճշտումների հաշվին նվազել է 50 մլն ԱՄՆ դոլարով:

Հայաստանի արտաքին պարտքի դինամիկան 1999-2003 թվականներին՝ ըստ հատվածների



** Հեղինակների տեսակետները կարող են չհամընկնել ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական դիրքորոշմանը:*

[1] 2003 թվականի ցուցանիշները նախնական են և ենթակա են վերանայման:

[2] Արտաքին պարտքի վերաբերյալ տվյալների աղբյուրը՝ ՀՀ ԱՎԾ:

[3] ՀՀ պետական և պետական երաշխիքով արտաքին պարտքի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրում է ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը:

[4] Առևտրային բանկերի արտաքին պարտքի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրում է ՀՀ կենտրոնական բանկը:

[5] Մասնավոր հատվածի արտաքին պարտքի վերաբերյալ տեղեկատվությունը հավաքագրում է ՀՀ ԱՎԾ-ն:

[6] Այստեղ ներառված չէ ՀՀ դրամով արտաքին պետական պարտքը (ոչ ռեզիդենտներին վաճառված պետական պարտատոմսերը), որը 2003 թվականին կազմել է 3.9 մլն դոլար (կամ ՀՀ կառավարության ներքին պարտքի 4.8 %-ը)՝ նախորդ տարվա 3.3 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն (կամ ՀՀ կառավարության ներքին պարտքի 5 %-ը): ՀՀ դրամով արտաքին պարտքի մեջ կարճաժամկետ պարտքը կազմել է 3.15 մլն դոլար, իսկ երկարաժամկետը՝ 0.76 մլն դոլար: ՀՀ դրամով արտաքին պետական պարտքը դիտարկվում է որպես ներքին պարտք և ներառվում է ՀՀ ներքին պարտքի ցուցանիշում:

[7] Մասնավոր հատվածի արտաքին պարտքի 229.7 մլն դոլարը առևտրային վարկեր են: Ընդ որում, մինչև 1997 թվականը առևտրային վարկերի մարումները չեն արտացոլվել Հայաստանի միջազգային ներդրումային դիրքում, ինչի հետևանքով էլ միջազգային ներդրումային դիրքում արտացոլված առևտրային վարկերի կուտակային ցուցանիշը մեծ արժեք ունի:

2003 թվականի վերջի դրությամբ ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով 1097.7 մլն դոլար պարտքի 867.6 մլն դոլարը կազմել է ՀՀ կառավարության պարտքը, իսկ 230.1 մլն դոլարը՝ ՀՀ կենտրոնական բանկի պարտքը (որից Արժույթի միջազգային հիմնադրամի հանդեպ պարտավորությունները կազմել են 214.6 մլն դոլար):

Հայաստանի Հանրապետությունը, 1992 թվականի մայիսի 28-ին ստորագրելով ԱՄՀ-ի Համաձայնագրի հոդվածները, դարձավ Հիմնադրամի անդամ: Կառավարիչների խորհրդում Հայաստանը ներկայացնում են ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարը (Կառավարիչ) և ՀՀ կենտրոնական բանկի նախագահը (Կառավարչի տեղակալ): Տնօրենների խորհրդում Հայաստանը Բուլղարիայի, Կիպրոսի, Իսրայելի, Մոլդովայի, Ուկրաինայի, Նիդեռլանդների, Ռումինիայի, Վրաստանի, Մակեդոնիայի, Խորվաթիայի, Բոսնիայի և Հերցեգովինայի հետ միևնույն խմբում է, որի Կառավարիչը ներկայումս Նիդեռլանդների ներկայացուցիչն է:

Հայաստանի բաժնեմասը մինչև բաժնեմասերի 11-րդ ընդհանուր վերանայումը կազմել է 67.50 մլն ՀՓԻ, իսկ դրանից հետո (1998 թվականի հունվարի 30) ավելացվել է և այժմ կազմում է 92 մլն ՀՓԻ:

Հայաստանը ԱՄՀ-ի հետ կնքել է 4 վարկային համաձայնագիր, որոնցից միայն մեկն է ներկայումս գործում: 2003 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Հայաստանի պարտավորությունները ԱՄՀ նկատմամբ կազմել են 144.4 մլն ՀՓԻ: Ընդ որում, «Սթենդ-բայ» վարկային ծրագրով նախատեսված միջոցների հետգնումները ավարտված են: Իսկ ՀԲՖՄ (STF) ծրագրով նախատեսված ֆինանսական միջոցների հետգնումները (մարումները) ավարտվելու են 2005 թվականին:

Մեխանիզմների տեսակները	Համաձայնագրի կնքման ամսաթիվը	Գումարը ըստ համաձայնագրի	Պարտավորությունները 31.12.2003թ. դրությամբ
ՀԲՖՄ (STF)	15.12. 1994	33.8	7.0
«Սթենդ-բայ»	28.06.1995	43.9*	0.0
ԱՆՏԱ (PRGF) I**	14.02.1996	109.4	87.4
ԱՆՏԱ (PRGF) II	23.05.2001	69.0	50.0

** Տրամադրվել է ընդամենը 13.5 մլն ՀՓԻ:*

*** Կնքվել է որպես ESAF համաձայնագիր, իսկ 1999 թվականի նոյեմբերի 22-ին վերանվանվել է PRGF:*

2003 թվականին արտաքին պետական պարտքի ներհոսքը կազմել է 120.6 մլն դոլար, որի մոտ 95%-ը բազմակողմանի պաշտոնական աղբյուրներից ներգրավված միջոցներ են: Մասնավորապես, Համաշխարհային բանկից տարվա ընթացքում ներգրավվել են 85.7 մլն դոլարի, իսկ Արժույթի միջազգային հիմնադրամից (ԱՄՀ)՝ 28.3 մլն դոլարի ֆինանսական միջոցներ: Համաշխարհային բանկի կողմից գումարները տրամադրվել են հիմնականում Կառուցվածքային բարեփոխումների՝ 42.8 մլն դոլար, Տրանսպորտի՝ 8.8 մլն դոլար, Համայնքների զարգացման՝ 8.3 մլն դոլար, Գյուղատնտեսական ծառայությունների՝ 6.9 մլն դոլար, Սոցիալական ներդրումների II (4.2 մլն դոլար), Պատվարների անվտանգության (2.5 մլն դոլար) վարկային ծրագրերի իրականացման համար: ԱՄՀ տրամադրած 28.3 մլն դոլար վարկային միջոցները ԱՆՏԱ (Աղքատության նվազեցման և տնտեսական աճի ծրագիր՝ PRGF) վարկային ծրագրի շրջանակներում նախատեսված միջոցներն են:

2003 թվականին արտաքին պետական պարտքի հիմնական գումարի մարումները կազմել են 129 մլն դոլար, իսկ տոկոսավճարները՝ 11.8 մլն դոլար՝ նախորդ տարվա համապատասխանաբար 47.9 մլն դոլարի և 20.2 մլն դոլարի փոխարեն: Նախորդ տարվա համեմատ հիմնական գումարի մարման նման մեծ ծավալները պայմանավորված են Ռուսաստանի հետ կնքած «Գույք՝ պարտքի դիմաց» պայմանագրի շրջանակներում 62.8 մլն ԱՄՆ դոլար նախկինում կուտակած պարտքի դիմաց Ռուսաստանին Հայաստանի մի քանի պետական ձեռնարկությունների բաժնետոմսերի տրամադրմամբ: Ռուսաստանի հանդեպ պարտավորությունների նվազեցումն էլ հանգեցրել է 2003 թվականին արտաքին պարտքի տոկոսավճարների կրճատմանը, քանի որ վերաձևակերպված պարտքի հիմնական մասը 5 % տոկոսադրույքով էր, ինչը զգալիորեն բարձր է ՀՀ արտաքին պարտքի միջին տոկոսադրույքից (2003 թվականի վերջի դրությամբ միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 0.9 %):

Վերը նշված արտաքին պետական պարտքի 140.8 մլն դոլար սպասարկման ծավալներից 28.0 մլն դոլարը կամ արտաքին պետական պարտքի սպասարկման շուրջ 20 %-ը կազմել է ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտքի սպասարկումը, ինչը նախորդ տարի կազմել էր 19.8 մլն դոլար:

Նախորդ տարվա համեմատ ավելացել են նաև պետական երաշխիքով վարկերի սպասարկման վճարները, որոնք 2003 թվականին կազմել են 12.8 մլն ԱՄՆ դոլար՝ նախորդ տարվա 10.1 մլն դոլարի փոխարեն:

Նշված հոսքերի արդյունքում 2003 թվականին Հայաստանի արտաքին պետական պարտքի զուտ արտահոսքը (արտաքին պարտքի գծով ներգրավված ֆինանսական միջոցների և վճարված հիմնական գումարի տարբերություն) կազմել է 8.4 մլն դոլար, ինչը ենթադրում է համապատասխան չափով արտաքին պարտքի անվանական արժեքի նվազում: Սակայն պայմանավորված տարվա ընթացքում ՀՓԻ-ի և եվրոյի նկատմամբ դոլարի փոխարժեքի համապատասխանաբար 9.3% և 20.4% արժեզրկմամբ՝ միայն փոխարժեքի փոփոխության հաշվին արտաքին պարտքը աճել է 85.8 մլն դոլարով: Փոխարժեքի փոփոխության հաշվին Հայաստանի արտաքին պետական պարտքի նման մեծ աճը պայմանավորված է այն հանգամանքով, որ արտաքին պարտքի գերակշիռ մասը ներգրավված է մեկ արժույթով՝ ՀՓԻ-ով:

Աղյուսակ 1. ՀՀ արտաքին պարտքի կառուցվածքն ըստ արժույթների (%)

Արժույթ	2001	2002	2003
ՀՓԻ	68.6	73.5	83.4
ԱՄՆ դոլար	24.9	19.8	10.1
Եվրո	4.3	4.7	6.0
Այլ	2.2	1.9	0.5

2003 թվականի ընթացքում ԱՄՆ դոլար/ՀՓԻ փոխարժեքի արժեզրկման հետևանքով Համաշխարհային բանկից և ԱՄՀ-ից ՀՓԻ-ով ներգրավված պարտքը համապատասխանաբար աճել է 56.1 մլն դոլարով և 18.1 մլն դոլարով: ԱՄՆ դոլար/եվրո փոխարժեքի արժեզրկման հետևանքով Եվրոմիությունից, Գերմանիայից և Ֆրանսիայից եվրոյով ներգրավված պարտքն աճել է 10.7 մլն դոլարով:

2003 թվականի վերջի դրությամբ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքի կառուցվածքն ըստ ներգրավման աղբյուրների պահպանել է նախորդ տարիների հիմնական միտումները և ունի աղյուսակ 2-ում ներկայացված կառուցվածքը:

Աղյուսակ 2. ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքի կառուցվածքը


Աղբյուրը	2001		2002		2003	
	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)	մլն ԱՄՆ դոլար	տես. կշիռ (%)
Բազմակողմանի	**683.1**	**75.4**	**801.1**	**78.1**	**958.6**	**87.3**
Համաշխարհային բանկ	457.8	50.5	568.0	55.4	709.3	64.6
ԱՄՀ	172.5	19.1	194.8	19.0	214.6	19.5
Եվրոպական բանկ (առանց երաշխիքի)	32.5	3.6	28.8	2.8	23.3	2.1
Եվրոմիություն	20.3	2.2	9.4	0.9	11.4	1.0
Երկկողմանի	**194.6**	**21.5**	**205.0**	**20.0**	**131.7**	**12.0**
Ռուսաստան	99.3	11.0	93.8	9.1	31.0	2.8
ԱՄՆ	43.8	4.8	43.2	4.2	41.5	3.8
Գերմանիա	15.5	1.7	35.2	3.4	49.6	4.5
Թուրքմենիա	11.1	1.2	9.4	0.9	0.0	0.0
Ֆրանսիա	3.1	0.3	3.7	0.4	4.5	0.4
Ճապոնիա	1.0	0.1	1.5	0.1	1.7	0.2
Լիբիայի և Հանքսման հիմնադրամներ	20.9	2.3	18.1	1.8	3.5	0.3
Պետական երաշխիքով վարկեր	**27.9**	**3.1**	**19.4**	**1.9**	**7.3**	**0.7**
ԸՆԴԱՄԵՆԸ	**905.6**	**100**	**1025.5**	**100**	**1097.7**	**100**

Հարկ է նշել պետական երաշխիքով վարկերի ծավալների նվազման դրական միտումների մասին: Մասնավորապես, 2003 թվականի ընթացքում ոչ միայն պետական երաշխիքով նոր վարկեր չեն ներգրավվել, այլև իրականացվել են նախկինում ներգրավված վարկերի մարումներ, ինչի արդյունքում պետական

երաշխիքով վարկերի ծավալները նախորդ տարվա համեմատությամբ նվազել են 12.1 մլն դոլարով և կազմել 7.3 մլն դոլար:

2003 թվականին հիմնականում շարունակվել են նախորդ տարիներին կնքված վարկային ծրագրերի շրջանակներում իրականացվող աշխատանքները, որի պատճառով էլ արտաքին պետական պարտքի օգտագործման ուղղությունները նախորդ տարիների համեմատ գրեթե չեն փոփոխվել՝ տնտեսությունում կառուցվածքային բարեփոխումներ, էներգետիկայի, շինարարության, գյուղատնտեսության, տրանսպորտի և ծառայությունների բնագավառներ:

ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքը 2003 թ.՝ ըստ օգտագործման ուղղությունների*



** Այն վարկային ծրագրերը, որոնք մեկ որոշակի ոլորտից բացի, ֆինանսավորում են նաև այլ ուղղություններ, դասակարգվել են ըստ գգալի տեսակարար կշիռ ունեցող ուղղության:*

***Ներառում է Համաշխարհային բանկի՝ Ձեռնարկությունների զարգացման, Աշխարհ գույքի գրանցման, Եվրոպական Միության, Գերմանիայի՝ Վարկերի վերականգնման բանկի՝ փոքր և միջին ձեռնարկությունների զարգացման, ԱՄՆ-ի՝ ապրանքային կորպորացիայի և այլ վարկային ծրագրերը:*

ՀՀ կառավարության կողմից իրականացվող՝ արտոնյալ պայմաններով արտաքին պետական վարկերի ներգրավման և ոչ արտոնյալ պայմաններով պարտքերից հրաժարվելու ռազմավարության արդյունք է 1999-2003 թվականներին ընդհանուր պարտքի կառուցվածքում արտոնյալ վարկերի[8] տեսակարար կշռի և ժամկետայնության աճը, ինչպես նաև միջին տոկոսադրույքի նվազումը: Քանի որ, ըստ Համաշխարհային բանկի դասակարգման[9], Հայաստանը համարվում է ցածր եկամտով երկիր, ապա նրան առանձնակի հնարավորություն է տրվում օգտվելու միջազգային կազմակերպություններից արտոնյալ պայմաններով տրամադրվող վարկային միջոցներից: 2003 թվականին ՀՀ վարկային միջոցների ներհոսքի հիմնական մասը (մոտ 99.8%) կազմել են արտոնյալ պայմաններով վարկերը: Բացի այդ, նախորդ տարվա համեմատ, ընդհանուր պարտքի մեջ արտոնյալ պարտքի տեսակարար կշիռն աճել է, ինչպես արդեն նշվել է, Ռուսաստանի հանդեպ ոչ արտոնյալ արտաքին պարտքի դիմաց գույքի տրամադրման արդյունքում այդ պարտքի զրոյացմամբ պայմանավորված: Սակայն արտոնյալ պարտքի տեսակարար կշռի կտրուկ աճը չի արտացոլվել 2003 թվականի արտաքին պարտքի ներկա արժեքում (ՆԱ)[10], որը, նախորդ տարվա համեմատ (675 մլն դոլար), ունեցել է բավականին բարձր աճի տեմպ և կազմել է 735.3 մլն ԱՄՆ դոլար: Նման աճը պայմանավորված է 2003 թվականին միջազգային տոկոսադրույքների (CIRR տոկոսադրույք՝ օգտագործվում է արտաքին պարտքի ՆԱ հաշվարկման ժամանակ՝ որպես զեղչման տոկոսադրույք) զգալի նվազմամբ: Այսինքն, եթե արտաքին պարտքի ՆԱ հաշվարկման ժամանակ օգտագործենք 2002 թվականի զեղչման տոկոսադրույքները, ապա արտաքին պարտքի ՆԱ 2003 թվականին, նախորդ տարվա համեմատ, կաճի ընդամենը 10 մլն դոլարով և կկազմի 685 մլն դոլար:

[8] Արտաքին պարտքը համարվում է արտոնյալ, եթե տրամադրված է ցածր տոկոսադրույքով, երկարաժամկետ է և գրանտ-էլեմենտը մեծ է 25%-ից: (Գրանտ - էլեմենտը արտաքին պարտքի անվանական ծավալների և ներկա արժեքի տարբերության և արտաքին պարտքի անվանական ծավալների հարաբերությունն է /%/:)

[9] Համաշխարհային շուկայում, որպես միջին և ցածր եկամտով երկրներին վարկային միջոցներ տրամադրող խոշոր ֆինանսական կազմակերպություն, Համաշխարհային բանկը պարբերաբար իրականացնում է այդ երկրներում պարտքի ցուցանիշների վերլուծություններ և արտացոլում դրանք համապատասխան հրապարակումներում:

[10] Ներկա արժեքը արտաքին պարտքի գծով ապագայում իրականացվելիք սպասարկման վճարներն են՝ որոշակի տոկոսադրույքով զեղչված:

*Աղյուսակ 3. ՀՀ արտաքին պետական և պետական երաշխիքով պարտքի տրամադրման պայմանները**

	2000	2001	2002	2003
Տոկոսադրույք (%)	2.2	1.7	1.4	0.9
Մարման ժամկետ (տարի)	24.0	24.7	26.7	27.4
Գրանտ-էլեմենտ (%)	49.2	49.0	51.2	51.3
Արտոնյալ վարկեր (% ամբողջ պարտքի մեջ)	73.9	77.3	82.5	92.7
Հաստատագրված տոկոսադրույքով վարկեր (% ամբողջ պարտքի մեջ)	80	82	87.6	92.6

** Հաշվարկված են միջին կշռված ցուցանիշների հիման վրա:*

Սովորաբար արտաքին պարտքի բեռի գնահատման համար արտաքին պարտքը դիտարկում են մի շարք մակրոտնտեսական ցուցանիշների հետ հարաբերության մեջ: Արտաքին պարտքի հարաբերական ցուցանիշները հանդիսանում են արտաքին պարտքի սպասարկման հետ կապված հնարավոր ռիսկերի բնութագրիչներ: Այդ ցուցանիշների միջոցով գնահատվում է երկրի վճարունակության և իրացվելիության մակարդակը, դրանք օժանդակում են արտաքին պարտքի արդյունավետ կառավարմանը: Արտաքին պարտքի բեռի գնահատման համար Համաշխարհային բանկն օգտագործում է արտաքին պարտք/ՀՆԱ, արտաքին պարտքի ՆԱ/ՀՆԱ, արտաքին պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում, արտաքին պարտքի ՆԱ/ապրանքների և ծառայությունների արտահանում հարաբերությունները:

Աղյուսակ 4. Արտաքին պարտքի[11] բեռի գնահատման ցուցանիշները և դրանց թույլատրելի սահմանները (ըստ Համաշխարհային բանկի)

Ցուցանիշներ	Պարտքի ծանր բեռ	Պարտքի միջին բեռ	Պարտքի թեթև բեռ
Արտաքին պարտքի ՆԱ/ ապրանքների և ծառայությունների արտահանում	220%-ից բարձր	132-220%	132%-ից ցածր
Արտաքին պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում	275%-ից բարձր[12]	-	-
Արտաքին պարտքի ՆԱ /ՀԱԱ	80% -ից բարձր	48-80%	48% -ից ցածր
Արտաքին պարտք /ՀՆԱ	50%-ից բարձր[12]	-	-

Նշված հարաբերությունների և դրանց թույլատրելի սահմանների օգնությամբ Համաշխարհային բանկը դասակարգումն[13] իրականացնում է ըստ երկրների արտաքին պարտքի բեռի ծանրության, ընդ որում՝ երկրները խմբավորվում են ըստ բնակչության մեկ շնչին բաժին ընկնող եկամտի չափի: Այդ դասակարգման համաձայն՝ նախկին ԽՍՀՄ երկրների արտաքին պարտքի բեռի ծանրության աստիճանը ներկայացված է աղյուսակ 5-ում:

Աղյուսակ 5. Համաշխարհային բանկի կողմից նախկին ԽՍՀՄ երկրների դասակարգումը ըստ եկամտի մակարդակի և պարտքի բեռի ծանրության (օգտագործված են 2000-2002 թվականների միջին ցուցանիշները)[14]

1. Միջին եկամտով երկրներ (մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԱ-ն 735-ից 9075 ԱՄՆ դոլար միջակայքում է)		
Պարտքի ծանր բեռով	Պարտքի միջին բեռով	Պարտքի թեթև բեռով
Էստոնիա	Ղազախստան	Բելառուս
Լատվիա	Լիտվա	
	Ռուսաստան	
	Թուրքմենստան	

2. Ցածր եկամտով երկրներ (մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԱ-ն փոքր է 735 ԱՄՆ դոլարից)		
Պարտքի ծանր բեռով	Պարտքի միջին բեռով	Պարտքի թեթև բեռով
Ղրղզստան	Ուզբեկստան	Հայաստան
Տաջիկստան	Մոլդովա	Ադրբեջան
	Վրաստան	Ուկրաինա

[11] Արտաքին պարտքի բեռի գնահատման ցուցանիշների հաշվարկի համար Համաշխարհային բանկը, բացի պարտքի ՆԱ-ից, օգտագործում է նաև պարտքի անվանական ծավալները, քանի որ մի շարք երկրների համար հնարավոր չէ հաշվարկել արտաքին պարտքի ՆԱ-ն՝ արտաքին պարտքի վերաբերյալ մանրամասն տեղեկատվության բացակայության պատճառով:
[12] Այս ցուցանիշի գծով Համաշխարհային բանկն ունի միայն առավելագույն սահման:
[13] «Համաշխարհային բանկի վարկառուների հաշվետվությունների համակարգին» (DRS) տվյալներ են տրամադրում 135 երկրներ (այդ թվում Հայաստանը):
[14] Օգտագործված են Համաշխարհային բանկի կողմից 2004 թվականին հրատարակած «Գլոբալ զարգացման ֆինանսավորում» (Global Development Finance.) տեղեկագրի տվյալները:


Նախորդ տարվա համեմատ վատացել են[15] Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Վրաստանի և լավացել՝ Մոլդովայի արտաքին պարտքի կայունությունը գնահատող ցուցանիշները:

Միջին եկամտով երկրներից շատերի արտաքին պարտքի զգալի մասը կազմում են մասնավոր աղբյուրներից ոչ արտոնյալ պայմաններով ներգրավված միջոցները, որի պատճառով էլ այդ երկրների արտաքին պարտքի ՆԱ-ն, ի տարբերություն ցածր եկամտով երկրների, բարձր է: Էստոնիայի և Լատվիայի դասակարգումը՝ որպես պարտքի ծանր բեռով երկրներ, պայմանավորված է այն հանգամանքով, որ, ի տարբերություն միջին եկամտով մյուս երկրների (Թուրքմենստանի վերաբերյալ տվյալները բացակայում են), Լատվիայի արտաքին պարտքում գերակշռող են կարճաժամկետ պարտավորությունները (կազմում են ընդամենը պարտքի մոտ 73 %-ը), իսկ Էստոնիայի արտաքին պարտքի մեջ զգալի մաս են կազմում առևտրային բանկերի և մասնավոր հատվածի կողմից թողարկված և ոչ ռեզիդենտների կողմից տնօրինվող արժեթղթերն ու այլ պարտավորությունները: Ռուսաստանի արտաքին պարտքի մեծությունը, այլ գործոններից բացի, որոնք բնորոշ են նախկին ԽՍՀՄ երկրներին, պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ ԽՍՀՄ փլուզումից հետո նախկին ԽՍՀՄ երկրների պարտքը ամբողջությամբ փոխանցվել է Ռուսաստանին (ինչն այժմ կազմում է արտաքին պարտքի 31.9 %-ը):

Ցածր եկամտով երկրներում (Ուկրաինայի վերաբերյալ տվյալները բացակայում են) արտաքին պարտքի միջին հաշվով մոտ 80%-ը կազմում է պաշտոնական աղբյուրներից ներգրավված պետական արտաքին պարտքը: Ցածր եկամտով երկրների արտաքին պարտքի հիմնական մասը ներգրավված է ԱՄՀ-ից և Համաշխարհային բանկից: Նշենք նաև, որ այս երկրներում արտաքին պարտքի հիմնական մասը երկարաժամկետ է (նոր ներգրավված վարկային միջոցների ժամկետայնությունը մոտ 30 տարի է) և մեծ տեսակարար կշիռ են կազմում ցածր տոկոսադրույքով վարկերը (նոր ներգրավված վարկային միջոցների միջին տոկոսադրույքը կազմում է մոտ 1 %): Այս երկրներից միայն Ուզբեկստանում է արտաքին պարտքի ժամկետայնությունը ցածր 30 տարուց, իսկ նոր վարկերի տոկոսադրույքները բարձր են միջինից:

Վրաստանում, Մոլդովայում և մի փոքր ավելի քիչ՝ Ղրղզստանում[16] արտաքին պարտքի ավելացմանը նպաստել են էներգետիկ հատվածի ժամկետանց պարտավորությունները: Ընդ որում, Վրաստանում ու Մոլդովայում էներգետիկ հատվածի ժամկետանց պարտավորությունները 2003 թվականին համապատասխանաբար կազմել են ՀՆԱ 6%-ը, արտահանման 18%-ը և ՀՆԱ 6%-ը, արտահանման 12%-ը:

Նախկին ԽՍՀՄ երկրների արտաքին պարտքի կառուցվածքը 2003 թվականին (%) *



** Բացառությամբ Հայաստանի, մյուս երկրների պետական պարտքի ցուցանիշում ներառված են այդ երկրների կառավարությունների կողմից թողարկված և ոչ ռեզիդենտների կողմից ծեռք բերված արժեթղթերի գծով առաջացած արտաքին պարտավորությունները: Հայաստանում, եթե ներառենք այդ ցուցանիշը, դրանց փոքր ծավալների պատճառով (3.9 մլն ԱՄՆ դոլար) պատկերը էականորեն չի փոխվի:*

Արտաքին պարտքի իրացվելիությունը գնահատող արտաքին պարտքի և ապրանքների ու ծառայությունների արտահանում հարաբերակցությունը նախկին ԽՍՀՄ երկրների համար 2000-2003 թվականներին ունեցել է հետևյալ դինամիկան:

[15] *Էստոնիան և Լատվիան «Պարտքի միջին բեռով» երկրից դարձել են «Պարտքի ծանր բեռով» երկիր, Լիտվան և Վրաստանը «Պարտքի թեթև բեռով» երկրից դարձել են «Պարտքի միջին բեռով» երկիր, իսկ Մոլդովան «Պարտքի ծանր բեռով» երկրից դարձել է «Պարտքի միջին բեռով» երկիր:*

[16] *Օգտագործված են ԱՄՀ "CIS-7" նախաձեռնության շրջանակներում հրապարակվող նյութերի տվյալները:*

Աղյուսակ 6. Արտաքին պետական և պետական երաշխիքով պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում (առավելագույն սահմանը՝ 275%):

Երկիր	2000	2001	2002	2003	Միջին (2000-2003)
Ադրբեջան	55.0	53.5	51.8	50.7	52.7
Բելառուս	10.6	8.6	7.8	6.4	8.3
Էստոնիա	4.1	3.4	4.4	5.0	4.2
Լատվիա	26.4	21.3	19.9	15.7	20.8
Լիտվա	46.6	41.5	32.6	30.1	37.7
Հայաստան	192.4	167.8	147.0	122.8	157.5
Ղազախստան	37.7	37.1	29.7	25.7	32.6
Ղրղզստան	244.3	257.2	249.0	238.7	247.3
Մոլդովա	162.1	132.2	116.1	111.3	130.4
Ռուսաստան	106.2	97.0	86.6	72.3	90.5
Վրաստան	233.2	197.6	175.4	156.9	190.8
Ուկրաինա	53.1	47.9	43.7	38.7	45.9
Միջին	**97.6**	**88.8**	**80.3**	**72.8**	**84.9**

2000 - 2003 թվականներին նախկին ԽՍՀՄ երկրների՝ նշված ցուցանիշը չի գերազանցել առավելագույն սահմանը, թեև Վրաստանինը, Ղրղզստանինը, Հայաստանինը, Մոլդովայինը բավականին բարձր է: Այս երկրների՝ արտաքին պարտքի կուտակման հիմնական պատճառներից մեկը անցումային ժամանակաշրջանի սկզբում ընթացիկ հաշվի զգալի պակասուրդի հետևանքով կուտակած արտաքին պարտքն է:

Աղյուսակ 7. Արտաքին հատվածի 1996-2000 թվականների միջին ցուցանիշները (%)

Երկիր	Ընթացիկ հաշիվ / ՀՆԱ	Ուղղակի ներդրումներ / ՀՆԱ
Հայաստան	-17.9	5.6
Վրաստան	-10.7	6.2
Մոլդովա	-12.0	4.9
Ղրղզստան	-14.9	3.0
Ադրբեջան	-19.9	16.9
Նախկին ԽՍՀՄ այլ երկրներ	-3.5	4.1

Ընթացիկ հաշվի զգալի պակասուրդ ունեցող Ադրբեջանում, ի տարբերություն մյուս երկրների, պակասուրդը ֆինանսավորվել է ուղղակի ներդրումների մեծ ծավալների հաշվին՝ հանգեցնելով արտաքին պարտքի համեմատաբար փոքր աճի:

Հարկ է նշել, որ Հայաստանի արտաքին պետական պարտքի իրացվելիությունը գնահատող ցուցանիշները զգալիորեն փոխվում են, երբ ապրանքների արտահանումը դիտարկվում է առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների: Խնդիրն այն է, որ նշված ապրանքախմբի գերակշիռ մաս կազմող մշակված ադամանդի արտահանումը համարվում է վերաարտահանվող ապրանք, նրանից ստացվող հասույթը իրականում միայն այդ ապրանքի մշակման համար կատարվող աշխատանքն է: Բացի այդ, այս հոդվածի ցուցանիշը կազմում է ամբողջ արտահանման մոտ 45%-ը (2000 - 2003 թվականների միջին), այսինքն՝ արտահանումը բավականին բևեռացված է, ինչն էլ արտաքին պարտքի իրացվելիության առումով մեծացնում է երկրի խոցելիության աստիճանը արտաքին աշխարհի հնարավոր ազդեցությունների նկատմամբ:

Արտաքին պետական պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում ցուցանիշը, առանց «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալների, 2003 թվականի համար կազմում է 201.6%[17], որը թեև չի գերազանցում առավելագույն սահմանը, սակայն բավականաչափ բարձր է:

[17] Ապրանքների արտահանման ծավալներից «Թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից պատրաստված իրեր» ապրանքախմբի արտահանման ծավալները հանվել են ամբողջությամբ, քանի որ վերամշակման ընթացքում Հայաստանում նշված ապրանքախմբի համար սահմանված ավելացված արժեքի վերաբերյալ տվյալները բացակայում են: Սակայն, եթե ընդունենք, որ նշված ապրանքախմբի արտահանման ծավալների մոտ 20%-ը ստեղծվել է Հայաստանում և ավելացնենք այդ 20%-ը ապրանքների արտահանման մեջ, ապա արտաքին պետական պարտք/ապրանքների և ծառայությունների արտահանում ցուցանիշը կկազմի 178.6%:

Նշենք, որ նախկին ԽՍՀՄ երկրներից արտահանման բևեռացվածության նման բարձր գործակից ունեն Ղրղզստանը (ոսկի՝ արտահանման մոտ 47%-ը), Տաջիկստանը (ալյումինիում՝ 50%-ը), Ռուսաստանը (վառելիք և էներգակիրներ՝ արտահանման մոտ 58%-ը), Ղազախստանը (վառելանյութ՝ արտահանման մոտ 60%-ը):

Արտաքին պարտքի կայունությունը գնահատող մյուս ցուցանիշի՝ արտաքին պարտք / ՀՆԱ դինամիկան 2000-2003 թվականներին նախկին ԽՍՀՄ հանրապետություններում հիմնականում ունի բարելավման միտում:

Աղյուսակ 8. Արտաքին պետական և պետական երաշխիքով պարտք/ՀՆԱ (առավելագույն սահմանը՝ 50%):

Երկիր	2000	2001	2002	2003	Միջին (2000-2003)
Ադրբեջան	22.1	22.2	22.7	20.8	21.9
Բելառուս	6.4	5.9	5.0	4.1	5.4
Էստոնիա	3.9	3.1	3.7	4.0	3.7
Լատվիա	12.1	9.5	9.0	7.4	9.5
Լիտվա	21.0	21.1	17.6	15.7	18.9
Հայաստան	45.0	42.7	43.3	39.1	42.5
Ղազախստան	20.6	17.8	14.8	13.4	16.6
Ղրղզստան	102.3	94.2	98.2	92.3	96.8
Մոլդովա	81.1	66.2	62.2	57.6	66.8
Ռուսաստան	48.9	35.3	30.3	24.5	34.7
Վրաստան	51.0	50.0	50.7	44.1	48.9
Ուկրաինա	33.1	26.6	24.6	22.1	26.6
Միջին	**37.3**	**32.9**	**31.9**	**28.8**	**32.7**

Արտաքին պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշի լավացումը հիմնականում պայմանավորված է մակրոտնտեսական ցուցանիշների բարելավմամբ, իսկ Հայաստանում, Ղրղզստանում, Մոլդովայում և Վրաստանում այս ցուցանիշը բարելավվել է նաև կնքված մի շարք պայմանագրերի վերածնակերպման արդյունքում: Մասնավորապես՝ Հայաստանը, ինչպես արդեն նշել ենք, Ռուսաստանի հետ կնքել է վերածնակերպման պայմանագիր, ինչն արտաքին պետական պարտքը նվազեցրել է 5.4 %-ով: Վրաստանը[18] և Ղրղզստանը Փարիզյան ակումբի վարկատուների հետ կնքել են վերածնակերպման պայմանագրեր ոչ արտոնյալ վարկերի գծով, ընդ որում, այս վերածնակերպումները շարունակվելու են նաև հետագայում՝ պայմնավորված ԱՆՏԱ ծրագրի բարեհաջող ընթացքով: 2002 թվականի հոկտեմբերին Մոլդովայի կառավարությունը մասնավոր հատվածի վարկատուների հետ կնքել է 1997 թվականին թողարկած Եվրոբոնդերի վերածնակերպման համաձայնագիր:

Եզրակացություն

Հայաստանի պետական արտաքին պարտքը հիմնականում ներգրավված է արտոնյալ պայմաններով, ինչի հետևանքով պարտքի բեռը գնահատող ցուցանիշները ինչպես իրենց առավելագույն սահմանների, այնպես էլ նախկին ԽՍՀՄ երկրների համապատասխան ցուցանիշների համեմատությամբ կարելի է համարել բավարար: Բացի այդ, արտաքին պարտքի ցուցանիշների վրա դրական ազդեցություն է ունենում վերջին տարիներին արտահանման և ՀՆԱ ծավալների բարձր աճի տեմպը, ինչը նույնպես հնարավորություն է տալիս խուսափել արտաքին պարտքի խնդիրներից: Նշենք, սակայն, որ արտահանման աճը հիմնականում պայմանավորված է մի քանի խոշոր ապրանքախմբերի աճով, ինչն էլ, արտաքին պարտքի իրացվելիության առումով, զգալիորեն մեծացնում է երկրի խոցելիության աստիճանը արտաքին աշխարհի հնարավոր ազդեցությունների նկատմամբ:

[18] *Վերածնակերպվել են նաև ՀՀ կառավարության կողմից Վրաստանին 1996 թվականին տրամադրված 19.6 մլն ԱՄՆդոլար պարտքի պայմանները: Ընդ որում, Վրաստանը Հայաստանի միակ վարկառու երկիրն է:*

Ինչ վերաբերում է վերջին տարիներին Հայաստանում գրանցված ՀՆԱ և ՀԱԱ բարձր աճի տեմպին, ապա դրա արդյունքում ավելացել է նաև Հայաստանի բնակչության մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը, որը 2003 թվականին կազմել է 901.9 ԱՄՆ դոլար՝ 2002 թվականի 764.8 ԱՄՆ դոլարի և 2001 թվականի 573.8 ԱՄՆ դոլարի փոխարեն: Նույն իրավիճակն է նաև Ադրբեջանում և Ուկրաինայում, որտեղ մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը 2003 թվականին համապատասխանաբար կազմել է 861.4 ԱՄՆ դոլար և 999.3 ԱՄՆ դոլար, 2002 թվականին՝ 751.9 ԱՄՆ դոլար և 844.2 ԱՄՆ դոլար, 2001 թվականին՝ 704.6 ԱՄՆ դոլար և 774.4 ԱՄՆ դոլար: Քանի որ Համաշխարհային բանկն արտոնյալ պայմաններով միջոցներ տրամադրում է միայն ցածր եկամուտ ունեցող երկրներին, այսինքն՝ այն երկրներին, որոնց մեկ շնչին բաժին ընկնող ՀԱԱ-ն չի գերազանցում 735 դոլարը, ապա հնարավոր է, որ Հայաստանը 1 շնչին բաժին ընկնող ՀԱԱ հետագա աճի հետևանքով զրկվի արտոնյալ պայմաններով միջոցներ ներգրավելու հնարավորությունից[19]: Հետևաբար արտաքին պարտքի կայունության ապահովման առումով կարևորվում է տնտեսական կայուն աճի, արտահանման աճի տեմպերի՝ վերջին տարիներին գրանցված բարձր ցուցանիշների պահպանումն ու դրանց հետագա աճի ապահովումը, այլապես ոչ արտոնյալ պայմաններով արտաքին միջոցների ներգրավումը կարող է հանգեցնել արտաքին պարտքի հետ կապված խնդիրների:

[19] Համաշխարհային բանկի կողմից 2004 թվականին հրատարակված «Զարգացման գլոբալ ֆինանսավորում» (GDF) տեղեկագրի՝ երկրների դասակարգումն ըստ տարածաշրջանների և եկամտի մակարդակի աղյուսակում (օգտագործված են 2002 թվականի տվյալները) Հայաստանը արդեն իսկ դասակարգվել է որպես միջին եկամտով երկիր:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

•

ՀՀ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԲԱՆԿ

Երևան 10,
Վ. Սարգսյան փող. 6
http://www.CBA.am

•

Չափսը՝ 60 x 84 1/8:
14.88 պայմ. տպ. մամուլ:
Տպաքանակ՝ 120:

© Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ, 2004